

8(479)

LF-83

ԱՐՄԵՆԻԱ

ԱՐՄԵՆՈ  
ԱՇԽԱՏ  
ԳՐԱԿԱՆՈՒՅՆ  
ՀԱՅՈՑ  
ԾԱՌՁԵ

ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МАЦТОЦА  
«МАТЕНАДАРАН»  
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЯНСКОЙ ССР

ՀՈՅԿԱԿՈՎ ՍՈԲ ՄԻՒԽԱՏՐԵՐԻ ՍՈՎԵՏՄ ԱԽԾԵՐԵՐ  
ՄԱՆՈՒՋԻ ԱՆՎԵ ՀԻՆ ԶԵԽԱԳՐԵՐԻ ԽՍՏԻՏՈՒՏ  
«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

8(47.9)

Ա - 83

Ա. Ռ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ա. Ռ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ


О ЛИТЕРАТУРЕ КАВКАЗСКОЙ  
АЛБАНИИ

ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐԴԻ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԳԸ

279

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН 1966

ՀՈՅԿԱԿՈՎ ՍՈԲ ՄԻՒԽԱՏՐԵՐԻ ՍՈՎԵՏՄ ԱԽԾԵՐԵՐ  
ՄԱՆՈՒՋԻ ԱՆՎԵ ՀԻՆ ԶԵԽԱԳՐԵՐԻ ԽՏԻՏՈՒՏ  
ԵՐԵՎԱՆ 1966



ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

ԽՄՔԱԳԻՐ Ա. Տ. ԵՐԵՄՅԱՆ

Ինչպես Հայտնի է, ավատատիրական կարգերի գոյատևման ողջ ընթացքում պատմական Հայաստանի տարրեր նահանգներում և վարչա-տնտեսական առանձին միավորներում, ավատատիրական կարգերին հատուկ մասնատվածության պատճառով, ստեղծվել էին տնտեսական և քաղաքական կյանքի որույն, մեկուսացված պայմաններ, որոնք և իրենց անշնչելի կնիքը զրին նշված վայրերում կերտված մշակույթի բոլոր բնագավառների վրա: Այդ իսկ պատճառով էլ, այսօր, պատմագիտական հետազոտություններ կատարելիս, հատուկ քննության առարկա պիտի դարձնել ավատական վերոհիշյալ տիրույթներից յուրաքանչյուրի առանձին պատմությունը՝ թե՛ տնտեսական, քաղաքական և թե՛ մշակության կյանքի առումով:

Սույն մենագրությունը նման մի փորձ է՝ նվիրված Հատկապես պատմական Հայաստանի արևելյան գավառների բազմազարյան դպրության հետազոտությանը: Քանի որ այդ վայրերը և Հարակից տարածությունները մեր Հին մատենագիրների կողմից կողմել են տարրեր անուններով, այն է՝ «Հայոց Արևելից կողմանք», «Կողմանք Արևելից», «Աղուանից կողմանք», «Հիւանս արևելից կողմանք», «Խորին Հայք» և այլն, մենք սույն մենագրության մեջ նախասիրությունը տալով կերոհիշյալներից առաջինին, միաժամանակ օգտագործել ենք նաև մյուս անվանումները:

Նշենք, որ պատմա-քաղաքական իրազարձությունների պատճառով, Հայոց Արևելից կողմանք, Գ-րդ դարի վերերին միակցվելով բուն Ազգանքին, ուղղակի կողմել է նաև Աղվանք: Մեզ հետաքրքրող զավաների այս հորշորումը, ունենալով լոկ աշխարհագրական իմաստ, հետազայում հիմք է Հանդիսացել մհծամեծ շփոթությունների:

Այդ պատճառով էլ միմանց հետ շփոթված բուն Ազգանքն ու Հայոց Արևելից կողմանքը դիտվում են որպես միայն աղվանական ցեղերի և նրանց Հայրենիքի հետ կապված հասկացողություններ: Հետեապէս, տարրեր եղունակներով, անտեսվում է պատմական Հայաստանի վերոհիշյալ գավառների

Հայկականությունը, ինչպես պատմական, այնպես էլ էթնիկական առումով:  
Բնականաբար, սույն մենագրության մեջ մենք, նախքան բուն խնդրին,  
այսինքն, Հայոց Արևելից կողմանց դպրության քննության անցնելը, պիտի  
անդրագաղաքայինք պատմա-աշխարհագրական և էթնիկական բնույթի մի  
քանի էական հարցերի պարզաբանմանը Այդ նպատակին է ծառալեցված  
մենագրության «Ներազարդական»-ը: Ըստ որում, այսուեղ նախ ամփոփ խոսք  
է ասված աղվանական գրի և գրականության մասին, որպեսզի ավելի քան  
Հստակորեն երեա այն առեղծվածային վիճակը, որի մեջ գտնվում է հիմա  
այդ բնագավառի հետազոտության գործը:

Մենագրության հաջորդ էջերը նվիրված են մեր առջև գրված հրման-  
կան խնդրի քննությանը: Այստեղ, առաջին անգամ, փորձ է արգում վեր  
հանել և ուրվագծել Հայոց Արևելից կողմանց դպրության մոտավոր ամ-  
բողջությունը՝ ժամանակաբական առումով, մենագրության մեջ ընդունված  
են միայն 5—13-րդ դարերը, իսկ մատենագրական առումով, շոշափված են,  
հիմնականում, բանասիրական բնույթի առաջնահերթ խնդիրներ:

Հասկանալի է, որ մենք չինք կարող սույն մենագրության մեջ անդրա-  
գաղաքան այն բոլոր խնդիրներին, որոնք ծառացել են մեր առջև աշխատան-  
քի ընթացքում նրանցից հոյեց կարևորներին աշխատել ենք տեղ տալ հա-  
վելվածների բաժնում, իսկ մյուս մասի վերաբերյալ՝ բավարարվել լոկ  
մասնակի դիտողություններով:

Օգտվելով առիթից, շնորհակալություն ենք հայտնում Կ. Մելիք-Օհան-  
չանյանին, Լ. Խաչիկյանին, Բ. Առաքելյանին, Հ. Բարթիկյանին և որդիների՝  
սույն մենագրության վերաբերյալ արած օգտակար դիտողությունների համար:

### ՆԵՐԱՄՈՒԻԹՅՈՒՆ

Խոսել Հայոց Արևելից կողմանց դպրության 5—13-րդ  
դարերն ընդգրկող հատվածի պատմության մասին, նշանա-  
կում է անհրաժեշտաբար քննության առնել նաև առհասա-  
րակ Աղվանից աշխարհի պատմության և դպրության մի քանի  
կարևոր հարցերը:

Նախ՝ Աղվանից աշխարհի դպրության մասին:

Ինչպես գիտենք, Կովկասի հին բնակիչներից էին նաև  
աղվանական բնույթը, որոնք ժամանակի ընթացքում տարրալուծվեցին  
շրջապատի մահմեղական ու քրիստոնյա միջավայրում և էթ-  
նիկական առումով մեկընդիշտ հեռացան պատմության աս-  
պարեղից:

Մասնագետները շնայած վաղուց է, ինչ զբաղվում են  
աղվանական ցեղախմբերի և Աղվանից աշխարհի պատմու-  
թյան ուսումնասիրությամբ ու շատ հարցեր են բարձրացրել,  
լուծել, սակայն մինչև օրս էլ մեծ թիվ են կազմում այն խըն-  
դիրները, որոնք կարու են նոր բացատրության և ճշգրտման:  
Այդ վերջինների մեջ իր առանձին տեղն է գրավում Աղվանից  
աշխարհի գրի և գրականության պրոբլեմը:

Աղվանից աշխարհի գրի և գրականության պատմու-  
թյամբ հետաքրքրվող բոլոր մասնագետների համար էլ ելա-  
կետային նշանակություն են ունեցել 5-րդ դարի հայ պատ-  
միներ Կորյունի և Մովսես Խորենացու այն հիշատակություն-

նիրը, որոնց համաձայն Մեսրոպ Մաշտոցը գիր է ստեղծել և դպրություն հիմնել ոչ միայն հայերի, այլև վրացիների ու աղվանների համար:

Պետք է նկատել, սակայն, որ փաստերի պակասությունը և եղած նյութերի ոչ ճիշտ մեկնաբանությունը, մինչև հիմա էլ, Աղվանից աշխարհի գրի ու դպրության խնդրի լուծումը դրել են առեղջվածային վիճակի մեջ:

Առաջմ շանդրագառնալով պատմա-աշխարհագրական և էթնիկական խնդիրների անբավարար քննությամբ պայմանավորված սիսալ մեկնաբանություններին, խոսենք միայն բուն աղվանական կամ աղվաններեն գրի և դպրության կընձըռութված հարցերի վերաբերյալ:

Հարկավոր է նկատի առնել, որ չեն պահպանվել ոչ աղվանական լեզուները և ոչ էլ աղվաններին գրականության հուշարձանները: Ճիշտ է, անցյալ դարի երկրորդ կեսերին հայկական միջնադարյան ձեռագրերում գտնվեցին «աղուանից գիր» կոչվող այբուբեններ ու «աղվաներեն» համարված առանձին տողեր, որոնք հիմնականում ոչ այլ ինչ էին, քան հայկական ծածկադրի տարատեսակներ<sup>1</sup>: Հետագայում Հ. Անասյանի կողմից առաջ քաշվեց այն կարծիքը, թե «Աղուանից գիր» կոչված տառերի մեջ պիտի տեսնել բուն աղվանական այրութենի փոփոխված տառատեսակները<sup>2</sup>: Այդ կարծիքը, իրավամբ, հավանության արժանացավ պրոֆ. Ա. Շանիձեի կողմից<sup>3</sup>:

Ինչ վերաբերում է իսկական աղվանական այբուբենին, ապա նրա մի մեծարժեք ընդօրինակությանը բախտ էր վի-

1 Համապատասխան նյութերի և ուսումնասիրությանների մասին տե՛ս Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ա., Երևան, 1959, էջ 613—622; Էրացուցիլ տեղեկությունների կարելի է հանդիպել Ա. Արքանայանի «Дешифровка надписей Кавказских агван» ուսումնասիրության մեջ (Երևան, 1964):

2 Անդ, էջ 615—616,

3 Հայկ. ՍՍԾ ԳԱ-ի «Տեղեկագիր», 1960, № 9, էջ 96—97: Առանձնապես աշագրավ են «Յ», «Թ» և «Ֆ» քանի ուրիշ տառերը:

հակվել ապաստան գտնելու Մսերյանների գերդաստանին պատկանող մի հին ձեռագրում (այժմ՝ Մաշտոցյան Մատենագրաբանում, ձեռ. № 7117): Այդ ձեռագրի վերջին ժառանգորդ Զ. Մսերյանցը, զեռևս 1905 թվականին, Ն. Մատին գրած նամակներում խոսում է նաև այդ ձեռագրի մասին, նրանից կարենոր նյութեր տրամադրելով՝ արքառնների վերաբերյալ<sup>4</sup>:

Ինչպես երևում է, ինքը՝ Զ. Մսերյանցը նպատակ է ունեցել զրադվելու աղվանից այդ այբուբենի ուսումնասիրությամբ, որի արդյունքի մասին թերեւս կարելի լինի նյութեր գտնել արխիվային վավերաթղթերում:

Նույն ձեռագրի և նույն այրութենի վրա հետագայում ուշադրություն է դարձնում անվանի բանասեր Ն. Ակինյանը: 1924 թվականին, լինելով Մոսկվայում, նա այցելում է Զ. Մսերյանցին, ծանոթանում այդ այբուբենին և ցանկանում հետագոտության նյութ դարձնել այն. ձեռագրի տերը, սակայն, չի համաձայնում, «առարկելով, թի զինքը մտադիր է ուսումնասիրել զայն»<sup>5</sup>:

Չատ շանցած, Զ. Մսերյանցի վերոհիշյալ ձեռագիրը հանձնվում է Մատենադարանին, ուր և 1937 թվականին նրանով գրադպում է վրացի գիտնական Ի. Արուլաձեն՝ կատարելով առաջին տպադիր հազորդումը՝ նրա մեջ պահպանված աղվանական այբուբենի մասին: Հիրավի, մեծ իրադարձություն: Նրա հետագոտությամբ գրադպեցին հատկապես պրոֆ. Ա. Շանիձեն<sup>6</sup>, պրոֆ. Հ. Աճառյանը<sup>8</sup> և ուրիշներ, համոզելով, որ վերջապես գտնված է աղվանական այբուբենը:

Այդ մեծ հայտնությունն էլ, սակայն, անբավարար գրա-

4 Հայկ. ՍՍԾ ԳԱ-ի «Տեղեկագիր», 1964, № 12, էջ 49—59 (Պ. Մուրդյանի հոդվածը):

5 Ն. Ակինյան, Ս. Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949, էջ 319—320:

6 И. Абуладзе, К открытию алфавита Кавказских албанцев, Тбилиси, 1938.

7 А. Шаниձե, Новооткрытый алфавит Кавказских албанцев и его значение для науки, Тбилиси, 1938 (տպագրված է Ի. Արուլաձեի վերոհիշյալ հազորդումն հայտ միասին):

8 Հր. Անասյան, Աղվանից գիրը (Հայկ. ՍՍԾ ԳԱ-ի «Տեղեկագիր», 1941, № 3—4 (8—9), էջ 3—11:

նըզեց, որովհետև պակասում էին աղվաներն ընագրեր, որոնք պիտի վերծանվեին վերոհիշյալ այբուբենի միջոցով: Շատ չանցած, ընդամենը մեկ տասնամյակ հետո, Աղբեկանում, Մինգեշառութիւն շրջակայքում կատարված պեղումների ժամանակ, ի հայտ եկան նաև աղվանական արձանագրությունների որոշ նմուշներ, ամելի քան հավաստելով աղվանական զրի ու դպրության երթեմնի գոյությունը: Այստեղ էլ ծագեցին գժվարություններ, գտնված այբուբենի և արձանագրությունների տառածերի կրած ընական փոփոխությունները, աղվանական լիկունների անհնատացումը, օժանդակ նյութերի պակասը՝ խանգարեցին նշված արձանագրությունների վերծանմանը: Այս առումով վերջերս նոր փորձ կատարեց Ա. Արրահամյանը՝ հանդես գալով հատուկ մենագրությամբ<sup>9</sup>: Էստ նրա՝ բոլոր արձանագրություններն էլ շարադրված են ուժինենով և համարյա ամբողջապես վերծանվում են: Բայց թե որքանով են ճիշտ նրա կուահումները, առայժմ դժվար է ստուգել: Զգալի տեղաշարժերն այս հարցում կապված են համապատասխան ընագրերի նոր հայտարերումների հետ:

Անկախ այդ ամենից, այսօր, ամենայն վստահությամբ կարելի է պնդել, որ խեկապես հավաստի են և՛ Կորյունը, և՛ Մովսես Խորենացին, և՛ Նրանց կրկնող մյուս մատենագիրները՝ Աղվանից աշխարհի զրի և գրականության հարցերում: Իսկ թե զարգացման ու տարածման ի՞նչ աստիճանի է հասած եղել ժամանակին այդ գրականությունը, մնում է փաստարկան կարուտ: Մեր կարծիքով, չափազանցության մեջ են ընկնում այն մասնագետները, որոնք գտնում են, թե աղվանական այդ այբուբենով և աղվաներենով շարադրված գրականությունը շատ հարուստ է եղել: Այսպես, աղվանագիտության ընագավառում իր խոշոր լուման մուծած ակադ. Ա. Շանիձեն գտնում է, որ «Աղվանական գրականության ժաղկման ժամանակաշրջանը պիտի համարել 5—7-րդ դդ., երբ Կով-

<sup>9</sup> А. Г. Абрамян, Декодировка надписей Кавказских агван, Ереван, 1964.

կասի քաղաքական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում աղվանները գործոն մասնակցություն էին ցուցաբերում վրացիների և հայերի հետ միասին: Այդ գրականությունը շարունակեց գոյատեղ երկար ժամանակ նաև երկրի արարական բռնատիրությունից հետո...»<sup>10</sup>: Որպես ապացուց այդ կարծիքի՝ պրոֆ. Ա. Շանիձեն վկայակոչում է երկու փաստ: Առաջինի մասին նա գրում է,

«Աղվանների գրականության երթեմնի գոյության մասին եղած ամենավատահելի տեղեկություններից մեկը ես համարում եմ նշանավոր «Գիրք թղթոց»-ի մեջ պահպանված... հայոց թարգեն կաթողիկոսի ժամանակ գրված երկրորդ թուղթը՝ առաքված Պարսկաստան»<sup>11</sup>:

Հետագայում այդ նույն փաստը նույն նպատակով վկայակոչել են նաև Հ. Աճառյանը<sup>12</sup>, Կ. Տրեւերը<sup>13</sup>, Ա. Արրահամյանը<sup>14</sup> և ուրիշներ:

Պետք է ասել, սակայն, որ նշված փաստաթուղթը նման եղրակացության հիմք չի տալիս: Համոզվելու համար մեջ բերենք այդ վակերագրի այն տողերը, որոնց վրա հնիվել են հարցի հետազոտողները: Այստեղ ասված է.

«...այսուիկ վարիմք հաւատովք, զոր և գրեցաք իսկ ձեզ յառաջազոյն, Վրաց և Աղուանից միաբանութեամբ, իւրաքանչիւր աշխարհի գրով: Եւ այժմ զնոյն երկրորդեցաք»<sup>15</sup>:

Ա. Շանիձեն մեջ բերելով այս հատվածը հայերեն, տվել է նաև նրա ուսուերեն թարգմանությունը՝ հետեւալ ձևով. «У нас такая вера, о чем мы писали вам раньше, в

<sup>10</sup> А. Шаниձե, Новооткрытый алфавит Кавказских албанцев и его значение для науки, Тбилиси, 1938, стр. 3.

<sup>11</sup> Անդ:

<sup>12</sup> Հր. Աճառյան, Աղվանից գիրք, Հայկ. ՍՍԾ ԳԱԱ-ի «Տեղեկագիր», Խ 3—4 (8—9), էջ 4:

<sup>13</sup> Կ. Վ. Տրեւեր, Очерки по истории и культуре Кавказской Албании, М.—Л., 1959, стр. 309.

<sup>14</sup> Ա. Գ. Աբրամյան, Декодировка надписей Кавказских агван, Ереван, 1964, стр. 5.

<sup>15</sup> «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 51:

согласии с Грузинами и Албанцами, каждый на своем языке (букв. письменностью каждой страны). А теперь повторили то же самое<sup>16</sup>.<sup>19</sup>

Հենց ալստեղից տեսնում ենք, որ թարգմանության ժամանակ անհրաժեշտություն է առաջացել թարգմանված հատվածին լրացուցիչ երանդ հաղորդել, որպեսզի այն համապատասխանի հանված էլերակացությանը: Ըստ էության, այդ-առեղ «իրաքանչիւր աշխարհի գրով» արտահայտությունը վերաբերում է ոչ թե հայերին, վրացիներին ու աղվաններին, որոնք առաքել են այդ թուղթը, այլ նրանց, ում հասցեազրով է այն, այսինքն, պարսից աշխարհի քրիստոնյա ժողովուրդներին: Եվ հիրավի, ինչո՞ւմն էր բանը: Երբ դարի սկզբունքին պարսկական տիրապետության տակ գտնվող այլազգի քրիստոնյաները, պարսից արքայի միջոցով, դիմել են հայեկեղեցուն՝ դավանանքի հարցում իրենց օգնելու և համապատասխան հրահանգներ ստանալու: Քանի որ այդ ժամանակ հայոց, վրաց և աղվանից եկեղեցիները մի միասնություն էին կազմում և զեկավարվում հայ եկեղեցու կողմից, ուստի հայոց թարգեն կաթողիկոսը և լիազորված այլ անձինք պատասխան են դրում նրանց: Ինչ-ինչ պատճառներով հարցումը կրկնվում է, ուստի և կրկնվում է պատասխանը: Ահա այս կրկնված պատասխանի մեջ է գտնվում քննվող պարբերությունը: Արդ, անկախ ամեն ինչից, հարց է ծագում, հայոց եկեղեցին ի՞նչ լեզվով պիտի գրեր Պարսկաստանի քրիստոնյաներին: Պարզ է, որ ամենից առաջ պատասխանը պիտի շարադրվեր պաշտոնական կողմերի (հայեր, պարսիկներ) լեզուներով: Հասկանալի է նաև, որ այդ պատասխանը կարող էր թարգմանվել նաև այն քրիստոնյաների լեզուներով, որոնք ապրում էին Պարսկաստանի տիրապետության տակ: Նշված թղթերում պահպանված են նույնիսկ նրանց երկրների անունները: «յԱսորեստանի և ի Խուժաստանի, և ի Հերթ և ի Նոնարարադէ... ի Մծրին նահանդ... ի Նինուէ նահանդ...»

<sup>16</sup> А. Шанидзе, Новооткрытый алфавит Кавказских албанцев и его значение для науки, Тбилиси, 1938, стр. 3.

և այլն<sup>17</sup>: Այդ վայրերում գտնվող քրիստոնյաները, բնականաբար, հիմնականում, պիտի ասորիներ, պարսիկներ և հայեր լինեին: Ուստի և նրանց առաքվող թղթերն էլ կարող էին համապատասխան լեզուներով շարադրված լինել, որպեսզի նրանք կարողանային կարդալ և կողմնորոշվել իրենց դավանանքի կնճոռտված հարցերում: Այս պայմաններում միանգամայն անփառատ կլիներ Ասորեստանի և Խուժաստանի քրիստոնյաներին վրացերեն կամ աղվաններեն պատասխան ուղարկելը: Հետևապես Ս. Շանիձեի վկայակոչած հատվածում պիտի տիեզեր հետևյալ իմաստը. Ճեզ, այսինքն, Պարսկաստանի տիրույթներում ապրող քրիստոնյաներիդ, առաջուց գրել ենք պատասխան՝ վրացիների և աղվանների գիտությամբ՝ ճեզանից յուրաքանչյուրին՝ իր աշխարհի գրով:

Այսպիսին է իրերի տրամարանական թելագրանքը: Այդպիսին է նաև զույգ նամակների, ինչպես և մեջ բերված հատվածի բուն իմաստը:

Թացի այս ամենից, նշված երկու թղթերում կան նաև որոշ անհերթի տվյալներ մեր կարծիքի օգտին: Ինչպես երեսում է երկրորդ թղթի որոշ նշումներից («գրեցաք իսկ Ճեզ յառաջադպյան», «Եւ այժմ զնոյն երկրորդեցաք»), երկրորդ նամակում հիշատակված գրի և լեզվի խնդիրը, առաջին հերթին, վերաբերում է հենց առաջին նամակին, որն ստիպված «երկրորդել» են: Իսկ թե ինչ լեզուներով է գրված եղել առաջին թղթը, այդ մասին նրա մեջ կա միանցամայն հստակ ուժեկին հիշատակություն. «Գրեցաք նայերէն և պարսկերէն, և կնքեցաք մերով մատանեաւ»: Ապա՝ թվարկվում են Պարսկաստանից եկած պատվիրակների անունները (Սամզել, Շմավոն, Աշհա, Մերա), որոնք «զայս հաւատոյ նամակ ընդ իրեանս առին յաշխարհ իրեանց»<sup>18</sup>: Ըստ երեսութիւն, երկրորդ թուղթը պաշտոնական երկու լեզուներով գրվելոց բացի, գրվել է նաև երերորդ կամ շորորդ լեզվով ևս, որպեսզի ստացողներն ավելի քան անմիջականորեն ծանոթանային նրա բովանդաւ:

<sup>17</sup> «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 41:

<sup>18</sup> Անդ, էջ 47:

Կությանը: Պարզ է, որ այս պայմաններում ոչ վրացերենի և ոչ էլ աղվաներենի կարիքը չէր կարող զգացվել:

Հետևապես մեծանուն գիտնական Ա. Շահիձեի կողմից վեր հանված և ուրիշների կողմից հավանության արժանացած այս փաստը բոլորովին հնարավորություն շի տալիս որևէ դադարի կազմելու աղվանական գրականության զարգացման և տարածման մասին:

Հաջորդ փաստը, որի վրա ուշադրություն է հրավիրված մեծարգու Ա. Շանիձեի<sup>19</sup> և ուրիշների կողմից, առնված է Հեթում պատմիչից: Խոսելով Հայաստանի, նրա բնակչության և դպրության մասին, այդ պատմիչը գրում է. «Աղջք բնակեալք յաշխարհին Հայոց զանազան անուամբք կոչին ըստ դաւառաց և ըստ տեղեաց... Ունին նշանագիրս արամեանս և այլ ևս, որ ասին Հալօցէն (Հայոց կամ Աղուանից)»<sup>20</sup>; Փակագված մասը թարգմանչի հավելումն է, որն ունի բացատրական նշանակություն: Մասնագիտական հետազա ճշգրտումների շնորհիվ պարզված է, որ տվյալ դեպքում «Հալօցէն», «Հալօչէն» ասելով հեղինակը հասկացել է աղվաներեն: Ն. Ակինյանի այդ հարցում կատարած լրացուցիչ աշխատանքը<sup>21</sup> մեզ ավելի լիովին է համոզում դրանում:

Արդ, ի՞նչ է ասում այս վկայությունը: Այն, որ եղել է նաև աղվանական զիր, որը դիտվել է որպես հայկական զրի մի տեսակը: Եվ այսքան միայն: Հեթում պատմիչն այստեղ ունին շի հաղորդում աղվանական գրականության և նրա զարգացման աստիճանի մասին:

Գոյություն ունի մի ուրիշ փաստ էլ, որն արտաքնապես ավելի խոսուն է թվում, և որին նույնական դիմում են ուսումնասիրողները, մանավանդ վերջին ժամանակներս: Հայկական միջնադարյան ձեռագրերում պահպանված է մի հրաշապատում զրուց՝ սրբազն յուղի մասին՝ այսպիսի խորա-

գրով. «Յաղազս պատմութեան սուրբ և աստուածային իսղոյն, զոր զոեալ է ի սրբոյ հարցն յԱրեւելս, յԱղուանի գիրս, և թարգմանեցին ի հայ գիր»<sup>22</sup>: Պետք է նկատել, որ իր բովանդակությամբ և հատկապես իր հետապնդած նպատակով, սույն զրուցը թողնում է հետագայում դիտավորյալ հորինված ստեղծագործության տպագորություն: Այն ամբողջը, ինչ պատմվում է այստեղ սրբազն յուղի մասին՝ ոչ այլ ինչ է, քան հայկական սկզբնաղբյուրներում եղած բազմաթիվ զրուցների քաղածո վերաշարադրություն: Այդպիսի զրուցներից են, օրինակ, Արգար թագավորի և Թրիստոսի նամակագրական կապերին, Թաղեսու առաքյալի Հայաստան գալուն, Եղրդուտի վանքի «Ծիշ յուղի» պատմությանը վերաբերող ավանդապատումները: Հետաքրքրական է, որ այդ նյութը պահպանված է միայն ուշ ժամանակների ձեռագրերում և ունի մի նպատակ: Սրբազն յուղի մենաշնորհը հատկացնել Մշո և. Հովհաննեսի կամ, որ նույնն է, Եղրդուտի վանքին՝ «ի պարծանս աշխարհս հայոց»: Ըստ զրուցի, Եղրդուտի վանքումն է, որ, իբր թե, պահպանվում է սուրբ յուղի այն նախնական շիշը, որի պարունակությունն ստեղծված է եղել Մովսես մարգարի ձեռքով, Զիթենյաց սարում, նրանով է օծվել Թրիստոսը, այն անցել է բազմաթիվ սրբերի ձեռքով և, ի վերջո, հասել Եղրդուտ: Այդ յուղն աստվածային է, ասում է զրուցը. այն ոչ աղելանում է և ոչ պակասում<sup>23</sup>. Հանգամանք, որի ընդգծումով նրա հորինողները կամեցել են ավելի շատ բարձրացնել նրա խորհրդագրությունը և Եղրդուտի հեղինակությունը:

Հայկանալի է, որ այդ զրուցը պիտի ստեղծված լիներ, ամենից առաջ հենց Հայաստանում, Եղրդուտի վանքում՝ նրա միաբանների շահադիտական նպատակներով:

Հետևապես այս վերջին փաստարկն էլ աղվանական գրականության մասին՝ չի կարող արդարացնել իրեն:

Ի՞նչ է ստացվում ի վերջո:

19. А. Шанидзе, Новооткрытый алфавит Кавказских албанцев и его значение для науки, Тбилиси, 1938, стр. 3—4.

20. Հեթում պատմիչ թաթարց, Վենետիկ, 1842, էջ 14:

21. Ն. Ակինյան, Ա. Մերուպ գարգապետ, Վիեննա, 1949, էջ 324—325:

22. А. Г. Абрамян, Декодировка надписей Кавказских атаван, Ереван, 1964, стр. 5.

23. Զեռ. № 2121, թերթ 341թ:

Աղվաններն ունեցել են իրենց գիրը՝ ստեղծված Մհարոպ Մաշտոցի ձեռքով։ Այդ գրով, բնականաբար, ստեղծվել է նաև որոշ գպրություն, որից, սակայն, ցարդ Հայտնի են լոկ վերևում իշխատակված արձանագրությունների մի քանի բեկորները։ Աղվաններն շարադրված ձեռագրերի ոչ մի նշանը չի հասել մեզ, առայժմ չկան նաև որոշակի տեղեկություններ այդպիսիների հրեանի գրյության մասին։ Այսպես ասելով, անշուշտ, մենք ոչ թե կամենում ենք ժխտել նրանց գոյության անառարկելի հնարավորությունը, այլ արձանագրել իրողությունը՝ թյուրիմացություններից խուսափած լինելու համար։

Ահա այստեղ համդիպում ենք խնդրի առնդվածային  
ընույթին. եթե կար աղվաներեն դիր ու դպրություն, ապա պի-  
տի լիներ նաև համապատասխան հարուստ գրականություն։  
Խակ եթե լիներ այզպիսի գրականություն, ապա նրանից պիտի  
որ պահպանված լինեին ե՛ ընագրային նմուշներ, և՛ թարգ-  
մանական։ Զարմանալին այն է, որ ոչ միայն չկան այզպի-  
սիները, այլև ոչ հայկական, ոչ վրացական և ոչ էլ որևէ ուրիշ  
ժողովրդի հին դպրության մեջ չկա գեթ մի որոշակի խոսք՝  
աղվաներն որականության և համապատասխան թարգմա-  
նությունների մասին։ Խնչպէ՞ս եղավ, որ հայկական հնամենի  
ձեռագրերի շարքում, նրանց պատառիկների ու պահպանակ-  
ների մեջ տեղ գտնելով մեզ հասան վրացական, հունական,  
լատինական, հրեական, ասորական, դիշազական, ոռւսական,  
արաբական, պարսկական, թուրքական և շատ ու շատ ուրիշ  
ժողովուրդների գրավոր հուշարձանները՝ ամբողջական հա-  
ստորներով կամ մասունքներով, իսկ աղվաներներնից՝ ո՛չ մի  
պատառիկ, ո՛չ մի տող։ Եվ զա՞ այն դեպքում, եթե վերօնիշ-  
շալ ժողովուրդներից և ոչ մեկն այնքան սերտորեն կապված  
չեր հայ եկեղեցու և դպրության հետ, որքան աղվանները՝  
սկզբից մինչև վերջ։

Աւագանական պարունակությունը, շատ առաջ է աղքանական գրավոր դպրության հարցը, հանգել են տարրեր կարծիքների: Այսպես՝ U. S. Երեմյանը գտնում է, որ աղքանական դպրությունը, ինչպես նշել է Ա. Շանհիձեն, իր զարգացումն է ապրում 5—7-րդ

դարերում: Գրանից հետո, եկեղեցական ներքին պայքարի պատճառով, աղվանական եկեղեցին միանում է Հայկական եկեղեցուն և որդեգրում գրաբարը: Իրան զուգահեռ, գարգարացիների լիգվի հիման վրա ստեղծված զիրն ու գրականությունը, գժվարամատչելիության պատճառով, աստիճանաբար դուրս է մղվում հրապարակից: Ուստի և աղվանական գրականությունը մատնվում է մոռացության և ժամանակի ընթացքում անհետանում: Նրա կարծիքով, դրան նպաստում է նաև Արցախի և Ուտիքի աղվան բնակչության հայացման պրոցեսը<sup>24</sup>: Ազրբեջանցի որոշ մասնագետներ կարծում են, որ Հայերն աղվաններին իրենց մեջ ծովելով՝ միաժամանակ, ծրագրված կերպով՝ աղվանական գրականությունը թարգմանել են Հայերնեն (գրաբար), իսկ բնագրերն անխնա ոչնչացրել<sup>25</sup>: Կան մասնագետներ էլ, որոնք գտնում են, թե ոչ աղվանական զիր է եղել և ոչ գարություն. աղվաններն առաջնորդվել են լոկ հայ գպրությամբ<sup>26</sup>:

Այս վերջին կարծիքը, որ առաջ է քաշել Ն. Ալինյանը, մերժելի կողմէերի հետ, ունի նաև շատ ուշադրավ հարցադրումներ, որոնք, սակայն, գիտական շրջանառության մեջ չեն ներգրավված:

Գոյսություն ունեն նաև վերոհիշյալ կարծիքների միջն տատանվող հայացքներ էլ, որոնք, սակայն, նախորդների հետ միասին, քննվող խնդրի լուծման համար հնարավորություն չեն ստեղծում:

Իրերի այս գրության մեջ, ինչպես տեսնում ենք, Յղպա-  
նից աշխարհի գրի և գրականության պրոբլեմի լուծման ան-  
հրաժեշտությունը, զնալով ավելի սուր կերպարանք է ըն-  
դունելու:

<sup>24</sup> «Очерки истории СССР» (III—IX вв.), Москва, 1958, стр. 328—

329. VII IX 1965 в Баку.

25 З. И. Буниатов, Азербайджан в VII—IX вв., Баку, стр. 97.

26 Յ. Ակինյան, Ս. Մհերոս վարդապետ, Վիճակ, 1949, էջ 310.



Մեր որոնումներն այդ ուղղությամբ՝ ցուց են տալիս, որ եղած դժվարությունը պայմանավորված է Աղվանից աշխարհի բնակչության էթնիկական կազմի և նրա անցյալի պատմության որոշ դրվագների ոչ հանդամանալից ու ճիշտ հետազոտմամբ:

Բանը նրանումն է, որ «Աղվանից աշխարհ», «աղվաններ», «Աղվանից գիր ու գրականություն» և նման այլ հակացողությունները տարբեր դարերում, էթնիկական ու աշխարհագրական առումով, տարբեր բովանդակություն են ունեցել:

Այսպես մոտենալով խնդրին, տեսնում ենք, որ Աղվանից աշխարհի պատմության հարցերը պիտի ուսումնասիրվեն երկու խոշոր ժամանակահատվածներով. ա) սկզբից մինչև 4-րդ դարի երկրորդ կեսը, բ) գրանից հետո, մինչև աղվանական ցեղերի վերանալը:

Ճիշտ է, այլ հարցերի քննության կապակցությամբ կարևոր է այլ պարբերացում սահմանել, սակայն, մեր առջև դրված հարցերի լուծման համար ամենից բնորոշ շրածանը 4-րդ դարի երկրորդ կեսն է: Այդ ժամանակ էր, որ Աղվանից աշխարհի կյանքում տեղի ունեցան հակատագրական նշանակության իրադարձություններ, և սաղմնավորվեցին ներքին բարդ երկույթներ:

Ինչպես հայտնի է, այդ ժամանակ պարսկա-բյուզանդական հակամարտությունները և նրանց միջև ընկած հայկական հզոր պետության ինքնուրույնության հարցերը՝ լուծվեցին 387 թվականի պայմանագրով, որի համաձայն Հայաստանը բաժանվեց վերոհիշյալ երկու բռնատիրությունների միջև՝ զրկվելով իր անկախ պետականությունից:

Պարսկաստանը, որի իշխանության տակ էր ողջ Հյուսիս-արևելյան Հայաստանը, ինչպես նաև Աղվանքը, ի թիվով վարչական այլ միավորների, ստեղծեց Աղվանական վարչական միավոր՝ բուն Աղվանքից և Հայաստանի Ուտիք ու Արցախի դավանակից: Այս նոր Աղվանքը շուրջ երկու անգամ ավելի մեծ էր, քան բուն Աղվանքը թե՛ աշխարհագրական

առումով<sup>27</sup> և թե՛ բնակչության քանակով: Այլ կերպ ասած, նրա շուրջ կեսը Հայաստան էր: Խնդիրը, սակայն, լոկ թվական հաշվիվների մեջ չէր, այլ ներքին նորորակ փոփոխությունների, որոնք և իրենց անջնջելի կնիքը գրին երկրի ապագայի վրա:

Ահա այս հիմնական խնդիրն է, որ մինչև օրս պատշաճ ուսումնասիրության առարկա չի դարձել, ըստ էության հաշվի չի առնվել, ուստի և հանդիսացել է զանազան շփոթությունների սկզբնապատճառ:

\* \* \*

Ստրաբոնի վկայությամբ, իր ժամանակի Աղվանքում, ինչպես կտեսնենք ստորև, ապրում էին աղվանական 26 ցեղախմբեր, որոնք վարում էին անասնապահական, որսորդական կյանք և կառավարվում մեկ թագավորով: Նրանց գրաված երկիրը տարածված էր Վրաստանից մինչև Կասպից ծովը և Կովկասյան լեռներից մինչև Կուր գետը:

Այսպիսին էր այն ժամանակվա Աղվանքը, կամ բուն Աղվանքը:

Եվ, ահա, 387 թվականի պայմանագրով այդ Աղվանքին կցված հայկական կողերի և հայ բնակչության շնորհիվ, կըրկնակի մեծացավ Աղվանքը<sup>27</sup> առիթ հանդիսանալով ներքին նորորակ տեղաշարժերի: Այդ ժամանակից սկսած, հայ աղքարնակչությունը հանդիսանում է ոչ միայն որպես այդ ընտանիքի ամենամեծ անդամը, այլև ամենահզորը՝ իր միասնական լեզվով և երկրագործական բարձր կենսագործություններում: Փատերը ցույց են տալիս, որ այդ ժամանակից սկսած, երկրի ներքին կառավարության գործում և տնտեսական ու քաղաքական ասպարեզներում իշխող դիրքը, հիմնականում, անցնում է հայ իշխանների ձևորոք: Ամենից առաջ այդ հատվածի վրա են հենվում նախ՝ Աղվանից աշխարհի Արշակունի թագավորությունը, որ տեսաց մինչև 6-րդ դարի առաջին տասնամ-

27 Ս. Տ. Երևանյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 120.

յակները, ապա՝ Միհրանյան և Առանշահիկ տոհմերը, մինչև որ երկրի ամբողջ զեկվարությունն անցնում է Հայ ֆեոդալ-ների ձեռքք: Ըստ այդմ, նոր Աղվանքում որպես պետական ու պաշտոնական լեզու, իշխում է Հայոց լեզուն: Աղվանից թագավորները 4-6-րդ դարերում, լինելով Արշակունիներ, խոսում ու գրում էին նաև Հայերեն: Եվ դա միանգամայն բնական էր, որովհետև նրանք չէին կարող խոսել աղվանական բոլոր ցեղախմբերի, կամ զեթ նրանց կեսի լեզուներով: Քաղաքական առումով էլ վերջին ուղին նախընտրելի չէր կարող լինել: Մյուս կողմից էլ այս երեսույթի հետագա խորացմանը նպաստում էր ինքը՝ աղվանական եկեղեցին, որը ոչ այլ ինչ էր, քան Հայկական եկեղեցու մի թեր: Մանավանդ, որ երկրի հոգևոր առաջնորդներն էլ, հիմնականում, հայեր էին:

Այժմ ինքնին հասկանալի է, որ այդ նոր Աղվանքում Մեսրոպ Մաշտոցի շանքերով պիտի հիմնավորված լիներ ոչ թե մի գիր և մի դպրություն, այլ երկու՝ Հայկական, աղվանական: Հայկականը՝ Աղվանից աշխարհի Հայության համար, աղվանականը՝ աղվանական ցեղախմբերի: Ճիշտ է, Մեսրոպ Մաշտոցը և ժամանակի մյուս գործիչները հոգացել են, որպեսզի աղվանական կամ աղվաներեն պարությունն էլ զարգանար, սակայն, պատմական իրադրությունները նրան դրել էին փակուղու առջև:

Խոսքը վերաբերում է պարսիկների, Հոների, արաբների և այլ բռնակալների անընդմեջ ասպատակումներին, կրոնական ու ազգային հալածանքներին, որոնց պատճառով, ի վերջո, աղվանական ցեղախմբերը տարրալուծվեցին և պատմության ասպարեզից վերացան: Փոքր դեր չխաղացին այդ առումով նաև բրիստոնեական եկեղեցու ուղղափառ ու քաղկեդոնիկ թերերի միջն եղած համար գոտիմարտերը:

Ուստի 5-րդ դարի սկզբներին հիմնավորված աղվաներեն գիրն ու դպրությունը, տեղի հայ դպրության կողքին, որոշ զարգացում և համեմատաբար սահմանափակ օգտագործում ունենալուց հետո, աստիճանաբար, թեակոխում է իր անհետացման շրջանը՝ մատնվելով մոռացության: Մովսես Կա-

ղանկատվացու «Պատմութիւն Աղվանից» երկը ցույց է տալիս, որ գեռն 7-րդ դարում աղվաներեն զպրություն, գեր պաշտոնական առումով, համարյա շկար, իսկ եթե կար էլ, ապա շատ աննշան էր նրա գերը:

Եվ դա է պատճառը, որ այսօր շունենք աղվաներեն ձեռդրերի մնացորդներ:

Վերեւում ասածներից միաժամանակ պարզ է զառնում մի ուրիշ կարելոր հանգամանք. դա Աղվանից աշխարհին կըց-ված Հայոց Արևելից կողմանց դպրության պատմության խմելիքն է, որը ցարդ այդ առումով չի հետազոտվել: Մինչդեռ հարցի հիմնական պատասխանը թաքնված է այսուհետ Զէ՝ որ այդ դպրությունն է եղել Աղվանից երկրի պետական, պաշտոնական, իսկ հետո նաև՝ համապատական միակ դպրությունը:

Հետեւապես, մենք երբեք հստակ պատկերացում չենք ունենա «աղվանից գիր ու զրականություն» կոչված հարցի մասին, եթե շրնդունենք, որ դա իրականում, պատմականորեն ստեղծված մի բարդ հասկացողություն է՝ բաղկացած երկու մասից:

Հայերեն գիր ու դպրություն

Աղվաներեն գիր ու դպրություն:

Քանի որ Աղվանից աշխարհի աղվաներեն գրի և դպրության մասին բավականին շատ հետազոտություններ կան և որին պատշաճ շափով անդրադարձնանք նաև մենք, ուստի այդ բանով էլ սահմանափակներ մեր խոսքը նրա վերաբերյալ:

Մնում է անդրադառնալ հարցի մյուս կողմին՝ Աղվանից աշխարհի հայերեն կամ Հայոց Արևելից կողմանց գրի և դպրության ուսումնասիրությանը:

\* \* \*

Վերեւում արված բացատրությունն ինքնին բավական կլիներ, որպեսզի մենք անմիջապես անցնեինք անհրաժեշտ նյութերի վերլուծությանը: Խնդիրը, սակայն, դժվարեցված է

վերջին ժամանակներս տարածված մի թյուր կարծիքով՝ կապված բուն Աղվանքի նախկինում ունեցած սահմանների և բնակչության պատմության հետ Այդ կարծիքի համաձայն, 387 թվականին Աղվանքին միացված տարածությունները, իբր թե նախապես պատկանելիս են եղել Աղվանքին և բնակեցված են եղել աղվաններով: Ուստի 387 թվականին տեղի ունեցած դեպքերը՝ կապված Ուտիքի և Արցախի հետ՝ դիտվում են որպես բռնագրավված հողերի վերադարձ իրենց նախկին տիրոջը: Եթե քանի որ այդ գավառների բնակչությունն էլ, ըստ այդ տեսության, համարվում է աղվանական, ուստի այդուհետ բացատրության կարու ու մի խնդիր չի նկատվում:

Առդ, ի՞նչ հիմք ունեն վերևում հիշատակված կարծիքի հեղինակներն ու պաշտպանները: Էստ էության և ոչ մի ժանրակշիռ ու հավաստի հիմք: Ազելին, պարզվում է, որ այդ խնդիրը հատուկ քննության առարկա անդամ չի դարձել. նրա մասին խոսողները բավարարվել են կամ լոկ հայտարարությամբ կամ էլ՝ թուուցիկ ակնարկներով: Այսուամենայնիվ, նկատելի է երկու սկզբնազբյուր, որոնք այդ հարցում ելակետացին դեր են խաղացել: Դրանցից առաջինը Ստրաբոնի «Աշխարհագրություն» է, իսկ երկրորդը՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»: Այդ աղբյուրների վրա հենվելով, որոշ մասնագետներ գտնում են, որ Հայոց Ամստաշին թագավորը՝ 2-րդ դարում (ն. մ. թ.) կատարած իր նվաճումների ժամանակ Աղվանից աշխարհից խլել և Հայաստանին է միացրել նաև Ուտիքն ու Արցախը, որոնք չուրջ 600 տարի հետո, 387 թվականին վերագրածվեցին Աղվանքին: Այնուհետեւ, այդպես մտածողները գտնում են, որ «խլված» և «վերադարձված» այդ գավառների բնակիչներն էլ, իբր թե, աղվաններ լինելով, մինչև 5—7-րդ դարերը (իսկ ըստ ոմանց էլ ավելի ուշ ժամանակները) պահել են իրենց լեզուն և հետո միայն, բռնությամբ հայացել: Այս հիմքի վրա էլ ծնունդ են առել նորանոր սխալներ ու թյուրիմացություններ:

Մեր կատարած քննությունները, սակայն, ցույց են տալիս, որ ո՛չ Ստրաբոնի, ո՛չ Մովսես Խորենացու և ոչ էլ մի ուրիշ հեղինակի մոտ նման որևէ տեղեկություն չկա: Ընդհակառակը, հենց այդ հեղինակների և ուրիշների մոտ կան բավարար վկայություններ այն մասին, որ Ուտիքն ու Արցախը պատմական Հայաստանի հին գավառներից են՝ իրենց հայրնակությամբ:

Զերծենալով այստեղ վեր հանել հարցի ամբողջ պատմությունը, կցանկանացինք միայն մի երկու օրինակով ցույց տալ, թե ինչու ճիշտ չեն այն գիտնականները, որոնք «Հենվելով» Ստրաբոնի և Մովսես Խորենացու վրա, առաջ են քաշը շեմ մատնանշված սխալ կարծիքը:

Այս առումով նպատակահարմար ենք գտնում հիշատակել անվանի արևելագիտ Կ. Վ. Տքիերին, որը վերջերս հրատարակեց մի մեծարժեք ուսումնասիրություն՝ նվիրված Աղվանից աշխարհի պատմությանը: Այստեղ մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ նա, ենելով ափրող մտայնությունից, գրում է, «Ճ-րդ դարում նախ. մ. թ. հայոց թագավորը Արտաշես Առաջինը (189—160 թթ.) Հայաստանին միացրեց մի շարք հարևան գավառներ, այդ թվում նաև Կուր գետի աջ ափը, ուր բնակվում էին սակերը, ուտիները և գարգար-աղվանները. այդ ցեղերը բաժան-բաժան լինելու պատճառով, շկարողացան գիմաղրել իրենց հողերի հափշտակմանը»: Այդ նույն տեղում հեղինակը, ծանոթագրության կարգով, ասում է. «Բռնագրավված այդ գավառները (Շակաշեն, Ուտիք, Արցախ, Փայտակարան) մինչև 4-րդ դարը մ. թ. մնացին Հայաստանի կազմում, իսկ հետո վերամիավորվեցին Աղվանքի հետ»<sup>28</sup>: Այստեղ էլ «բռնագրավումների» այս հայտարարությանը հաշորդում է նշված վայրերի բնակչության հայացման ու ճիշտ ենթադրությունը: Բայ նրա, 7-րդ դարում «Արցախը և Ուտիքի մեծ մասն արդեն հայացած էին»<sup>29</sup>:

<sup>28</sup> К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, Москва—Ленинград. 1959, стр. 58.

<sup>29</sup> Անդ, էջ 11:

Արդ, ի՞նչ չիմք է ցույց տալիս մեծարդու գիտնականը Արտաշիսյան նվաճումների մասին խոսելիս: Նա ցույց է տալիս Ստրաբոնի Աշխարհագրության 11-րդ գրքի 14-րդ գլուխ 5-րդ պարբերությունը (Страбон, XI. 14. 5):

ԱՀա Ստրաբոնի այն տռղերը, ուր խոսվում է Արտաշիս-  
յան նվաճումների մասին,

«...զրավելով Հարեան ժողովուրդների գավառներից մասեր, մեղացիներից նրանք անշատեցին Կասպիանեն, Փավնիտիսը և Թասորոպեղան, իրերներից՝ Պարիադրիսի լեռնա-անշերը, Խորձենեն և Գոգարենեն, որը գտնվում է Կուր գետի մյուս կողմում, խալիբներից և մոսինոյզներից՝ Կարենիտիսը և Քսերբասնեն (Դիրջանը), որոնք սահմանակից են Փարբ-Հայրին կամ Նրա մասերն են, իսկ կատառներից Ակիլիսենեն (Եկեղիքը) և Անտիտավրոսի շրջակայթի գավառը, իսկ ասորիներից՝ Տամորիտիսը (Տմորիթ): Այնպիս, որ բոլորը խոսում են միևնույն լեզվով»<sup>30:</sup>

(«... συνηθέγασαν, ἐκ τῶν περικειμένων ἐθνῶν ἀποτελόμενοι μέρη, ἐκ Μήδων μὲν τὴν τε Κασπιανήν καὶ Φαυνίτιν καὶ Βασορόπεδαν, Ἰβήρων δὲ τὴν τε παρώρειαν τοῦ Παριάδρου καὶ τὴν Χορζηγήν καὶ Γωγαρηγήν, πέραν οὖσαν τοῦ Κύρου, Χαλιβῶν δὲ καὶ Μοσυνοίκων Καρηνίτιν καὶ Ξερέηνήν, ἡ τῇ μικρᾷ Αρμενίᾳ ἐστίν διμορα ἡ καὶ μέρη αὐτῆς ἐστί, Καταόνων δὲ· Ακιλισηγήν καὶ τὴν περὶ τῶν Ἀντίταυρου, Σύρων δὲ Ταρωνίτιν, ὥστε πάντας ὁμογλώτους εἶναι»):<sup>31</sup>

Ինչպես տեսնում ենք, Ստրաբոնը բարեկիսղորեն և համբեկատար թվարկել է այն բոլոր երկրների ու նրանցից նվազված դավաների ցանկը, որոնք նկատի է ունեցել նաև Արտաշես Առաջինի մասին խոսելիս։ Սակայն տեսնում ենք նաև, որ այդտեղ ակնարկ անդամ չկա ոչ Ռւտիքի, ոչ Շակաշենի, ոչ Արցախի և ոչ էլ անդամ Աղվանիքի մասին։ Մինչ, եթիւ այդպիսի իրողություն եղած լիներ, ապա Ստրաբոնը, շատ լավ

<sup>30</sup> Страбон, География, 1964, XI. XIV. 5.

<sup>11</sup> The Geography of Strabo with an English translation by Horace Edward Jones, vol. V, London, 1954, p. 322—324.

ճանաւակնով Աղվանքը, կարող էր զբել նաև այդ մասին, ստեղծելով մոռագորապես արագիսի զարձվածք.

«Եղիաներից — Շակաշհնը, Ռոտիքը, Արցախը և Փայտակարանը»<sup>32</sup>: Քսառ որում, այս դարձվածքն էլ պիտի զետեղվեր, Հավանաբար, Մեդացիներին և Իրերներին նվիրված Ռաբուկումների արանքում:

Նույնիսկ Ստրաբոնի այդ պարբերությունը չի էլ ավարտվում սովորական «և այլն»-ով, որպեսզի կարծենք, թի մասնագետներն այսուղե են ուզում տեսնել մի ամբողջ դարձվածք:

Եթէ նույնիսկ մի պահ ընդունենք, որ Արտաշեսի նվազումների մեջ պիտի լինենին նաև նշված վայրերը, ապա դարձյալ անհիմն կլիներ հայտարարել, թե 7-րդ դարում «Արցախը և Ռւտիքի մեծ մասն արդեն հայացած էին», որովհետև Սբորաբոնը գեռ 1-ին դարում վկայում է, որ Հայաստանին կը գած այդ ժողովուրդները հիմա խոսում են մի լեզվով, այսինքն, հայերնեով։ Սակայն տեղն ու տեղն էլ հայտարարենք, որ այդ լեզուն Ռւտիքի, Ծակաշենի և Արցախի համար ոչ թե նոր էր, այլ մայրենի լեզու՝ ծնված հայ ժողովրդի կազմավորման ժամանակներում։

Այսուհետեւ, Կ. Վ. Տրեերը, և այս հարցում նրա նման  
մտածողները, աննկատելիորեն ընկնում են մի այլ հակասու-  
թյան մեջ, երբ խոսում են Աղվանից 26 ցեղախմբերի մասին։  
Այդ տեղեկությունը, իրոք, գալիս է Ստրաբոնից, որն այդ  
քսանվեց ցեղախմբերի հաշվով էլ խոսում է նրանց քսանվեց  
լեզուների մասին<sup>33</sup>, Մասնագետներն ահա այս 26 ցեղախմբ-  
երի և նրանց 26 լեզուների մեջ են մտցնում նաև Ռտիք-  
Արցախյան վայրերի բնակիչներին ու նրանց լեզուները, մո-  
ռանալով, որ Ստրաբոնը հենց այդ ժամանակ վկայում է, որ  
նաև Ռտիք-Արցախյան վայրերի բնակիչները խոսում էին Հա-  
յերեն։ Իսկ զա ինքնին ցույց է տալիս, որ Ստրաբոնի մտքով  
անոնմ չի անոնմ այդ վայրերն աղվանական Համարել։

32. *Փայտակարանը* հավանաբար Փավելիտիսն է՝ նվաճված մեղացիներից:

32 Φωτιστικά πανίρ ζωγραφικά παραπλήσια σημεία στην αρχαία Ελλάδα

33 Страбон, География, 1964, XI. IV. 6.

ված վերոհիշյալ նվաճումների մասին, գրում է. «Եյն ժամանակվանից անտիկ հեղինակները՝ Աղվանքի և Հայաստանի սահմանագիծը հաշվել են Կուր գետը»<sup>34</sup>: Այս ձևակերպման համաձայն այնպես է ստացվում, որ իբր թե մինչև այդ օրերը անտիկ հեղինակները Աղվանքի և Հայաստանի միջև ա'յլ սահմանագիծ են ճանաշել, իսկ Արտաշես Առաջինից հետո՝ մեկ ուրիշ: Դա ևս ճիշտ չէ, որովհետև դրա համար ո՛չ անտիկ և ո՛չ էլ հետագա ժամանակների հեղինակներից և ոչ մեկի մոտ որեւէ հիմք չկա:

Այս առումով ամելի ճիշտ տողերի ենք հանդիպում նույն հեղինակի մի այլ աշխատության մեջ, լույս տեսած 1960 թվականին, ուր Աղվանքի հարավային սահմանագիծ է ճանաշված «մինչև Յ-րդ դարը Կուր գետը, ապա Յ-4-րդ դարերից՝ Արաքս գետը»<sup>35</sup>:

Այս արդեն ճիշտ մոտեցումը կարու է լոկ մի ճշգրտման—ժամանակի առումով, որովհետև Կուր գետով ձգվող սահմանը պաշտոնապես տեղաշարժվել է ոչ թե Յ-4-րդ դարերում, այլ՝ 4-րդ դարի վերջին:

Այսպիսով, կարող ենք ասել, որ Ստրաբոնի Աշխարհագրության 11-րդ գրքի 14-րդ գլուխ 5-րդ պարբերությունը ոչ մի հիմք չի տալիս Ուտիքին ու Արցախը մացնելու Արտաշյան նվաճումների<sup>36</sup> ցանկի մեջ: Կրկնենք նաև, որ և՛ Ստրաբոնի մոտ, և՛ առհասարակ գոյություն շունի նման հիմք:

<sup>34</sup> К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, М.—Л., 1959, стр. 58.

<sup>35</sup> К. В. Тревер, К вопросу о культуре Кавказской Албании, М.—Л., 1960, стр. 2.

<sup>36</sup> Ներևս Ծնորհալին իր Վիպասանության մեջ խոսում է Արտաշես Առաջինի մասին, գրելով.

Արտաշէսի մերոյ նրատեալ  
Աւ լերկորդի դա՞ Համանեալ,  
Ռզնախնական յափշտակեալ...  
Եւ յարեմուտը խաղացեալ...  
Քան զեղէքսանդրը վեհ եղեալ,  
Պոլիկրատեայ գովարանեալ...

(Ներևս Ծնորհալի, Գիրը, որ կոչի Յիսուս որդի, Կ. Պոլիս, 1824, էջ 343):

Կ. Վ. Տրեների այս կարծիքը՝ Ստրաբոնի նշված կետի վկայակությամբ՝ նրանից առաջ ու հետո պաշտպանել են նաև այլ հետագոտողներ, որոնց անդրադառնալն ավելորդ ենք համարում: Մենք դրանցից նախընտրեցինք միայն վերոհիշյալ ուսումնասիրությունը՝ որպես աղվանագիտության բնագավառի վերջին բարձրարժեք մինազրություն:

Կուր գետի աշակինյա տարածությունների (Ուտիք, Արցախ) մասին այդ սխալ կարծիքը յուրովի պաշտպանված ենք տեսնում մի այլ գիտնականի մոտ ևս, որը հենցել է Ստրաբոնի «Աշխարհագրության» ուրիշ վկայության վրա: Խոսքը նշանավոր արևելագետ ակադ. Ա. Ե. Կրիմսկու մասին է: Նրա համար էլ, իբր թե, խնդիրը լուծված է, ուստի նա ի միջի այլոց է հիշում Հարցի այդ կողմը, անելով մի քանի դիտողություններ, որոնք ներկա դեպքում կարու են պարզաբանման:

Խոսկով Աղվանից աշխարհի մասին, նա այդ երկրի նախնական, հին ամբողջությունը պատկերացնում է հետևյալ ձեւվով. «Անդրկովկասյան այդ երկիրը, տարածված Վրաստանի և Կասպից ծովի միջև, ձախակինյա մասով՝ մինչև ծովային հզոր ալիքները, աշակինյա մասով՝ մինչև Արաքսի զետարեանը (երբեմն այն ևս հասնում էր մինչև ծովի ափերը), հունա-Հոռոմեական ժամանակներում կոչվում էր Ալբանիա, Հայերին արտասանությամբ՝ Աղվանք»<sup>37</sup>:

Այս նախադասությունից այնպես է ստացվում, որ իբր թե Հունա-Հոռոմեական հեղինակները Աղվանք են համարել նաև Կուր գետի աշակինյա տարածությունները: Դա, ինչպես նշեցինք վերևում, ճիշտ չէ, որովհետև այդ հեղինակների մոտ նման վկայություններ չկան: Ինքը, Ա. Ե. Կրիմսկին էլ քաշածանոթ է եղել այս իրողությանը և այդ մասին արել Հատուկ հիշատակություն: Բայց նրա կարծիքով Հունա-Հոռոմեական հեղինակներն այդպիսի վկայություն չեն թողել, ենելով

<sup>37</sup> А. Е. Крымский, Страницы из истории Северного или Кавказского Азербайджана (классической Албании). См. «Сборник статей — Сергею Феодоровичу Ольденбургу», Ленинград, 1934, стр. 289.

բաղաքական նկատառումներից: Ահա իր բացատրությունը, «Ի միջի այլոց պետք է նշել, որ պետական-բազաքական պատճառներով Հունա-Հոռմեական դասական հեղինակները «Աղվանք» ասելով հասկանում էին միայն ձախափնյա մասը կամ «Աղվանական թագավորությունը», աջափնյան նրանք համարում էին հայկական, որովհետև այն կազմում էր հայկական պետության մասը»<sup>38</sup>:

Այսպիսով, Ա. Ե. Կրիմսկին ինքն է հերքում քիչ առաջ արած այն հայտարարությունը, թե նաև աջափնյա տարածությունները «Հունա-Հոռմեական ժամանակներում կոչվում էին Ալբանիա... Աղվանք», որովհետև, իր իսկ պնդումով, Հունա-Հոռմեական աղբյուրներն այդպիսի վկայություններ շունեն: Բնդհակառակը, «աջափնյան նրանք համարում էին հայկական»<sup>39</sup>: Իսկ թե ինչո՞ւ այդ հեղինակները իրենց երկասիրություններում պիտի միտում ցուցաբերեին այդ հարցում, կամ ինչո՞ւ նրանք Հայաստանի մասը կազմող նշված աջափնյա տարածությունները պիտի հայկական համարեին, այլ աղվանական, հեղինակն այդ մասին բացատրություն չի տախտ:

Նկատելի է, սակայն, որ նրա համոզմունքով Աղվանքը ձգված է եղել նաև Կոր գետից հարավ այն սահմաններով, որ նշվեց վերեւում: Ուշադիր քննելով անվանի գիտնականի ուսումնասիրությունը, տեսնում ենք, որ նա, այդուամբնայնվ, ակնարկում է երկու հիմք: Գրանցից մեկը նկատի ունի Մովսես Կաղանկատվացու (7-րդ դար) վկայությունը, որի համաձայն «Վաշագան թագավորը տիրում էր Կոր գետի զույգ ափերին»<sup>40</sup>: Պետք է նկատել, որ դա վերաբերում է 387 թվականից հետո ընկած ժամանակներին և նախորդ դարերի իրողությանը չի կարող վերաբերել: Ուստի դա չի կարող նրա պաշտպանած կարծիքի համար հիմք հանդիսանալ:

Ինչ վերաբերում է հեղինակի մյուս ակնարկին, ապա դա կապված է Ստրաբոնի Աշխարհագրության հետ: Այստեղ

մատնանշված է այդ երկի 11-րդ գրքի 7-րդ գլուխ 1-ին պարբերությունը՝ առանց մեջբերման և առանց պատշաճ բացարարության: Ուշադիր ծանօթանալով այդ կետին, տեսնում ենք, որ այնտեղ էլ որևէ հիմք չկա, որպեսզի Ուտիքն ու Արցախը, այսինքն, Կուրի աջափնյա մասերը, դիտված համարվին որպես մասն Աղվանից աշխարհի: Այդտեղ կա միայն հիշատակություն, թե Կասպից ծովի հարավային լեռնալանջերին գրտնը կելիս է եղել աղվանական մի փոքր օջախ: Ահա այդ տողերը.

«Կասպից ծովը մտնելիս՝ դեպի ձախ ընկած կողմում ապրում են քոչվորները ...ապա՝ անապատ, հետո... Վրկանիան, որի մոտ Կասպից ծովը... ծավալվում է ընդհուպ մինչև... մեղական և հայկական լեռներին շփվելու Այդ լեռները... ալարտվում են ծովի մոտ, կազմելով ծովածոցի ամենահուավոր անկյունը: Լեռների այդ լանջին, ծովից մինչև ամենաբարձր գագաթները, ոչ մեծ տարածության վրա ապրում են աղվանների և հայերի բեկորներ, մինչ լեռնալանջի մեծ մասը զբաղեցնում են գելերը, կատիշները, ամարդները, վիտիները (ուտիները)<sup>41</sup>, անարիակները»<sup>42</sup>:

Այստեղից պարզ երևում է, որ խոսքը ոչ թե Ուտիք-Արցախյան տարածությունների, այլ ծովափնյա լեռնալանջերի մասին է: Բացի դրանից, այդ վայրերում որքան աղվաններ են եղել, նույնքան էլ հայեր են ապրել: Էլ ի՞նչպես կարելի է այդ վայրերը Աղվանք համարել և ոչ, ասինք, Հայաստան, մանավայրերը Աղվանք համարել և ոչ, ասինք, Հայաստան, մանավանդ, որ լեռների մի մասը կոչվել է հայկական<sup>43</sup> և ոչ աղվանական:

Այսպիսով, տեսնում ենք, որ Ա. Ե. Կրիմսկու փորձը՝ Ուտիք-Արցախյան տարածությունները համարել պատմական Աղվանքի աջափնյա մաս, գիտականորեն չի փաստարկված: Ստրաբոնի մոտ նա ևս չի դտել համապատասխան հիմք:

<sup>41</sup> Ուտիների մասին տե՛ս Հավելված Ա:

<sup>42</sup> Страбон, География, 1964, XI. VII. 1.

<sup>43</sup> Թերեւս պատմիների խոսքը Հայության այդ բեկորների մասին է՝ կապված Սմբատ Վրկանա Մարգարեանի անվան հետ:

Ճիշտը՝ նրա այն դիտողությունն է, թե Հունա-Հռոմեական հեղինակները Կուր զետի աջափնյա տարածությունները դիտել են որպես Հայաստան։ Եվ այսքան միայն։

Ուրիշ փորձ, որը կապված լիներ Ստրաբոնի կամ առհասարակ Հունա-Հռոմեական աղբյուրների հետ և նպատակ ունենար նրանց այլ վկայությունների օգնությամբ փաստարկել բննվող սխալ կարծիքը, մեզ հայտնի չէ։

Մեկ, որ Ստրաբոնի մոտ «գտնված» են Համարվել փաստեր, ապա հեշտ է եղել նման Հիմքեր որոնել նաև Մովսես Խորենացու մոտ։ Այստեղ էլ խնդիրը հատուկ քննության առարկա չի դարձել, այլ ուղղակի խոսվել է նրա մասին որպես ընդունելի ճշմարտության<sup>44</sup>։ Շփոթության առիթը հանդիսացել է Մովսես Խորենացու հաղորդած Առան նախնու զրուցի ոչ ճիշտ մեկնաբանությունը։

Բանը նրանումն է, որ այդ զրուցը քննելիս, ոմանք այն նույնացրել են Մովսես Կաղանկատվացու մոտ առկա Համապատասխան վկայության հետ, չնկատելով այդ աղբյուրների տարածայնությունները։ Ճիշտ է, Մովսես Կաղանկատվացին օգտվել է Մովսես Խորենացուց, սակայն չի կարողացել նրա պատմության տարրեր մասերում գտնվող փաստերից անսխալ վերաշրադրություն կազմել։ Ստեղծել է այլ բնույթի զրուց։ Բւտի և մի Առանի փոխարեն նրա մոտ հանդիս են եկել երկու Առաններ, Աղվանքի անոնք առաջացած է Համարվել ոչ թի Սիսակ Սյունեցու «ազու» բարբից, այլ՝ Առանի։ Բացի դրանից, ըստ Մովսես Խորենացու, Վաղարշակ թագավորը նվաճված՝ «հեկամուտ» ցեղերի (այսինքն՝ աղվանների) վրա առաջնորդ, կուսակալ չի նշանակել, մինչդեռ, ըստ Մովսես Կաղանկատվացու՝ նշանակել է, և այդ կուսակալն էլ Առան է եղել։

Ահա այս բոլորն էլ պայմանավորում են յուրատեսակ շփոթություններ, թողնելով այն տապալորությունը, որ իբր դրանց Հիմքը Մովսես Խորենացին է։

<sup>44</sup> Տե՛ս, օրինակ, «Օчерки истории СССР» (III—IX вв.), Москва, 1958, стр. 303։

Ուշադիր քննությունը ցույց է տալիս, որ Մովսես Խորենացու այդ վկայությունների համաձայն բուն Աղվանքի հարավային սահմանը ոչ միայն Կուր զետին չի հասել, այլև անցել է Մովսեսի դաշտի Հյուսիսային եզերով։ Թա արդեն խոսում է մեր կարծիքի օտարին և պատահականության արդյունքը չէ, որովհետև Մովսես Խորենացին քաջածանոթ է եղել պատմական Հայաստանի նաև Հյուսիսային սահմաններին։ Թայց մենք չենք կամ հնում այստեղ ծավալվել այդ խնդրի քննության մեջ, որովհետև հեղինակը, որպես փաստական եղակետ, վկայակոչում է ժողովրդական բանահյուսությունը և ոչ թե որոշակի փատահելի աղբյուրներ։ Ինչ վերաբերում է Մովսես Խորենացու ունեցած հստակ պատկերացմանը։ Ուշիք-Արցախյան վայրերի Հայաստանին պատկանելու մասին, այդ առթիվ՝ թիշ հետո։

Ահա մոտավորապես այն կարծիքներն ու Հիմքերը, որոնց անհրաժեշտ էր անդրադառնալ Ինչպես տեսանք, դրանցից և ոչ մեկը չի կարող արդարացնել այն անհիմն կարծիքի գոյությունը, որի համաձայն Ուտիքն ու Արցախը համարվում են Աղվանից աշխարհից Արտաշշես Առաջինի ձեռքով խլված աղվանաբնակ տարածություններ։ Դրանք հայարնակ և Հայապատական այն գավառներից են, որոնցից կազմված է եղել պատմական Հայաստանը և մասնավորապես Մեծ Հայքը։ Հայ ժողովրդի կազմավորման ժամանակներից սկսած։ Այս իրողությունը հաստատվում է ոչ միայն քննվող սխալ կարծիքի հերքումով, այլև բազմաթիվ ուրիշ վկայություններով, որոնցից կարեռներին կփորձենք ծանոթանալ ստորև։

\* \* \*

Ստրաբոնը, Աղվանից աշխարհի մասին խոսող և նրա աշխարհադրական մոտավոր սահմանները տվող անդրանիկ հեղինակն է։ Բացի դրանից, այդ նույն հեղինակն է, որ կոնկրետ տեղեկություններ է տալիս Հայաստանի Հյուսիսային սահմանների վերաբերյալ՝ ընդուակ մինչև Աղվանք։ Այս առումով առանձնապես ուշագրավ են նրա այն տողերը, որոնք

Նվիրված են Հայկական նշանավոր հովհանքների կամ դաշտավայրերի նկարագրությանը: Այստեղ, Արաքսի հայապատկան հովտաղաշտի մասին խոսելիս, նա գրում է. «Այդ հարթավայրից հետո գալիս է Շակաշենը, որը նույնպես սահմանակցում է Աղվանքին և Կուր գետին»<sup>45</sup>: Նույն տեղում Սրբարոնը, Արաքսի մասին հիշելիս, նկատել է տալիս նաև Արաքսի սահմանային այն հատվածը, որտեղ այդ գետը մոտենում է Կասպից ծովին և թափում նրա մեջ. «...մինչև Աղվանքի և Հայաստանի սահմանները, որտեղ ծովն են թափում Կուր և Արաքս գետերը»<sup>46</sup>: Այստեղից որոշակի երեսում է, որ ըստ Ստրաբոնի, Հայաստանի և Աղվանքի սահմանագիծն սկսվել է Կուր և Արաքս գետերի Կասպից ծովը թափած կետից, ապա ձգվել դեպի արևմուտք Կուր գետով, իրենից Հարավ՝ Հայաստանի կազմի մեջ թողնելով Արաքսի դաշտը, Շակաշենը, Գուգարքը:

Ստրաբոնի վկայություններից ուշագրավ են նաև Տիգրան Երկրորդին նվիրված հետեւյալ տողերը. «Արտաշեսի հետնորդը հանդիսացավ Տիգրանը, որը տիրեց բարի բուն իմաստով Հայաստանին. այդ երկիրը սահմանակից է Միդիային, Աղվանքին և Իրերիային՝ ընդհուպ մինչև Կոլխիդան և Կապաղովկիան՝ Եվքսինյան Պոնտոսում»<sup>47</sup>, Մինք տեսանք, թե նա ինչ սահմանագիծ է հասկացել ընկած Հայաստանի և Աղվանքի միջև, և այդ սահմանագիծը նա այժմ համարում է բուն Հայաստանի սահմանագիծ, այսինքն, իսկական, պատմական Հայաստանի սահմանագիծ: Հանգամանք, որը խոսում է շատ ավելի հեռավոր ժամանակների մասին, քան Ստրաբոնի և Տիգրան Երկրորդի ժամանակներն էին: Այսուհետև, ինչպես Հայտնի է, Տիգրան Մեծի պարտությունից հետո, Հայաստանից անշատվեցին այն հողերը, որոնք համարվում էին բռնագրավված (Ասրպատական, Կորդուք, Սիրիա, Փյունիկիա և այլն): Այս բոլորից հետո էլ Հայաստանի սահմանը մնում

45. Страбон, География, 1964, XI, XIV, 15.

46. Անդ, XI, I, 5.

47. Անդ, XI, XIV, 15:

է Կուր գետը: Դա էլ իր հերթին է ապացուցում, որ Ուսիք-Արցախյան տարածությունները բուն Հայաստանի անբաժանելի մասերն էին համարվում նույնիսկ՝ Հայաստանը նվաճած թշնամիների կողմից:

Ստրաբոնի կարծիքը Շակաշենի մասին տեսանք վերևում: Նորա մի այլ վկայության մեջ նորից է կրկնված նույն փաստը՝ Կապված ավելի քան հեռավոր ժամանակների հետ. «Սակերը կաղղմակերպեցին արշավանքներ... խեցին Բակտրիան և տիբրեցին Հայաստանի լավագույն հողին, որին նրանք թողին անուն՝ ըստ իրենց անվան՝ Շակաշեն»<sup>48</sup>: Այստեղից որոշակի հասկացվում է, որ սույն տողերի հեղինակի իմացությամբ Շակաշենը Հայաստանի մասն է եղել ոչ միայն իր օրերին, այլև սակերի բռնագրավվումից առաջ: Խսկ զա մեզ տանում է գետի հայ ժողովրդի կազմավորման նախնական շրջանը:

Հայ-աղվանական պետական, ավանդական սահմանագիծի մասին ուղղակի և անուղղակի շատ վկայություններ կան նաև Հունա-Հռոմեական այլ հեղինակների մոտ: Այսպիս՝ Պինիոս Ավագը, խոսելով աղվանների մասին, այսպես է շուրջ տալիս նրանց գրաված տարածությունները. «Աղվանները տարածված են Կոլկասյան լեռների վրա, և նրանց երկիրը ձգվում է մինչև Հայաստանի և Իրերիայի սահմանը հանդիսացող Կուր գետը»<sup>49</sup>: Մի այլ առիթով՝ նույն հեղինակը՝ նկատի առնելով Կուր գետից հյուսիս ընկած հարթավայրերը, գրում է. «Ամբողջ հարթությանը՝ մինչև Կուրը՝ տիրում է աղվանների ժողովուրդը»<sup>50</sup>:

Մոտավորակես այդպիսին են նաև Պտղոմեոսի Հաղորդումները: Այսպիսս՝ նա գրում է. «Աղվանքը հյուսիսից սահմանակից է Սարմատիայի մի մասին, արևմուտքից՝ Իրերիային... Հարավից՝ Մեծ Հայքի մի մասին՝ ձգված Իրերիայի սահմանակից»<sup>51</sup>:

48. Անդ, XI, VIII, 4:

49. Կ. Ղան, Известия древних... писателей... I, Тифлис, 1884, стр. 109.

50. Անդ, էջ 107:

մանից մինչև Կրկանա ծովը, Կուրի գետաբերանը<sup>51</sup>: Կամ՝ ո... Կուրը, որ հոսում է ողջ Իրերիայով և Աղվանքով՝ նրանցից անշատելով Հայաստանը<sup>52</sup>:

Նույն են հաստատում նաև Փլուտարքոսը, Դիոն Կասիոսը և ուրիշներ: Առանձնապես հետաքրքրական են Պոլակիոսի՝ դեպի Աղվանք կատարած արշավանքին վերաբերող էջերը, որ նկարագրվում է անցումը՝ Հայաստանից Աղվանք՝ Կուր գետի սահմանով<sup>53</sup>:

Ստեփանոս Բյուզանդացին իր «Աշխարհագրական բառարան»-ում գրում է. «Ուստի Հայաստանի գավառներից է»<sup>54</sup>: Կվաղրատը վկայում է, որ «Ուստի Հայաստանում է» և «Կուրի ափերին ապրում են օվարիններն ու ուտիները, որոնք կազմում են Հայաստանի նշանակալից մասը»<sup>55</sup>:

Այսպիսին են Հունա-հումեական աղբյուրների վկայությունները: Անվանի գիտնական Ս. Վ. Յուշկովը, քննելով Աղվանից աշխարհի սահմանների հարցը, գրում է, թե նրա հարավային սահմանը Կուր գետն է: Նա միաժամանակ հարկ է համարում նշել, որ Կուր գետի աջափնյա մասը պատկանում է Հայաստանին. «Որ աղվանները պիտի գրաված լինեին ավելի մեծ տարածություն, քան Կուր գետի հովիտն է (ավելի ճիշտ, միայն Կուրի ձախ ափի հովիտը, որովհետև աշ կողմի

51 Անդ, էջ 169.

52 Անդ, էջ 170: Այսուղ ուշագրավ է այն դարձվածքը, թե «Կուրը... հոսում է ողջ Իրերիայով և Աղվանքով»: Առանձին վերցրած այս նախադասությունը ենթագրել պիտի տար, որ այդ երկրների միջով է հոսում Կուր գետը, ուստի և նրա երկու ափերն էլ պիտի պատկանեին նշված երկրներին, մինչդեռ իրականում այդպես չէ, որովհետև նույն նախադասության մյուս կերպ գալիս է ասելու, թե Կուրը միաժամանակ այդ երկրներից անշատում է Հայաստանը. ուստի այն հոսում է ոչ թե Իրերիայի ու Աղվանքի միջով, այլ նրանց և Հայաստանի սահմանով: Նման արտահայտություն կա նաև Ստրաբոնի մոտ՝ կարս նույնպիսի բացարձության:

53 Անդ, էջ 124—125: Պլուտարք, Сравнительные жизнеописания, II, Москва, 1963, Лукулл, XXXIV—XXXV.

54 В. В. Латышев, Известия древних писателей, I, СПБ, 1893, стр. 270. օգտվել է Կվաղրատից:

55 Անդ, էջ 270—271:

Հովիտը Հայաստանին էր), հաստատվում է նույնպես Ստրաբոնի ցուցմունքով...»<sup>56</sup>:

\* \* \*

Մասնագետները, սովորաբար, նման խնդիրներ քննելիս, վերոհիշյալ աղբյուրներից հետո, առաջնակարգ նշանակություն են տալիս հայկական աղբյուրների բովանդակած առատութեարժեք տեղեկություններին:

Այստեղ մենք ցանկանում ենք առաջին հերթին վկայակոչել Սովոր Խորենացու մի եղակի նշանակություն ունեցող տեղեկությունը, որը ցարդ մեզ հետաքրքրող տեսանկյունից չի մեկնաբանված: Խորեր վերաբերում է Արտաշես Առաջինի գահակալման սկզբնական շրջանի պատմությանը, եթե նա հայոց Երվանդ թագավորից իշխանությունը բռնությամբ խելու նպատակով, պարսկական զորքի աջակցությամբ, առաջ է շարժվում դեպի ոչ այլ ուր, քան Ուստի, որ և գտնվում էր Երվանդ արքան՝ երկրի նախարարներով և մեծամեծներով:

«Եուր հասանէ առ Երուանդ յՈւտէացւոց գաւառին, եթէ գումարիաց արքայն Պարսից զօրս բազումս ի ձեռն Սմբատայ, զի ի վերայ քո խաղացեալ ածցէ զմանուկն Արտաշէս ի թագաւորութիւն իւր Զայս լուեալ Երուանդայ՝ եթող անդէն զրազումս ի նախարաբացն կողմնապահն, և ինքն գնաց ի քաղաքն իւր...»<sup>57</sup>, այսինքն Երվանդակերու:

Սմբատն ու Արտաշեսը, սակայն, շարունակում են իրենց ուղին դեպի Ուստի, ուր և բատ երևույթին պիտի, հիմնականում, լուծվեր հարցը.

«Իսկ Սմբատ հանդերձ մանկամբն Արտաշիսիւ աճապարէր հասանել ի սահմանս Ուտէացւոց: Ընդ առաջ նորա ելին զօրք այնր կողմանն, նաև նախարաբն, զորս եթող Երուանդու

56 С. В. Юшков, К вопросу о границах древней Албании (см. «Исторические записки АН СССР», I, 1937, стр. 132).

57 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփփս, 1913, էջ 169:

Զայն իրեն լուան այլ նախարարքն Հայոց՝ լուծանէին լքանէին և զատչել յըրուանդայ խորհէինս<sup>58</sup>:

Այս վկայության համաձայն, ինչպես տեսնում ենք, Մովսես Խորենացին շատ հստակ պատկերացում ունի մեզ Հետաքրքրող խնդրի մասին: Ըստ նրա՝ Ռւտիքը Հայաստանի գավառներից մեկն է եղել գեռևս Արտաշես Առաջինից առաջ, ուր և արշավել է վերջինս՝ այդ երկիրը ոչ թե ուրիշներից խլելու, այլ՝ Հայոց Երվանդ թագավորից: Ուստի այստեղ Արտաշեսը ոչ թե օտար հողերի, այլ բոռն Հայաստանի նվաճումով է զրադված:

Գալով Մովսես Խորենացու այդ վկայության հավաստիությանը, ապա դա, ինչպես ցուց են տվել Հ. Մանանդյանը, Մ. Արեգյանը և ուրիշներ, պատմական իրողություն է, որը հաստավում է նաև Ստրաբոնի տվյալներով: Ահա թե ինչ է զրում Հ. Մանանդյանը, «Մովսես Խորենացու ընդարձակ հազորդագրություններում Երվանդի ու Արտաշեսի մասին (Բ, գլ. 37—62) պահպանվել են արժանահավատ տեղեկություններ երրորդ դարի վերջերի և երկրորդ դարի սկզբների գեպքերի մասին մեր թվարկությունից առաջ... Խորենացու հիշատակած Երվանդը, ինչպես երևում է Ստրաբոնի վկայությունից, Երվանդան տոհմի վերջին թագավորն էր, և նրան գաջընկեց էր արել Արտաշեսյան գինաստիայի հիմնադիր Արտաշես Ա-ը»<sup>59</sup>:

Մ. Արեգյանը, քննելով Երվանդ-Արտաշեսյան գրույցը, համադրում է այն Ստրաբոնի վկայության հետ և գտնում, որ Երվանդը Սելեկյանների վերջին թագավորն էր Հայաստանում, որին և Հաջորդեց Արտաշես Առաջինը. «Վեպն, ուրեմն, պահել է անունն Արտաշես Ա-ի նախորդի, Երվանդի, որ բնականորեն եղել է, ինչպես է և Վիպասանը մեջ, Արտաշեսի հակառակորդը, երբ նա ապստամբել է Սելեկյան տիրապետությունից»: Մ. Արեգյանը միաժամանակ գտնում է, որ «Եր-

58 Անդ, էջ 170:

59 Հ. Մանանդյան, Արժավերի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946, էջ 27:

վանդյան Տիգրան» արտահայտությունն էլ՝ Տիգրան Երկրորդի ժամանք՝ կապվում է Արտաշես Առաջինի նախորդի կամ նախորդների (Երվանդունիներ) հետ<sup>60</sup>:

Պետք է նկատել, սակայն, որ այս հեղինակներից և ուժեկը ուշագրություն լի գարձրել խնդրի այն կողմի վրա, որը կապվում է Ռւտիքի հետ՝ ցուց տալով, որ Արտաշես Առաջինից առաջ էլ այն Հայաստանի բաղկացուցիչ մասն էր:

Քննվող Հարցի կապակցությամբ մհծարժեք վկայությունների ենք հանդիպում նաև «Աշխարհացոյց»-ում: Այն, չնայած համարվում է 7-րդ դարի ստեղծագործություն, բայց նրա մեջ առկա տվյալների գգալի մասը առնված է հնագույն ստուգապատում աղբյուրներից: Մեզ համար առանձնապես կարելի վար է Աղվանից աշխարհի համառոտ բնութագիրը, ուր ասվում է, թէ Աղվանքը «ընդ մէջս է մհծի գետոյս Կուրայ և Առվիկաս լերին»<sup>61</sup>: Ինչ վերաբերում է Արցախին և Ռւտիքին, ապա «Աշխարհացոյց»-ը հետևողականորեն, իր բոլոր խրմբագրությունների մեջ, դրանք ներկայացնում է որպես Մեծ Հայքի անքանամեծ մասեր, հետագայում «Հանեալ ի Հայոց» այսինքն, խլված Հայաստանից: Հեղինակն ակնարկում է 387 թվականից հետո ընկած իրականությունը: Անշուշտ, այդ թիվն էլ առաջինը չէր կարող լինել: Ըստ երեսութին դրանից առաջ էլ սահմանային նման տեղաշարժեր են եղել, սակայն դրանցից ճակատագրական նշանակություն ունեցողը 387 թվականինն էր:

Այս առումով ուշագրավ է հետևյալ փաստը. Փակստոս Բուլանդը, խոսելով 4-րդ դարի 70-ական թվականների սկզբներին Հայաստանում տեղի ունեցած պատերազմների մասին, նկարագրում է Մուշեղ Մամիկոնյանի արշավանքը Աղվանից աշխարհի վրա, գրելով.

60 Մ. Արեգյան, Հայոց հին գրականության պատմություն, Ա. Երևան, 1944, էջ 41—45, Տիգրան Առաջինը և Վահագանը, Ա. Գ. Արքահամբյան, Սա. 8. Մելիք-Բախչյան, Հայ ժողովրդի պատմություն, Ա. Երևան, 1963, էջ 160—161:

61 Մովսես Խորենացի, Աշխարհացոյց, Վենետիկ, 1881, էջ 29:

«Առներ պատերազմ ընդ երկիրն Աղուանից, հարկանէր դնոսա... և թափէր ի նոցանէ բազում գաւառ, դոր հատեալ էր նոցա ի նոցանէն. զմւտի, զԵակաշէն և զՃորն Գարդմանայ, զԿողդ և ամ, որ շուրջն էին զնովաւ սահմանը զաւառք եւ զեւուր զի՞ն՝ որպէս և յառաջն լիալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւթեանց սահման արաւեալ կացուցաւիլ»<sup>62</sup>;

Այստեղից երևում է, որ 370-ական թվականներից առաջ էլ Կուրք է եղել սահմանը Հայաստանի և Աղվանքի. և հիշված դպրաները, որ խլվել էին Հայաստանից, նորից վերադարձ- մում են նրան:

Ուշագրավ է, որ այդ զիպքերի մասին խռովելիս, պատմիցը Աւտիքը, Շակաշենը, Գարդմանը, Կողթը և մերձակայրը հիշելիս, նկատի չի ունեցել Արցախը, որին նա առանձին է անդրադարձել: ԱՅս համապատասխան տողերը.

## «Յաղագս Արծախ»:

Հարկանէր զերկիրն Արծախայ մեծաւ պատերազմաւ, զերէր զբաղումն ի նոցանէն. և զմնաշորդացն առնոյր պատանզս, և դմնացիալսն ի հարկի կացուցանէր»<sup>63</sup>:

Դա յուրօքի գկայում է, որ Արցախը, զրանից առաջ, Աղվանիքի մասը չի եղել և նրա հետ կապ լի ունեցել:

Հետաքրքրական են նաև Մոլիս Կաղանկատվացու մի քանի անուղղակի վկայությունները Այսպիս՝ անդրադառնալով Մեսրոպ Մաշտոցի ղեպի Ազգանք կատարած ուղևորությանը, նա զրում է, թի Մաշտոցը հասավ ոչ զաւառ Ուտիական... առ տեղիաւն՝ որում Գիւն կոշին եւ նորոգեալ զեկենցեցուու

62 Φωτιστού Βαπτισμής, Θαυματηθήσια Λαμπτ., Θεοφίλη, 1912, έξ 314: Λυστ. 2. Έως άνω της παραπάνω αριθμητικής σειράς της οποίας η πληθυσμός της είναι περισσότερη από 371—372 μόνιμων κατοίκων, η οποία αποτελείται από την πλειονότητα από Αρμένιους.

63 *Lam.*

Հաւասուս հաստատէր. և ձգէր զքարողութիւն Աւետարանին  
լաշխարհն Ուսիացոց, և յԱղուանս և ի Լիփինս...<sup>64</sup>  
Այստեղ էլ որոշակի էթնիկական սահմանագիծ կա Ու-  
տիքի և Աղվանքի միջև։ Ուստի Ուտիքը և՛ 5-րդ դարի ըմբռո-  
նումով (մաշտոցյան ժամանակներ), և՛ 7-րդ դարի՝ այլ հա-  
կացողություն է եղել, Աղվանքը՝ այլ։  
Մի ուրիշ առիթով Մովսես Կաղանկատվացին նորից է  
միմյանցից տարբերում Աղվանք և Ուտիք հասկացողություն-  
ները, «Այնուհետև աստուածարեալ իշխանն Վարազ Տրդատ...  
ընդունէր զգերագոյն դաշն... իշխել ամենայն թագաւորու-  
թեանն Աղուանից և Ուտէացոց զաւառին և նուաճել ընդ ինք-  
եամբ զամենեսինն...»<sup>65</sup>

Պատմական հավաստի տվյալներով, Աւտիքն էր այս վայրը, որ զետեղված էր Հայոց թագավորների ձմեռոցը: Ազաթանգեղար պատմում է, որ Պարթևը «Եկեալ յանդիման եղել թագաւորին Խոսրովու մլատի գաւառի, ի Խաղխաղ քարի, ի ձմեռոցս արքայութեանն Հայոց<sup>66</sup>:

Հայկական գրավոր դպրության պահպանած հսկույն վեկայություններից մեկում՝ Գանձամակում թվարկված են Հայաստանի նախարարական տներն ու նրանց զորամիավորների քանակները: Այդտեղ, ի շարու Հայկական էթնիկական- կասպը, Ուտիքը, որպես Սևելլյան դաս պատկանող երկըր- ներ: Ահա այդ երկուների թվարկման կարգը:

ա. թղելս Գուգարայ — ՏՇ (զինուոր)  
բ. Կամսարական Ո Հ

54 Մոլիս Կաղանկառվագի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912,  
էջ 104:

65 *Անդ, լ. 2 264—265:*

66 Ազարանցեղոս, Պատմոթիւն Հայոց, Տպիր, 1903, չշ համար 100:

գ. Կասպեցի	կ.	(զինուոր)
դ. Արտէացի	մ.	»
ե. Մալէացի	մ.	» և այլն <sup>67:</sup>

Ն. Աղոնցը, ուսումնասիրելով այդ վավերաթուղթը, այն դիտում է, որպես Հայ Արշակունիների շրջանից եկող մի հավաստի վկայություն և իրավացիորեն «Արտէացի»-ն ուղղում է՝ «Արտէացի», իսկ «Մալէացի»-ն՝ «Մալէացի»<sup>68:</sup>

Այս վկայությանը համաձնուն են նաև Ազգաթանգեղոսի հետևյալ տողերը, ուր նկարագրվում է, թե ինչպես Գրիգոր Լուսավորչին կաթողիկոս ձեռնադրելու կապակցությամբ Տրդատ թագավորը հավաքում է Հայոց նախարարներին, կուսակալներին, իշխաններին, այդ թվում նաև «...իշխանն Սիւնեաց աշխարհին. երկուտասաններորդ՝ իշխանն Մալէից աշխարհին. երեքտասաններորդ՝ իշխանն Աւտիացոց աշխարհին...» և այլն<sup>69:</sup>

Ուշագրավ են նաև այդ իշխանների և կուսակալների կապակցությամբ նույն տեղում առկա հետևյալ տողերը.

«Այս իշխանը են ընտիրը, կուսակալը, կողմնակալը, հազարաւորը, բիւրաւորը ի մէջ Հայաստան աշխարհի տաճն Թուրքումայ, զորս գումարեաց թագաւորն Տրդատ և առաքեաց ...ի քաղաքն Կեսարացւոց... զի տարեալ գԴրիգորն՝ քահանայապետ կացուցեն իրեանց աշխարհին»<sup>70:</sup>

Վերոհիշյալ փաստերի կապակցությամբ արժե հիշել նաև Գարդմանական հայկական միավորի ղերը՝ պատմական նույն ժամանակներում: Փակստոս Բուղանդի վկայությամբ Հայոց Շահակ Ա. Մանազկերտցի կաթողիկոսի (373—377 թթ.) ընտրությանը մասնակցած սակավաթիվ Հայ իշխանների թվում կենտրոնական տեղը գրավել է Գարդմանի ներկայացուցիչը:

67 Հ. Նախարարնեց, Ստորագրութիւն կաթողիկէ եղմիածնի... թ, էքմիածնի, 1842, էջ 58—59-ի միջև:

68 Ա. Ածոնց, Արմենիա և ազգական պատմություն, 1908, էջ 251.

69 Աղարանգելոս, Պատմութիւն Հայոց, Տփդիս, 1909, էջ 414:

70 Ալդ, էջ 415:

«Եւ տան զնա ի ձեռս իշխանին Մարդպետութեանն, որում անուն Հայր կոչէր, և յաւագաց գումարեն ընդ նմա զիշխանն Գարդմանաց ձորոյն. և առնեն ընդ նոսա այլ տասն նախարարս, առաքելով Կեսարիա, ուր և ձեռնազրեցին «զՇահակն ի կաթողիկոսութիւն Հայոց Մեծաց...»<sup>71:</sup>

«Գահնամակ»-ում ևս Գարդմանն ունեցել է իր հատուկ տեղը՝ «Գարդմանացի մունկորով»<sup>72:</sup>

Հասկանալի է, որ հոգեոր գործերում այնքան մեծ տեղ գտած Գարդմանը պիտի և ունենար իր քրիստոնեական հզոր հենման կետր: Եվ, հիրավի, ինչպես վկայում է Ուխտանես եպիսկոպոսը, Գրիգոր Լուսավորչի սահմանած ընդամենը 30 եպիսկոպոսանիստ առաջնորդություններից մեկը գտնվում էր Գարդմանում. «...եւթներորդն՝ Սիւնեաց, ...քսաներորդն՝ Գարդմանայ»<sup>73:</sup>, ուր և պիտի ուղարկված լինեին նաև ուրիշ եպիսկոպոսներ այն «երեքհարիւր և եւթանասուն եպիսկոպոս»-ից, որոնք նույն օրերին «կարգեցան ի տեղիս-տեղիս տեսուչը և առաջնորդը յիւրաքանչիւր գաւառու...»<sup>74:</sup>

Զմոռանանք նշել, որ Գրիգոր Լուսավորչի օժման գործին ևս մասնակցել է Գարդմանի ներկայացուցիչը:

Խնդրի լրիվ պատկերացման համար ոչ նվազ նշանակություն ունի նաև Վարդանանց պատկերազմի պատմությունը: Լոկ կրոնական ու քաղաքական հանգամանքով չէր, որ առաջին իսկ վտանգի պահին այնտեղ մեկնեց ինքը՝ Վարդան Մա-

71 Փակտոս Բուղանդ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 70:

72 Ա. Ածոնց, Արմենիա և ազգական պատմություն, 1908, էջ 252.

73 Ալդունիս եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, Ար. 1871, էջ 100: 2. Մարկվարտը շփոթության մեջ է, երբ այս կապակցությամբ նշում է «Գարդմանաց»-ի հիշատակությունն «անշուշտ աղավաղված»: Գարդմանը աղքանական եպիսկոպոսություն էր (2. Մարկվարտ, Պարսկահայք նահանգը, տե՛ս «Պատմա-բանահրական հանդես», 1961, № 2, էջ 238): Այդ ժամանակ Գարդմանը դեռ Մեծ Հայքի կազմումն էր. 387-ից շետո միայն այն անցակ Աղվանքին:

74 Անդ, Հմմ, նաև էջ 99. «Ի դիշանն Գարգարացոց, որ և նա անուանի բդեաշխիւր, զիշխանն Սիւնեաց, և զիշխանն Մալէաց աշխարհին, և դիշխանն Աւտիացւոց»:

միկոնյանը, վճռական ճակատամարտ տալով պարսիկների դիմ: Նա այնտեղ էր մեկնել նաև իր ազգակիցներին պաշտպանելու: Եվ միանդամայն բնական է, որ այդ մարտերից հետո, հալածված հայ զորականների մի մասը, թակ իշխանի գլխավորությամբ, ապաստան զտավ Արցախում և մեկընդմիշտ ամրացավ այնտեղ<sup>75</sup>:

Վերջապես հիշենք Մովսես Խորենացու հաղորդած և Մովսես Կաղանկատվացու կրկնած այն վկայությունը, թե Գարդմանացիներն ու Ռւտեացիները սերված են հայազն Սիսակից ու Առանից: Այժմ, ավելի քան երրելէ հասկանալի է դառնում այս ավանդության հիմքում ընկած պատմական ճշմարտությունը:

Այս կապակցությամբ ուշագրավ է Ստեփանոս Օբրելյանի տված բացատրությունը՝ վերոհիշյալ վկայությանը. «Ահա այս սակաւ մի տեղեկութիւն քեզ, զի գիտացիս զոսսա (այսինքն, հայազն Սիսակին և Առանին) ոչ միայն Սիսեաց, այլև Աղվանիցն զոլ նախնի նաև երիցագոյն քան զնոսա»<sup>76</sup>:

Դա ցույց է տալիս, որ հնից եկած ավանդությունը հավաստի է համարվում ոչ միայն 5—7-րդ դարերում, այլև հետագայում: Ռւտեի նրա հիմքում ընկած են եղել պատմական իրադարձությունների արձագանքներ:

Կարծում ենք, որ փաստերի այս ամբողջությունը միանգամայն բավարար է պնդելու, թե իրոք Կուր գետից հարավ ընկած տարածությունները և մասնավորապես Ռւտեին ու Արցախը պատմական Հայաստանի հնագույն գավառներից էին, որոնք հետո միայն, անշատվելով Հայաստանից, կցվեցին Աղվանքին:

\* \* \*

Այժմ մի քանի խոսք՝ բնակության առարկա գավառների բնակչության լեզվի մասին: Քանի որ այդ գավառները հա-

<sup>75</sup> Մ. Էպ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893, էջ 235:

<sup>76</sup> Ստեփանոս Օբրելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 16:

մարվում էին հայկական, բնական է, որ այնտեղի բնակչությունն էլ հանդիսանում էր հայ ժողովրդի մի հատվածը Խոսքն, անշուշտ, առանձին օշականների մասին չէ, որոնք կարող էին այլաղգիներ լինել, այլ՝ հիմնական բնակչության խոսքը նաև այդ բնակչության հեռավոր նախնիների լեզվի մասին չէ, այլ հայ ժողովրդի կազմավորման մեջ ներգրավված սերունդների:

Այս առումով էլ առաջին վստահելի սկզբնաբերյուրը Սրբաբոնի Աշխարհագրությունն է: Հեղինակը, խոսելով Աղվանքի մասին, նշում է, որ այնտեղ ապրում էին 26 ցեղախմբեր՝ իրենց առանձին լեզուներով: Ըստ որում, նրա ճանաչած Աղվանքի հարավային սահմանը Կուր գետն էր: Դրանից հարավ Հայաստանն էր, որին նվիրված էջերում նա ոչ առանձին ցեղախմբերի գոյության մասին է խոսում, ոչ էլ՝ նրանց լեզուների տարրերության, որովհետև այսուղ հիմնականում, ապրում էր մի ժողովրդ՝ իր միասնական լեզվով, հայերենով: Ավելին, Ստրաբոնը գրելով Արտաշիսյան նվաճումների մասին, նկատել է տալիս, որ ոչ միայն բուն Հայաստանի, այլև նվաճված զավառների ամբողջ բնակչությունը խոսում էր միևնույն լեզվով: Ճիշտ է, այսուղ անտեսված են հավանութեան գոյատեսած այլ լեզուները, սակայն նրա խոսքը բնակչության ճնշող մեծամասնության մասին է և ոչ առանձին օշախների, որոնց գոյությունը միշտ էլ ենթադրելի է: Եթե այն ժամանակ լինեին այլակեզու այնպիսի խոշոր բնակչավայրեր, ինչպիսիք էին Ռւտեին ու Արցախը, պարզ է, որ Աղվանքի օրինակով, Ստրաբոնը կարող էր նաև վերջիններիս մասին հիշատակություն կատարել:

Հայաստանի բնակչության լեզվի վերաբերյալ արժեքավոր վկայության ենք հանդիպում նաև Մովսես Խորենացու մոտ: Գրելով Վաղարշակ թագավորի ձեռնարկած միջոցառումների մասին, պատմիլը հավաստում է, որ նա երկրի արտաքին սահմանները վերականգնում էր նաև ըստ հայկական խոսքի («զեղերը հայկական խօսիցու»<sup>77</sup>, «Ճայրս հայերէն

<sup>77</sup> Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 112—113.

խօսից»<sup>78</sup>, այսինքն, ըստ Հայոց լեզվի տարածման սահմանների: Եկ քանի որ այդ սահմաններն անցնում էին Կուր գետով (տեղ-տեղ էլ ձգվում Կուր գետից Հյուսիս), ուստի պարզ է, որ Հայոց լեզուն էլ տարածված էր այդ սահմանի համաձայն:

Որոշ հեղինակներ, հետևելով վերևում նշված սխալ տեսությանը, Ուտիքի և Արցախի բնակչության լեզուն Համարում են աղվանական և ենթադրում, որ այն բռնությամբ Հայացվել է 5—7-րդ և հաջորդ դարերում: Նրանց շփոթեցրել են նաև օտար աղբյուրներում Հանդիպած մի երկու կցկտուր վկայություններ, որոնք ճիշտ չեն մեկնաբանվել: Այդպիսիներից մեկն է, որինակ, 6-րդ դարի ասորի հեղինակ Զաքարիա Հռետորի մի Հազորդումը, որի Համաձայն տարբեր երկրներ են Համարվել՝ իրենց տարրեր ժողովուրդներով՝ Հայաստանը, Վրաստանը, Առանը, Սյունիքը, Բագկանը և այլն<sup>79</sup>: Հասկանալի է, որ այստեղ առկա է աղաղակող թյուրիմացություն՝ Առանի և մասնավորապես Սյունիքի կապակցությամբ: Մենք նույնիսկ ավելորդ ենք Համարում Սյունիքի վերաբերյալ որևէ փաստի դիմելու և մեկնաբանություն տալու անհրաժեշտությունը: Առանի, այսինքն, Աղվանիքի կապակցությամբ, սակայն, դա կարենոր է: 6-րդ դարի Աղվանիքը, ինչպես նշեցինք, բաղկացած էր երկու հիմնական մասից, բուն Աղվանիք՝ իր ալլալեզու ցեղախմբերով և Հայաստան-Աղվանիք՝ իր Հայերենով: Անտեսել այս փաստերը և ընդունել, թե 6-րդ դարում Աղվանիքում կար մի լեզու և այն էլ աղվաներեն, նշանակում է մեղանիք ճշմարտության դեմ: Այսպիսի անստույգ տվյալների հիման վրա է, առաջ, որ Հորինվել է ոչ միայն Ուտիքի, այլև Արցախի՝ առաներեն-աղվաներեն լեզվի երբեմնի գործության և նրա բռնի Հայացման հերթաթր:

Այս տեսակետից հույժ կարենոր նշանակություն է ստանում 7—8-րդ դարերի Հայ գիտնական, թարգմանիչ, երա-

<sup>78</sup> Անգ, էջ 105.

<sup>79</sup> Н. Пигуловская, Сирийские источники по истории народов СССР, М.—Л., 1941, стр. 165—166.

ժիշտ, բանաստեղծ, քերական Ստեփանոս Սյունեցու վկայությունը: Հեղինակ, որ Հայաստանի, Սյունիքի և Արցախի մասին գրում է ոչ թե որպես մի օտար հեղինակ, այլ որպես այդ երկրի հարազատ զավակը, Սյունիքի երկարամյա հոգևոր առաջնորդը, Արցախի գրագետների թղթակիցը և Հայոց լեզվի ու նրա բարբառների բաշտեղյակ մասնագետը: Նա իր քերականական մեկնության մեջ, ընդգծելով մայրենի լեզվի ներքին ճյուղավորումներն ու տարբերությունները, խորհուրդ է տալիս, բանաստեղծություն գրելիս, դիմել ոչ թե ծայրագավառային լեզուներին, այլ միջերկրայինին, ոստանիկին: Ուստի և խոսքն ուղղելով իր Հայ ընթերցողին, նա ասում է:

«Եւ դարձեալ զբն լեզուիդ զիտելն զբովանդակ զրասն զեզերականս, որպէս զԿորճայն և զՏայեցին և զԽորությունն և զՉորրորդ-Հայեցին և զՍպերացին և զՍիմին և զԱրցախայինն. այլ մի՛ միայն զմիջերկրեայսն և զոստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղալափութեան, այլև աւգտակարք ի պատմութիւնսն, զի մի վրիպեսցի...»<sup>80</sup>:

Սյունիդից պարզ երևում է, որ Սյունիքի և Արցախի լեզուն էլ Հայերենն է եղել, ինչպես նաև Տայրի և Հայաստանի ուրիշ գավառների լեզուները: Միաժամանակ երեւում է, որ այդ լեզուները տարբերվել են միմյանցից և մանավանդ ոստանիկից՝ որպես բարբառներ:

Մասորե, երբ քննության կառնենք Աղվանից աշխարհի Հայերենի զպրության հարցը և գրականության հուշարձանները՝ 5-րդ դարից սկսած, ավելի քան անմիջելի կդառնա նաև լեզվի խնդիրը:

Այստեղ, անհրաժեշտ ենք Համարում կանգ առնել լեզվի հետ առնշվող փաստերի մի այլ խմբի վրա: Խոսքը Աղվանից աշխարհի անձնանունների և աշխարհագրական անունների մասին է, որոնք այնքան առատորեն շաղ են տրված Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից» երկում:

Ահա մի փունջ այդ անուններից: «Մեծ Իրանք», «Մեծ

<sup>80</sup> Н. Адони, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр. 187.

կողմանք», «Եխանց» տոհմ, «Մխանք» գավառ, «Շիկաքար», «Ռուեկան» գյուղ, «Տկուակերտ», «Չուշտիկ», «Վայկունիք», «Տանձիք», «Չարաբերդ», «Արքուգետ» ավան, «Բերդակուր», «Բերդատեղի», «Բերդոյ վանք», «Բերձոր» գավառ, «Գիտական» գյուղ, «Գայշաւան», «Դաստակերտ», «Երիցոյ վանք», «Խաչենոյ բերդ», «Հաւախաղցի բերդ», «Զերգունի դաշտ» և այլն: Անձնանուններից հիշենք՝ «Գագիկ», «Գրիգորիկ», «Հոռոմիկ», «Չագիկ», «Մուժիկ», «Յոհանիկ», «Ջուանշիրիկ», «Նորայր», «Չաւթակ», «Այրմանուշանց եպիսկոպոս» և այլն<sup>81</sup>:

Անհաջիղ էլ չէ, որ բացատրվի այս տեղանունների ու անձնանունների հայկական ծագումը, որովհետև նրանք ոչ մի այլ լեզվով չեն կարող բացատրվել, եթե զանց առնվի հայերենը:

Հայարհագրական անունների շարքը կարող է լրացվել հատկապես «Աշխարհացոյց»-ի (7-րդ դ.), ինչպես և հայ մատենագիրների (5-րդ դարից սկսած) բազմահարուստ տեղեկություններով:

Հետաքրքրական են նաև «Պատմութիւն Աղուանից» երկում առկա այն անունները, որոնք հեղինակի կողմից արժանացել են մեկնաբանության: Օրինակ, «...գեօղ մի նակարգ անուն, այսինքն է — առաջին կորցեալ ի հայրենեացն»<sup>82</sup> (նա-կորդ, նախ-կորպեալ, «առաջին կորցեալ»):

Պարզ է, որ այստեղ գործ ունենք ոչ միայն հայ հեղինակի, այլև հայերեն ստուգաբանության հետ:

Ուշադրավ է նաև մի ուրիշ վկայություն: Մովսես Կաղանկատփացին գրում է, որ Պարսից Շապուհ արքան, 430-ական թվականներին որոշում է ճշտել, «թէ որ ազգ և լեզու ունիցի բարձ և պատիւա: Բայտ այդմ էլ նա, դիմելով հայոց ներկայացուցիչներին, ասում է. «Իսկ զերմենու զագատատոհմն և զնոցին նախապատութիւնն ու կարացաք դիտել»:

<sup>81</sup> Մովսես Կաղանկատփացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 409—441 (Ցանկ լատուկ անուանց):

<sup>82</sup> Անդ, էջ 124 (Հմմ, նաև «Վայոյ Զոր», ստուգաբանությունը, անդ, էջ 366):

Այստեղ հայոց աշխարհի ներկայացուցիչները դիտվում են որպես մի ազգի ու մի լեզվի ներկայացուցիչներ: Հայոց նախարարները, Շապուհ արքային գոհացում տալու նպատակով, վկայակոչում են Ազգաթանգեղոսի: «Հայոց պատմությունը՝ թարգմանաբար և գտեալ ի նմա զիր տասն և եօթն բարձի», Շապուհ արքան, բավարարված զգալով, օրինական է համարում հայոց նախարարությունների այդ ցանկը<sup>83</sup>, որն իրոք առկա է Ազգաթանգեղոսի մոտ<sup>84</sup>:

Այստեղ մեզ համար առանձնապես կարևորը՝ Շապուհ արքայի պահանջի հիմքում ընկած «ազգ և լեզու» համացողությունն է: Հայկական կողմը, ըստ պատմիչի, կարողանում է պաշտպանել իր 17 նախարարների որպես միմնույն «ազգ ու լեզու»-ի ներկայացուցիչների իրավունքները: Եղ ահա այդ միմնույն «ազգ ու լեզու»-ի մեջ են մտնում նաև «իշխանն Սինեաց..., իշխանն Շատիկց... իշխանն Ուտիացց աշխարհին»:

\* \* \*

Վերևում բերված փաստերի օգնությամբ մենք փորձեցինք որոշել Հայ-աղվանական ոչ միայն աշխարհագրական, այլև էթնիկական, բնա-պատմական սահմանագիծը, որն ան-

83 Անդ, էջ 119—120:

84 Ազգաբանգելոս, Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1909, էջ 414: Պետք է, սակայն, նկատել, որ այստեղ 17 նախարարությունների փոխարին թվարկված են 16 նախարարություններ: Սյունիքի կապակցությամբ հարկ նոք համարում հիշել մի շատ կարևոր վկայություն, որը պատկանում է Անդիկի Անանեցի կաթողիկոսի գրին և Նշանակալից է մի շարք առումներով: Առ 1006 թվականին, գերականդենուով Մյունիաց հոգևոր աթոռու իրավունքները, իր շրջաբարականում գրում է, թե ինքը հիմք է ունեցել «զմեծափառ նամակս և զվիտ պարմանի գրեալ ձեռամբ նախնի հայրապետացն Հայոց, սկսեալ ի սրբու Գրիգորէ Լուսաւորչէ և յորդուց և ի թռանց իրոց, որոց նամակն մինչ ի սուրբն Սահմակ յունարկն գրալ էր գրեալ. և իրաշանչիք մատանի կապարհայ կնքով եղեալ ի վերայ. և անտի հայերէն գրով մինչ յԱնահիա, և յառ Անանիաի գրեալ մինչև ի մեզ, բայց միայն յԱնահիաէ... Եւ էր բովանդակն 55 նամակ շրջաբարական թղթի իրարանշիւր հայրապետի կնքով» (Ստեփանոս Օրելիեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 309—310):

ցել է Կուր գետով, Պետք է ասել, սակայն, որ այդ բնական սահմանագիծն էլ չըր կարող անանցանելի լինել, և տեղաշարժերը հյուսիսից հարավ կամ հարավից հյուսիս շենի կարող խստորեն արգելված լինել: Եվ եթե մենք վերեռում այդ խնդիրը շրջանցնեցինք, ապա դա՝ զիտակցաբար, որպեսզի Հիմնական, ավանդական սահմանագիծը ճշտելուց հետո միայն անդրադառնայինք այդ շեղումներին:

Հավաստի փաստերը ցույց են տալիս, որ Հայ-աղվանական սահմանագիծը, աշխարհագրական և էթնիկական առումով, տեղ-տեղ անցել է Կուր գետը և՛ դեպի հարավ, և՛ դեպի հյուսիս: Այսպես՝ այն դեպի հարավ, այսինքն, Հայաստան է խորացած եղել Կասպից ծովի ափերում՝ իր մեջ ընդգրկելով Կազբը (Կասպիան): Կոչված գավառը, իսկ դեպի հյուսիս, այսինքն, Աղվանք է խորացած եղել արևմուտքում՝ իր մեջ ընդգրկելով Կամբեճանի ողջ գավառն ու նրան հարող արևելյան տարածությունների մի մասը:

Նախ՝ Կասպիական երկրի մասին: Այստեղ էլ սկզբնադրյուրը Ստրաբոնի Աշխարհագրությունն է, ուր ասված է. «Աղվանների երկրին է պատկանում նաև Կասպիանի գավառը»<sup>85</sup>: Դա ցույց է տալիս, որ այդ ժամանակ նշված գավառը հայերից է անցած եղել աղվաններին, որովհետև նույն Ստրաբոնի մի այլ վկայությամբ Կազբը մտնում էր Արտաշես Առաջինի նվաճած երկրների թվի մեջ<sup>86</sup>, առնված մարերից:

Առավել ուշագրավ է Կամբեճանի և հարակից տարածությունների խնդիրը: Ներկա աշխատության մեջ մենք պայմանականորեն այդ վայրերը կոչում ենք Անդրկուրյան Հայք և փորձում՝ փոքր ինչ պարզաբանություն մտցնել նրա հետ կապված պատմական նշանակություն ունեցող խնդիրների մեջ: Մեղ Համար դրանք կրկնակի նշանակալից են, որովհետև մի կողմից ցույց են տալիս հայկական էթնիկական երեքմնի մի ուրիշ գավառի պատկերը՝ ընկած Կուր գետից հյու-

<sup>85</sup> Страбон, География, 1964, XI. IV. 5.

<sup>86</sup> Տե՛ս վերևում: Առաջարակ Կազբի մասին եղած տեղեկություններում նկատելի են որոշ հակասություններ՝ կարու ճշգրտման:

միս, իսկ մյուս կողմից, ավելի քան համոզում, որ Կուրից Հարավ գտնվող բնակավայրերն ու գավառները Հայաստանի օրգանական մասն էին կազմում և իրենց գոյությամբ իսկ պայմանավորում Անդրկուրյան Հայքի գոյության հնարավորությունը:

Ակսենք Կամբեճանի մասին եղած փաստերի ամփոփ քննությունից: Խոսքը նորից պատկանում է Ստրաբոնին: Նա, Աղվանքի հարավային և հարավ-արևմտյան սահմանները ցույց տալիս, անդրադառնում է Հայաստանի այդ մասերի սահմաններին, գրելով.

«Հայաստանը մասամբ իրենից ներկայացնում է հարթավայր, մասամբ էլ լեռնային երկիր, ինչպիսին է Կամբեճանը, որտեղ Հայերը սահմանակից են միաժամանակ իրերների և աղվանների հետ»<sup>87</sup>:

Մի այլ առիթով Ստրաբոնն ավելի է ճշգրտում Կամբեճանի տեղը, զրելով. «Անցումը՝ Իրերիայից Աղվանք ձգված է Կամբեճանի անցուր և քարքարոս գավառով — Ալազան գետի ափով»<sup>88</sup>:

Այսպիսով տեսնում ենք, որ նա կրկնի խոսում է նույն յեռնոտ երկրի մասին, որի միջով անցնում է Ալազան գետը, երկիր, որով միմյանցից բաժանված են Իրերիան և Աղվանքը:

Ստրաբոնի հաջորդ և վերջին վկայությանը՝ Կամբեճանի մասին հանդիպում ենք Հայաստանին վերաբերող նկարագրության հետևյալ տողերում. «Հայաստանի ծայրագավառներից է Ֆավենն, ինչպիս նաև Կոմիսինն և Օրխիստինն, որը արտադրում է հեծյալների ամենամեծ թիվը: Խորձենն և Կամբեճանը — ամենահյուսալիններն են և բոլորից շատ ծածկված ձյունով: Նրանք սահմանակից են Կովկասյան լեռներին, իրերիային և Կոլխիդային»<sup>89</sup>:

Այսպիսով, Ստրաբոնը, երեք անգամ անդրադառնալով Կամբեճանին, երկու անգամ այն նկարագրում է որպես Հա-

<sup>87</sup> Страбон, География, 1964, XI. IV. 1.

<sup>88</sup> Անդ, XI. IV. 5:

<sup>89</sup> Անդ, XI. XIV. 4:

յաստանի գավառներից մեկը, իսկ երրորդ անգամ նշում, որ նրա վրայով է ձգվում իրերիա — Աղվանք ճանապարհը: Գալով ադր գավառի սահմաններին, նա մեզ շտալով հանդերձ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, տալիս է տվյալ հարցի առումով միանդամայն բավարար պատկերացում: Մենք նրանցից իմանում ենք, որ այդ գավառը ձգվում է գեղի հյուսիս՝ մինչև Կովկասյան լեռների բարձրադիր լանջերը, իր միջով է բաց թողնում Ալաղան գետը և իրենից ներկայացնում է այն աշխարհագրական վայրը, որով Հայաստանը շփվում է Վրաստանի և Աղվանքի հետ:

Այս բոլոր հազորդումներից միանդամայն պարզ է, որ Ստրաբոնը Կամբեճանի գավառը գետեղում է Կուր գետից հյուսիս, Աղվանքի և Իրերիայի արանքում: Խնդիրը միանդամայն հստակ է: Ուստի և պատմական Հայաստանի այդ գավառը ոչ այլ ինչ է, քան Անդրկուրյան Հայքի մի ընդարձակ մասը:

Մեզ թվում է, որ մեր կարծիքի օգտին է խոսում նաև Պոմպեոսի կողմից Աղվանից աշխարհ ներթափանցելու համար նախընտրած ուղին: Խնշան Հայտնի է, նա Աղվանք մտավ Կամբեճանի տարածություններով. նախ, անցավ Կուր գետը, ապա՝ Իրուան, Ալաղանը և հետո միայն, լեռնալանջերին, ինչ-որ տեղ, Հանդիպեց աղվանից զորքին: Հարց է առաջանում, աղվանները, որ այնպիս ամրացրել էին Կուրի սահմանագիծը, ինչո՞ւ էին անպաշտպան թողել Կամբեճանի սահմանը: Ինչո՞ւ տեղի բնակչությունը Պոմպեոսի զորքին, մինչև աղվանից բանակին հասնելը, կամովին օժանդակում էր, իսկ հոռմեացիներն էլ բնավ նրանց շեխն անհանդատացնում: Տպավորությունն այնպիսին է, որ ամբողջ Կամբեճանի գավառը կարծես Աղվանքի հետ կապ չի ունեցել, և եղել է ուրիշ, այն էլ այնպիսի երկրի մասը, որը չէր կարող դիմադրել Պոմպեոսին: Դա հասկանալի է դառնում, եթե նկատի ներ առնում Անդրկուրյան Հայքի պարագան:

Որ Կամբեճանը Աղվանից աշխարհի բնական մասը չի եղել, որ նրա և Աղվանքի միջև հետագայում ևս, եթե այն

պաշտոնապիս միացված էր Աղվանքին, դարձյալ աշխարհագրական և էթնիկական ինչ-որ սահմաններ են նկատվել. դա երեսում է նաև ուրիշ փաստերից: Այսպիսս Մովսես Կաղանկատվացին, պատմելով 5-րդ դարի երկրորդ կեսի Աղվանից թագավոր Վաշագան Երկրորդի կրոնա-և կեղեցական միջոցառումների մասին, տարբերում է «Կամբեճան» հասկացողությունը «Աղվանիք» հասկացողությունից: Այսպիսս, նա գրում է.

«Եւ կարգեալ (այսինքն, Վաշագան Երկրորդը) տեղեաց տեղեաց եպիսկոպոս և երիցունս և հայեցողս ի Կամբէճս. ի Աղուանս իսկ զնոյն հրամանս սաստից կարգեալ՝ հաստատէր զեպիսկոպոսս և զերիցունս և զսարկաւագունս<sup>90</sup>: Եթե Կամբեճանն էլ Աղվանքի մասը լիներ, ապա պատմիշը միանդամից կորեր նշված զեպիսկոպոսին՝ միայն «Աղվանիք» բառի օգտագործմամբ: Բայց նա այդպիսս չի արել, որովհետն տարբերել է այդ երկու հասկացողությունները միմյանցից, ուստի նրանից առաջ իրականությունն է այդպիսին եղել՝ ստիպելով թագավորին ձեռնարկումներ կատարել նախ՝ Կամբեճանում, ապա՝ Աղվանիքում: Դա միաժամանակ ցույց է տալիս, որ Կամբեճանը Աղվանից թագավորության մեջ մտցված մենակով էլ, շարունակում էր պահպանել իր ներքին, ուրույն կերպարանքը:

Վրաց աղբյուրների համաձայն, Իբերիայի հոգեոր առաջնորդ՝ Գավիթ Գարեջելին Կամբեճանում, այսինքն, Հերեթում ստիպված է եղել խոսել Հայերեն. փաստ, որը պարզուող կերպով ցույց է տալիս տեղի բնակչության աղվային պատկանելիությունը նաև 6-րդ դարում: Այս հարցի վրա կարևոր ակնարկ ունի Ն. Յա. Մարքը՝ իր «Արքայն...» աշխատության մեջ<sup>91</sup>, այն կապելով նաև 10-րդ դարի հշիանիկ թագավորի հետ:

Վրաց պատմաբաններից Ս. Կակաբաձեն, անդրադառ-

<sup>90</sup> Մովսես Կաղանկատվացի, Պատմոթին Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 60:

<sup>91</sup> Ա. Մարք, Արքայն, монгольское название христиан..., СПб, 1905, стр. 7.

նալով այդ հանգամանքին, փորձում է ապացուցել, որ դա, իր թե «ոչինչ չի նշանակում»: Հանգուցյալ պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը, իրավացիորհն չի համաձայնում պատմական փաստի այդպիսի անտեսման հետ և ընդուռմ է, որ դա նշանակալից հանգամանք է, մանավանդ, եթե հաշվի ենք առնում համապատասխան ուրիշ փաստերի առկարությունը: Այստեղ նա հիշում է Հերեթի կողմերի հայ թագավոր իշխանիկին, նրա մորը՝ Դինար թագուհուն ու նրանց հետ կապված այն պատմությունները, որոնք նորից վկայում են Կամբեճանի բնակչության հայ լինելու մասին<sup>92</sup>:

Վրացական 14-րդ դարի անանուն պատմիչի մի վկայության մեջ կարդում ենք. «Ազերելով Տփղիսը՝ (խվարազմացիք) սկսեցին կրկին ավերել, գերել և բնաշինչ անել Սոմիթին ու Կամբեճիանն իորի եզերքին, Քարթլին ու Թուեղք...» և այլն, որտեղից կրկին Կամբեճանը երեան է գալիս Հայաստանին կից, իսկ այդ Հայաստանն էլ («Սոմիթի») — նույն կողմերումն է<sup>93</sup>:

Կամբեճանի երեսմնի հայապատկան և հայաբնակ երկրամաս լինելու վերաբերյալ ուշագրավ տեղեկություն է պահպանված նաև վրաց մատենագիր Արսեն Սափարացու (9-րդ դ.) մոտ, որը խոսելով 7-րդ դարի հայ մատենագիր Հովհան Մալրավանեցու մասին, վկայում է, թե Թեոդորոս Ռշտունին «Պղնձի աղվեսն տաքացրած» զրեց նրա ճակատին (աղվեսադրոշ խարանեց) և հալածեց նրան: «Ապա նա (իմա Հովհան Մալրավանեցին) փախուստի դիմեց դեպի Կովկասյան լեռները... Լեռնականները նրան չէին ընդունել, քանի որ վերջինները կուպաչտներ էին, և անցավ Կամբեճովլան՝ տիրելով Փոքր, որ «Հայոց (Սոմիթի) ձոր» է կոչվում և շատերին աշակերտ վերցրեց ոչ այնքան այդ [ձոր]ում, որքան Կուր [գետի] հայսկույս՝ Այլրաբատում, Գարդմանում, Զորափորում (Զորոթորում) և Սոմիթում...»<sup>94</sup>:

92 Լ. Մելիքսեթ-Բեկ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա., Երևան, 1934, էջ 98:

93 Անդ, Բ., Երևան, 1936, էջ 53:

94 Անդ, Ա., Երևան, 1934, էջ 46—47:

Այստեղից երևում է, որ 7-րդ դարում ևս Կամբեճանը հայաբնակ էր, նրա ձորերից մեկը կոչվում էր Հայոց ձոր, ուր առժամանակ ամրացավ Հովհան Մալրավանեցին՝ հիմնելով իր դպրոցն ու աղանդը, միաժամանակ կապ պահելով Գարդմանի և շրջակայքի ուրիշ հայաբնակ վայրերի հետ:

Կամբեճան-Հերեթի հայությունը Հայաստանից անբաժան մնաց ու դիմացավ մինչև 11-րդ դարը, որից հետո, վրացական եկեղեցու աղղոցությամբ, սկսեց ձուլվել վրացիների հետ (այդ մասին՝ ստորև):

Վրաց պատմաբաններից Կամբեճանի պատմական անցյալով բավկանին հանգամանորեն զբաղվել է նաև պրոֆ. Գ. Ա. Մելիքիթիշվիլին: Թանի որ այդ գավառը, ինչպես հայտնի է, հետաղյում անցավ Վրաստանին և մեկընդիշտ մնաց նրա կազմում, ուստի բնականաբար այդ երկրի պատմությանն անհամեմատ ավելի մեծ ուշագրություն է դարձված վրաց գրականության մեջ: Այս այդ ամենին և օտար աղբյուրների օդնությամբ է, որ Գ. Ա. Մելիքիթիշվիլին փորձել է նոր բացառություն տալ Կամբեճանի անցյալի պատմությանը: Մեր կարծիքով Հարգո գիտնականը սխալվում է, ասելով, թե այդ երկիրը վրացիներից են Հայերը խել, որոնցից էլ շատ շանցած վրացիներն այն են են վերցրել և վերչնականապես ամրացել նրա վրա՝ դեռևս Տիգրան Երկրորդից անմիջապես հետու նույնը կարելի է ասել նաև նրա այն հնթագրության մասին, որի համաձայն Հայեական տիրապետությունը Կամբեճանի վրա ժամանակավոր բնույթ կրելով, այնտեղ էթնիկական որակ շէր կարող ստեղծած լինել: Իր այդ հնթագրությունները նա ձեւակերպում է հետեւյալ ձևով, վրացիների «առաջխաղացմանը՝ դեպի արևելք, Հերեթի կողմերը, առաջին շրջանում խոշրնդութեց մեր թվարկությունից առաջ երկրորդ դարում կազմակորված ուժեղ Հայաստանը: Ուշագրավ է, որ Սարաբոնի համար, օրինակ, Կամբեճանը Հայաստանի զեկավարներին գավառն է: Երևում է, որ Հայաստանի զեկավարներին հաջողվել է որոշ ժամանակ տարածել իրենց իշխանությունը նրա վրա, չնայած էթնիկապես այդ ժամանակ այն

(իմա Կամբեճանը) հայացած չէր... նշանավոր Տիգրան 2-րդից հետո Հայաստանը թուացավ, իսկ Երերիան ականց ուժեղանալ: Դրան համապատասխան հայկական իշխանությունն այդ դավառի վրա, բայց երևույթին, մոտենում է իր վախճանին, իսկ բարթիները ամրապնս տիրում են նրան (իմա Կամբեճանին):<sup>95</sup>

Ինչպես տեսնում ենք, խնդրի լուծման ժամանակ փաստերի փոխարեն զործ ունենք հնագործությունների հետ: Մեզ համար, սակայն, այստեղ կարողոր՝ ոչ այնքան հայկական, աղջանական, իրերական պետական իշխանության տևողությունն է Կամբեճանի վրա, որքան նրա բնակչության էթնիկական կազմի խնդիրը: Եվ այդ կապակցությամբ պիտի ասենք, որ Գ. Ա. Մելիքիշվիլու վերոհիշյալ հայտարարությունը համոզիչ չէ և կարու է վերանայման:

Բանը նրանումն է, որ Գ. Ա. Մելիքիշվիլին, ընդունելով անգամ Ստրաբոնի վկայությունների հավաստիությունը, տեղուղի սխալ է մեկնարանում նրանց բովանդակությունը:

Այսպես, օրինակ, նա հիշեցնում է Ստրաբոնին հնայալ տողերով. «Камбесене... в которой армены соприкасались с иберами и с албанами»<sup>96</sup> (նոր թարգմ. «Комбисене, где армяне граничат одновременно с иберийцами и албанцами»)<sup>97</sup> և գտնում. այսպիսով, վկայված է, որ Իբերիայի, Հայաստանի և Աղվանքի արանքում ընկած գավառը (իմա Կամբեճանը) բաժանված էր այդ երեք հարևանների միջև (ինչպես արևմուտքում գտնվող Մեսխերի գավառը):<sup>98</sup> Պիտի ասել, որ այստեղ Ստրաբոնի տվյալները Կամբեճանի մասին անշատված են միմյանցից և ընտրված է նրանցից միայն մեկը, որն էլ ճիշտ չի մեկնարանված: Մենք վերևում

<sup>95</sup> Г. А. Меликишвили, К истории древней Грузии, Тбилиси, 1959, стр. 127.

<sup>96</sup> Անդ, էջ 123.

<sup>97</sup> Страбон, География, 1964, XI. IV. 1.

<sup>98</sup> Г. А. Меликишвили, К истории древней Грузии, Тбилиси, 1959, стр. 123.

մեջ ըերինք Ստրաբոնի բոլոր վկայություններն՝ իրենց ամբողջությամբ և տեսանք, որ նրանք հավաստում են լոկ մի իրազություն, այսինքն, Կամբեճանը Հայաստանի ամենաշատուխային զավառն է: Եթե Ստրաբոնն ուզենար այդպես չափել, այլ ասել, թե այդ զավառը բաժանված է երեք երկրությունների միջև, ապա նա հենց այդպիս էլ կդրեր, ինչպես գրել է Մեսխերի երկրի մասին. «Մեսխերի երկրը... բաժանված է 3 մասի, մի մասը գտնվում է կոլխիրի հշխանության տակ, մյուսը՝ իրերների, իսկ երրորդին տիրում են հայերը»<sup>99</sup>: Սակայն Կամբեճանի կապակցությամբ Ստրաբոնի մոտ ոչ մի նման ակնարկ չկա: ընդհակառակը, այսուղ առկա է միանգամայն որոշակի ու հատակ ձեռակերպում՝ Կամբեճանի՝ Հայաստանի բաժկացուցիչ մասը լինելու վերաբերյալ:

Կամբեճանի հարցին ոչ ճիշտ մեկնարանություն են տվել նաև ուրիշները, որոնք սակայն չեն ունեցել որևէ լուրջ փաստարկ: Ուստի իրերի այս գրության մեջ նորից ճիշտ է հնչում գերմանացի գիտնական Հ. Հյուրշմանի եզրակացությունը՝ Հունա-Հումենական, հայկական և այլ աղբյուրների մանրակրկիտ բնությամբ: Նա գրում է. Կամբեճանը («Քամբեճան», «Կամբեթման», «Կապիճան», «Կամբիճան», «Կամբէճան»), «Կամբէճան» և այլն) «Հայաստանի ամենեն հյուսիսային ձյունաշատ մեկ տեղն էր...»<sup>100</sup>: Նա չի էլ փորձում գծել նրա սահմանները, որովհետեւ վստահում է սկզբնաղբյուրներին և հատկապն Ստրաբոնին: Ինչ վերաբերում է Կոմիսենի գավառին, ապա նա խոստովանում է, որ նրա մասին հայ աղբյուրները լուրմ են, ուստի և նրա տեղն իր համար անհայտ է:<sup>101</sup>

Այսպանով էլ առայժմ ավարտենք մեր խոսքը Կամբեճանի մասին, հիշեցնելով, որ նրան դեռ պիտի անդրադառ-

<sup>99</sup> Страбон, География, 1964, XI. II. 18.

<sup>100</sup> Հ. Հյուրշման, Հին Հայոց տեղուոյ անունները, Վիեննա, 1907, էջ 18—19:

<sup>101</sup> Անդ, էջ 19:

նանք: Բայց հենց այսքանն էլ բավական է պնդելու, որ այն հին Հայաստանի մի մասն էր:

Ի դեմս պատմական Կամբեճանի, մենք արդեն մասնակի գաղափար ենք կազմում Անդրկուրյան Հայքի մասին: Փաստերը ցույց են տալիս, որ վերջինիս սահմաններն ավելի ընդարձակ են եղել:

Այդ առթիվ կարեոր վկայության հնք Հանգիպում «Աշխարհացոյց»-ում, այն էլ նրա համեմատաբար ընդարձակ խմբագրության մեջ: Այստեղ, Աղվանքի նկարագրության մասում, կարդում ենք. «Աղքանիք... Աղուանք... Քավաղակ քաղաք Աղուանից՝ մերձ ի Կաւկաս. ընդ որոյ մէջ գետն Սէրոջ դէպ ի հարաւոյ ըստ Փոքր Հայոց»<sup>102</sup>: Այս վկայության համաձայն, Կովկասյան լեռներից իշխող Սերոջ գետը անցնում է Կապաղակ քաղաքի մոտով կամ միջով և հոսում դեպի Հարավ՝ «ըստ Փոքր Հայոց», այսինքն, Փոքր Հայքի միջով կամ սահմանով, և թափվում Կուր գետը: Կնշանակի, «Աշխարհացոյց»-ի այս խմբագրության հեղինակի ունեցած տեղեկություններով, Կուր գետից Հյուսիս, Աղվանից աշխարհի սահմաններում եղել է Փոքր Հայք կոչվող մի տարածություն, որի սահմաններից մեկը համբնկել է Սերոջ գետի միջին և ստորին հոսանքին:

Ցավոք սրտի, «Աշխարհացոյց»-ը՝ իր ժամանակակիցներին առանց բացատրության էլ հասկանալի այս Փոքր Հայքի մասին լրացուցիչ որոշակի տեղեկություններ չի տալիս: Լրացուցիչ տեղեկություններ չեն գտնվել նաև այլ աղբյուրներում, ուստի այդ երկի հրատարակողը՝ Սութքյանը, դժվարանալով բացատրել Փոքր Հայքի առկայությունը Աղվանքի սահմաններում, այդ բառերի («Փոքր Հայոց») դիմաց, փակագծի մեջ, դրել է Հարցական նշան: Հետագայում այդ Հարցականն ավելի ճիշտ է համարվել, քան բուն փաստը, ուստի և նրան չեն անդրադարձել: Այժմ, սակայն, պարզվում է, որ նման մոտեցումը ճիշտ չի եղել, որովհետև երկան են դալիս նաև Հա-

մապատասխան ուրիշ փաստեր: Դրանցից հնագույնը պահպանվում է Պլուտարքոսի մոտ (2-րդ դ.), որը պատմելով Պոմպեոսի՝ Աղվանքում տարած հաղթանակի մասին, այսպիս է նկարագրում նրա վերագարձը.

«Այդ ճակատամարտից հետո Պոմպեոսը պիտի շարժվեր դեպի Վրկանա կամ Կասպից ծովը, բայց թունավոր սողունների առատության հետևանքով հրաժարվեց այդ մտադրությունից և ծովից՝ երեք օրվա անցնելիք տարածությունից վերադարձավ Փոքր Հայք»<sup>103</sup>:

Մասնագետները տեղյակ լինելով հենց մերձակալքում, այն է՝ Աղվանքի հարավ արևմտյան սահմաններում առկա Փոքր Հայքի գոյության մասին, այդ խնդիրը բննելիս, հայտնել են տարրեր կարծիքներ: Ոմանք ուղղակի հենվելով այդ տվյալի վրա՝ Փոքր Հայք վերագանալու ծրագիրն ու ուղին համարում են ճիշտ: Ոմանք էլ, նորանոր փաստերի օնությամբ, ճշգրտում են Պոմպեոսի վերագարձի մի այլ ճանապարհ:

Որ Պոմպեոսը Մուղանի մոտերքից, օձերի և կարիճների պատճառով, որոշել է փոխել իր ճանապարհը և մինչև ծով չի հասել, դա ընդունվում է բոլոր հետազոտողների կողմից: Իսկ թե ինչո՞ւ նա այդ տեղից չէր կարող անմիջապես մեկնել արևմտյան Փոքր Հայք, դա ևս ցույց է տրված հեղինակների (Հ. Մանադյան, Ս. Երեմյան, Կ. Վ. Տրեեր) կողմից: Եվ, հիրավի, եթե հոռմեացի զրագարը նպատակ ուներ թիթեացնել իր հաղթանակած և հոգնած բանակի զինվորների վհճակը, որի պատճառով նա խույս տվեց օձերից, կարիճներից, տոթից, ապա նա պիտի մտածեր նրանց հանգստի և ավելի դյուրին ճանապարհի մասին: Այդ պարագայում միանգամայն անիմաստ կլիներ Մուղանի անապատից, ամրող Հայկական լեռնաշխարհի վրայով, արևմտյան Փոքր Հայք վերագանալու ծրագիրը: Հետեապես, այդ կապակցությամբ հեռավոր Փոքր Հայքի անունն էլ չէր շոշափվել: Իսկ եթե շոշափվել է՝

102 Մօլսես Խուենացի, Աշխարհացոյց, Վենետիկ, 1881, էջ 28—29:

103 Պլուտարք, Сравнительные жизнеописания, II, Москва, 1963, Помпей, XXXVI.

որպես վերադարձի առաջին հանգրվանի անուն, ապա այդ հանգրվանը պիտի որոնել բարեհնպաստ և առավել մոտիկ տարածությունների վրա։ Այս առումով միանդամայն ճիշտ է Հ. Մանաղյանը, երբ գրում է, «Եվրոպական պատմագիտների երկերում Թումպեոսի 65/64 թվի<sup>104</sup> ձմերոցի տեղը, հակառակ Դիոնի վկայության, ցույց է տրված Փոքր Հայքում, որ պարզապես սխալ է»<sup>105</sup>։

Անդրկուրյան Հայքի մասին ուշագրավ տեղեկություն կանակ պատմիչ Հովհաննես Գրասիանակերտցու մոտ նա, իր պատմության մեջ, խոսելով այն մասին, թե ինչպես ինքը արարական հալածանքներից փախուստ տալով, ապաստան է դաել Աղվանից աշխարհի իշխանների ու թագավորի մոտ՝ նրանց երկրում, Կովկասյան լեռնալանջերին, հավանաբար Շաքի (Նուսի) քաղաքում կամ նրա շրջակայքում, գրում է.

«Ի կողմանս արևելյա Աղուանից առ մեծ իշխանն Սահակ երթեալ և առ թագաւորն նոցունց Ատրներսէն, որ ըստ արևելից հիմախոյ Կովկասու. զի և նոյն ի ծողովրդենէն մերմէ և խաշն արօտի մերոյ էին»<sup>106</sup>։

Ինչպես տեսնում ենք, տեղի ընիկ հայությունը, անգամ Աղվանից պետության կազմի մեջ, ոչ միայն չի կորցրել իր գեմքը, այլև ավելի քան ընդգծել է իր ազգային հատկանիշները։ Եվ կարեորն այն է, որ պատմիչը այդ վայրերի ժողովրդին համարում է Հայ ժողովրդի հարազատ մասը։ «Ի ժողովրդենէն մերմէ...»՝ աղքարանական առումով, և «խաշն արօտի մերոյ»՝ կրոնական։

Հովհաննես Գրասիանակերտցուն նման, բայց նրանից առաջ, Աղվանից աշխարհի հայկական այդ վայրերում են ապաստան որոնել նաև հայկական երկու խոշոր զորավարներ՝

104 Վերագրածի տարին է։

105 Հ. Մանաղյան, Տիգրան Երկրորդը և Հռոմը, Երևան, 1940, էջ 206։

106 Հովհաննես Գրասիանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 217։

իրենց զորագնդերով։ Այդ մասին է վկայում Սերեսով անունով տպագրված պատմական երկը՝ Մորիկ կայսեր՝ հայերին տեղահանող վերոհիշյալ ծրագրի կապակցությամբ։ Այդ ծրագրի իրագործման տարիներին է, աճա, հայկական երկու զորագունդ հեռանում Աղվանք և ապաստանում Կուր գետից հյուսիս ընկած տարածության վրա։

«Իսկ Ատատն Խորխոսունի և Սամուչլն Վահկունի զաւրաւըն իրեանց փախստական գնացին ընդ քաղաքագեւզն կոչեցիալ Սաւդայ, հասանէին յաշխարհն Աղուանից ի Հռն դէմս արարեալ, և անցեալ ընդ գետովն, որ կոչի Կուր, բանակէին առ գետեղերբնա»<sup>107</sup>։

Որոշ հեղինակներ (օրինակ Կ. Վ. Տրեհեր), հաշվի շառնելով տեղի ընիկ հայության հարցը, դժվարանում են բացատրել այդպիսի երեւլիթը, տալով զանգան պատճառաբանությունները։ Մինչ, երբ նկատի ենք առնում տեղի հայության պարագան, ամեն ինչ հասկանալի է զառնում։

Այս փաստերը մեզ առաջ են տանում մինչև Վարդան Մամիկոնյանի ճակատամարտերի շրջանը՝ այդ վայրերում և առհասարակ Աղվանից աշխարհում, ենթադրելով ոչ միայն հարեւն ցեղախմբեր, այլև հայկական հին ու հարազատ միշավայր։

Անշուշտ, Անդրկուրյան Հայքը կարող էր հնում իր սահմաններով և մեծանալ, և փորրանալ, սակայն, էականը դաշտէ, այլ այն, որ նրա հետ կապված է հայկական բնակավայրերի մի զգալի տարածություն՝ Կուրի ձախ ափին, որը վերէ ամեն կասկածից։

Զարմանալին այն է, որ այս իրողությունը պարզ է եղել մեր հին պատմաբաններին, երբ դեռ չեին ստեղծված վերջին ժամանակների շփոթությունները։ Այսպես, օրինակ, դեռևս 1784 թվականին Մ. Չամչյանը գրել է.

107 Սերես. Պատմութիւն ի Հերակլն, Թիֆլիս, 1913, էջ 78։

108 Կ. Վ. Տրեվեր, Очерки по истории и культуре Кавказской Албании, Москва—Ленинград, 1959, стр. 237.

«Աղուանից աշխարհ։ կրկին առմամբ լիշտակի սա ի դիրս մեր. մի՛ փոխանակ այնը աշխարհի, որ է ընդ մէջ Կուր զետոյ և Կասպից ծովու՝ մինչև ի Գարբանդ. և սա կոչի Աղուանք Երուանայ կամ Երուանն, Երկրորդ ի մասնաւորի փոխանակ այնը մասին Հայաստանի, որ պարունակէ յինքեան զերիս աշխարհս. այսինքն, զՄւտի, զԱրցախ և զՓայտակարան, և զմասն ինչ յայնկոյս Կուր գետոյ և սա կոչի յատկապէս Աղուանք Հայոց...»<sup>109</sup>

Այստեղ, ինչպիս տեսնում ենք, Մ. Զամշյանը իրավացիորեն ճանաշում է երկու Աղվանք, բոյն Աղվանք և Հայկական Աղվանք: Վերջինիս մեջ նա նկատի ունի ոչ միայն աջափնյա տարածությունները (Ուտիթ, Արցախ, Փայտակարան), այլև որոշ տարածություն՝ ընկած «յայնկոյս Կուր գետոյ»: Դա մեր փաստարկած Անդրկորյան Հայքն է, որի սահմաների մասին սակայն պատմաբանը չի խոսում: Աւշագրավ է, որ նա Հայկական Աղվանքը դիտում է որպիս պատմական Հայաստանի մաս: Եվ, ինչպիս տեսանք վերևում, պատմական Հավաստի ու Հարուստ փաստերն ել այդ են վկայում:

Արդ, մի քանի խոսք՝ Աղվանքի կազմի մեջ մտցված Հայաստանի կամ, ինչպես Մ. Չամչյանն է ասում, «Աղուանք Հայոց»-ի կրոնական պատկերացումների հետ կապված փաստերի մասին։ Քանի որ այդտեղի բնակիչները հայ ժողովրդի անրաժանելի մասն էին, ապա նրանց մոտ էլ պիտի զոյտթյուն ունենային միևնույն հավատալիքները, ծեսերը, պատկերացումները։

Այս առումով, առաջին հերթին, կամենում հնք ուշադրություն հրավիրել Արա Գեղեցիկի և Շամիբալի մասին եղած զրոյցների և պատկերացումների վրա:

Իններորդ դարի Աղվանից աշխարհի խոշորագույն մատե-

— 109 Ա. Զամշյան, Պատմութիւն Հայոց, Գ, Վենետիկ, 1784, զրքի վերջին մաս, նոր էջակալում, էջ 131:

Նազիր ու քաղաքական գործիլ Համամ Բագրատունին, որն առաջին անգամ Հայոց Ազգանքում հիմնեց Հայկական ուրույն թագավորություն, իր գրած քերականության մեկնության մեջ, «իշելով իր Հայրենիքի առասպելների առատությունը, գրում է. «Կարի շատ են առասպելեացն գիրք», որով մտածել է տախիս, թե որքան շատ պիտի եղած լինեին զրքերից դուրս մնացած առասպելները: Բայց թե՞ ո՞րոնք են եղել այդ առասպելները, նա չի հիշատակում. միայն թե, քիչ հետո, որպես քերականական Համապատասխան վարժության օրինակ, գրում է.

Նուազ է լուսին քան զարեսպակն.

Նուազ է և աստղ քան պլուախն:

Նուազ է Արայի քան զԱրուսեակն զեղեցիկ 110:

Այստեղ մեր ողջ գրականության մեջ, առաջին անգամ, Հանդիպում ենք վկայության, որի համաձայն Արա Գեղեցիկն էլ դասված է եղել երկնային լուսատուների շարքը, ինչպես Հայկը՝ ի դեմս Օրիոն համաստեղության։ Կնշանակի, Աղվանից աշխարհի հայ բնակլության մեջ ևս իր պատմական ամուր հիմքերը պիտի ունեցած լիներ Արա Գեղեցիկի պաշտամունքը։ Այս կարծիքի հաստատման առումով վերին աստիճանի կարևոր նշանակություն են ստանում և միաժամանակ իրենց Հերթին արժեքավորվում այն տվյալները, որոնց համաձայն Արցախում հնուց ի վեր եղել են Շամիրամի անվան հետ կապված հատուկ վայրեր։ Խոսքը վերաբերում է «Շամիրամածոր» և «Շամիրամաբերդ» վայրերին, որոնց մասին տեղեկություններ են պահպանված Միհթար Գոշի<sup>111</sup> և Վարդան պատմիչի<sup>112</sup> մոտ։

Այսպիսով, այդ փաստերը միասին գալիս են ապացուցելու համապատասխան դիցաբանության, ուստի և համա-

110 Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр. 278. Հարցի ուսումնակիրությունը տես Ա. Մամիկոնյանի «Արայ Գեղեցիք» (Վեբենս, 1930) գրքում, էջ 304—334:

111 Պ. Ալիքան, Հայուպատում, Վենետիկ, 1901, էջ 385—386. «Սար-պիս եպիսկոպոս Շամբիրածմանորոց»:

112 Վարդան Վարդապետ, Հաւաքոսմին պատմութեան, Վենետիկ, 1862,  
էջ 100. «Ի գուառն Փափոխուոյ... անոնք զԵօթս և զԲնըզն Շամիրամալ»

պատասխան պաշտամունքի առկայությունը հայության այդ մեծ հատվածի մոտ:

Եվ եթե 7-րդ դարի պատմից Մովսես Կաղանկատվացին Աղվանից երկրի պղպարանության մասին խոսելիս, Աղվանից աշխարհի թագավորների վաշագանի, Ուսուայրի և մյուսների անունները տալուց առաջ, հշում է նաև «Արայն Գեղեցիկ»<sup>113</sup>, ապա դա միանգամայն բնական է:

Սակայն, Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելն էլ մի ինքնամփոփ ու սահմանափակ հասկացողություն չէր. այն սերտորեն կապված էր հայկական դիցարանության մյուս հերոսների ու հերոսուհիների հետ, որոնք անցյալի հեռավոր ժամանակներում, տարբեր պատճառներով, մերթ փոխարինել են միմյանց, մերթ միաձուլվել, մերթ էլ՝ նույնացվել: Հետեւ վապես, լրիվ հիմք կա Անդրկուրյան Հայքի, Ուտիքի, Արցախի հայության մոտ որոնել նաև հայոց հին աստվածություններից մյուսների առկայությունը: Այս առումով բացառիկ արժեք է ստանում Դիռն Կասիոսի այն վկայությունը, որի համաձայն, Պոմպեոսը, Աղվանների սահմանը դուրս գալու նպատակով, Արտաշատից շարժվում է դեպի Հյուսիս և դադար է առնում «Կուր գետի ափին գտնվող Անահիտյան գավառում»<sup>114</sup>, Կ. Վ. Տրեները, փորձելով ճշգրտել այս սրբազն տարածության կոնկրետ վայրը, նշում է, որ այն գտնվում էր Հայաստանում:

Այսպիսով, տեսնում ենք, որ Հայաստանի հյուսիս-արեւելյան քննվող գավառների հայությունն էլ ուներ իր Անահիտյան սրբազն գավառն ու պաշտամունքը, որը 60-ական թվականներին (Նախ. մ. թ.) իր ծաղկման շրջանն էր ապրում:

113 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Ազուանից, Թիֆլիս, 1912, էջ 51.

114 Այս ուղիով Պոմպեոսի շարժվելու մասին տե՛ս Կ. Վ. Տրևեր, Օչերքի..., ստր. 92—93.

Կարծում ենք, որ այս հանգամանքի ճշգրտումը կարևոր նշանակություն պիտի ունենա նաև որիշ Հարցերի կապակցությամբ: Մեզ այնպես է թվում, որ Պոմպեոսը պատճառաբար չէր, որ հայտնվել էր Անահիտյան գավառում: Նա հենց այդ երթուղին էլ պիտի ընտրեր, թերեւ նախապես

Պատմական Հայաստանի նշված գավառների հայության հին հավատքի մասին, որպես անուղղակի փաստ, ուշադրավ է նաև Ազաթանգեղոսի հետևյալ տեղեկությունը: Գրիգոր Լուսավորչի կողմից հալածված Արտաշատ և այլ վայրերի Անահիտյան մեհյանների սպասավորների բանակը, համառ ղիմարությունից հետո, որոշում է թողնել այդ վայրերը և հեռանալ դեպի հյուսիս: Ինքնին հասկանալի է, որ այս նոր տեղում, նրանք պիտի որ էլինիկական ու կրոնական համապատասխան միջավայր ունենային, այլապես բոլորովին օտար ցեղերն ու ցեղախմբերը ոչ նրանց լեզուն կհասկանային և ոչ էլ նրանց ծեսն ու հավատամքը: Արդ, ո՞ւր են որոշում մեկնել նրանք: Պատմիչը նրանց անունից այսպես է խոսում.

«Վայ մեզ... Արդ, յո՞ւ դիմեալ փախիցուք... երթամք մեր ի ընակիչս լերինն Կաւկասու, ի կողմանս հիւսիսոյ. թերեւ անդ հնար լիցի և ապրել մարթացուք»<sup>115</sup>:

Պարզ է, որ նրանք ծրագրում էին մեկնել երկրի հյուսիսային ծայրագավառները, միանալու թերեւ կուր գետի ափին գտնվող Անահիտյան վերոհիշյալ օջախի հետ կամ տեղափոխվելու Ուտիքի, Արցախի, Անդրկուրյան Հայքի լեռնային սահմանները:

Տառածած լինելով՝ ձմեռն այստեղ անցկացնել, օգտվելով տաճարային հիեռոգլիֆներից և նյութական այլ բարիքներից: Հենց այստեղ էլ հոռմեական զորագարը Հնարավորություն կոննենար իր զորքին պատշաճ հանգիստ և զնորության լիցք տալ: Եվ այն տեղեկությունը, ըստ որի, ձմռանը նրա շորքը տոնել է Սատունական տոնը, միանդամայն հասկանալի է, որ նույից կապվում է Անահիտական սրբազն գավառում նրա իշնանելու հետ:

Առհասարակ Պոմպեոսը հասուկ ուշագրություն էր նվիրում Անահիտական սրբազն գավառներին, խոշրացնելով և ընդարձակելով նրանց տարածությունները ու միջոցները: Այսպիսս, Սարարնը վկայում է, որ Կապանվիթական Զելա սրբավայրին Պոմպեոսը միացրեց ուրիշ գավառներ: Այդպիսս է վարդում նաև Մեդալոպոլիս սրբավայրի հետ (XII. III. 37):

Հասկանալի է, որ գրանք միանդամայն ձեռնտու օջախներ և զննման կետեր էին նրա համար: Եվ եթե Պոմպեոսը Կասպից ծովի կիսամանապարհից վերադարձած «Փոքր Հայք», ապա պարզ է, որ նա ետ եկավ կրկին վայելելու Անահիտական հենց արև գավառի բարիքները՝ հանգստանալու այնտեղ ևս մի ձմեռ:

115 Ազարանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, էջ 405—406:

Դա ինքնին խոսում է նաև այդ ծայրամասերում, հատկապես Արցախի լեռներում, հեթանոսության ավելի ուժեղ զիմաղության ու ավելի երկար գոյատեման մասին: Եվ դա միանդամայն բնական է: Չմոռանանք, որ միշտն դարերում էլ, ինչպես վկայում են պատմիչները, Հայաստանում դեռևս կային հայության հեթանոս զանդվածներ, որոնք հեշտությամբ միանում էին աղանդավորական օջախների հետ, հաճախ նրանց կենտրոնական ուժը հանդիսանալով: Իսկ որ Արցախում, իրաք, հեթանոսական կրոնն ավելի շատ է համառել, դա վկայում է նաև Մովսես Կաղանկատվացին: Խոսելով Վաշագան Զ-րդի հկեղեցական միջցառումների մասին, նա գրում է, «Հրաման տայր այնուհետև Արցախամուր աշխարհին յիրում ժառայութեանն ի բաց լքանել թողով զդիւապաշտութեան կարգս կարգս զաղտեղի դիցն զոհամատոյց պաշտամունս...»<sup>116</sup>: Համանման միջցառումներ են հիշատակվում նաև Կամքեճանի գավառի և Աղվանից աշխարհի բնակչության համար:

Պատմիչն այսուղ Աղվանքից տարրերում է ոչ միայն Կամքեճանը, որի մասին նշվեց վերևում, այլև Արցախը, ընդգրծելով, որ այն գոտնվում էր «ինրում ժառայութեան», այսինքն, Աղվանից աշխարհի Վաշագան Զ-րդ թագավորի ժառայության տակ: Այդպես էր խոսվում նվաճված երկրների ու ժողովուրդների մասին<sup>117</sup>: Այսուղից պարզ է և այն, որ ոչ Արցախը և ո՛չ էլ Կամքեճանը, բայց Մ. Կաղանկատվացու, չեն ունեցել աղվան բնակիչներ և չեն եղել Աղվանքի Էթնիկապես հարազատ հատվածներ, այլապես այդ երկրները կը գիտվեին որպես ուղղակի Աղվանք:

\* \* \*

Ինչպես հայտնի է, քրիստոնեությունն իր սկզբնական սրբաւորեր հիմնում էր հենց հեթանոսական սրբավայրերի

<sup>116</sup> Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 57:

<sup>117</sup> Տե՛ս նաև Հիմանշիրի թղթում՝ առաքված Կոստանդիանոս կայսեր (անդ, էջ 207, «Հանդերձ արևելից ծառայական աշխարհաւուս»):

տեղում, նրանց ավերակների վրա, հաճախ էլ օգտագործելով հին շնչերն ու զանազան հարմարանքներ՝ մասնակի փոփոխություններով: Մեր կարծիքով, այդպիսի պատմություն է ընկած նաև Աղվանից աշխարհի նահատակութուն թագուհու անվան հետ կապված զրույցի հիմքում: Հայկական քրիստոնեական լեզենդի նմանությամբ ներկայացված այս զրույցի հերոսուհին՝ Թագուհին մերժում է «խոզաքարոյ ներանոսաց» վավաշու առաջնորդին, սպանվում է «որպէս սուրբ տիկնոջն Ծոփսիմեայ» և սրբացվում: Եվ այդ գեաքը տեղի է ունենում Ուտիքի հին սրբավայրերից մեկում, որը կոչվել է «Աստեղն բլուր» կամ «Աստղաբլուր»<sup>118</sup>: Հասկանալի է, որ այստեղ գործ ունենք հեթանոսական Աստղիկ տատվածունու անունով հայտնի և նրան նվիրված մի սրբավայրի հետ, որը շուտով նրան փոխարինելու է զալիս նրա քրիստոնյա հաջորդը՝ Թագուհին:

Ուշագրավ են նաև այն տողերը, որոնց մեջ այդ ժամանակներում ևս Հայաստանի սահմանները հյուսիսում հասնում էին ոչ միայն մինչև Ուտիք, այլև ավելի վերև: Այսպես, ըստ Ազաթանգեղոսի, Գրիգոր Լուսավորիչն իր քարոզը տարածում էր որնդ ամենայն երկիրն Հայոց, ի ծագաց մինչև ի ծագս... մինչ ի սպառ ի սահմանս Մասրթաց, մինչև ի դրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից, ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց»<sup>119</sup>:

Քրիստոնեության տարածումը Հայաստանում բատ երեւութիւն, նաև այն դրական դերն էր կատարում, որ ավելի մեծ ուշագրություն էր նվիրվում լեզվին: Ճիշտ է, սկզբնական շրջանում եկեղեցական արարողությունների ժամանակ օգտվում էին օտար գրականությունից, սակայն միամտություն կլիներ կարծել, թե լոկ այդ եղանակով էր այդ նոր ուսմունքը տարածվում ու հազթանակում: Ամենազոր գործոնն այս անգամ էլ եղել է բանավոր խոսքը, հայերենը, որ գործածվել է ողջ երկրում «ի ծագաց մինչև ի ծագս»: Եվ եթե

<sup>118</sup> Անդ, էջ 109—112:

<sup>119</sup> Ազաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1909, էջ 439.

Ստրաբոնի վկայությամբ զեռնս 1-ին դարում անգամ Հայաստանին կցված երկրներն էլ հայախոս էին, ապա քրիստոնեոթյունը գալիս էր ավելի քան ամբողջացնելու հայ ժողովրդի ազգային կերպարանքը, այդ թվում նաև լեզվի առումով։ Գրիգոր Լուսավորիչ և նրա քրիստոնյա քարոզիչների բանակը, երկրով մեկ նոր կրոնը տարածելու ժամանակ, ըստիպված էր նոր գեր ու նշանակություն տալու հայոց լեզվին։ Եվ դա է, որ ժամանակին ընդգծել է Ազգաթանգեղոսը, ասելով։

«Յայնմ ժամանակի երանելի ցանկալի և անպայման ըսքանչելի լինէր երկիրս Հայոց», որովհետև ինչպես Մովսես Մարգարեի և Պողոս առաքյալի դործունեությամբ վերածընվեցին նրանց ծնող ժողովուրդները, այդպես էլ Գրիգոր Լուսավորիչ ժամանակ՝ հայերը։ Պատմիչն իր խոսքն այսպես է կոնկրետացնում. «Սոյնպէս և սա (իմա Հայաստանը) եկեալ հասեալ երևալ՝ հայաբարբառ հայերէնախօս գտաւ...»<sup>120</sup>.

Այդ գործը համազգային և համահայկական բնույթ ստանալով, մի նոր մակարդակի էր բարձրացնում հայոց լեզուն և հայ կենցաղը։ Նրա ամենօրյա հետեղներն ու հսկողներն էին քրիստոնյա հոգևորականները, որոնց այնքան մեծ տեղ էր տալիս Գրիգոր Լուսավորիչը. «Եւ բազմացոյց կացոց տեսուչս եպիսկոպոսս յամենայն գաւառս Հայոց իշխանութեան իւրոյ...»<sup>121</sup>. Զպիտի կարծել, սակայն, որ միանգամայն դյուրին էր այդ նոր հավատքի քարոզման գործը և այն էլ այնպիսի հեռավոր վայրերում, ինչպիսիք էին, օրինակ, Հյուսիսային սահմանները, Բնականաբար նաև այս հողի վրա էր, որ այդ վայրերի տարրեր ցեղերն ու ցեղախմբերը գրգովում են Տըրդատի թագավորության դեմ, նրա ուշադրությունը հրավիրելով Աղվանից աշխարհի կողմերի վրա։

«Վտանգ մեծ է, ասէ, թագաւորին Տրդատայ, վասն որոյ զնաց զկողմամբը Ազուանից պատերազմել ընդ ամենայն լեռնոտնեալյան...»<sup>122</sup>. Անշուշտ, այդ ժամանակ Աղվանից երկիրն

իր ցեղերով, որպես քրիստոնյաներ, Տրդատի համար հենման կետ էին՝ Հայաստանից դուրս, ուր և հասնելով նա ճակատամարտ է տալիս ու հաղթում։

«Իսկ թագաւորն Տրդատ ամենայն Հայաստանօք իշեալ ի դաշտն Գարգարացւոց՝ պատահէ Հիւսիսականացն ճակատու պատերազմին և հալածում է նրանց «մինչև յաշխարհն Հոնաց»<sup>123</sup>,

Ընդհատելով փաստերի վկայակոչումն ու մեկնաբանությունը, այժմ կարող ենք համոզված ասել, որ Անդրկուրյան Հայքը, Ուտիքը, Արցախը եղել են պատմական Հայաստանի հնագույն գավառները։ Նրանց թվին է պատկանել նաև հետագյում Արտաշեսյան նվաճումների մեջ մտնող և մարերից առնված Կասպիանն զավառը, Վերշինս հաճախ է անցել ձեռքից-ձեռք, մինչդեռ Ուտիքն ու Արցախը, չհաշված առանձին դեպքերը, եղել ու մնացել են Հայաստանի օրդանական մասը մինչև 387 թվականը։ Թե ե՞րբ է Հայաստանից անջատվի Անդրկուրյան Հայքը, այդ մասին որոշակի տվյալներ չունեն։ Հավանական է, որ այն մի քիչ ավելի վաղ բռնագրավված լիներ, քան Ուտիք-Արցախյան երկրամասերը,

\* \* \*

Այժմ անդրադառնանք 387 թվականից հետո ընկած ժամանեների ամփոփ պատմությանը՝ կապված հայկական վերաբերյալ գավառների բնակչության ճակատագրի հետ։

Ինչպես հայտնի է, թե՛ Արտաշեսյան թագավորության շրջանում և թե՛ Արշակունիների սկզբնական ժամանակներին Հայաստանն իրենից ներկայացրել է միասնական մի պետություն և դարեր շարունակ դիմագրավել՝ մասնավորապես պարսկական ու հոռմեական բռնակալությունների անընդմեջ հարձակումներին։ Այդ համառ ու հարատես պատերազմների ընթացքում էր, որ ի վերջո թուլացավ հայկական պետության հզորությունը, կանգնելով անկման անդունդի եղերքին։ Ճա-

120 Անդ, էջ 447—448։

121 Անդ, էջ 448։

122 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 228։

հատադրական եղան հատկապես 4-րդ դարի երրորդ քառորդի իրադարձությունները, 363 և 387 թվականների պայմանագրերն ստեղծող հանգամանքները։ Առանց այդ հանգամանքների հետազոտման, միշտ էլ կարող է սխալ պատկերացում ստեղծվել մեզ հետաքրքրող հարցի ուսումնասիրության գործում։ Ուստի փոքր ինչ անդրադառնանք այդ խնդրին։

Փակստոս Բուզանդը, հանգամանորեն պատմելով այդ, պատերազմների և 387 թվականի պայմանագրի մասին<sup>124</sup>, որով Հայաստանը բաժանվում էր Հռոմեացիների և պարսիկների միջև, գրում է, որ վերջիններս «... լաւ համարեցան զաշխարհն Հայոց նախ ընդ երկուս ի մէջ իրենց բաժանել. զի ասէին՝ թէ ի միջի մերում բնակեալ է այս հզօր և հարուստ թագաւորութիւն, լաւ է զի այսու եզդանել և խանկարել կարասցուք զայս թագաւորութիւնս. նախ ընդ երկու բաժանել երկու թագաւորօք Արշակունօք՝ զորս կացուցաք, ապա և ընդ նոսա կրծել ջանացուք, աղքատացուցանել, ի մէջ արկանել ի ծառայութիւն, զի մի կարասցեն ի մէջ մեր ամբառնալ զգուիս։

Եւ հաստատեցին զայս խորհուրդ. ընդ երկու զաշխարհն բաժանեցին։ Բաժին կողմանն Պարսից էր թագաւորին Խոսրովու, և բաժին մասինն Յունաց էր թագաւորին Արշակաց Բայց և ի նոցանէ բազում գաւառք կրծեալք հատեալք այսր անգր, և մնաց սակաւ մասն յաշխարհաց երկոցունց առ երկուեան թագաւորսն... Եւ բազում գաւառք յերկոցունցն հատան, նուազեաց բաժանեցաւ ցրուցաւ թագաւորութիւնն Հայոց, պակասեաց յիւրմէ մեծութիւնէն յայն ժամանակն և յապայց<sup>125</sup>։

Ըստ այդ ժամանակ կնքված պայմանագրի էլ, ահա, ինչպես պարզել էն ն. Աղոնցը, Հ. Մանանդյանը, Ս. Երեմյանը և ուրիշներ, Հայաստանից անշատվում էն Ուտիքը, Ար-

<sup>124</sup> Այդ ժամանակի ճշգրտումն մասին տե՛ս Ա. Գյուղերազ, Հոովմէական Հայաստան..., Վիեննա, 1914, էջ 3—30։

<sup>125</sup> Փակստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 392—394։

ցախը, Փակստակարանը և ուրիշ գավառների։ Ն. Աղոնցը գրում է, որ այս իրադարձությունների հետևանքով Հայաստանից խլվեցին և հարկաններին արվեցին հետևյալ զավաները. «Գոգարենը՝ Իրերիային, Ուտիքը և Արցախը՝ Աղվանցին, Փայտակարանը և Պարսկահայքը՝ Ասրապատականին...»<sup>126</sup>; Հ. Մանանդյանը գրում է, որ վերոհիշյալ պարմանագրի գորությամբ Հայաստանից «դուրս էին մնացել... Գուգարքը, Ուտիքը, Արցախը, Փայտակարանը և թերևս նաև մի քանի այլ շրջաններ»<sup>127</sup>։

Հայաստանի բաժանումից հետո նրա տարրեր հատվածներում տիրեցին քաղաքական տարրեր կացություններ։ Այսպիս, Հռոմեական մասում առժամանակ թողնված Հայկական թագավորությունը վերացավ 389—390 թվականներին, իսկ պարսկականում՝ 428—429։

Ուշագրավ է, որ պարսիկ տիրակալները, հատուկ քաղաքականությամբ, Աղվանից աշխարհից և Ուտիք-Արցախյան գավառներից կազմված վարչական-պետական միավորում պահպանեցին Աղվանից կողման սակայն Արշակունի թագավորությունը՝ ընդուակ մինչև 6-րդ դարի 30-ական թվականները։ Ըստ երևույթին, այդ քաղաքականությամբ, նրանք մի կողմից ձգտում էին սիրաշահած լինել իրենց հյուսիսային սահմանների վրա գտնվող աղվաններին, իսկ մյուս կողմից՝ Ուտիքի և Արցախի ընակչությանը, որպեսզի նրանք անշատողական և թշնամական բացահայտ դործողությունների լրդմին։ Դա խիստ անհրաժեշտ էր ոչ միայն այս նոր Աղվանից բնակչությանը հնազանդ պահելու, այլև նրանց՝ հյուսիսային ցեղերի դեմ հղոր պատվար դարձնելու նպատակով։

Հայ-աղվանական այս նոր երկիրն իր պետականությամբ չնայած հնթարկվում էր Պարսկաստանին, սակայն, համեմատարար ավելի տանելի պայմանների մեջ էր գտնվում, քան Պարսկաստանի և Բյուզանդիայի լոի տակ հեծող Հայաստա-

<sup>126</sup> Ա. Ածուց, Արմենիա в эпоху Юстиниана, СПб, 1908, стр. 230.

<sup>127</sup> Հ. Մանանդյան, Քննական տեսություն Հայ ժողովրդի պատմության, թ. 1957, էջ 240—241։

Նի երկու հատվածները: Եվ ամենից առաջ հենց այս պայմաններն էին, որ մարում էին Ուտիքի ու Արցախի ներքին տերերի անշատողական ձգտումները: Դրան նպաստում էին նաև աշխարհիկ ու հոգևոր զեկավար կենտրոնները՝ թագավորական տունն ու եկեղեցին: Այս նոր միավորում հայ հատվածը, կրոնական առումով, իրեն զգում էր այնպես, ինչպես Հայատառանի կազմում եղած ժամանակ, որովհետև աղվանական եկեղեցին պատկանում էր հայ եկեղեցու դավանանքին և գտնվում էր նրա իրավասության ներքո: Բացի դրանից, այստեղ Հորինված էր նաև զրոյց այն մասին, թե աղվանից եկեղեցին ավելի վաղ էր ընդունել քրիստոնեություն, քան Հայկանը, Հանգամանք, որը շոյելով աղվանական հատվածի ինքնասիրությունը, հնիտազրում էր նաև առաջնության հնարավորություն, հաճախակի բորբոքելով վիճարանություններ: Աղվանից կորչած այդ ժամանակվա թագավորությունն էլ հայ-աղվանական թերթի փոխարարեկրության առումով, խորթություն չեր ներկայացնում, որովհետև պատկանում էր Արշակունիների տոհմին և նույնքան հայկական էր, որքան աղվանական: Ավելին, պատմական և տնտեսական հիմքի վրա, այն պիտի ավելի քան մոտ կանգնած լիներ հայկական հատվածին: Իր հերթին, հայկական հատվածն էլ ավելի շատ տրվյալներ ուներ առաջին դիրքերում գտնվելու, քան աղվանականը: Այստեղ, ինչպես նշեցինք մեր խոսքի սկզբում, նկատի ունենք հայկական հատվածի էթնիկական հզորությունը, միասնական լեզուն, աղվանից եկեղեցու հայկական զեկավարությունը, հայ հատվածի թիկունքում գտնվող հայության գոյությունը, նրա զարգացման ընդհանուր մակարդակը և այլն: Ի հակազդի այս ամենի, պիտի հիշել նաև մայր հայրենիքի վրա հետագայում ևս ծանրացող ճնշումները, որոնք ավելի քան մոռագության էին տալիս Ուտիքի և Արցախի անշատողական միտումները:

Այս առումով, ավելորդ շնոք համարում հիշել մի երկու փաստ: Ղաղար Փարպեցին, խոսելով պարսից Հազկերտ 2-րդի (438—457 թթ.) քաղաքականության մասին, մեջ է բերում

Նրա հրովարտակից այսպիսի տողեր. «Եւ յորժամ Հայք սերտի մեր լինին՝ Վիրք և Աղուանք այնուհետև մեր իսկ են»<sup>128</sup>, իսկ դա նշանակում էր առժամանակ հալածանքի և բռնությունների ալիքն ուղղել Հայաստանի հայության վրա: Իրականում հենց այդպես էլ արվում էր, որպեսզի ամենից առաջ ընկճվեր դիմադրության ամենավտանգավոր միջնաբերդը:

Հիշենք Մորիկ կայսեր նենդ ծրագիրը, որով նա, Պարսից նոսրավ Երկրորդ թագավորի հետ, կամենում էր իրականացնել ողջ հայությունը Հայաստանից տեղահանելու գործը: Ահա թե ինչ է գրել նա այդ մասին խոսրով Երկրորդին.

«Եզր մի խոտոր և անհնազանդ են, ասէ, կան ի միշի մերում և պղտորին: Բայց եկ, ասէ, ես զիմս ժողովիմ և ի Թրակէ գումարեմ և դու զրոյդ ժողովէ և Հրամայէ յԱրևելս տանել: Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. և եթէ սպանաննեն՝ զթշնամիս սպանանեն. և մեր կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ գորա յերկրի իրեանց լինիցին, մեզ հանգչել ոչ լինի»<sup>129</sup>:

Այստեղից էլ պարզ երևում է, որ հալածանքի զիմավոր կենտրոնը պարսկական և բյուզանդական իշխանության տակ գտնվող Հայաստանն էր, մինչ Արևելյան կողմերը, այսինքն, Աղվանից աշխարհը, համարվում է ոչ միայն անհամեմատ անվտանգ, այլև ապահով վայր, որովհետև այնտեղ են կամենում տեղափոխել Պարսկաստանի իշխանության ներքո գտնվող ողջ հայությանը: Եվ պատահական չէ, որ այդ ծրագրի իրագործման դեմ ապստամբած Ատատ և Սամվել հայ զորավարներն իրենց զորագնդերով՝ մահապատժից խուսափած, գալիս և ապաստան են գտնում Կուր զետի ափին, այսինքն, Անդրկուրյան Հայքում:

Այսպիսի պայմաններումն է, ահա, որ Աղվանից նորասեեղծ երկրի թագավորությունը կարողանում է գոյատել մինչև 6-րդ դարի առաջին տասնամյակները: Այնուհետև

<sup>128</sup> Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, էջ 43:

<sup>129</sup> Սերեսու, Պատմութիւն ի Հերակլ, Թիֆլիս, 1913, էջ 75:

պարսկական քաղաքականությունն այդ երկրում էլ փոխվելով, թևակոխում է իր հաջորդ փուլը: Վերացվում է Աղվանից թագավորությունը: Պարսկական բռնապետության համար Աղվանից աշխարհի թագավորության գոյությունն այլևս ձեռնոտու չեր: Ուստի բոլորովին էլ սովորական զուգադիպություն չպիտի համարել, հենց նույն տարիներին Աղվանից կոչված աշխարհում պարսկական մի խոշոր տոհմի երեան գալը՝ 30.000 բնանիքով: Դա պատմության մեջ հայտնի Միհրան դորավարի տոհմն էր, որը ներքին խռովությունների, թե խորամանկ բաղաբանության շնորհիվ, դուրս եկայլ երկրից, որպես պատմության մի համար աշխարհը, սակայն իրականում ամրացավ Աղվանիքին կցված Հայոց Գարդման գավառում: Դատիլով պարսկիների այն բացահայտ ձգտումներից ու ծրագրերից, որոնց հիմնական նպատակը Հայստանին, ապա նաև Աղվանիքին «սերտորեն» տիրելն էր, պիտի ենթադրել, որ հենց այդ ծրագրի իրագործմանն էր հետապրնդում Միհրանի տոհմը:

Այստեղ մենք կանգնում ենք դեմ հանդիման Միհրանյան և Առանշահիկ տոհմերի պատմությանը, որը մեզ համար էական նշանակություն ունի: Ուստի փոքր ինչ հանգամանորեն անդրադառնանք այդ տոհմերի պատմությանն ու փոխհարաբերություններին:

\* \* \*

Միհրանյան և Առանշահիկ տոհմերի պատմության միակ և կարևոր սկզբնաղբյուրը Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից» երկն է: Այդտեղ Մովսես Կաղանկատվացին գրում է.

«Ի սույն և ի բուն պատմագրաց այսպէս ժանհաք...» և ապա շարունակում է իր խոսքը՝ վերոհիշյալ տոհմերի մասին:

Որոշ պատմաբաններ, կատարելով հաշվումներ, գտնում են, որ Մովսես Կաղանկատվացու վկայության մեջ կան ճրշգրտման կարոտ կետեր, որովհետև նրա թվարկած Միհրա-

նան տոհմի սերունդները չեն տեղավորվում նրա նշած ժամանակամիջոցի սահմաններում: Սակայն դա մի խնդիր է, որը կարող է բացատրվել կամ ժամանակի մասնակի տեղաշարժով, կամ սերնդաշավի մեջ մուծվելիք որոշ ուղղումներով: Կարևորը մեզ համար այդ տոհմի ժագումն ու դերն է, որի մասին բավարար տեղեկություններ կան նույն պատմիչ մոտ: Եվ դա մեզ համար խիստ կարևոր է, որովհետև հենց այդ տոհմի կապակցությամբ է, որ պահպանված են մեծարժեք տեղեկություններ՝ նաև Աղվանիքին միացված հայության և նրա Առանշահիկ տոհմի մասին: Հետամուտ լինելով այս պատմությանը, տեսնում ենք, որ Աղվանիքին կցված հայ զանգվածները կարողացել են ոչ միայն պահպաննել իրենց ազգային ինքնուրույնությունը, այլև մարտնչել հանուն ողջ Աղվանիքի ինքնուրույնության, կենարոն ունենալով հատկապես Առանշահիկ հողված հայկական տոհմը և Գարդման գավառը: Ուստի և միանգամայն հասկանալի է, թե ինչու Միհրանի տոհմը հանգրվանում է Գարդմանում, հայության այդ ուժեղ կենտրոնում: Դա ինքնըստինյան մի լուս մարտահրավեր էր տեղական բնակչությանն ու նրա բնտրյալներին: Հիրավի, շատ շանցած, Միհրանն ինքը, անձամբ, զիմում է հարձակողական վճռական քայլերի, սակայն՝ խարդախությամբ: Նա իր մոտ է հրավիրում տեղի 12 հայ իշխաններին և նենդորեն գլխատում: Միհրանը, գրում է պատմիչը, «ի դալ զարնանային աւուրցն ելանէ ի վերկոյս Գարդման գաւառին, զաւով առ ինքն կոչէ ի զլիաւորացն արս երկոտասան, սրով բառնայ զնոսա և տիրէ աշխարհին»<sup>130</sup>, Այստեղ «աշխարհ» ասելով, պատմիչը նկատի ունի Գարդմանը և ոչ թե ողջ Աղվանիքը: Բայց նաև այն ասենք, որ Միհրանի որպես պարսից տիրակալության ներկայացուցչի, նպատակը պիտի լիներ իշխան ողջ Աղվանիքին: Ակրնական շրջանի համար Գարդմանին տիրելը մեծ հաջողություն էր: Հաջորդ քայլը, բնականարար, ուշանում է, և ուշանում է շուրջ երեք սերունդ, մինչև ծնվում

130 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 196:

է իր նախնուն խորամանկությամբ գերազանցող Քաջ Վարդանը՝ Միհրանի ծոռը: Ըստ երևույթին, այդ ժամանակամիջոցում պարսիկներն արդեն կարողացել էին ներթափանցել Հայության ներսը՝ խնամքական կապերի օգնությամբ, որոնք միշտ էլ այն ժամանակների քաղաքականության լծորդներից էին:

Քաջ Վարդանի ժամանակ այդպիսի կապի մասին է վկայում նրա տոհմի աղջիկներից մեկի ամուսնությունը՝ Հայոց գի իշխան Զարդիհրի հետ: Զմոռանանք նաև այն հանգամանքը, որ Միհրանան տոհմը, մայր Հայրենիքի — Պարսկաստանի գերիշխանությունից օգտվելով, պիտի որ բավականաշափ ազգեցություն նվաճած լիներ և՝ Գարդմանի սահմաններում, և՛ նրա սահմաններից գուրս: Փաստերը ցույց են տալիս, որ այդուհանդերձ, երկրի ներքին իշխանությունը ղեռս գտնվելիս է եղել հայերի ձեռքին: Եվ, ահա, Գարդմանի իշխան Քաջ Վարդանը Աղվանիքի վաթսուն հայ իշխանների իր մոտ խնչույթի է հրավիրում և նենգորեն զլխատում բոլորին, բացի իր տոհմի հայ փեսալից, վերոհիշալ Զարդիհրից, որը, Հավանաբար նախապես ներգրավված է եղել հանցագործության մեջ, այլապես նրան էլ չէին խնայի: Ահա այդ եղեննագործության միջոցով էլ Միհրանյան տոհմը հասնում է ողջ Աղվանելի իշխանության տնօրինությանը: Հանգամանք, որից պարզ երևում է, որ դրանից առաջ այդ դրության տերը՝ Աղվանիքի հայ իշխաններն էին, որոնց, ինչպես նշեցինք, պատմիշը կոչում է Առանշահիկներ կամ Եռանշահիկներ: Ահա թե ինչ է գրում Մովսես Կաղանկատվացին այդ մասին, Միհրանն ունենում է «որդի Արմայէլ, որ ծնաւ զվարդ, Վարդ ծնաւ զՔաջն Վարդան, որ շինեաց զբերդն Գարդմանայ զերիս ամս. և ի նենգելն ի սիրտ իւր զնախնական ազգս Հայկազնեայց զԵռանշահիկս, զոր վերագոյնն գրեցաք ի մատենիս՝ կոչէ որպէս ի ճաշ, և հաց կորստեան գործեալ տայ նոցա ուտել. և ի ճաշի անդ արեամբ նոցա արար զլխատումն արանց վաթսրնից. միայն թողոյր ի նոցանէ զփեսայացեալն իւրում ցեղին Զարմիրն Եռանշահիկ: Այսպէս եղել նոցայն տիրել Ա-

դուանից: Նաև զվայրասուն ազգն Կովկասու Հնագանդեցոյց ինքնան...»<sup>131</sup>:

Այս վկայության միջից է, որ առաջին անգամ, երևում է Աղվանիքին անցած Հայության կամ Հայոց Արևելից կողմանց ղեկավար զերը: Կնշանակի, ոչ միայն այդ օրերին, այլև Յ-րդ դարի սկզբներին, և նրանից առաջ Աղվանիքի ներքին կյանքը տնօրինում էին, հիմնականում, հայ իշխանները, որոնց և իշխանությունից հեռացնելու գործին էին լծվել Միհրանյան տոհմի ղեկավարները: Այլ կերպ էլ չէր կարող լինել, Արցախի, Ուտիքի, Գարդմանի, Անդրկուրյան Հայքի հայ բնակությունը, թիկունքում ունենալով մայր Հայաստանը, բնականաբար, մայր հայրենիքի օրինակով, պիտի շարունակեր իր ինքնուրույն կյանքն ու համառ զիմադրությունը՝ օտար ուժերի գեմ: Հայության այդ ներքին ղեկավարները, երկրի բնիկ իշխաններն են ահա, որ կոչվել են Առանշահիկներ կամ Եռանշահիկներ, այսինքն, Առանի կամ Եռանի շահեր, իշխաններ: Այստեղ թերևս «իկ» մասնիկը ոչ այնքան փաղաքական իմաստ ունի, որքան քաղաքական, որովհետև նրանք զբանական կոչում էին օտար լծի տակ և լիարժեք շահեր չէին կարող կոչվել:

Առանշահիկների մասին ամենաանդրանիկ վկայությունը դարձյալ գտնվում է Մովսես Կաղանկատվացու մոտ և վերաբերում է Առանշահիկ Վարազ Պերոժին, որը նորոգել է Գիսի Հին եկեղեցին՝ կառուցված Մեսրոպ Մաշտոցի անվան հետ կապված հիշատակների վայրում: Խոշոր դիրք է ունեցել նաև այս գործիշը:

«Այլ և յետ բազում ժամանակաց վեհազգի ոմն իշխան Վարազպերոժ անուն՝ յԱռանշահիկ տոհմէ, կամեցեալ նորոգել զՀին եկեղեցին...»<sup>132</sup>:

Այս տոհմը, չնայած տված գոհերին և օտարների կըրկնակի բռնությանը, իր գոյությունը պահպանել է նաև հաջորդ դարերում և նորից իր ձեռքը վերցրել ողջ Աղվանիքի տնօրի-

131 Անդ, էջ 196—197.

132 Անդ, էջ 106.

նությունը: Հասկանալի է, որ այդ ամենը տեղի չէին ունենա, այդ տոհմն էլ իսկույն կվերանար, եթե նրա ոտքերի տակ շիներ հայկական բնիկ ու հզոր միջավայր:

«Պատմութիւն Աղուանից» երկում ի միջի այլոց արված ժամանակագրական պատումներից մեկում հիշվում է «զեռանշահիկն զվաշական պատրիկեան Աղուանից իշխանն՝ զբաջ կորովին և զաջողակ աղեղնաւորն հանդերձ զօրօք»՝ 709 թվականի հաղթական ճակատամարտում<sup>133</sup>; 821 թվականին լրսվում է մի ուրիշ եռանշահիկի «Հզոր ձայնը»: Արաբներն առեվանդում են «ՔԱՄԱՐԱՍ գաւառ՝ գերի առեալ իբրև ողիս հազարս... Յայնժամ արի և շքեղատեսակն Սահի Սմբատեան Եռանշահիկն տէր՝ բաշազօր եղբարբք իւրովք և զօրօք ի լուսանալ առաւտուն ի վերայ յարձակեալ առ հասարակ դիաբաւալ զնոսա ցիր և ցան կացուցանէին, և որպէս յառիծոյ ժանեաց զգերեալսն ի բաց կորպէին»<sup>134</sup>:

Ինչպես ժամանակին ցույց է տվել Խաչիկ վարդապետ Դաղյանը, Մովսես Կաղանկատվացու տպագրված պատմությունից զուրս մնացած հատվածներից մեկում ևս արժեքավոր տողեր կան այս Սահի Սմբատյանի մասին.

«Իսկ յերկու ծ29 թույն հայոց (837 թ.) թօֆ-ան Ռ հեծելոց յանկարծահաս ելեալ ի Բախտատա արշաւէին երկիրս Աղուանից: Անդ ակն ի վերայ հարեալ Սահի Սմբատեան, որ յարքայից Զառմիրհական տոհմէն էր, գործակից իւր կայշեալ զմեծ նահատակն Գէորգիս, զիմէ ի վերայ որպէս արծուի խոյացեալ ի տկար թռչունս, այսր անզը ցրուեալ տապաստ դաշտացն արկեալ վանէր: Եւ ի նոյն ամին, նոյն տէրն Սահի Սմբատեան ձերբակալ արարեալ զապստամբն Բարան, զմարդախողսոր, աշխարհաւէր արինարրու գաղանն... Զի առու իշխանութիւն ի վերայ Հայոց, Վրաց և Աղուանից... արքայարար»<sup>135</sup>:

Հավանաբար նոյն տոհմից էր նաև Աղվանից աշխարհի

133 Աևդ, էջ 368:

134 Աևդ, էջ 374:

135 «Արարատ», 1897, էջ 162:

Հավանանես իշխանը, որի մասին նույն պատմիլը խոսում է 838 թվականի գեղքերի կապակցությամբ. «Ի սոյն ամի տէրանց տէրն Յովաննէս, որ Հայոց, Վրաց և Աղուանից եղեւ էր, խնդրեաց յարքունեացն...» և այլն: Զի կարելի տարակուանեւ, որ, իրոք, նոյն Հովհաննեսին է հիշում նաև Արցախի Մեծարանց և. Հակոբի վանքի ամենահին հուշարձանը (խաչքարի պատվանդան).

«ՅԲ (=853) Թուականութ...

Ին Հայոց ի ժամանակա...

Յովհանիսի Աղվան...

իշխանի ևս Սողոմ...

Մեծ արանց հափսկ...

կանգնեցի զս...»<sup>136</sup>:

Պատմաբան-Հնագետ Ս. Բարիսուդարյանը, տեղում ճըշտելով այս արձանագրությունը, այն վերծանում է այսպէս.

«ՅԲ Թուականուրեանս Հայոց, ի ժամանակս Յովանիսի Աղուանից իշխանի, ևս Սողոմոն Մեծարանց եպիսկոպոս կանգնեցի զուտր խաչս» (տէ՛ս իր նյութերի անտիպ հավաքածուն): Ընդգծված տառերը Ս. Բարիսուդարյանի լրացումներն են:

Ինչպես տեսնում ենք, Աղվանքի հայ գործիչներն արդեն թափանցում էին համակովկասյան գործունեովթյան շրջանակները:

Սկզբնադրյուրներում այդ դարում, այն է՝ 850-ական թվականներին, հիշատակվում է եսայի «Արու-Մուսէ Եռանշահիկ»-ը, որը հերոսական զիմադրություն է ցույց տալիս արաբներին և հատկապես Բուղա ոստիկանին»<sup>137</sup>:

Նրա մասին մասնակի ակնարկներ կան Մովսես Կաղանկատվացու<sup>138</sup>, Հովհաննես Դրասիանակերտցու<sup>139</sup>, Ստե-

136 Աևդ, էջ 162—163:

137 Աևդ, Հայոց պատմություն, Ա, Երևան, 1947, էջ 459—464:

138 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 376; Տէ՛ս նաև «Արարատ», 1897, էջ 162—163:

139 Հովհաննես Դրասիանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 127:

փանոս Ասողիկի<sup>140</sup>, իսկ բավականին մանրամասն՝ թուլմա Արծրունու մոտ<sup>141</sup>:

Անուղղակի, բայց պերճախոս փաստերը ցույց են տալիս, որ 9-րդ դարի կեսերին Միհրանյանների կողմից գալազրարար նվաճված Գարդմանի իշխանությունը նորից գտնվում էր Հայ իշխանների ձեռքին: Այսպիսի թուղա ոստիկանի պատժի արշավանքի ժամանակ Գարդմանի տերն է եղել Հայազգի իշխան «Կարիճ»-ը:

Հովհաննես Դրասխանակերտցին թուղայի մասին գրում է. «Պնայր յԱրևելս յաշխարհն Գարդմանաց առ իշխան աշխարհին, որ Կարիճն անուանիր»<sup>142</sup>, կամ «...Գնայ ի գաւառն Գարդմանաց... ըմբռնէ անտի և զիշխանն Գարդմանաց զԿրտրիճն...»<sup>143</sup>: Այսպիսի վկայություն կա նաև Ստեփանոս Ասողիկի մոտ<sup>144</sup>: Հենց ինքը «Կարիճ» անունը, ինչպես Ն. Մառն է ասել՝ իշխաննիկ անվան կապակցությամբ, շատ բան է խոսում էթնիկական իմաստով:

Հայոց Արևելից կողմանց Եռանշաճիկ տոհմի նշված բռնկումները 5—9-րդ դարերում վկայում են, որ Հայկական հին ու Հզոր միջավայրը միշտ էլ ուժ ու կորով է տվել նրանց, որպեսզի դիմանան և իրենց հերոսական սխրանքներով պաշտպան կանգնեն երկրին: Միհրանյան տոհմն էլ, չնայած աստիճանաբար Հայացավ, սակայն, ի վերջո դուրս մղվեց ղեկավար դիրքերից, իր տեղը զիշելով Հայ զորավարներին ու իշխաններին: Մովսես Գասխուրանցին վկայում է, որ իր օրերին որոշ վեճեր են եղել Աղվանից երկրի ղեկավարների ազգային պատկանելիության վերաբերյալ, և նա ցանկացել է իր Հայ Հայրենակիցներին համոզել, թե այդտեղ հիմնա-

140 Ստեփանոս Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, ՍՊ, 1885, էջ 107:

141 Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունաց, ՍՊ, 1887, էջ 127, 191:

142 Հովհաննես Գրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 126:

143 Անդ, էջ 127:

144 Ստեփանոս Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, ՍՊ, 1885, էջ 107:

կան գերը պատկանել է ոչ թե լոկ Հայերին կամ լոկ պարսիկ-ներին, այլ նրանց երկուսին՝ հետեւյալ ձևով:

«Ստուգաբանութեամբ այսպէս ծանէաք.— ընդ Հայկագնեայց արանց խնամաւորիլ Միհրական տոհմին, և պատուաստութեամբ այսուիկ զոյդ ունել զպետութիւն Արենելից կողմանց Աղուանից»<sup>145</sup>:

Բայտ որում, հեղինակը կամենում է, անգամ բուն Հայկական իշխանության շրջանում, նկատել տալ Միհրական տոհմի արյան առկայությունը: Հանգամանք, որը փաստարկելու համար, նա վերցնում է Վարազ Գրիգորի լորս որդիներից (Վարազ Պերոժ, Զիվանշիր, Յեղուտ Խոսրով և Վարազման) առաջինի ժառանգած ճյուղը, գրելով.

«Ի սոցանէ զերէց որդույն շարեալ ըստ կարգի զանուանս բերցուք ի յայտ առ Հայկագինս»: Այսինքն, Հայկական կողմին, Հայերին համոզելու համար է անում դա, թվարկելով. «Վարազ Պերոժ, Վարազ Տրդատ, Վարդան, Ներսէհ Դժնդակ... ներսէհի որդի՝ Գագիկ, Գագկայ որդի Ստեփանոս և Ապրասմէն բոյր նորա»: Ապա հիշում է, թե ինչպես տոհմական արուշառավիղ այդ Ստեփանոսն սպանվում է իր իսկ Հարազատի ձեռքով, իսկ նրա բուլը՝ Ապրասմէնն՝ ամուսնանում «ընդ Ատրներսէհի Սահմի որդույ»: Այնուհետև, պատմիլով տալիս է Հայազգի Ատրներսէհի և Միհրանյան Ապրասմէնի հաջորդների ցանկը, ուր կան և իշխաններ, և թագավորներ, այդ բոլորի միջ տեսնելով նաև պարսկական զիծ: Բայց ի՞նչ էր ըստ էության այդ զիծը. վաղուց հայացած քրիստոնյա պարսիկներից արդեն մի Հայ Հարսնացու, որի բոլոր զավակներն էլ եղել են Հայեր և իշխել իրենց Հայրենի երկրին: Այս հաշիվն, անշուշտ, ժամանակին յուրովի հետապնդել է ժառանգական իրավունքներ՝ արյան գծով, սակայն էթնիկական առումով այդտեղ առկա է լոկ Հայկական զիծ, Հայկական լեզու, Հայկական կրոն ու ավանդություններ:

Ուշագրավն այն է, որ այդ Հաշիվներից բոլորովին դուրս

145 Մովսես Կաղանկառավացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 386:

են գտնվում բուն աղվանները։ Նրանց անունն իսպառ չկա։ Եվ դա պատմական իրողություն էր, որովհետև նրանք այդ ժամանակ արդին, էթնիկական առումով համարյա լրիվ վերացել էին, իսկ դրանից առաջ, սկսած Վաշագան Յ-րդի մահից, ինչպես տեսանք, զուրս էին զտնվում պետական գործունեության ղեկավար դիրքերից։ Հանգամանք, որը պարմանավորված էր աղվանական ցեղախմբերի ո՛չ միասնականությամբ, նրանց տարակեզու և տարակենցաղ իրականությամբ, ինչպես նաև հայկական միջավայրի հզորությամբ, զրով, զրականությամբ և առհասարակ պատմա-քաղաքական, էթնիկական-տնտեսական այլնայլ հանգամանքներով։ Եվ միանգամայն օրինաշափ է այն ընթացքը, որով պարսիկ Միհրանյանները ու միայն աստիճանաբար, քրիստոնյա դառնալով, հայ լեզվին ու դպրությանն անցնելով հայանում էին, այլև զուրս մզգում պետական-քաղաքական դիրքերից, իրենց տեղը զիշելով տեղի հայկական տարրին, երկրի կենտրոնական մասերի (Անդրկուրյան Հայք, Ուտիք, Գարդման, Արցախ) իսկական տերերին։ Ահա այս ընդհանուր ֆոնի վրա, է, որ 9-րդ դարում բարձրանում է Համամ Բաղրատունին՝ իր հաշորդներով, ինչպես նաև Սմբատի որդի Սահմբ՝ իր տոհմով։

Պատմական տեղեկությունների պակասությունը թույլ շի տալիս մեղ հստակորեն տարրերին հայկական այդ երկու տոհմերի պատկերն ու փոխադարձ առնչությունները։ Նիկողայոս Աղոնցը, որ վրազվել է այդ խնդրով, նույնպես համոզի և որոշակի եզրակացությունների չի հանդի<sup>146</sup>։

Եվ քանի որ մեզ համար խնդրի այդ կողմի բանասիրական մանրամասնությունները այնքան էլ էական չեն, ուստի անդրադառնանք նշված տոհմերի հետ կապված ընդհանուր խնդիրներին, որոնք մեր նյութերի ֆոնի վրա ավելի քան հասկանալի են դառնություն։

Նախ, մի երկու խոսք՝ Ատրներսեհի և Ապրասմենի մասին։ «Պատմութիւն Աղուանից»-ը հետեւյալ կերպ է պատկե-

146 Ն. Աղոնց, Պատմական ուսումնասիրություններ, Պարփս, 1948, էջ 125—156։

բացրել նրանց առհմապատկերը։ Նրանք ունենում են երկու որդի՝ «Գրիգոր և Ապուսէթ», Գրիգորն ունենում է հինգ որդի Ապուսի (Պոլի), Սահակ (Սեադա), մյուսների անուններն անհայտ։ Սահակ Սեադան ունենում է երկու որդի Գրիգոր և Գավիթ։ Գրիգորից ծնվում են Սեադան, «որոյ Իշխան անուն կոչվուր», ապա Ատրներսեհը և Փիլիպպին։ Սեադա իշխանի ավագ որդին՝ Հովհաննես Սենեբերիմը դառնում է թագավոր «և զվաղճուց խափանեալ թագաւորութիւն»-ը նորոգում<sup>147</sup>։

Բայց հենց նույն «Պատմութիւն Աղուանից»-ի մի այլ տվյալով այդ թագավորության նորոգողը ու այլ ոք էր, քան Համամ Բաղրատունի Արևելցին, որ նաև Հովհաննես անունն է կրել։ Հայտնի է նաև, որ այդ Համամի եղբայրը՝ Փիպին (Փիլիպպի) և որդին՝ Ատրներսեհը փօխարինում են նրան, որոնց էլ հաջորդում է Ատրներսեհի որդի Իշխանիկը<sup>148</sup>։

Արդյոք, ի դեմս այդ երկու տոհմերի ունենք մի՝ տոհմ, թե՝ երկու ուրույն տոհմեր, որոնք ինչ-որ կապերով կամ հաշորդականությամբ փօխարինել են միմյանց՝ Աղվանից զահի վրա։ Ահա մշուշոտ հանգույցներ, որոնք սպասում են հանդամանալից ուսումնասիրության, ինչպես էլ սակայն լուծվելու լինի այս հարցը, մեզ հետաքրքրող խնդիրների համար, ընդհանուր առումով, մինեռյնն է, որովհետև նրանց երկուսի համար էլ, բնորոշ է հայկական ծագումը, հայկական եկեղեցու կողմնորոշումը և հայկական դպրության զարգացման հզոր ազդակ հանդիսանալը։ Ի դեմս այդ թագավորական տոհմերի, Աղվանից աշխարհի մի խոշոր մասը պատմական հրապարակ ելավ որպես հայկական մի նոր աշխարհ։ իր ուրույն թագավորությամբ ու ազգային կերպարանքով։ Երևութ, որը վերցին բարեկացնում էր հայկական բնիկ բնակչության բազմադարյան համառ զիմագրությունների ու ողբրումների՝ մի կողմից օտար բռնակալների, իսկ մյուս կողմից՝ ներքին դավանաբանական խորթ հոսանքների դեմ։ Ծորչ երկու դար,

147 Մովսես Կաղանկավացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 389—390։

148 Համամ Արևելցու և իր հաջորդների մասին՝ հանգամանորնեն տե՛ս ստորև։

որոշ ընդհատումներով, տևող այդ թագավորությունը վիրահանալով իսկ, տեղի տվեց հայկական առանձին իշխանությունների, որոնք զանազան ձևերով հարատևեցին մինչև 19-րդ դարը և որոնց վերջին ներկայացուցիչներն էին Ղարաբաղի մելիքությունները:

Աղվանից աշխարհի թիվկ հայությանն անտեսելու, եղած հայությանը հայացած աղվաններ անվանելու և նման այլ տեսությունները շեխն կարող խառնաշփոթ շառաջացնել նաև Միհրանյանների և Առանշահիկների մասին եղած վկայությունների հետազոտման ժամանակ: Այս առումով հիշենք Կ. Վ. Տրեների առաջ քաշած մի նոր տեսակետը: Նա, անդրադառնարկ Միհրանյան տոհմի ոկրնական շրջանի պատմության որոշ հակասական տվյալներին, որ նշվեց վերևում, դրում է.

«Այդ բոլորը հիմք է տալիս մտածելու, որ հեղինակի մոտ պահպանված ավանդություններում մենք գործ ունենք ֆեոդալական Աղվանիքի վրա սյուզերենի իրավունքները խլելու համար հայացած աղվանների և հայկական ֆեոդալական տոհմերի միջև մղված պայքարի արձագանքների հետ»<sup>149</sup>:

Կ. Վ. Տրեների այս բացատրության համաձայն, պարսիկ Միհրանյան տոհմը արյամբ և խարդախությամբ չէ, որ իշխել է Աղվանիքն: Այդ դավադիր արյունահեղությունը, իրը թե, կատարված է հայացած աղվանների ձեռքով, որոնք էլ, իրը թե, այդ եղանակով մաքառել են Հայաստանից Աղվանք մտած հայ ֆեոդալների դեմ, երկրի վրա սյուզերեն իրավունքներ ձեռք բերելու նպատակով:

Դա միանգամայն անհիմն կարծիք է, որի արմատներն էլ թաղված են տեղական հայությունն անտեսելու, նրան աղվաններով «փոխարինելու», այդ աղվաններին բռնությամբ հայացնելու այն սխալ հայացքների մեջ, որ տեսանք վերևում:

Միհրանյանների և Առանշահիկների հարաբերության հարցը ճիշտ է բնկալված բոլորովին վերջիրս հրատարակված

<sup>149</sup> К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, Москва—Ленинград, 1959, стр. 235.

Զ. Բունիաթովի աշխատության մեջ՝ Պիտի նկատել, սակայն, որ Զ. Բունիաթովն այստեղ հեշտությամբ է անցնում Առանշահիկների հայկական ծագման հարցի վրայով, ստեղծելով այն տպագրությունը, որ նրանք իրը թե աղվաններ են եղել Եսպիսս Կաղանկատվացու վերոհիշյալ վկայությունը («զնախնական ազգս Հայկազնեաց զԵռանշահիկս») նման անցումների համար բնավ ճանապարհ չի թողնում:

Զ. Բունիաթովը սխալվում է նաև Սահմանականի հարցում, դարձյալ այն տպագրությունն ստեղծելով, որ նա ոչ թե հայ է եղել, այլ աղվան: Ճիշտ է, Սահմանականի բարբառունյաց տոհմի պատկանելը գեռս անորոշ է, բայց նրա հայ լինելը վեր է ամեն կասկածից, որովհետև սերված է Առանշահիկներից: Դրան չի հակասում նաև Զ. Բունիաթովի վկայակոչած լրացուցիլ այն տեղեկությունը, թե նա Զարմիկի սերունդներից էր, որովհետև ինը Զ. Բունիաթովն էլ ընդունում է, որ այդ Զարմիկը այն միակ Առանշահիկն էր, որին Միհրանյանները չսպանեցին՝ որպես իրենց փեսացի<sup>150</sup>: Իսկ սպանվածները և ինը՝ Զարմիկը Առանշահիկներ էին:

Զ. Բունիաթովը նույն եղանակով շրջանցում է նաև Եսպիսս Արու Մուսեի, Համամ Արեկելցու, Ատրներսինի և մյուսների հայ լինելու իրազությունը: Մինչդեռ Սահմանականի հայ լինելը փաստարկվում է նաև Հենց իր՝ Զ. Բունիաթովի հրատարակած մի շարք վավերագրերի ու վկայությունների շնորհիվ, որոնք նրա գրքում ներկայացված են հավելվածների կարգով: Այսպիս, օրինակ, 4-րդ հավելվածում՝ Արու-Լ-Ֆարազից կատարված թարգմանության մեջ կարդում ենք: «Բայց նրան (այսինքն, Բարեկին) ճանաչեց Սահման իրն Սմբատ հայ իշխանը և վերցրեց գերի»<sup>151</sup>; 5-րդ հավելվածում (Մասուղիից) ասված է: «Նրանք հասան հայ իշխաններից մեկի Սահման իրն Սմբատի գավառը»<sup>152</sup>; Ալ-Մակդիսիից մեջ բերված թարգմանական տողերում գրված է: «Սակայն, քրիստոնյա Սահման իրն

<sup>150</sup> З. И. Буниатов, Азербайджан в VII—IX вв., Баку, 1965, стр. 185.

<sup>151</sup> Անգ, էջ 324:

<sup>152</sup> Անգ, էջ 325:

Սմբատը, հայ իշխաններից մեկը, ճանաչեց նրան» (այսինքն, Բարեկին)՝<sup>153</sup> ինչպես կարելի է փաստերի այս հեղեղի մեջ «ժխտել Սահմ իրն Սմբատի հայկական ծագման ժաման եղած կարծիքը»<sup>154</sup>, որ փորձում է Զ. Բունիաթովը՝ իր իսկ բերած փաստերին հակառակ: Նա նույնիսկ չի էլ անզրադառնում այս փաստերին, թողնելով այն տպավորությունը, թե իր գրի հավելվածներին ինքը տեղյակ չէ:

Մեր մենագրության «Երկու խոսք»-ում նշեցինք, որ «Արցախ-Ռուսական և կից վայրերի համար, որպես ընդհանուր կոչում, նախընտրում ենք «Հայոց Արևելից կողմանք» արտահայտությունը: Դա խիստ անհրաժեշտ է, մանավանդ, սույն աշխատության համար, ուր փորձ է արվում ի հայտ բերել անցյալի մշուշապատ իրողությունը: Ըստ որում, պիտի նշել, որ մեր հին մատենագիրների մոտ ևս այդ կոչումը հավասարապես օգտագործման մեջ է գտնվել՝ նույն առումով: Վերցնենք, թեկուզ «Պատմութիւն Աղուանից» երկը: Այստեղ, ինչպես գրի հեղինակները, այնպես էլ նրանց վկայակոչած մատենագիրները «Աղուանք» ընդհանուր հորչորջումին զուգընթաց, տեղ-տեղ էլ անհամեմատ հաճախ, զիմում են «Արևելից կողմանք», և նույն հիմքից սերված այլ ձեռքին Օրինակ, Դավթակ Քերթողի Ողբի մեջ կարդում ենք. «Բեկումն որ եղև Արևելից աշխարհի»<sup>155</sup>: Մովսես Կաղանկատվացին, Զիվտնշիր իշխանի ժամանակին խոսելիս, ճնշող մհծամանությամբ նրան

153 Անդ, էջ 329:

154 Անդ, էջ 185:

Զ. Բունիաթովի ընտրած և թարգմանությամբ ներկայացված փաստերի համաձայն (անգլ. անդ, էջ 312, 329 և այլոր) Սահմ Սմբատյանը Բարեկին ձերքակալել է ոչ թե դրամական գումար ստանալու նպատակով, այլ վրեժինդիր լինելու համար, որովհետև նա, ըստ արաք պատմիչների, Սահմ Սմբատյանին մի ժամանակ ձերքակալել էր և նրա ներկայությամբ բռնարարել նրա մորը, կնոջը և քրոջը: Կարծում ենք, սակայն, որ այստեղ գլխավոր գործոնը՝ պատմա-քաղաքական խնդիրներն են եղել:

155 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 258:

կոշում է «Արևելից իշխան»<sup>156</sup> («պիշխանն Արևելից»<sup>157</sup>, «Արեվելից իշխանին»<sup>158</sup>, «մեծ իշխան Արևելից»<sup>159</sup>, «Արևելից մեծ իշխանն»<sup>160</sup> և այլն),

Ըստ երեսութին, այն դարերում, հաճախ տարերային կերպով, ողջ Աղվանքի համար օգտագործվել են և «Աղվանք», և «Արևելից կողմանք» անվանումները: Նկատելի է նաև, որ երբեմն այդ անունները կիրառվել են իրենց իսկական, այն է, պատմա-էթնիկական իմաստներով: Այսպիս, օրինակ, «Թաղը Զիւանշիրի առ քաղաքու Յունաց Կոստանդին» վավերագրի մեջ կարդում ենք. «...Զիւանշիր սպարապետ և իշխան Աղուանից հանդերձ Արևելիցու ծառայական աշխարհաւ նուաստաբար ողջունելով երկրպագէ»<sup>161</sup>: Այստեղ պարզուորշ ընդգծված է այն իրողությունը, թե Զիվանշիրը սպարապետ և իշխան է եղել մի կողմից Աղվանքի վրա, իսկ մյուս կողմից՝ նպատակեցված Արևելից աշխարհի: Դրան համապատասխան, հունաց Կոստանդին կայսեր պատասխան թրդում Զիվանշիրը համարվում է Աղվանից իշխան և Արևելից կուտակալ<sup>162</sup>:

Մատենագիրների մոտ երբեմն «Արևելից» կոչումի վրա ավելանում է նաև «Հիւսիսային»-ը: Օրինակ, Մովսես Խորենացին գրում է. «Յետ սորա մեծ և անուանի և բազմաբիւր վերևելից Հիւսիսոյ կողմանն կարդէ կողմնակալութիւն»<sup>163</sup>, կամ՝ «գործակալը կողմանցն Արևելից Հիւսիսոյ»<sup>164</sup>:

Հովհաննես Գրասիանակերտցին ևս, գործածելով «Արե-

156 Անդ, էջ 225:

157 Անդ, էջ 224:

158 Անդ, էջ 220:

159 Անդ, էջ 222:

160 Անդ, էջ 243: Տե՛ս նաև էջ 226, 231, 243, ապա՝ 227, 230, 264 և այլն:

161 Անդ, էջ 207:

162 Անդ, էջ 208: Այստեղից էլ հստակ երևում է, որ Աղվանքն ու Արևելից աշխարհը սարբեր հասկացողություններ են:

163 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1913, էջ 113:

164 Անդ, էջ 259:

վերից կողմանք» արտահայտությունը («Բուխար... չուէ զնայ զկողմամբ Արևելից»)<sup>165</sup>, օգտագործում է նաև «Արևելից հիւսիսոյ» ձևը<sup>166</sup>:

Այդ անվանումները երեան են զալիս ուրիշ ձևերով ևս Հիմնականը, սակայն, այն իրողությունն է, որ «Արևելից» կոչումի տակ ընկած է պատմական Հայաստանի արևելյան կողմ հասկացողությունը, այլապես Ազգանից աշխարհի առումով զրանք ու թե արենից, այլ հարավային կողմեր են:

Մեր կողմից նախընտրված կոշումը՝ «Հայոց Արևելից կողմանն», դիտակցված կերպով, օգտագործվել է նաև այն ժամանակների հայ հեղինակների կողմից: Այսպես՝ Ազգանից աշխարհի թագավոր հայազն Համամ Հովհաննեսը իրեն կոչել է Համամ Արևելցի: Արևելցի են կոշում իրենց նաև Վարդան պատմից և ուրիշներ:

Եվ քանի որ մեր քննած մատենագրությունն ու դպրությունը բացառապես հայկական է՝ ստեղծված ու թե ամրոց նոր Ազգանքի, այլ նրան կցված հայկական գավառների և էթնիկական հիմքի վրա, ուստի գիտականորեն ճիշտ և միանգամայն իրավացի կլիներ այն դեպքում՝ «Հայոց Արևելից կողմանց» խորագրի տակ:

Ամփոփելով մեր խոսքը վերևում քննված խնդիրների կապակցությամբ, կարող ենք ասել, որ իրոք, Անդրկուրյան Հայքի, Ռատիքի և Արցախի հայությունն իր հին պատկերացումներով, կրոնական հավատալիքներով, ինչպես և քաղաքական գործունեությամբ, մի կողմից փաստարկում է իր բնիկ իններու պարագան, իսկ մյուս կողմից՝ ցույց տալիս այն դերը, որ խաղացել է նա իր հին և նոր հայրենիքում:

Ահա մոտավորապես այն բոլոր խնդիրները, որոնց վրա անհրաժեշտ էր ուշադրություն հրավիրել, նախքան Հայոց Արևելից կողմանքի դրականության հարցին անցնելը:

165 Հովհաննես Գրախանակեւոցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 127:

166 Անդ, էջ 217:

## ԴՊՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՑ («Ա.Պ.ԱԽԱՆԻՑ ՍՇԽԱՐՃԻ»)

5—13-րդ դդ.

ԴՐԱ.Գ. Ա.ՌԱԶԻԵՆ. ԵՐԿՈՒ Գիր, ԵՐԿՈՒ ԴՊՐՈՒԹՅՈՒՆ

Վերևում շարադրվածից տեսանք, որ պատմական Հայաստանի մի քանի գավառների (Անդրկուրյան Հայք, Ռատիք, Արցախ) բնակչությանը դեռևս 4-րդ դարի վերջերից վիճակվեցին կյանքի ու գործունեության միանգամայն ուրույն պայմանների: Այդ նոր պայմաններում էլ, անկախ բոլոր տեսակի անբարենպաստ հանգամանքներից, հայ ժողովրդի նշված հատվածը շարունակեց զարգացնել իր ազգային մշակույթը, այդ թվում նաև զպրությունը: Դարերի ընթացքում ստեղծված և իր պատմական գերը խաղացած այդ զպրության մասին շնայած տարրեր առիթներով շատ է խոսվել, սակայն, ցարդ գոյություն չունի նրան նվիրված մի ամփոփ հնտագոտություն: Այդ նպատակին են նվիրված, ահա, սույն մենագրության հաջորդ էջերը:

Տալով Հայոց Արևելից կողմանց զրի և զպրության ուրվագիծը, մենք, իրերի ներկա զրության մեջ, հիմնական շեշտը զրել ենք մեզ հասած վկայությունների և առանձին հու-

շարձանների այսպիս կոչված հաշվառքի, մեր հանման, համապատասխան փաստարկումների, բանասիրական մեկնաբանությունների վրա, ապա միայն, տեղ-տեղ, թիթեակի անդրագարձել գրական երկերի պատմա-գեղարվեստական արժանիքներին: Այդ նույն հանդամանքներն էլ թույլ են տվել, աշխատանքի այսպիսի նախնական շրջանի համար, նպատակահարմար համարել նյութի խմբարժանումը՝ ըստ դարերի: Ամփոփման մեջ ուրվագծել ենք մի այլ խմբարժանում ևս, որը նորից ժառացեցված է նյութի ներկայացման այս նախնական նպատակին:

Խոսել Հայոց Արևելից կողմանց մատենագրության սկզբ-ընավորման մասին առհասարակ, նշանակում է նորից վերագույնական Մեսրոպ Մաշտոցի գարագիսային առաքելությանը:

Այժմ մեզ համար միանգամայն պարզ է այն իրողությունը, որ Մաշտոցն Աղվանից կոչված աշխարհում հիմնել է ոչ թե մեկ գիր և մեկ գպրություն, այլ երկու գիր և երկու դպրություն: Մեկը՝ երկրի հայ բնակչության համար<sup>1</sup>, իսկ մյուսը՝ աղվան: Ուստի և նա տեղի հայությանը, բնականարար, ինչպես, ասենք, Սյունիքին, պիտի հանձնարարեք ոչ այլ ինչ, քան Հայկական այրութենք, իսկ աղվանական ցեղախմբերին՝ նրանցից որևէ մեկի լեզվի վրա շափված նորաստեղծ այրութեն: Այդպիս էլ եղել է, հայերին հայկական այրութեն հանձնելուց հետո, նա աղվաններին է հանձնել գար-

1 Այս տեսակետից ուշադրավ են ն. Ակինյանի հետևյալ տողերը. «Եղարտն Գուգարք, Արցախ, Ռուսի, Փայտակարան և Հռովմեական Հայաստան աղքագրական տեսակներով կը նկատվիին մասեր հայ ժողովությի մեծանգվածին, շար բախտով միայն զատված անկե... Հայ ըմբռնումով Մեծ Հայաստան զաղափարի սահմաններում մեջ են անոնք»:

Այս դիտակցությամբ այցելած էր Մաշտոց 415-ին Աղուանից աշխարհ, Հաղորդակից ընկույ զայն նորաստեղծ հայ գրականության արգասիքներունք (Ն. Ակինյան, Ա. Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949, էջ 315):

Կրկն նշենք, որ Մաշտոցը միայն հայերի համար էր, որ այցելել էր Աղվանք, այլ նաև աղվանների:

Ք. № 2678 և 3257 ծեսագրերում կա շօգտադորժված հիշատակություն վրաց և աղվանից գրերի մասին:

Պարագինների լեզվի հիման վրա ստեղծված 52 տառանոց այն այբուբենը, որ պահպանվել և հասել է մեզ: Այսպիս մոտենալով խնդրին, տեսնում ենք, որ ոչ մի հակասություն էլ չկա կորյունի և Մովսես Խորենացու վկայությունների միջև, որի մասին խոսում է ն. Ակինյանը:

Կորյունի մոտ Մաշտոցի և Աղվանից երկրի գրի ու զբարության մասին առկա է երկու նշանակալից տեղեկություն: Դրանցից առաջինում ասված է, որ ոմն աղվան, թենիմին անունով, հնատամուտ է լինում Մեսրոպ Մաշտոցին՝ գեռես նրա Աղվանք գալուց առաջ և ինդրում նրանից աղվանական տառեր: Մաշտոցն էլ նրանից տեղեկանում է աղվանից լեզվին և ստեղծում համապատասխան այրութեն:

«...զիսկէր նմա (այսինքն, Մաշտոցին) այլ մի երէց աղուան աղգաւ, թենիմին անուն, և նորա հարցեալ և քննիալ զրարրարու զրանս աղուանիքին, առնէր ապա նշանագիրս... և հաստատեալ կշուրքը»<sup>2</sup>:

Այստեղ ամեն ինչ շատ համառոտ է ասված. պիտի ենթադրել, սակայն, որ նշանակալ թենիմինը լիազորված և կարող անձնավորություն է եղել, որի օգնությունը Մաշտոցի համար բավարար է համարվել:

Հաջորդ վկայության մեջ խոսվում է Մաշտոցի Աղվանք կատարած այցելության մասին, ըստ որում, այստեղ լի խոսվում գրերի ստեղծման մասին, այլ նրա այցելության բուն նպատակի՝ դպրության հիմնադրման: Կորյունն ինքնին հասկանալի համարելով մանրամասնություններն իր ժամանակակիցների համար, նորանոր բացատրություններ շի տալիս:

Այդ վկայությունն ասում է, Մաշտոցը մեկնեց «ի կողմանս Աղուանից», ուր նրան ընդունեցին «հապիսկուպոսն Աղուանից... երեմիա... և զնոցին թագաւոր, որում Արսվադ էր անուն...»: Այստեղ Մաշտոցը «առաջի եղեալ վասն որոյ եկեալն էր: Եւ նոցա երկոցունց զուգակցելոց, հպիսկուպոսին և թագաւորին, յանձն առեալ զդպրութեանն հնաղանդելոյ. տա-

2 Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 68:

ժին ևս հրաման՝ ի դաւառաց և ի տեղեւաց իշխանութեանն իւրեանց բազմութիւն մանկաց յարուեստ դպրութեանն ածել և գումարել՝ ըստ արժանաւոր՝ և պատեհ տեղեւաց, դասս դասս դպրոցաց, և ոռճիկս կարգել ի դարմանս:

Իսկ իրրե հրամանն այն արդեամբք և դործովք յանկելանէր, ապա այնուհետեւ երանելոյն երեմիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ վաղվաղակի զատուածային զրոց թարգմանութիւնս ի գործ արկանէր, որով անդէն յական թօթափել վայրենամիտ և դատարկասուն և անասնարարոյ աշխարհն Աղուանից մարգարէադէար... լինէին...<sup>3</sup>:

Ինչպես երևում է, Մաշտոցն այնտեղ է ներկայացել որպիս Հայոց, վրաց և աղվանից եկեղեցիների միացյալ կենտրոնի՝ Եջմիածնի ներկայացուցիչ, այնտեղ ևս դպրություն Հիմնելու նպատակով, որը այն ժամանակ, առաջին հերթին, կիրառվում էր որպիս Հոգևոր-եկեղեցական ընդհանուր միջոցառում: Ուստի և Աղվանից երկրի Հոգեոր առաջնորդի, և թագավորի Համաձայնությունը՝ Ենքարկվողների Համաձայնություն ։ («Էպիսկոպոսին և թագաւորին, յանձն առեալ ըդդպրութեան հնագանդելոյ»): Գեթ Կորյունն այդ իմաստով է խոսել:

Այդ Համաձայնությունից անմիջապես հետո սկսվում են Համապատասխան միջոցառումները՝ երեխաներ Հավաքելու, դպրոցներ բացելու աշխատանքները: Դրան Հաջորդում է կամ ավելի ճիշտ զուգակցվում է աստվածային զրոց, այն է Աստվածաշնչի դաղափարների մասսայականացումը: Մեր կարծիքով այդ վերջին հատվածի թարգմանությունն ու մեկնարանությունը սովորաբար սիսալ է կատարվում: Այսպես՝ Մ. Աբեղյանի թարգմանությունն ասում է.

«Ապա այնուհետեւ երանելի երեմիա եպիսկոպոսն սկսեց շուտով աստվածային գրքերի թարգմանությունն անել, որով

3 Անդ, էջ 70: Այստեղ և ուրիշ տեղերում սյունեցիների, վրացիների և ալլոց ժամանք գործածված «վայրենամիտ», դդատարկասուն» և նման բառերը ուղղված են ոչ թե նրանց աղքային հատկանշների դեմ, ինչպես սխալմամբ կարգել են ոմանք, այլ նրանց երեանուական Հավատքի:

իսկույն մի ակնթարթում Աղվանիքի վայրենամիտ և դատարկասուն և անասնարարո մարդիկը մարդարեագետ... զարձան...<sup>4</sup>:

Հենց նախաղասության մտքից և նրա ձևակերպումից ելերևում է, որ այդտեղ առկա է սիալ, որովհետև թարգմանություն անելով չէ, որ երկիրը զանոնում է քրիստոնասիր, այլ թարգմանության մասսայականացմամբ: Ուստի երեմիան ոչ թե վաղվում է աստվածային գրքերի թարգմանությամբ, այլ եղած թարգմանությունները գործի դնելով: Հենց այդպիս է ասված է բնագրում: «Ի ձեռն առեալ վաղվաղակի զատուածային զրոց թարգմանութիւնս ի գործ արկանէր»: Աղվանիս անհնար է պատկերացնել ոմն թարգմանչի՝ նման վիթխարի գործի առջև կանգնողի և խսկույն այն ավարտողի գերում, երբ Հայաստանում թարգմանիչների մի ամրազ բանակ լրձվեց դրան: Այստեղ խոսքը միայն Մաշտոցի հետ բերված համապատասխան թարգմանությունների մասսայականացման մասին է, և իրավացի է ն. Ակիմյանը, երբ գտնում է, որ երեմիան ու, գրքի հայերեն թարգմանությունը կը կարդայ ի լուր ժողովրդինը<sup>5</sup>: Մի բան, որը միանդամայն բնական էր այն ժամանակվա Աղվանից աշխարհին կցված հայկական հոծ միջավայրում:

Կրկնում ենք, Մաշտոցի և նրա ուղեկիցների այցելությունը՝ Աղվանիք (նաև Վրաստան) ոչ թե սոսկ լուսավորչական բարեկրտության արդյունք էր, այլ այն ամրոզ Հոգեորկրթական-վարչական, ուստի և քաղաքական միջոցառումների խոշոր օղակներից մեկը, որին լծվել էին Կովկասի այդ երեք ժողովուրդների գործիչները վաղուց ի վեր՝ հայ եկեղեցու գլխավորությամբ: Հերթը Աղվանիքին էր, նա ևս պիտի ենթարկվեր քրիստոնեական դպրության հիմնադրվող և կիրառվող ընդհանուր ծրագրին: Ինչպես վկայում է Կորյունը, այդ մեծ առաջարկը պաշտոնապես ընդունվում է և Աղվանից երկրի թաղավորի ու Հոգեոր առաջնորդի Հրամանով բացվում են

4 Անդ, էջ 71—72:

5 Ն. Ակիմյան, Ս. Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949, էջ 317:

դպրոցները ինչ վերաբերում է դպրոցների տեսակներին ազգին առումով, ապա ինքնին հասկանալի է, որ Աղվանքում պիտի բացվեին երկու տեսակ՝ դպրոցներ. Հայկական Հայերի համար և աղվանական՝ աղվանների. Հայկական դրացներում կիրառվելիք այբուբենի խնդիրը նույնպես հասկանալի է:

Գալով աղվանական այբուբենին, պիտի անել, որ Մաշտոցն, իրոք, ստեղծել է նաև աղվանական տառեր. Սակայն լոկ Կորյունի վկայությունը այդ հարցը կարող էր լրիվ լուսարանվել, եթե ըիներ Մովսես Խորենացու լրացուցիչ վկայությունը, որի համաձայն աղվանական այբուբենն ստեղծված էր գարդարացիների լեզվի հիման վրա: Ճիշտ է, այստեղ կա մի ոչ էական տարրերություն (Բնենիամինը Մաշտոցին հանդիպում է ոչ թե Աղվանքի սահմաններից գուրս, ինչպես Կորյունն է նշում, այլ Աղվանքում, երբ Մաշտոցը հանդիպում էր թագավորին և եպիսկոպոսին), սակայն կարևոր դա չէ, այլ այն, որ Մաշտոցն ստեղծում է աղվանական այբուբեն բայց «գարգարացոց լեզվին»:

«Եւ ինքն (այսինքն, Մաշտոցը) յԱղուանս իշեալ առ Արսվաղէն թագաւոր նոցա և առ եպիսկոպոսապետն Երեմիայ...», ուր գալիս է նաև «Բենիամին ոմն շնորհաւոր թարգման...», որի տված տեղեկությունների օգնությամբ էլ Մաշտոցը «ստեղծ զնշանագիրս կոկորդախոս աղիսակուր խժական խեցրեկագունին այնորիկ Գարգարացոց լեզվին»<sup>6</sup>:

Դա մի վերին աստիճանի մեծարժեք վկայություն է, առանց որի մենք շատ մոլորությունների մեջ պիտի ընկնենք, ինչպես ընկել է, ասենք ն. Ակինյանը՝ շվատահեղով դրան, և «աղվանական»-ը փոխել «ալանական»-ով, որը սիալ է:

Մովսես Խորենացին էլ շի խոսում տեղի հայությանը հայկական այբուբեն տալու մասին, որովհետև դա միանգամայն հասկանալի էր: Բայց, եթե մի պահ ընդունենք, որ լոկ գարգարացիների այբուբենն էր այդ միջոցառումների հիմնական

գործոնը, ապա անհասկանալի կմնա այն ճշմարտությունը, թե ի՞նչպես կղավ, որ այդ մի ցեղախմբի լեզուն հիմք հանդիսացավ, որպեսզի ողջ Աղվանքում դպրոցներ բացվեին («Տային և Հրաման՝ ի գաւառաց և ի տեղեաց... մանկանց յարուեստ դպրությանն ածել...»): Հենց այս հանգամանքն ինքնին վկայում է, որ լոկ գարգարացիների այբուբենը անզոր էր նման լայն ընդորպելունների: Բայց ինչո՞ւ դիմել զանազան ենթադրությունների, երբ քաջ հայտնի է, որ նոր Աղվանքի ընակլության շուրջ կեսը հայ էր, և հայոց գիրն ու գրականությունն էր, որ այնտեղ Մեսրոպ Մաշտոցի ձեռքով, առաջին հերթին, պիտի մտներ կյանք:

Վերհիշենք թեկուղ Գր. Էռաւակորչի հաստատած հայկական եպիսկոպոսանիստ աթոռնունների խնդիրը, Գարգմանի և Բւտիքի գրաված աշքի ընկնող տեղը՝ հայ եկեղեցու կազմում, որոնք հայ դպրության բնածին օրրաններն ու հենման կետերն էին:

Եվ ահա Մաշտոցի այդ այցելությամբ, և Աղվանից երեմիա հոգեոր առաջնորդի ու Արսվադ թագավորի համաձայնությամբ, Աղվանից աշխարհում պաշտոնապես հաստատվում է երկու գիր, երկու դպրություն: Այդպիս է եղել նաև Վրաստանի որոշ գավառներում. հայերին՝ հայոց, վրացիներին՝ վրաց այբուբեն: Էստ երևույթին, հենց այդ սկզբնական պահից էլ Աղվանից աշխարհի դպրության բախտը, պատմական դեպքի բերումով, որոնց մասին նշեցինք վերեւում, կապվում է հայ գրի և հայ դպրության հետ: Գարգարացիների այբուբենին ու լեզվին, անկախ Մաշտոցի, նրա աշակերտների, ինչպես նաև աղվան դրասեր Բնենիամինի, երկրի զեկավարների ու այլոց աղնորիվ շանքերից, շեր վիճակված ամբողջ Աղվանքի պիտական գիրը ու դիմումը ու լեզու դառնալու բախտը: Այդ բանին խանդարում էին ոչ միայն լեզվահնչյունային բնական առանձնահատկությունները, այլև էթնիկական, տնտեսական, կրոնական, քաղաքական և շատ ուրիշ հանգամանքները: Այս պարագաներում աղվանական ցեղախմբերը ավելի շուրջ պիտի կողմնորոշվեին դեպի հայոց գիրն ու հայոց լեզուն, որով-

6 Մովսես Խորենացի, Պատմության Հայոց, Տփղիս, 1913, էջ 329:

Հետեւ ոչ միայն ազգաբնակչության առումով այն խոշորագույնն էր երկրում, այլև այն պատճառնվ, որ այն ժամանակ հայոց լեզուն համարյա համակովկասյան պարտավորություններ ուներ: Հենց իրենք, Աղվանից աշխարհի առաջնորդները, բնականարար, պիտի կողմնորոշվեին ոչ թե դեմի որևէ ցեղախմբային լեզու, այլ այն խոշոր ու ուժեղ միավոր, որն ավելի քան բնդհանուր բնույթ ուներ:

Ինչ վերաբերում է գարդարացիների այբուբենին, պիտի ասել, որ այն ես սկզբնական շրջանում պիտի շանքեր գործադրեր իրեն արդարացնելու, սակայն կյանքի անողոք օրինաշափությունները, երկրի բնդհանուր շահերը, կրոնական դաշտավաները, օտար նվանողների, դաշտաբանական խոտարումների զեմ մղվող ամենօրյա պայքարը և նման շատ որից հանդամաններ չեն կարող հինգին այդ լեզվի և նրանով շարադրվելիք գրականության վրա: Աւստի և այն կամ պիտի աստիճանարար դուրս մղվեր կյանքից, կամ էլ՝ սահմանափակվեր առանձին տոհմերի և մեծատուն գերգաստանների գործածության ոլորտներում, մինչև նրանց վերահաս ձուկումն ու վերացումը՝ որպես էթնիկական միավորների:

Հարց է առաջանում. աղվանական ցեղերը գարգարական այրութենի օգնությամբ, չե՞ն կարող ձեռնամուխ եղած լինել Աստվածաշնչի թարգմանությանը, կամ չե՞ն թարգմանել այն Գա, անշոշտ, միանգամայն հնարավոր էր, մանավանդ, կրոնամոլ այն ժամանակներում, սակայն, համապատասխան համաստի փաստեր առայժմ չկան: Հնարավոր է նաև, որ պեղումները ի հայտ բերեն աղվաներեն նորանոր արձանագրություններ, գրական այլ հուշարձանների մնացորդներ, որոնք կդան նոր լույս սփռելու աղվաներենն զպրաւթյան մշուշի վրա:

Թոլոր զեպքերում այժմ հիմք կա ասելու, որ աղվաներն ու գրականությունը երկար չի գոյատելի: Բացի դրանից, այն չի ունեցել պետական, եկեղեցական նշանակալից դեր, ուստի և նրանից այնքան աննշան փշրանքներ են միայն պահպանվել: Այլապես ինչո՞վ բացարձանները, որոնք իրենց ամբողջությամբ ներկայացնում են Աղվանից կողման աշխարհի մեջ հասած իսկական, լիարժեք, քաղաքացիական ու պիտական նշանակության գրականությունը:

Թյունը՝ շիրմաքարերի, սրբավայրերի, կահ-կարասիրի և այլ կառուցների ու առարկաների վրա, և աղվաներենի համարյա խսպառ բացակայությունը:

Դրանք փաստեր են, որոնց չի կարելի շրջանցել և ոչ մի նորանար տեսությամբ:

Ուստի պիտի ընդունել, որ Աղվանից աշխարհի պիտական-պաշտոնական, հիմնական գիրն ու գրականությունը նղել է հայերենը: Խոսքը մայր Հայաստանում ստեղծված ու ծավալված գրականության բազմահարուստ ժառանգության մասին չէ, որ ստեղծվում էր Աղվանիքում, այլ այն գրականության, որ ստեղծվում էր Աղվանիքում կամ նրա սահմաններից դուրս՝ Աղվանից աշխարհի պահանջով և հատկապես նրան ծառայելու նպատակով: Այդ գրականության մի զգալի մասը պահպանվել ու հասել է մեղ: Հիմնականում այդ գրականության ուսումնասիրությամբ է, որ կարող ենք գաղափար կազմել Աղվանից երկրի անցյալի պատմության մասին: Փաստորեն, իրականում, այդպիս էլ լինում է, սակայն օգտագործվող այդ նյութերը դիտվում են մերթ որպես, իբր թե, աղվաներենից թարգմանված գործեր, մերթ էլ՝ Աղվանիքի հետ անուղղակի կերպով առնչվող նյութեր և դա՝ լոկ այն պատճառով, որ անհիմն կերպով երևակայվում է համակովկասյան նշանակության րուն աղվաներեն գրականության գոյություն:

Հասկանալի է, որ հենվելով առկա անժխտելի փաստերի վրա, շրջադարձ պիտի կատարել աղվանագիտության միջ նաև այդ հարցում, հանգամանորեն վեր հանելով ու գնահատելով այն բոլոր հուշարձանները, որոնք իրենց ամբողջությամբ ներկայացնում են Աղվանից կողման աշխարհի մեջ հասած իսկական, լիարժեք, քաղաքացիական ու պիտական նշանակության գրականությունը:

Պարզվում է, որ, իրոք, դա հենց այդպես էլ եղել է: Համապատասխան հարուստ փաստեր են պահպանվել, օրինակ, վերահշյալ եսլաղեն կամ Արտաղեն թագավորի, ինչպես նաև նրա հաջորդներ՝ Վաշագան Երկրորդի և Վաշագան Երրորդի կապակցությամբ:

Այս առումով ամենահնագույն փաստերի մի ուշագրավ խմբին հանդիպում ենք Երուսաղեմում և Երուսաղեմի հետ կապված գրագրությունների մեջ, որոնք ցարդ, այս առումով, քննության առարկա շեն դարձել: Ուստի մեր հետազոտություններն սկսենք հենց այդ օդակից:

Ինչպես հայտնի է, ժամանակին բոլոր քրիստոնյա ժողովորդներն աշխատում էին կապել Երուսաղեմի, քրիստոնեության սրբազն համարված օրրանի հետ: Թնականաբար, Աղվանից աշխարհի բնակչությունն էլ, որպես առաջին քրիստոնյա ժողովորդներից մեկը, պիտի իր կապն ստեղծեր այդ կենտրոնի հետ, այնտեղ կառուցելով եկեղեցիներ ու վանքեր: Մովսես Կաղանկատվացին բավականաշափ տեղեկություններ է տալիս այդ մասին՝ սկսած Եղիշե առաքյալի պատմությունից, Մաշտոցի աշակերտներից և ավարտած Երուսաղեմյան աղվանապատկան սրբավայրերի Նկարագրությամբ: Վերջինս դրված է այսպիսի խորագրի տակ.

«Անուանել վաճուրէից, որք յերուսաղէմ են շինեալ Աղուանից անուն, զորս ի բարոյ Երանելոյն Անաստասայ առ Վահան Մամիկոնեան՝ առեալ ուսաք»<sup>2</sup>:

Բարեբախտաբար, Մովսես Կաղանկատվացու նշված ցանկը պահպանվել և մեզ է հասել նաև նրա իսկական հեղինակի՝ Անաստաս վարդապետի անունով: Բայտ երևույթին, Անաստաս վարդապետը, որ 7-րդ դարի հեղինակ է համարվում, կազմել է երկու ցանկ, մեկը Համազասպ Կամսարական Պահլավունու, իսկ մյուսը՝ Վահան Մամիկոնյանի պահանջով: Հեղինակի անունով առանձին պահպանվածը՝ Համազասպ Կամսարականի պատվիրածն է, իսկ Մովսես Կաղան-

2 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 324:

## ԳՐԱՎԱԴՐ ԵՐԱՌՈՐԾ. 5—6-ՐԴ ԴԱՅ.ԲԵՐ

Կիրակոս Գանձակեցին իր «Պատմութիւն Հայոց» երկի մեջ գլուխն այսպիսի ուշագրավ տողերով է սկսում:

«Սկիզբն առաջնոյ պատմութեանն եղաք զսուրը Լուսաւորիչն Հայոց ...զսուրքն Գրիգորիսս... իսկ Երկրորդ հատուածիս դիցուք զլուխ զլուսաւորիչս կողմանցն Աղուանից, որպէս զազայնոց և գհաւատակցաց մերոց, մանաւանդ զի և առաջնորդք նոցա հայալեզուք, Հայիրէնախօսք յոլովք էին. թադաւորքն՝ Հնաղանդք թագաւորացն Հայոց, ընդ ձեռամք նոցալիւթ, և եպիսկոպոսք՝ ձեռնադրեալք ի սրբոյն Գրիգորէ և յաթոռակալաց նորա, և ազգն ուղղափառութեամք ընդ մեզ կացեալ ի կրօնս, զասն այնորիկ արժան է ի միասին լինել իշշատակ երկուց ազգացս...»<sup>1</sup>:

Այդ մեծարժեք տողերում առանձնապես ուշագրավ է Աղվանից երկրի առաջնորդների և թագավորների մասին արված հիշատակություններ՝ հայ ժողովրդի հետ նրանց ունեցած սերտ կապերի և մանավանդ նրանցից շատերի հայալեզու և հայերենախոս լինելու վերաբերյալ: Դա ինքնին ցույց է տալիս, որ նոր Աղվանքի առաջնորդները 387 թվականից հետո (եթե ոչ նաև զրանից առաջ) ստիպված էին իմանալ հայերեն, որպեսզի կարողանային դեկապարել իրենց երկրի նաև նոր կեսն ու նրա բնակչությանը:

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Ա. Մելիք-Շանգանյանի, Երևան, 1961, էջ 192:

կատվացու օգտադործածք՝ վահան Մամիկոնյանի: Այդ երկու ցանկերի տարբերությունը կայանում է, հիմնականում, նրանում, որ առաջինն ավելի ընդարձակ է և բովանդակում է նաև երուսաղեմյան հայկական վանքերի ցանկը: Արդյոք երկրորդում ևս եղել են հայկական վանքերին նվիրված տողերը, թե ոչ, Մովսես Կաղանկատվացին այդ մասին չի խոսում, բայց դա հավանական է: Այդ ցանկերում կան մի քանի մասը, երկրորդական նշանակության տարբերություններ, որոնք մեզ համար այստեղ առանձին կարևորություն չունեն: Որոշ սկզբունքոյուրներում առաջին ցանկը կապվում է նաև Ազաթանգեղոսի անվան հետ: Օրինակ, Վենետիկի հայկական ձեռագրերից մեկում այն ունի այսպիսի խորագիր. «Ի Ազաթանգեղեայ պատմութիւնէն...»<sup>3</sup>: Դա, մեր կարծիքով, կամ շփոթության («Անաստաս», «Ազաթանգեղոս») արդյունք է, կամ էլ վկայում է այն մասին, որ Անաստաս վարդապետը, ինչինչ տեղերի համար, օգտվել է Ազաթանգեղոսից<sup>4</sup>, որը և հիմք է ծառայել համապատասխան սրբագրության: Որ այդ ցանկն իր տվյալներով Սպաթանգեղոսի և նրա ժամանակի հետ չէր կարող կապվել, պարզ երեսում է պատմական այն զեպքերի ժամանակներից, որոնք նշված են այդ ցուցակի մեջ: Այդպիսիք են, օրինակ, արաբների իշխանությունը Երուսաղեմում, այստեղի որոշ վանքերի արդեն փլված լինելը, Հոյներից այդ վանքերը ետ գնելը և ալլն:

Անկախ ամեն ինչից, մեզ համար կարեռն այն է, որ 7-րդ դարում կազմվել է Երուսաղեմի հայ և աղյանական վանքերի մանրամասն ցանկ, ուր կան հետաքրքրական միշտը տեղեկություններ: Կարեռ է նաև այն, որ այդ ցանկի

<sup>3</sup> Թ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց..., ի Վենետիկ, Բ, Վենետիկ, 1924, էջ 825 (№ 262):

<sup>4</sup> Այսպիսի միաբ են տալիս, օրինակ, ցուցակի սկզբում գտնվող հետեւյալ տողերը. «Ի ժամանակս թագաւորութեան Տրդատայ և ի հայրապետութեան սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, մեծամեծ իշխանքն հայոց շինեցին վանորայք ի սուրբ քաղաքն Երուսաղէմ...» (Պ. Ալիշան, Հայապատում, էջ 227):

մի այլ օրինակն օդտագործվել է նույն դարի Աղվանից պատմիչ Մովսես Կաղանկատվացու կողմից որպես միանգամայն վստահելի: ազդյուր եթե Աղվանից երկիրը Երուսաղեմում վանքեր ունեցած վիճակը և եթե Անաստաս վարդապետը էական սխալներ կատարած լիներ, ապա Մովսես Կաղանկատվացին, որպես ժամանակակից և Աղվանից աշխարհի լավատեղյակ մատևնագիր, կարող էր հերքել դրանք: Բայց նա ոչ միայն չի հերքել, այլև սիրով է օգտվել Անաստաս վարդապետի վկայություններից, մեջ բերելով Աղվանից վանքերին նվիրված բոլոր տվյալները:

Ինքը, Անաստաս վարդապետն էլ չէր կարող անձիշտ տեղեկություններ հաջորդել, որովհետև նա կազմում էր ոչ թե անձնական, այլ պաշտոնական վավերաբույր, որի հիման վրա հայ իշխանները պիտի համարեին հսկայական գումար և Երուսաղեմում գտնվող Հայաստանին և Աղվանիցին պատկանող այդ բոլոր վանքերը ետ գնեն հույնների ձեռքից: Եվ, ինչպիս ցուց են տալիս փաստերը, իրոք, հայերն այդ ցուցակի համաձայն կարողացել են ետ գնել նշված բոլոր վանքերը: Այսպիս Անաստաս վարդապետի առաջին ցանկին կից կան տողեր, ուր ասվում է, թե այդ ցանկը կազմվել է հանձնարարությամբ «Համազասպայ Կամսարականի Պահլաւուոյ, որ կամեր գնալ յԵրուսաղէմ, որ և զնաց... թափեաց զշայոց վանորայն»<sup>5</sup>: Այստեղ հայոց ասելով հասկացել են և՛ Հայաստանին, և՛ Աղվանիցին պատկանող վանքերը: Համապատասխան բացատրություն կա նաև Մովսես Կաղանկատվացու մոտ: Աղելորդ շնչնք համարում մեջ բերել այդ հարցին նվիրված տողերը, որոնք ուշագրավ են մի քանի առումներով: Նկատի առնելով հույնների բռնագրավումները Երուսաղեմում՝ հեղինակը գրում է.

«Այսինքն, առ նախանձու հայրապետքն Երուսաղէմի խանգարեցին զՀայոց և զԱղուանից անդ ձեռնտուութիւն վանորէիցն, զի հարիւր աւելի վանք կա անդ, զորոց փոյթ կա-

<sup>5</sup> Պ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 229:

լեալ իշխանացն Հայոց՝ եօթն կեմպինար տուեալ թաղաւորին Յուստիանոսի, (որ է Խօթանասուն հազար դաշնեկան) թափեցին ի բռնութինէ Հայրապետացն զամենայն վանուրայսն, ապա յիտոյ յանհոգանալոյ մերայնոցս ամենայն ալավեցաւ»<sup>6</sup>:

Ահա այսքան պատասխանատու և պաշտոնական նպատակով կազմված այդ ցանկում թվարկված են աղվանական 10 վանքեր. «Պանդայ վանքն... Մրուվոյ վանք... Պարտաւոյ վանք... Կաղանկատուաց վանք... Արցախայ վանք... Ամարասայ վանք... Այլ երեք վանք Աղուանից... որոց անուանքն չեն յայտ. Միւս ևս այլ վանք Աղուանից ընդ Առառևինից վանօքն, որ ի շուկամիշին է...»<sup>7</sup>.

Հարց է առաջանում. աղվանական այդ վանքերն ունե՞ին ձեռագրեր, մակադրված սպասներ, կառուցումների և դամբարանների արձանագրությունների եվ եթե այս, հապա ի՞նչ տառերով և ի՞նչ լեզվով էին շարագրված դրանք. Անշուշտ, եթե պահպանված լինեին այդ ամենն այսօր, մինք հեշտությամբ կտայինք այդ հարցերի պատասխանները. Սակայն նրանք վաղուց են խորտակել: Մնում է նորից անդրադանալ Անաստա վարդապետի ցուցակին: Հիրավի, այդուղ պահպանված են բացառիկ նշանակության տողեր. Անաստա վարդապետը, կազմելով հավաստի ցանկ, պարտավորված է զգացել փաստարկել նաև նրանց ազգային պատկանելիությունը, որպեսզի ետ գնման ժամանակ և հայկական, և հունական կողմերը համոզվեին, որ ի գեմս ցանկված վանքերի՝ գործ ունեն հայկական և աղվանական վանքերի հետ: Դրա համար Անաստա վարդապետը դիմել է երկու միջոցի. նախ, նշել է, թե որ վանքն ինչ վիճակի մեջ է և ում ձեռքին է դանվում, հաճախ տալով նաև կոնկրետ անուններ. այսպես

6 Մավսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 325: Անաստա վարդապետի անվամբ պահպանված ցանկում բոլոր վանքերի բանակը հավասար է 70-ի, ալստեղ՝ 100-ից ավելի: Քննության կարու կետ:

7 Անդ, էջ 324—325:

«Պանդայ վանքն... այժմ Պետրոս Աղուան քահանայ ունի... Պարտաւոյ վանք... զոր այժմ ունի կին ոմն՝ Մարիամ ոմն Շամքորեցի, և զկէսն տաճիկն ունի» և այլն: Դրանից բացի, Անաստա վարդապետը ծանոթացել է նաև այդ վանքերի արձանագրություններին, գրքերին, սպասներին և գրել.

«Եմովին իսկ աշօք տեսեալ զամս բազում լինելով յաշխարհին յայնմիկ և ամենայն աստուծաշունչ, և հոգեպատում պատուիրանն զոյր ի հայկեան լեզու յամենայն մենաստանս Երուաղէմի որ ի նովաւ շուրջ զերուսաղեմա»<sup>8</sup>:

Այստեղ էլ նրա խոսքը վերաբերում է այն բոլոր վանքերին, որոնց ցանկը կազմել է ինքը և որոնց ետ գնման գործն է նախապատրաստել համար հետեւղականությամբ: Ինչպես տեսնում ենք, նրա թվարկած և հայկական, և աղվանական վանքերի «աստուծաշունչ և հոգեպատում պատուիրանքը», այսինքն, հոգեոր պատվիրանները՝ կրտակարանները և համապատասխան ողջ գրավոր խոսքը «գոյր ի հայկական լեզու յամենայն մենաստանս»: Կնշանակի, հենց սկզբից էլ աղվանական և կեղեցու մատյաններն ու արձանագրությունները շարադրված են հղել հայերեն: Որ այդպիսին պիտի լիներ Արցախի, Ամարասի, Պարտավի և հայաբնակ այլ վայրերի վանքերի լիզուն, զա ինքնին հասկանալի է, բայց որ այդպիսին է հղել առհասարակ ողջ աղվանական և կեղեցիների գրավոր խոսքը, զա վկայվում է առաջին անգամ և վկայվում է վստահելի աղբյուրի միջոցով: Այստեղից միաժամանակ բխում է այն տրամաբանական պարզ եզրակացությունը, որ նույն երեւնությը պիտի իշխած լիներ նաև Աղվանից աշխարհում: Անհավանական չէ, սակայն կարծել, որ երկրում կարող էին որոշ արձանագրություններ փորագրվել զարգարական-աղվանական տառերով և աղվանական ցեղախմբերից որևէ մեկի լեզվով, ինչպիս որ ցույց են տալիս Մինսկեշաուրի պեղումները: Այստեղ էլ, սակայն, առկա է հայերենը: Բնականաբար վերջինս պիտի ավելի հարուստ և իշխող լիներ, եթե լրիվ հայտաբերվեին երբեմնի արձանագրությունները:

8 Դ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 229:

Այս է Աղվանից աշխարհի գրի և գրականության ամենալավագ շրջանի վկայությունը. ուստի Անաստաս վարդապետի վանորիկից ցուցակը և Մովսես Կաղանկատվացու համապատասխան քաղվածքը արժանի են հատուկ ուսումնասիրության:

Այդ ցուցակին օգնում է, այլ վկայությունների օժանդակությամբ, ի հայտ բերել մի ուրիշ ուշադրավ ու բացառիկ նշանակության փաստ ևս: Անաստաս վարդապետի և Մովսես Կաղանկատվացու մոտ պահպանված են Ծրուադնելի՝ Աղվանիքին պատկանող Պանդա Արքավայրի մասին որոշ տեղեկություններ՝ մասնակի տարբերություններով, որոնք և մեջ ենք բերում ստորև:

«Պանտայ վանքն, որ սուրբ Կարապետին է, որ յարեմտից կողմանէ ի Զիթենեաց լերինն կայ, նոյնպէս արքունի ծախիւր շինեալ յանուն սուրբ կաթողիկէին, որ ի Վաղարշապատ քաղաքի, զոր Աղուանք ունին մինչև ցայժմ»<sup>9</sup>:

«Պանդայ վանքն, որ յարելից կողմանէ Զիթենեաց լերինն կայ՝ Պանոն ոմն ճգնաւոր ՅԱղուանից եղեալ նախաշինող, և այժմ Պետրոս Աղուան քահանայ ունի»<sup>10</sup>:

Ինչպես տեսնում ենք, այստեղ առկա են որոշ տարբերություններ, որոնք ոչ թե խանգարում, այլ լրացնում են միմյանց: Դրանցից կարևորը՝ Պանդա վանքի կառուցղներին վերաբերող մասն է: Հստ Անաստաս վարդապետի, այն կառուցված է արքունի ծախսով՝ էջմիածնի մայր տաճարի անունով և կոչվել է ս. Կարապետի վանք: Մովսես Կաղանկատվացին չի առարկում զրան և կատարում է որոշ ճշտում՝ վանքի նախնական շինությունը («նախաշինող») վերագրելով ոմն աղվան Պանոնի: Ինչպես կտեսնենք ստորև, այս վանքը Երուսաղեմում գտնվող աղվանական ամենագործոն օջախներից մենքն է եղել, եթե ոչ ամենապլիսավորը: Այդունք է կիստոնացած եղել ժամանակին այնտեղի հոգեոր ներկայացշությունը, որը պաշտոնական գրագրություններ ու կապ է պահպանել

9 Անդ, էջ 227:

10 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 324:

Երուսաղեմի Հույն պատրիարքության և Աղվանից կաթողիկոսության միջև:

Հետամուտ լինելով այս վանքի պատմությանը, հանդիպում ենք վերին աստիճանի մեծարժեք փաստերի: Պարզվում է, որ Պանդա վանքը կանգուն է եղել մինչև 12-րդ դարը, որից հետո նրա փլատակներն աստիճանաբար թաղվել են Հոդի շիրտերի տակ: 19-րդ դարի 60-ական թվականներին նաև այդ վանքի փլատակներն ընդգրկող տարածությունը գնում են ոռուական հոգեռարականները և կամենում այնտեղ ազգային եկեղեցի: Կառուցել: 1868 թվականի շինարարական աշխատանքների ժամանակ գետնի տակից ի հայտ են գալիս Պանդա վանքի մի շարք հուշարձանները, ինչպես նաև դամբարան՝ գերեզմանաքարերով: Հնարավոր է, որ զրանց մի մասը հայաստանյան լինի, այն պատճառով, որ Պանդա վանքը վերակառուցվել է էջմիածնի անունով, ապա, նրա կողքին հնուց ի վեր կառուցված է եղել հայոց նորավանքը՝ ռմիրծ ի վանքն Եսայիայ մարգարէին, ի նոյն կողմն Զիթենեաց լերինն, զոր այժմ քակեալ են տաճիկք»<sup>11</sup>: Պանդա վանքըն էլ Եսայի մարգարի սրբավայրի մոտ է գտնվելիս եղել — նույն տեղում:

Ահա այդ վայրերում գտնված հնությունների շարքում երևան է եկել և այժմ էլ պահպանվում է հետեւալ խճանկար հուշարձանը՝ ընտիր զարդերով և մեսրոպատառ արձանագրությամբ:

«Թարեխաւս ունելով առ աստուած զաւոր Եսայի և զերանելի հարս Եսվաղան արարի վասն բազութեան մեղաց զիշաակարան զայս»:

1868 թվականին, բանասիր Ա. Տ.-Հովհաննեսյանցը, տեղում զննելով Հուշարձանների բներքները, ձեռքի տակ ունենալով Անաստաս վարդապետի ցուցակի տվյալները, հանդիլ է այն եղրակացության, որ դրանք հենց Պանդա վանքի փլատակներն են, իսկ խճանկար այդ արձանագրության մեջ նըշ-

11 Դ. Ալիջան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 227:

ված Խսվաղանը ոչ այլ ոք է, քան Աղվանից աշխարհի այլ թագավորը, որին այցելեց Մեսրոպ Մաշտոցը և որի օժանդակությամբ Աղվանքում հիմնեց դպրություն<sup>12</sup>:

Ճիշտ է, հետագայում որոշ տարածախություններ երեան եկան, սակայն, Հ. Տաշյանը, մի կողմ թողնելով մեզ հետաքրքրող հարցը, կանգ առավ այդ և մյուս խճանկարների վրա, գտնելով, որ «մյուսի ուղղի (իմա՝ խճանկար) եղածները շատ ափելի հին են, հայտնապես Եղարուն, գոնք Զ դարուն սկըզբներն, ամեն դեպքի մեջ Հայոց թվականին հաստատվելեն հառաջ»<sup>13</sup>:

Արդ, ո՞վ է այդ արձանագրության մեջ հիշված Խսվաղանը, որը և այդ արձանագրության հեղինակն ու համապատասխան խճանկար հուշարձանի հեղինակն է: Ամեն պարագայի, նա մի մեծատոհմ ու երեկի անձնավորություն է եղիլ, որ կարողացել է կանգնեցնել այդպիսի բարձրարվեստ ու մեծածախս կոթող: Որոնել այդպիսի անձնավորություն 5-րդ դարում, նշանակում է կանգ առնել նաև Աղվանից աշխարհի վերոշիշյալ թագավորի թիկնածության վրա: Ուշագրավն այն է, որ այդ թագավորի անունն էլ, որ Մովսես Կաղանկատվացու մոտ պահպանված է և «Եսուաղէն»<sup>14</sup> և «Արտվաղէն»<sup>15</sup> ձևով, իսկ Կիրակոս Գանձակեցու մոտ՝ «Եսվաղէն», «Վաղէն», «Էսվաղէն» ձևերով<sup>16</sup>, ըստ Հ. Աճառյանի, աղվանական անուն է, թերևս պարսկական ծագումով<sup>17</sup>, որը հայ իրականության մեջ չի կիրառվել:

Որոշ մասնագետներ, այդ արձանագրությունը վերծա-

12 Ա. Տեր-Հռվիաննեսյանց, Ժամանակագրական պատմութիւն ս. Երուսաղէմի, Ա., 1890, էջ 87, 88, 89:

13 Հ. Տաշյան, Ակնարկ մը հայ հնագիտութեան վրայ, Վիեննա, 1898, էջ 137:

14 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 51, 85:

15 Անդ, էջ 131—132:

16 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երեան, 1961, էջ 193:

17 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Բ, Երեան, 1944, էջ 133:

նելիս, «Եսվաղէն» անունը կիսում են երկու մասի՝ «Ես վաղան» ձևով, սակայն այս եղանակով ստացված «Վաղան» անունն էլ Հ. Աճառյանի մոտ, ըստ էության, նույնացված է Եսվաղէնի հետ, ուստի և դրանով իսկ այն դրված է նույն մեկնարանության տակ<sup>18</sup>:

Այսպիսով, ստանում ենք բոլոր անհրաժեշտ հիմքերը ենթադրելու, որ, իրոք, Երուսաղէմի Պանդա վանքի վլատակներից գտնված վերոշիշյալ հուշարձանը կանգնեցված է եղիլ Աղվանից աշխարհի 5-րդ դարի թագավոր Եսվաղէնի կողմից:

Չմոռանանք սակայն մեզ համար ամենակարևոր հանգամանքը. այդ արձանագրության լեզուն ու տառերը՝ երկուսն էլ հայկական:

Դա ցույց է տալիս, որ իրոք Աղվանքում, հենց սկզբի օրերից, այնքան լայն կիրառում է գտել հայկական այբուբենը և Հայոց լեզուն, որ երկրի թագավորն իր կանգնեցրած հիշատակարանը շարադրել է Հայերն: Ուրեմն, իրոք, ճիշտ է Կիրակոս Գանձակեցու ասածը՝ Աղվանքի առաջնորդների «Հայալեզոք» լինելու մասին:

Երուսաղէմի և Պանդա վանքի հետ կապված Աղվանից աշխարհի գրականության պատկերն ամբողջացնելու նպատակով, այստեղ փոքր ինչ խախտելով ժամանակարական կարգը, ցանկանում ենք խոսել մի ուրիշ խմբի մասին:

Մովսես Կաղանկատվացին, Աղվանքում ծավալված քաղկեդոնական շարժման կապակցությամբ, գրում է.

«Յայն փոյթ աղմկի սփոեալ տարածեցաւ ընդ ոլորտս երկրի համբաւ ժողովոյն Քաղկեդոնի, որ ի ներեխն աստուծոյ զօրացաւ վարդապետութիւն նոցա, և դիւրալուր գրութեամբն, ներկեաց զրազմաց ազանց հոգիսն: Եհաս դաւանութիւնս այս և յաշխարհս Աղուանից ի ժամանակս տեսան Արասայ Աղուանից կաթուղիկոսի, որ յոյժ քննութիւն առնելով իւրով հպիսկոպոսք, որք վերնագոյնն կան ի գրի, նորօք հանդերձ հալածեաց ի տանէն Աղուանից զվարդապետս կրօնին

18 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Ե, Երեան, 1962, էջ 30:

ալնմիկ՝ զԹովմասն և զԵղիայն և զԲնոտն և զիրաս և զայլոցն ուսին զնմանողս նոցին արար տարաբնակի ի հեռաւոր վայրս: Եւ այսու եղեւ իւաղաղութիւն ուխտի նկեղեցւոյ ի ժամանակին յալինմիկ...»<sup>19</sup>:

Այս տողերում նշված անուններն ու դեպքերը մեզ տանում են զեպի Ե-րդ դարը: Արդ, ովքի՞ր էին վերոհիշյալ Թովմասն ու իր ընկերները և ի՞նչ եղանակով էին նրանք տարածում իրենց գավանաբանական հայացքները: Հասկանալի է, որ զրի և գրականության ժամանակներում նման ուղղությունը Աղվանից աշխարհ կարող էր մտնել զանազան եղանակներով, սակայն, ամրանալու համար, այն պիտի խոսեր գրավոր փաստերով՝ զանազան մեկնաբանական աշխատությունների, զավանաբանական ուսմունքների ընդօրինակմամբ և տարածմամբ: Այլապես, այնքան էլ հեշտ չեղ լինի բանավոր խոսքով հանդիս զալ և համոզել մարդկանց, եթե նրանք ունեին այլ զաղափարներ քարոզող գրականություն ու ավանդություններ:

Այս առումով վերին աստիճանի խոսուն վկայության ենք Հանդիպում «Արարատ» ամսագրում տպագրված մի թղթի մեջ, որն ունի կրկնակի խորագիր հետեւյալ տեսքով.

«Եյս քուդր Յոհաննաւ Երուաղէմի եպիսկոպոսի է... Սրբոյ և աստուածախրի եաւնելոյ նոգերո եղրօյ և պաշօնակցի մերոյ Արասայ եպիսկոպոսի Աղաւանից ի Յոհաննէ եպիսկոպոսապիտէ Երուաղէմի»<sup>20</sup>: Նշված Արաս եպիսկոպոսը նույնն է, ինչ Մովսես Կաղանկատվացու վերոհիշյալ տողերում առկա Արաս Աղվանից կաթողիկոսը: Ինչ վերաբերում է «Արարատ»-ում տպագրված թուղթն առաքողին, ապա նա էլ Երուաղէմի հույն պատրիարքարանի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսն է, ինչպես պարզ նշված է խորագրում: Այսպիսով, մենք գտնվում ենք հենց այն հետքի վրա, որը տանում է դեպի Աղվանից երկրում ժամանվող քաղկեդո-

19 Առվես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 142—143:

20 «Արարատ», 1896, էջ 252 (Հավելված):

նականության վտանգի մանրամասնությունների պատմությունը: Ավելին, այստեղ Հանդիպում ենք մեզ հետաքրքրող այն քաղկեդոնական Թովմաս վարդապետին, որին հալածել է Արաս Աղվանից կաթողիկոսը: Պարզվում է, որ Թովմաս վարդապետը այդ դրությունը շարադրելիս եղել է Երուաղեմի Պանդա վանքում և սերս կապեր է ունեցել հույն պատրիարքանի հետ, որն այն օրերին և նրանից ոչ շատ առաջ կատարի հալածանք էր սկսել հատկապի հայկական եկեղեցու դեմ նրան ևս իր զավանանքը պարտադրելու նպատակով: Ես հալածեցի անդիթարք հայերին, կրկած է այդ նամակում, և նրանք բողոքեցին մեր կայսրին՝ այն ժամանակ, երբ «գեռ ալրեր զվանսն մի հայոց...», և կայսրը շպաշտպանեց նրանց: Ապա Հովհաննես պատրիարքը հիշեցնում է, որ նույն հալածանքն է սպասվում նաև աղվանական եկեղեցուն, եթե նրանք շմիանան հունական ուղղությանը: «Պու...— ասված է նամակում,— զվանսդ կարգաւորեա... այլ և այլ վանորեայսդ, որ ի քաղաքին և որ արտաքը...»<sup>21</sup>:

Հիշեցնենք, որ դա Քաղկեդոնի՝ 4-րդ ժողովին հաջորդած այն հալածանքն է, որի հետեւանքների մասին խոսք եղավ վերևում, և որի հետ էր կապված նաև Անաստաս վարդապետի ցուցակ վանորեիցը:

Այսպիսով, տեսնում ենք, որ իրոք քաղկեդոնական հալածանքը և զավանությունը հեռավոր Երուաղեմից էր թափանցում Աղվանից աշխարհ՝ և թափանցում էր թղթով, գրով՝ եվ այդ թուղթն էլ, ահա, ինչպես տեսնում ենք, գրված է հայերին: Հասկանալի է, որ այն սկզբնապես պիտի շարադրված լիներ հունարեն և ապա թարգմանվեր՝ Աղվանից երկրի հոգեւոր առաջնորդին առաքելու համար: Եվ թարգմանված է ոչ թե գարգարացիների կամ աղվանական որևէ ցեղախմբի լեզվով, այլ հայերենով: Պարզվում է նաև, որ այդ գրության հորդորողն ու թարգմանողն էլ եղել է ոչ այլ ոք, քան վերոհիշյալ թումաս Աղվանիցի վարդապետը: Թննվող թուման սկսվում է նրա անվան հիշատակումով:

21 Անդ, էջ 253:

«Աստուածասէր Թումաս, երանելոյ Պանտավանաց վանական, ըստ սովորութիւնն,— գրում է Հովհաննես պատրիարք՝ Արաս կաթողիկոսին,— որպէս յառաջ քան զմեզ յաջորդեալք ո. աթոռոյն Յակովբայ հղօրօ տեառն առեալ էր գիր հաւատոյ և կարգաց եկեղեցոյ, նոյնպէս ի մէնց խնդրեաց և մատոյց տօմարս երկուս ժողովոյ, որ առանց Քրիստոսի ժողովիալ էր ի Հայո Հակառակ ո. եկեղեցոյ...»<sup>22</sup>; Այստեղից երևում է, որ Թումաս վարդապետը ժամանակակից է և Հովհաննես պատրիարքի, և՝ նրան նախորդած պատրիարքների: Աչա այդ Թովմասն է, որ հենց սկզբից անցած է եղել Հովհների կողմը, և գործակցած նրանց հետ՝ Աղվանից եկեղեցին ամբողջապես նույն դավանանքին դարձնելու նպատակով: Նա է, որ թարգմանարար Հովհներին է ներկայացրել Հայոց եկեղեցու «տօմար»-ները և քանիցս խնդրելով ստացել Հովհներից՝ «Գիր հաւատոյ և կարգաց եկեղեցոյ»:

Այսպիսով տեսնում ենք, որ Պանդա վանքը Երուսաղեմում ճ-րդ գարում արդեն դարձել էր Հունական դավանանքի այն կենտրոնը, որն իր ուսերի վրա էր վերցրել քաղկեդոնականության տարածումը՝ Աղվանքում: Եվ այդ գործի կազմակերպիչն ու տեսարանն է Թովմաս Աղվանիցի վարդապետը: Վերջինիս ճեղքով թարգմանված քննվող նամակն առաջինում է Արաս կաթողիկոսին, «զոր և գիր... առաքեցաք սրբութեանդ ճերում...»: Պարզվում է նաև, որ այդ Թուղթն առաջինը չի եղել, որովհետև Հովհաննես պատրիարքը գրում է, «Վասն քո երանութեանդ լուար, եթէ... ընկալար Թուղթս երկուս ի Մակարալ և յետոքայ՝ ի ճեռն բարեպաշտի և աշխատասիրի Թումասու... Վասն որոյ և զիս թափանձեաց գրել ըստ օրինակի նոցա...»: Կնշանակի, դա արդեն նրա դրդումով գրված առնվազն երրորդ Թուղթն էր. առաջինն ու երկրորդն առաքել էին Հովհաննես պատրիարքի նախորդները՝ Մակար և Եվգորոսոս պատրիարքները՝ բոլորն էլ գրված Թովմաս վարդապետի խնդրանքով ու միջնորդությամբ: Հասկա-

նալի է, որ նախորդ թղթերն էլ՝ ուղղված նույն Արաս կաթողիկոսին, նույն նպատակով, նույն տեղից, նույն Թովմասի ձեռքով, պիտի թարգմանված լինեին Հունարենից Հայերեն: Այդ թղթերի հետքերը դժբախտաբար մեղ շաշողվեց դտնել<sup>23</sup>: Անկախ դրանից, մենք այսպիսով աեղեկանում ենք մեկ հետաքրքրով գրականության մեջ մտնելու իրավունք ունեցող ես մի քանի վավերաթղթի մասին, որով և ավելի են ընդլայնվում մեր գիտելիքները: Ինքնին հասկանալի է, որ Թովմաս վարդապետն էլ, իր հերթին, պիտի մանրամասնորեն դրեր և հորդորեր Արաս կաթողիկոսին:

Նույն այդ նամակում հանդիպում ենք նաև ժամանակի թարգմանական գրականությանը վերաբերող ուրիշ կարևոր վկայության: Հովհաննես պատրիարքն ու Թովմաս վարդապետը շեն բավարարվում թղթերով ու նամակներով, նրանք ուղարկում են նաև համապատասխան գրականություն՝ գարձյալ թարգմանված Թովմասի ձեռքով ու թերևս նաև ուրիշների գործոն մասնակցությամբ: Աչա համապատասխան տողերը, մասնակի կրամառումներով. «Ոչ միայն զմերս առաքեցաք, այլև զպատճառ չորից... ժողովոցն պրել հրամայեցաք... և վասն յաելազրութեան Անտիռքացոյն հրամայեցաք գրել... և զայլոց ուղղափառ եպիսկոպոսաց... Եւ վասն Յովիանոսի Աղիկառնացոյ... ընդ նոսին և զթուղթն Կիրդի արքեպիսկոպոսին... Զայս ամենայն քարգմանել և գրել հրամայեցաք աշխատասիրի Թումասու քահանայի և առաքել քում բարեպաշտութեանդ... ուսուցանիցն զեպիսկոպոսակիցս քո...»<sup>24</sup>:

Ստացվում է թարգմանական գրականության մի ստվար ցանկ: Եվ զայ դեռևս մի նամակում, մի թղթի կապակցությամբ, այն էլ հեռավոր Երուսաղեմի մի վանքում, մի վանականի ձեռքով գրված և թարգմանված: Ուստի հասկանալի է,

23 № № 993 (թերթ 525ա) և 2124 (թերթ 565բ) ձեռագրերում կա... Յովհաննու Երուսաղեմա եպիսկոպոսի ներբողեան... ի ո. եկեղեցին...: որն սկսվում է հետեւյալ բառերով. «Սոսկումն և սարսափումն բմբոնեաց դիմ...»: Արդյոք նույն Հովհաննես պատրիարքին է, մեռմ է ճշտելու

24 «Արարատ», 1896, էջ 256:

թե մայր երկրում ինչպիսի բուռն թափ պիտի ունենար առհասարակ գիրն ու գրականությունը և մասնավորապես կրոնական-դաշլանարանականը<sup>25</sup>:

Վերո՞ջիշյալ զետքերի կապակցությամբ պահպանված է նաև մի ուրիշ թուղթ՝ ուղղված Աղվանից Արա կաթողիկոսին՝ Հայաստանից, որն ունի այսպիսի խորագիր.

«Թուղթ Յովաննիսի Հայոց կարուղիկոսի առ տէր Արա Աղուանից կարուղիկոս՝ սակա հաստոյ հաստատութեան երկնաւոր շնորհօք առլցեալ»<sup>26</sup>:

Այս թուղթն էլ Մովսես Կաղանկատվացու երկից բացի, պահպանված է նաև այլ աղբյուրներում, որոնցից մեկն է «Գիրք թղթոց» ժողովածուն<sup>27</sup>: Նրանց տարբերությունները սովորական, զրշական տարբերություններ են և խոսում են նրանց հայերեն նույն բնագրից ծագած լինելու մասին: Առհասարակ նկատելի է, որ Մովսես Կաղանկատվացու պատմության մեջ ուղղակի ընդօրինակված են հայկական աղբյուրներից բազմաթիվ էջեր, որոնք վերին աստիճանի հետաքրքրական նյութ են տալիս Աղվանից կողմերի հայերեն գրականությունն ուսումնասիրելու համար:

Հայոց Հովհաննես կաթողիկոսի վերո՞ջիշյալ թղթից երեսում է, որ հայ դործիշները մտահոգված են և անհանգստացած՝ Աղվանիք ներթափանցող քաղկեդոնական գաղափարների առնչությամբ: Այսուղեղ արժանի է ուշադրության Աղվանից եկեղեցու հեղինակավոր կազմի ընդհանուր պատկերը, որին և առաքված է թուղթը.

Ալաւաց ճշմարտից աստուածասիրաց՝ սիրելի եղբօր և աթոռակցի մերում տեսոն Արասայ Աղուանից կաթուղիկոսի, Մովսեսի Բախսաղատոյ եպիսկոպոսի, Գրիգորի Կապաղակայ

25 «Հանդէս ամսօրեալ»-ում (1930, էջ 368) ն. Ակինյանի գրախոսականը: Ապա՝ այլ տվյալներ, օրինակ, 518-ում Մակարի թղթի մասին: Տե՛ս նաև 538:

26 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 137:

27 «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 81—82:

եպիսկոպոսի, Հոռմէկայ Ամարասայ եպիսկոպոսի, Տիմոթէի Բաղասականոյ եպիսկոպոսի, Ամբակումայ Շաքոյ եպիսկոպոսի, Յոհաննէկայ Գարդմանայ եպիսկոպոսի, Ղետնդէկայ Մհծկողմանց եպիսկոպոսի»<sup>28</sup>:

Ինչպես տեսնում ենք, այս ամբողջ հոգևոր իշխանությունը զետեղված է Համարյա այն տարածությունների վրա, որը մտնում էր Անդրկուրյան Հայքի, Գարդմանի, Ուտիքի և Արցախի սահմանների մեջ, այսինքն, Հայոց Արևելից կողմանքում: Եվ դա կրկին ու կրկին փաստարկում է տեղի խոսակցական լեզվի ու նրա գրականության հայերեն լինելու իրողությունը:

Հայոց կաթողիկոսարանի և հոգևորականության այդ թրղթում ևս հիշատակվում է հայ և աղվան եկեղեցիների միասնական ուղղության հանգամանքը: «Արդ վասն զի հարքն ձեր հաւատակից էին հարցն մերոց և դուք մեղ, հաճոյ թուեցաւ գալ ի ձենց այսր եպիսկոպոսաց երից կամ աւելիաց՝ լսել ի ձենց յանդիման զճշմարիտ վարդապետութիւնն»<sup>29</sup>: Արաս կաթողիկոսը, ինչպես տեսանք վերելում, այդ բոլորից հետո, որոշում է քաղկեդոնական գաղափարները (որոնց նա դիմադրել էր նաև երուսաղեմյան նամակագրությունների ժամանակ)<sup>30</sup> արժատախիլ անել՝ հալածելով և՝ թովմաս վարդապետին, և նրա զինակիցներին:

Այս նամակից պարզվում է մի ուրիշ տեղեկություն ևս: Ըստ երևութին Պանդա վանքը քաղկեդոնականության միակ կենտրոնը չի եղել: Այդպիսին է եղել նաև ս. Պետրոս կոչված մի վանք, որովհետև այդ նամակում գրված է:

«Քանդի եհաս մեղ լուր դժնդակ համբաւու, եթէ են ոմանք գալլը յափշտակողը զգիստուր ոչխարաց, որք եկին յաշխարհն ձեր ի վանաց Պետրոսի...»<sup>31</sup>: Այդ վանքն էլ դուրս է եղել Աղ-

28 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, 1912, էջ 137—138:

29 Անդ, էջ 142:

30 «Հանդէս ամսօրեալ», 1930, էջ 538:

31 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 138,

Վանքի սահմաններից և հավանաբար գտնվել երուսաղեմում։ Համանուն վանք, իրոք, եղել է այնտեղ, որի մասին Անաստատ վարդապետի մոտ կարգում ենք. «Պետրոսի վանքն, որ արտաքոյ քաղաքին է, ի կողմանէ Սելովմայ, որ կոչի Հառաշումն Պետրոսի. ընչելք և ծախիկը արքունի շինեալ եղել»։ Այդ վանքը, սակայն, թվարկված է ոչ որպես աղվանական, այլ հայկական։ Հետևապես մնում է ենթազրել, թե երուսաղեմում գտնվել են նաև հայ միաբաններ, որոնք հարել են քաղկեդոնականությանը և գործակցել Թումաս վարդապետի հետ։ Ն. Ակինյանի մի ուսումնասիրությունից պարզվում է, որ Աբաս կաթողիկոսի նախորդները (Պետրոս և Գրիգոր) այլ դիրք են ունեցել. «բայց միայն զաւառն... «Կուզք»... ըստ բարբառոյն Հայոց Տաշիրք... Չորափոր... և Գարդմանք... որք կողմանք ինչ են և սմանք յԱրձախոյ... Հաւանեցան<sup>32</sup>։ Այսուհետեւ որոշակի անունների հանդիպելիս, աղվանից եկեղեցու ներկայացլությունը՝ տեսնում ենք հայկական գավառներում։

Այդ հանգամանքը ստիպում է մեղ կրկին վերջիշել երուսաղեմում եղած աղվանական վանքերի ցանկը. Պանդայ վանք, Մրուվոյ (Մուավա)՝ վանք, Պարտաւոյ վանք, Կաղանկատուաց վանք, Արցախայ վանք, Ամարասայ վանք և շորս այլ վանքեր՝ անուններն անհայտ։ Անկախ մասնակի անորոշություններից, տեսնում ենք, որ դրանք ևս կապվում են Աղվանքին կցված հայկական գալառների և նրանց բնակչության հետ։ Ինքնին հասկանալի է, որ նրանց գիրն ու գրականությունը, ինչպես վկայում է Անաստատ վարդապետը, պիտի լիներ և եղել է հայկականը։ Այս առումով երուսաղեմը կարծես Հայկական Աղվանքի հայնին է, նրա հոգևոր արտացոլումը, ուստի և բնականարար, վիրեւում նշված փաստերում ևս աղվանական եկեղեցու սահմանները համընկնում են երուսաղեմյան ենթադրված մոտավոր սահմաններին։

Վերջացնելով մեր խոսքը երուսաղեմի առնչությամբ հայտնի՝ «աղվանական» գրականության մասին, հիշենք, որ նրա հետ կապված որոշ փաստերի էլ կհանդիպենք ստորև։

<sup>32</sup> «Հանդէս ամսօթեալ», 1930, էջ 538։

Փաստերի այս փունջը Աղվանից աշխարհի գրականության հին ու հավաստի այն հատվածն է, որ լիովին համոզում է մեզ, թե այդ երկրի գրականությունը, չնայած հենց սկզբից պիտի զարգանար երկու լեզվով, բայց զարդացել է փաստորին մեկով, հայերննով։ Եվ այժմ ավելի քան հասկանալի է դառնում մեր այն ենթադրությունը, թե Աղվանից երկրի հոգևոր առաջնորդ երեմիա եպիսկոպոսը ոչ թե սկսեց թարգմանել Աստվածաշունչը, այլ սկսեց գործի գնել նրա թարգմանությունը, որը բերել էր Մեսրոպ Մաշտոցը։ Հետևապես Աղվանից երկրի անդրանիկ դիրքն էլ Աստվածաշունչի հայերն թարգմանությունն էր։ Եվ եթի 8-րդ դարում Պարտավի կանոնները, «առ ի ուսուցանել» հանձնարարում էին Աստվածաշունչի գրքերի ընդունելի ցանկ՝ Հայոց և Աղվանից դպրոցների համար<sup>33</sup>, ապա դա նորից նկատի ուներ Աստվածաշունչի նույն հայկական թարգմանությունը։

\* \* \*

Աղվանից աշխարհի հայ գրականության կամ որ նույնն է Հայոց Արևելից կողմանց գրականության ամենագլխավոր սկզբնագրքուրը՝ Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղվանից» երկն է, որին քանից արդեն անդրադեռ ենք, սակայն ստորև պիտի շատ պիտի անդրադառնաք։ Ուստի և անհրաժեշտ ենք համարում այդ կապակցությամբ անել մի երկու վերապահում։

Այդ երկը, ինչպես արդեն նկատված է, իր ամբողջությամբ, մի ժողովածու է, ուր որոշ կարգով, երբեմն էլ խառնաշփոթությամբ, զետեղված են բազմաթիվ աղբյուրներից քաղված նյութեր՝ հատուկ շարահյուսմամբ։ Յարդ գոյություն չունի նրա գիտական հրատարակությունը և հանգամանալից հետազոտությունը։ Ըստ որում, նրա մասին խոսող հեղինակներն էլ տարբեր կարծիքներ են հայտնել, մերթ ընդունելով

<sup>33</sup> «Կանոնք Պարտավի աղվանին ժողովի», աշխ. Ա. Ղևճանանի, Վաղարշապատ, 1905, էջ 25։

որևէ վեհակության պատմականությունը, մերթ ժխտելով այն՝ Այդ երկն ուսումնասիրելու հասուկ փորձ է կատարել անվանի բանասիր ն. Ակինյանը: Նա այդտեղ որոշ ճիշտ տեսակետներ զարգացնելով հանդերձ, մեր կարծիքով, զնացել է շատ բան լոկ հայտարարությամբ ժխտելու, շատ բան էլ անբավարար փաստարկաւմներով կեզդիք համարելու կամ, ընդհակառակը, միակողմանիորեն գերազնահատելու ճանապարհով:

Երեքի այս դրության մեջ մենք նշված երկին մոտենում ենք հետևյալ սկզբունքով:

Գուցե այնտեղ որոշ անուններ շփոթված, ժամանակագրական դեպքեր խաթարված, առանձին երևույթներ ներմուծված և արտածված լինեն, սակայն մեզ համար դրանք էական նշանակություն չունեն, քանի որ մեզ հետաքրքրում են վկայակոչված, պահպանված փաստերի ընդհանուր կողմերը, նրանց անժխտելի կապը՝ հայ գրի և դրականության, Մեսրոպ Մաշտոցի և հայկական գրության հետ: Ուստի մենք, օգտվելով այդ աղբյուրից, պատմական անուններն ու նշված իրադրությունները կոչելու ենք այնպես, ինչպես կան նրանք պատմիչի մոտ, համոզված լինելով, որ այդ ամբողջն իրենց, ընդհանուր կողմերով, պատմական նշգրիտ երևույթների արձագանքներ են:

Ինչպես առանձին, այնպես էլ Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից» երկում պահպանվել են 460-ական թվականներին վերաբերող երկու թղթեր՝ գրված հայոց կաթողիկոս Գյուտ Առաջինի (461—471 թթ.) կողմից և ուղղված Աղվանից թագավոր Վաշէ Երկրորդին: Հանրահայտ է այն վըկայությունը, թե ինչպես այդ ժամանակներում պարսիկները բազմապիսի բռնություններով հանդերձ, ի վերջո շկարողացան կոտրել Աղվանից երկրի Վաշէ Երկրորդ թագավորի կամքը՝ քրիստոնեությունը՝ մազղեիզմով փոխելու հարցում: Վաշէ Երկրորդը նույնիսկ համաձայնվեց այն ժանր իրողության հետ, որ առաջարիւմ էր պարսից թագավորը՝ ետ ուղարկել իր հարազատ մորն ու կնոշը Պարսկաստան, որովհետեւ նրանք քաղաքական ծրագրերով ամուսնացված պարսկուհիներ էին:

Վաշէ թագավորը ստիլված հրաժարվեց նաև թագավորությունից միայն, թե չընդուներ պարսից կրոնը: Դա իր ժամանակի համար, անշուշտ, գոնազարդված, բայց սիրանքի գովերգություն էր, մանավանդ, երբ հիշում ենք գրանից առաջ Վաշէ Երկրորդի մեկ տարի տևած զինված պայքարը՝ պարսիկների զեմ, Վարդանանց ճակատամարտից ոչ շատ անց: Իսկ հետո, ինչպես վկայում է պատմիչը, Վաշէ Երկրորդ թագավորը «գրով և պատգամաւ յանդիմանէր զնոսա վասն ի գուր աւերելոյն զաշխարհն Հայոց, յիշեցուցանէր և զմա՞ս նախարարացն և զջարշարանս կապելոցնձն<sup>34</sup>: Այս այս բոլորից հետո է, որ նա չընուանալով հատկապես Հայոց աշխարհի ավերումն ու կոտորածը, կւանքից ու աշխարհից հրաժարված, ինչպես ասում են Եղիշեն ու Սովսես Կաղանկատվացին, ապրում էր մենակյացի կյանքով, չհիշելով անդամ, թի ինքը երբեք թագավոր է եղել: Սույն Վաշէ կամ Վաշագան թագավորի կապակցությամբ հիշատակված ենք գտնում նաև Ավետարանի գործածություն, որը միանդամայն բնական էր. «զաշխարհն բավանդակի ի բաց եթող և ինքն զԱւետարանն առ ի բաց կամէք գնալը<sup>35</sup>:

Լսելով այդ ամենը, հայոց կաթողիկոս Գյուտ Առաջինը երկու նամակ է հղում նրան, երկուսն էլ հայերեն: Նա չի խնայում իր կարողությունները՝ դրվատելու իր օրերի հերոսին, տալով միաժամանակ ուղագրավ օրինակներ՝ բանաստեղծական արձակ խոսքի, ինչպես նաև տեղեկություններ ժամանակի գիտական բմբունումների և այլ ուշագրավ հարցերի վերաբերյալ: Գրանք, անուղղակի կերպով, գաղափար են տա-

34 Եղիշե, Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, աշխատությամբ եւ. Տեր-Միսայանի, Երևան, 1957, էջ 197—198:

35 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 23: Բայտ ավանդության, Արցախի Ավետարանոց գյուղի անունը կապվում է այս թագավորի անվան հետ, որը իր թի մենացալ ճգնել է նաև ուր էլ, հավանաբար, ստացել թղթերը՝ «ի Գիտ երանելի կաթողիկոս Հայոց» (տե՛ս Ս. Զալալյան, Ճանապարհորդութիւն..., թ, Տիֆլիս, 1858, էջ 248):

Եմ նաև Վաշե Երկրորդի ու նրա կրթական միջավայրի մակարդակի մասին: Դրանք նաև հայրենասիրական ոգով գրված թղթեր են, որոնց մեջ, քրիստոնեական դաղափարների թանձր կեղեկի տակ, բարախում է Հայ-ազգանական բարեկամության ջերմ ոգին: Զէ՞ որ Վաշե Երկրորդի դիմադրությամբ յուրովի շարունակվում էր Վարդանանց պատերազմի անմահ ոգին, և Աղվանիք բնակլության հետ միասին նաև Աղվանից աշխարհի հայությունն էր զերծ մնում պարսկական այլասերումից: Մեծ, աստվածային է քո գործը, գրում է Գյուտը, որովհետև քո արարքով «Քոյին իսկ աշխարհի հայրենի հաւատքն պահեցան, եկեղեցին չեն մնացին, վկայարանք ի խաղաղութեան, քահանայթ ի քահանայութեան, պատարագք ի սեղանս, մարդարէք յընթերցուածս, առաքեալք ի միխթարութիւնս, սաղմոսերգուք ի յօրհնութիւնս, կուսանք ի կուսութեան, կրօնաւորք ի սրբութեան և ամենայն ոք յիւրաքանչիւր կարգին<sup>36</sup>:

Իր անձի վրա վերցնելով Հարվածի ծանրությունը, մեզ հայտնի և անհայտ եղանակներով, Վաշե Երկրորդը, ըստ ավանդության կարողացել է մեծ ծառայություն մատուցել հայրենի Երկրին: Ուստի Գյուտ կաթողիկոսը ոգևորված գովերգում է նրան, հավատացնելով, որ նրա նախկին ուժն այդ եղանակով ըստ էության, կրկնապատկվել է:

Ամենայն ինչք քուոյ գնդին կրկին են.  
Եթէ զրահը էին պահապան մարմնու,  
Ընդ նմին և զրահը հաւատոյ,  
Եթէ սաղաւարտ էր զգուշութիւն սուսերի,  
Ընդ նմին և սաղաւարտ փրկութեան,  
Եթէ վահան ունէիր ընդդիմանար լաճրացդ առաքինեաց,  
Ընդ նմին ունէիր և զգահանն համբերութեան հաւատոց,  
Եթէ նետ ի կորովից քոց թուէր ուզգակի,  
Ընդ նմին և աղօթք սուրբ խնդրուածոց...

<sup>36</sup> Առվես Կաղանեատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 33: Այս թուղթը մասնակի կրմատումներով, տե՛ս նաև ձեռ. № 2966, թերթ 119թ (կա նաև № 3062 ձեռագրում):

Նթէ շողաւր սուսեր ի բարուկոյ առաքինիս,  
Էռաւաւորութիւն հաւատոց քոց ի մէջ Հրեշտակաց  
գփայատակմուն արձակէր:  
Դրօշակը քո դրօշակը երկնաւորք  
եւ տէգ նիզակի քո հաւագայթնաւոր,  
իրք կար արձամոյ արեգական<sup>37</sup>:

Դա՝ ուազմիկ-արքա Վաշե Երկրորդի նկարագիրն է՝ իր դենք ու զրահի և միաժամանակ՝ հավատացյալի սքիմի մեջ:

Պակաս ուշագրավ չեն այն առղերք, որոնց մեջ բանաւեղծական ընդհանուր գույներով է արված հերոս թագավորի գովքը:

Ընդ արուսեկին կշռեցից զքեզ,  
Դու պայծառագոյն քան պարուսեակն...  
Եթէ զլուսին ածից քեզ յօրինակ...  
Մանդաղաձն, կիսագունա, խոնաւալից... լուսաւեաց...  
Դու լիալայն, բարձր, լուսասարաս, աւետարեր...  
Պայծառ, գեղեցիկ քան զամենայն հասակից ընկերս քո...  
Դու արեդական նմանեցար...<sup>38</sup>

Գյուտ կաթողիկոսն իր նամակներում չի մոռացել զերմ գովասանք շուայիլով նաև Ուռնայր թագավորի հասցեին, որի շնորհիվ, ըստ նամակաւորության դեք աշխարհիդր: Այստեղից նա պատկերավորությամբ անցնում է պարկական հալածանքներին, դրանք նմանեցնելով մրրկահույղ և ափերից դուրս պրճած ծովի խորտակող ալիքների:

...դհամատարած ծովի շաբժեցին  
Եւ յուզեցին զրագութիւն ալեաց նորա:  
Ակաս մրմուլ, ելանել, տարածանել  
Եւ ապակնել զդաշտու և զլերին:  
Եկն հնաս ի վերաց քո միանդանաց,  
Բազմութիւն ազգաց հեթանոսաց,  
Ահաւոր գաղանօք,  
Խառնադրօմն նշանօք,  
Բազմաժայն փողովք...<sup>39</sup>

<sup>37</sup> Անդ, էջ 30—31:

<sup>38</sup> Անդ, էջ 31—32:

<sup>39</sup> Անդ, էջ 28—29:

Մենք դիտմամբ ենք մի քիչ ավելի մեջքերումներ կատարում այս թղթերից, որովհետև զրանք ոչ միայն անուղղակիորեն ցուց էն տալիս Ազգանից աշխարհի արքունիքի գրական ըմբռնումների ժողովոր պատկերը՝ հասարակական որոշ շրջաններում, այլև այն պատճառով, որ դրանք, Մովսես Կաղանկատվացու երկի մեջ մտնելով, դարեր շարունակ, Աղվանից երկրի ընթերցողների ուշադրության առարկան են եղել և օգտակար դեր կատարել նրանց գրասիրության գործում։ Հավանական է, որ այդ երկից առաջ դրանք շրջանառության մեջ մտած լինելին նաև այլ եղանակով, ինչպես Հայաստանում, այնպես էլ Աղվանից աշխարհում։

\* \* \*

Այժմ էլ Ղարաբաղի Զրաբերգում, Եղիշե առաքյալի վանքի մոտ գտնվող մատուռի դռան ճակատին կա այսպիսի արձանագրություն։

«Այս է Հանգիստ Վաշական թագաւորին...»<sup>40</sup>

Ո՞ր Վաշագանին է վերաբերում խոսքը, ոժվար է ասել։ Մենք հակված ենք ընդունելու, որ այն վերաբերում է Վաշագան Երրորդին։

Վաշագան Երրորդ թագավորը իշխել է 5-րդ դարի վերջերին և 6-րդ դարի սկզբում։ «Պատմութիւն Աղուանից»-ը նրան մեծարում է, որպես քրիստոնեությունն ամրացնողի, լուսավորություն տարածողի, շինարար ու խաղաղասեր թագավորի։ Թերևս շափականցումով նույն ազբյուրը վկայում է, որ նա կառուցել է 366 (կամ 365) եկեղեցի։ «Ըստ թուոց աւուրց տարւոյն եկեղեցիս միայն բարեպաշտն Վաշական շինեաց յԱրևելս»<sup>41</sup>։ Այս առումով էլ, ահա, մատնանշված արձանագրությունը կարող է ավելի շուտ սույն Վաշագանին վերաբերել։ Լինել թագավոր և եկեղեցու շինարար ու քրիս-

տոնեության, լուսավորության ջատագով, նշանակում է լինել նաև մեծ գրասեր, բազմակողմանիորեն զարգացած և լուսավորված անձնավորություն։ Հիրավի, այդպիսին է նրա դեմքը՝ պահպանված աղյուսներում։ Արդ, ո՞րն էր նրա գրական լեզուն, ինչպիսի՞ն էր նրա խրախուսած գրականության լիզուն։ Այստեղ էլ Հիմք ունենք ասելու, որ նա որդեգրված էր Հայերենին՝ հայկական գրին ու գրականությանը։

Այս առումով Մովսես Կաղանկատվացու մոտ կա մի վավերաթուղթ. «Երանելոյն Աբրահամու Մամիկոնեից եպիսկոպոսի առ Վաշական Աղուանից արքայ բաւը սակս ննջեցելոց»<sup>42</sup>։ Այն սկսվում է հետևյալ տողերով. «Միտ դիր, ով սիրելի, զի եթէ գիտութեան և անգիտութեան յաղագս հոգւոցն ննջեցելոց ասիցիմք ինչ բանս...» և այսն ինչպես տեսնում ենք, զա մտերմական նամակի տեսք ունի՝ կապված կրոնական խնդիրների հետ։ Փարզ է, որ այդպիսի նամակը պիտի գրված լիներ որևէ շարժառիթով, այլապես ի՞նչն էր ստիպել Հայ եպիսկոպոսին մեծ տարածության վրա դիմելու Աղվանից աշխարհի թագավորին՝ ննջեցյալների մասին քրիստոնեական ըմբռնումների բացատրությամբ։ Մովսես Կաղանկատվացու մոտ այդ մասին լրացուցիլ տեղեկություն չկա։ Սակայն նրա գրքում, այդ թղթից առաջ, առկա է մի ուրիշ նման թուղթ. «Հարցումն Վաշականայ արքայի Աղուանից զՄարք Երէց գիտանուր»<sup>43</sup>, թովանդակությունից երևում է, որ այս խորագիրը թիրի է, որովհետև այդտեղ թագավորի փոքրիկ հարցին հետևում է Մատթեյ գիտնավոր երեցի բավականին ընդարձակ պատասխանը։ Դա ինքնին վկայում է, որ նման ընդարձակ պատասխանի մնացորդն է նաև մեզ հետաքրքրող թուղթը՝ գրված Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսի կողմից։ Հիրավի, այդ թուղթը, իրեն նախորդող հարցումի, ինչպես նաև երկու այլ հարցումների և նրանց տրված պատասխանների հետ՝ պահպանված է 8-րդ դարում Հովհան Օձնեանության մեջ։ Այսու ձեռքով համախմբված «Կանոնգիրք Հայոց»-ի մեջ։

42 Անդ, էջ 96։

43 Անդ, էջ 94։

տեղ այն ունի հետևյալ խորագիրը. «Լանոնք Արքանամու Մամիկոնից եպիսկոպոսի առ Վաշագան Աղոստանից արքայ»<sup>44</sup>: Դրան հաջորդում են նախ, երեք հարցումներ, ապա նրանց տրված պատասխանները: Հստ որում, չի էլ նշված, թի հարցումների հեղինակը Վաշագան արքան է, չնայած պատասխանից զա իսկույն երևում է: Այսպես՝ առաջին հարցի պատասխանն սկսվում է «Միտ գիր, ով սիրելութիւն...» բառով, որոնք ուղղված են Վաշագան արքային, ըստ պահպանված առաջին հարցումի: Խորագիրն էլ պակաս խոսուն չէ: Իսկ, ինչպես վերևում տեսանք է կտիսնենք նաև ստորի, Վաշագան թագավորը սիրում էր նման հարցումներով դիմել ժամանակի գիտուններին և խնդրել պատասխաններ: Հետեապես, այստեղ, Հովհան-Օձնեցին նրա գրության միջից վերցրել է լոկ հարցերը և խմբագրելով ներկայացրել, որպեսզի բնագիրը կանոնական տեսք ստանա, այլապես սովորական հարց ու պատասխանը՝ նամակի ձևով այնքան էլ չեր ներդաշնակիի «Կանոնագիրք Հայոց»-ի նյութերի հետ, մանավանդ, որ ըստ էության այն լիարժեք կանոնական ստեղծագործության շի նմանվում: Անկախ ամեն ինչից, ուշագրավն այն է, որ Վաշագան նրորդ թագավորը դիմել է հայ մտավորականներից մեկին՝ հայերեն հարցումներով և ստացել նրանից հայերեն պատասխան: Մոտավոր զաղափար տալու համար, թե ինչ հարցեր են հետաքրքրել Վաշագան թագավորին, այստեղ ընդորինակում ենք նրա հարցումների խմբագրված կետերը, ուր խմբագիրը դրանք ազատել է հարցական բնույթից, տալով նրանց սահմանումի ձեւ:

«Ա. Եթէ ոչ են հոգիք ննջեցելոցն ի գիտութեան աստի իրացւ:

Բ. Եթէ որք աղաւթեն առ նշխարս վկայից՝ Աստուած է ընդունող աղաւթիցն և հատուցանող:

Գ. Եթէ հոգիք վախճանելոցն ոչ են միմեանց ի ծանաւթութեան»<sup>45</sup>:

44 «Կանոնագիրք Հայոց», Աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Ա. Երևան, 1964, էջ 501 (ամբողջը՝ 501—505):

45 Անդ, էջ 501:

Առաջին կետի պատասխանից երեսում է, որ Վաշագան արքային հետաքրքրել է այն հարցը, թի ինչ օգուտ՝ հանգուցյալների հոգու փրկության համար տրված պատարագից, եթե նրանք անզգա՞ են այս աշխարհի նկատմամբ: Արրահամ Մամիկոննեից եպիսկոպոսը պատասխանում է, որ իրոք, մեռյալներն անզգա են, բայց աստված է ընդունում պատարագը և նա է, որ զրանով կարող է թեթևացնել հանգուցյալների մեղքերը: Սույն հարցի առաջացումը Աղվանից արքայի մոտ մտածել է տալին՝ հանգուցյալների համար սահմանված արարողություններին դիմադրող միջավայրի առկայության մասին Աղվանքում, որը կարող է կամ հեթանոսական հիմք ունենալ, կամ կապվել զավանաբանական, աղանդավորական մտայնության հետ: Այս տեսակետից ուշագրավ է նաև երկրորդ հարցը: Նրա պատասխանից, երևում է, որ Աղվանքում որոշ շրջանների հետաքրքրել է սուրբ համարված նահատակեների, նրանց մասունքների պաշտամունքի հարցը, մանավանդ, եթե նույն սրբի մասունքները տարվել են տարբեր կողմեր, թնականաբար հարց է առաջացել, ինչու պաշտել սըրբացված այդ արարածներին, եթե կարելի է ուղղակի աստծուն աղերսել: Ապա, հարց են տվել, եթե սրբի մարմինը մասունքների է վերածվում, ինչպես են այդ մասունքներն ամբողջության տեղ անցնում, լիարժեք համարվում: Արրահամ Մամիկոննեից եպիսկոպոսը պատասխանում է, որ աստծուն անմիջապես դիմել չենք կարող, որովհետև մեղավոր ենք, ուստի միջնորդի կարիք ունենք: Դրանք սրբերն են: Ինչ վերաբերում է նրանց մասունքներին, ապա նա զրանք համեմատում է արևի լույսի հետ. «զայս ուսուցանէ քեզ և լոյս արեգական, զի բաժանի ի ժամու ինքն և անբաժանելի մնայ ըստ ընութեան» և այլն: Այստեղ էլ զգացվում է դիմադրող միջավայրի առկայություն, որին համոզելու համար Վաշագան արքան ցանկացել է նախ ինքը համոզվել: Մանավանդ, որ նա, ըստ երևույթին, շատ եկեղեցիներ է կառուցել տվել, ուստի ստիպված է եղել բացատրել նրանց հետ կապված զանազան հարցերը:

Ըստ երեսւլին, Վաշագան թագավորը չի բավարարվել մի մտավորականի տված պատասխաններով և նույն հարցերով կամ նրանց մի մասով դիմել է նաև ուրիշների: Դրա օրինակներից մեկն է անա վերեւում նշված Մատթեոսի գիտնակոր երեցին առաքված հարցը:

Այս Մատթեոսի երեցը ժամանակի Ազգանքի նշանավոր հկեղեցական գործիչներից մեկն էր, որ պաշտոնավարում էր Արցախի գավառի ֆարահեջ (Փարահալու) գյուղում: Նա էր Հայաստանից Աղվանք տարել «զամենասուրբ նշխարս Գրիգորի և զյոյժ Հովակիլոյն Հոփիսիմեայ և Գայիանեայ ի Գարանց գեօղն, որ է ի նահանգին Արցախայ», որի թափորը դիմավորելու համար «ի մեծ ժողովն Գիտականու, ընդ առաջ ելանէր թագաւորն (իմա՛ Վաշագան Երրորդը) հանգերձ թագուհեաւ և ամենայն մեծամեծ նախարարօք հեռացոյն ի դեղչն»: Այդ նույն Մատթեուսից է, որ գտնում է նաև Գրիգորիսի նշխարները<sup>46</sup>: Եվ նույն անձնավորությունն է, որ մասնակցում է Վաշագան արքայի անունով հայտնի կանոնների մշակմանն ու հաստատմանը<sup>47</sup>:

Պարզ է, որ սրբերի նշխարների գործով այդքան եռանդուն կերպով գրադած անձնավորության կարծիքը կարեոր նշանակություն պիտի ունենար Վաշագան թագավորի համար: Լսենք, թե ինչ է հարցրել նրանից արքան:

«Ասէ արքայ. «Հոգիք հրաժարեալք ի մարմնոյ զգայո՞ւն ին, թէ անզգայ, և կամ կինդանիքս ննշեցելոցն զիա՞րդ կարեմք օգնելք»<sup>48</sup>:

Ինչպես տեսանք, համարյա նույն հարցերին է, որ պատասխանի է Արքահամ Մամիկոններից եպիսկոպոսը: Ասենք նաև, որ հոգիների մասին տրված պատասխաններում որոշ տարրերություն կա: Եթե առաջինի պատասխանից եղբակացված է, «Եթէ ու են հոգիք ննշեցելոց ի գիտութեան աս-

46 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 75—76, 78:

47 Անդ, էջ 98:

48 Անդ, էջ 94:

տի իրացս», ապա երկրորդի, Մատթեոսի երեցի պատասխանի մեջ ասվում է, որ հանգուցյալի հոգին, հեռանալով նրանից, «Ունի քաջատես և առաւել իմաստուն»:

Ինչպես երեւմ է, Արքահամ Մամիկոններից եպիսկոպոսի այդ «Կանոններն ալիքի ընդարձակ են եղել և վերևում նըշված աղբյուրներում առկա է նրանից աննված լոկ մի հատված: Այդ մասին, գեռես 1899 թվականին գրել է Բ. Սարգսյանը: Նա Վանական վարդապետի (Հովհաննես, Տավուշիցի) մի գրվածքի («Հարցմունք զանազանք և պատասխանիք...») մասին գրում է, «Հեղինակս՝ մեռելոց հարության նկատմամբ հարոցած այս հարցմանս, թե «Յորո՞ւմ հասակի յառնեն մեռեալք», անմիջապես կպատասխանէ: «Արքահամ Մամիկոններից եպիսկոպոսն ասէ, թէ «Յորում հասակի մեռեալ են»: Այս այս հետքով Բ. Սարգսյանը վենետիկի, «Թիվ 53 բոլորագիր դրշագրին մեջ» գտել է «ի կանոնաց Արքահամու Մամիկոններիցն» գործը, որտեղ և գտնվելիս է եղել Վանականի նշած վերոհիշյալ միտքը՝ առնված այդ հեղինակից: Այստեղ, ինչպես տեսնում ենք և ինչպես նշում է Բ. Սարգսյանը, առկա են նաև ուրիշ կանոններ, որոնք չկան ցարդ օգտագործվող մյուս ձեռագրերում: Ուշագրավ է նաև խորագիրը՝ «Ի կանոնաց...», որից էլ Բ. Սարգսյանն իրավացիորեն ենթադրում է: «Ասով վերջնականապես կապացուցվի, թե Արքահամ Մամիկոններից եպիսկոպոսին՝ Վաշագանի համար զրված ալիքի ընդարձակ ժամանակու ունեցող» կանոններ են եղել դեռևս 7-րդ դարում<sup>49</sup>:

Արքահամ Մամիկոններից եպիսկոպոսի նամակագրական կապը Վաշագան թագավորի հետ վկայվում է նաև մի ուրիշ վավերագրով: «Թուղթ Արքահամու Մամիկոններից եպիսկոպոսի առ Վաշագան արքայ Աղուանից Պատմութիւն վասն ժողովոյն եփեսուի, որ եղել ի ժամանակս Թէոդոսի Փոքու վասն ամբարշտին նհստորի»:

49 Բ. Սարգսյան, Արքահամ Մամիկոններից եպիսկոպոսն..., Վենետիկ, 1899, էջ ի—իլ:

Սակայն այս հուշարձանի քննությունը կապված է դժվարությունների հետ, որովհետև այն որոշ ազբյուրներում հիշված է որպես գործ «Երանելոյն Փիլիփսենոսի Նարովկայ...», իսկ ն. Ակինյանն էլ կարծում է, որ նրա հեղինակը Վրթանես Քերթողն է<sup>50</sup>: Թող որ ճիշտ լինի վերջին կարծիքներից մեկն ու մեկը Սակայն հենց այն հանգամանքը, որ հնարավոր է եղել Հայ իրականության մեջ այդ թուղթը կապել Վաշարան թագավորի անվան հետ, անկախ ամեն ինչից, խոսում է նման երևույթի հնարավորության մասին: Եվ դա է մեզ համար կարեռը:

Մասնակի շնորհով այստեղ հիշենք ևս մի փաստ, որը չնայած չի կապվում Վաշարան թագավորի հետ, սակայն կապվում է Աղվանից եպիսկոպոսների և նորից Արքահամ Մամիկոններից եպիսկոպոսի անվան հետ: Խոսքը վերենում հիշատակված և «Գիրք թղթոց»-ում գտնվող այն թղթի մասին է, «որ տեր Յովհաննէս հայոց կաթողիկոս և այլ եպիսկոպոսունք առ Աղուանից եպիսկոպոսուն արարին» (սկ. «Հայոց և ճշմարտից աստուածանիրաց...»), որն ստորագրված է եղել նաև «յԱրքահամայ Տարանոյ և Մամիկոննէից եպիսկոպոսէ...»<sup>51</sup>: Դա կրկին է հավաստում Արքահամ Մամիկոններից եպիսկոպոսի կապը Աղվանից աշխարհի հետ:

Հիշենք նաև մի ուրիշ թուղթ՝ դարձյալ «Գիրք թղթոց»-ից. «Պատոսիսնի ի հայոց՝ բդրոյն Աղուանից Վերդողի» (սկ. «Պատուական գտելոց և վէ՛ հուակիլոցդ...»)<sup>52</sup>: Այստեղ նշված Վրթանես Քերթողը նույն հեղինակն է, որին ն. Ակինյանը վերագրում է Արքահամ Մամիկոններից եպիսկոպոսի անվան հետ կապված վերոհիշյալ թուղթը: Այս պայմաններում, իրոք, ուշագրավ է ոչ այնքան անհատների անունների ճշգրտումը, որքան այդպիսի թղթերի գոյությունը:

Աղվանից աշխարհի Վաշարան թագավորի կրոնա-գավանարանական հետաքրքրություններն անհամեմատ մեծ են

50 «Հանդէս ամսօրհայք, 1910, էջ 39; Տե՛ս նաև անդ, 1953, էջ 558:

51 «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 81—84: Մանրամասն՝ ստորև:

52 Անդ, էջ 196:

եղել, նա այդպիսի հարցերով դիմել է նաև ժամանակի Հայ իրականության խոշոր դիմքերից մեկին՝ Պետրոս Սյունեցուն (Պետրոս Քերթող): Այդ հարցը ու պատասխանն ամրողապես պահպանվել ու հասել է մեզ: Նրա հնագույն նմուշն ընդորինակված է շուրջ հազար տարի առաջ՝ 981 թվականին՝ թղթյա հնագույն ձեռագրում<sup>53</sup>: Ահա նրա խորագիրը:

«Հարցմունք յաղագ՝ մարմնաւրութեանն տեան զանգանք, Վաշարանից Աղուանից Պետրոսի Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի և իմաստախրին»<sup>54</sup>:

Այս հարցերից համոզվում ենք, որ իրոք կրոնա-գավանարանական խնդիրները այն ժամանակվա Աղվանից աշխարհին հուզող ամենակարևորագույն խնդիրներից են եղել: Զգացվում են ոչ միայն տեղի բնակչության մեջ կենդանի մնացած հին հավատքի ուժեղ դիմադրությունը, այլև, քաղաքական նպատակների արդյունք հանդիսացող, դավանաբանական տարրեր հուսանքների խաչաձևող պղտորումները:

Սույն հարցաշարքից երեսում է, որ Վաշարան թագավորը նաև ուրիշ հարցերով է դիմել նույն հեղինակին: Դրա ցայտուն արտահայտություններից են, օրինակ, 7 և 9-րդ հար-

53 Զեռ. № 2679, տե՛ս նաև ձեռ. № № 3074, 110թ (1307 թ.), № 4381, 17ա (14-րդ դ.), 6228, 141ա (19-րդ դ.), թ. Սարգսյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց... ի վենետիկ, թ. Վենետիկի, 1924, էջ 284—285:

54 Պետրոս Սյունեցու և Վաշարան Աղվանից թագավորի այդ հարցը ու պատասխանների մասին օֆնողակ վկայություն է պահպանված նաև Ստեփանոս Օքբելյանի մասու նաև, դրամատուզ Պետրոս Սյունեցուն, գրում է. «Բազմերանիկն և անհամեմատն ի մարդկանէ Պետրոս՝ աշակերտ քերթողածորն, քաջ հոնորը և անյաղթ փիլիսոփայն, լի իմաստութեամբ և կատարեալ առաջնութեամբ, նախաթոռ վարդապետաց Հայոց, քերթող և թարգմանիչ: Այս արար բազում թարգմանութիւնն և խօսեաց ճառուն... և մեկնեաց զիրթին և գոյժուարիմաց բանն չին և նոր Կտակարանաց... Սա հարցեալ ի Վաշարանայ՝ Աղուանից թագավորի բանն բազում, ուժեղու և զօրքաւոր, և ընկալիալ զպատասխանին յոյժ ի ճառ և ուղիղ լուծմամբ» (Ստեփանոս Օքբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 89—90): Պատմիչի նկարագրած այս առաջնություններն ու դիմելիքներն են ահա, որ Վաշարան թագավորի ուշագրությունը հրավիրել են Պետրոս Սյունեցու վրա:

ցերը: Վերցնենք Զ-րդ հարցը. «Եւ զոր ասացիալ էիր, թէ Համառօտ բանիւ սահմանելի է աստուածութիւնն, արդ սահմանեա ինձ»: Մատենադարանի № 3074 ձեռագրում պահպանված է Վաշագան թագավորին և Պետրոս Սյունեցուն վերագրոված մի ուրիշ համանման գործ. «Հարցումն Վաշագանա իշխանի և պատասխան Պետրոսի Սինեաց վերադիտողի» խորագրով<sup>55</sup>: Ուշագրավն այն է, որ այս հարց ու պատասխանիքն սկսվում է հետևյալ հարցով. «Զի՞նչ է սահման աստուծոյ», որը լիովին համապատասխանում է վերոհիշյալ հարցումին: Այս նոր հարց ու պատասխանիքի շարքի նախավերջին հարցին արված է այնպիսի պատասխան, որի մեջ շոշափված են 7-րդ դարի հեղինակ Անանիա Շիրակացու, ապա 11-րդ դարի կաթողիկոսներ Պետրոս Գետադարձի և Դիոսկորոս Սանահնեցու անունները: Պարզ է, որ դա հետագայի համելում է:

Դրան հակառակ մեծ ուշագրության են արժանի Եղիշեի, Դավթի, Խոսրովիկի, ինչպես նաև Ստեփանոս Սյունեցու<sup>56</sup> մասին եղած վկայությունները: Դրանք ցուց են տալիս Հայ մատենագրության՝ շրջանառությունը՝ Աղվանքում առհասարակ: Նույնիսկ ինքը՝ Վաշագան արքան է իր հարցերից մեկում (3-րդ) վկայակոչում Խոսրովիկին գրելով. «Խոսրովիկ ասէ. Համագոյացութիւն աստուծոյ բոլորովին հանդերձ մարմնով»:

Թի՛ առաջին և թի՛ երկրորդ հարց ու պատասխանիքի մեջ, հատկապես հարցերում, մեծ արժեք ունեն նաև Աստվածաշնչից կատարված քաղվածքները, որոնք նորից խոսում են նրանց հայկական սկզբնադրյուրներից առնված լինելու մասին:

55 Զեռ. № 3074, թիրթ 110ր—112ր:

56 Եթե Ստեփանոս Սյունեցու մասին եղած վկայությունը հետագայի ներմուծություն չէ և չի վերաբերում 7—8-րդ դարերի հայտնի Ստեփանոսին, ապա դա կարող է հիմք հանդիսանալ անդրադառնալու 5-րդ դարում ապրած և թարգմանչաց աշակերտ համարված Ստեփանոս Սյունեցու հարցին, մասնավենդ, որ այսուհե առկա է որոշակի հատված այդ հեղինակի մի երկից:

Գիտական և բանասիրական նկատառումներով, Հարկ ենք համարում ստորև ներկայացնել այս նոր անտիպ շարքի միայն հարցերը.

Հարցումն Վաշագանա իշխանի և պատասխան Պետրոսի Սինեաց վերադիտողի<sup>57</sup>:

1. Զի՞նչ է սահման աստուծոյ:
2. Վասն անապականութեան մարմնոյ, որք ասեն, թէ, որ աճէ և նաւզէ՝ ապականացու է:
3. Խոսրովիկն ասէ. Համագոյացութիւն աստուծոյ բոլորովին հանդերձ մարմնով:
4. Որպէս հրեշտակք:
5. Զոր կապիցն և արձակիցն:
6. Քանի՛ երկինք են:
7. Զմարմինն Փրիստոսի կրոք յինքն:
8. Յով[Հաննէս] ի՛նչ ասէր ի մկրտելն զքրիստոս կամ զայլ մարդիկն կամ առաքեալքն:
9. Իմաստունն ո՞ւր գտանէ զխորհուրդ իւր:
10. Քանի՛ օր գտանէ մարդն թողութիւն մեղաց:
11. Յակոբիկն սատանա՝ եթէ զղանա:
12. Զի՞նչ է տիւր:
13. Զի՞նչ է արեգակն:
14. Զի՞նչ է լուսինն:
15. Զի՞նչ է մարդ:
16. Զի՞նչ է վայելլութիւն:
17. Զի՞նչ է մեծութիւն:
18. Ընդէ՛ր շասաց մարդոյն. Ահա ետու ձեզ զանասունդ, զոր յետոյ տալոց էր. այլ զպուղն և զսերմն:
19. Ո՞ր գիտ է Գեհոն:
20. Որպէս ասի փայտ գիտութեան, բարոյ և շարի:
21. Ո՞ր է մարգարէութիւն Աղամա:
22. Թէ մնացեալ էր մարդն ի դրախտն, զանհաւսն որպէս տանէր:
23. Զի՞նչ էր երելն Կայենի:

57 Զեռ. № 3074, թիրթ 110ր—112ր:

24. Փողն զի՞նչ գոշի:  
 25. Յրդասցի Ասիթի:  
 26. Ցերիքով ի շուրջ զալն փողովքն զի՞նչ ասէին:  
 27. Կոնքն, յորում լաց Տէրն զոտս աշակերտացն:  
 28. Պաւղոսի Ե բանն մտաւոր և եւագրիա Ե կարգն:  
 29. Լոյսն առաջին աւուրն ո՞ր է:  
 30. Զի՞նչ է քերովքն ասել:  
 31. Հոգին ասուուծոյ շրջէր ի վերա ջրոց:

32. Զառաքո համառաւոն ո՞վ է արարեալ յառաջն:  
 33. Արար ըստ պատկերի և ըստ նմանութիւն:

Այս վկայությունները ցույց են տալիս, որ Վաշագան Երրորդը սերտ կապերի մեջ էր հայ մտավորականության, որպես քրիստոնեության արևելյան միջնաբերդի դորժիչների հետ և հետևում էր նրանց կրոնական ընթացքին ու խորհուրդներին: Ինքն, անձամբ բարեկամական կապեր ուներ Սյունյաց երկրի հետ և նրա խնդրանքով էր, որ Սյունիքը նրա փեսային արամադրեց 5 դյուոլ՝ իր ամբողջ տարածություններով:

Սա. Օրբելյանն այդ մասին գրում է. «...Պարսից Արլ-Արաս անուն. և փեսայացուցին Վաշագանայ Աղվանից արքայի. և շինեցին բերդ յեզր գետոյն... իսկ Արլ-Արաս և Վաշագան խնդրեալ յիշխանէն Սիւնեաց՝ սահման հատին վանիցն և ետուն հինգ գիւղ սկիզբն արարեալ ի Սևուարէ ածեն ի Թոթիբոթեր ի վար և վար. ուր ի շուրն թզենւոյն և յայգեստան ուրկանոցին. և անտի զնայ, հասանէ մինչև ի շրջանս գետոյն Աղաւնոյ, հանդէպ եկեղեցւոյն նակորդանու... Եւ փարթամացեալ էր տունն, զի էր նորա արշառ 1000, ոչսար 12.000, ուղտ 700, ձի 600, էջ 400 և այգեգործս կատապանս 170»:

Ուշագրավ է նաև, որ ըստ նույն պատմիչի հենց այս կողմերումն էլ ապրելիս է եղել նաև Վաշագան թագավորը, որովհետու նրա մահը հիշվում է Բարեկուշատում.

«Ապա մեռան ի Բարեկուշատ թագաւորքն Վաշագան և Արլ-Արաս...»<sup>58</sup>: Ինչպես երևում է, Վաշագանի փեսան էլ ու-

<sup>58</sup> Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 86:

րոշակի կապ է ունեցել թագավորական իշխանության հետ: Այդ նույն ժամանակներումն էր, որ Պետրոս Սյունեցին, խույս տալով Հայաստանի ներքին խոռվություններից, միացավ Աղվանից եկեղեցւոյն՝ նրանից ընդունելով և ձեռնադրություն, և սրբազն յուղ<sup>59</sup>: Նաև այս խնդրեներն էին, որ Աղվանից աշխարհի Արշակունի թագավորին այնքան սերտորեն կապել էին հայ դրականության և առհասարակ հայացման երևոյթների հետ:

Պետրոս Սյունեցուն հետո շանդրադառնալու նպատակով, այսուհեղ հիշենք մի փաստ ևս: Մովսես Կաղանկատվացին իր երկի մեջ շարադրուել է նաև մի զողորիկ հատված Պետրոս Սյունեցու կորած մի ներբողից: Քանի որ այդ հատվածը պահպանված է նաև Ստեփանոս Օրբելյանի մոտ, և բանասիրները վաղուց են քննել այդ հարցի բանասիրական կողմը<sup>60</sup>, ուստի մենք բավարարվենք միայն հետեւյալով: Այդ ներբողը նվիրված է եղել հօների բանակում զտնվող Հոնագուրի և Սյունեցի հայ Բարիկի մենամարտին: Ավելորդ շենք համարում մեջ բերել Բարիկի զինավառությանը և մենամարտին նվիրված հետեւյալ տողերը՝ Մովսես Կաղանկատվացուց:

Նորա յանձն առեալ կատարել զինդիրն,  
 Եւ գնոյնժամայն ապահնեալ ի վերին օգնականութիւնն, ասէ,  
 «Եկեղեցիք Սիւնեաց՝ օգնեցէք ինձ»:  
 Եւ առեալ զիւրյ զօրութեանն զգչնն  
 Եւ զամանշաւոր մարգարտական զրահիւրն արքունի  
 Զվարեղականն զայն զարգարեալ հասակ:  
 Եւ վագրակերպ սաղաւարտան զգեղեցիկ գլուխն,  
 Զսոսեր ընդ մէջ  
 Եւ զօսկիակապ վահանն յահեակ ուսն ընկեցեալ,  
 Եւ զգեղարդն քաշամուխ յաց բազուկն առեալ՝  
 Աշտանակէր ի սկան երիվար,  
 Ախոյանայր ընդդէմ թշնամույն:

<sup>59</sup> Մովսես Կաղանկատվացի. Պատմութիւն Աղվանից, Թիֆլիս, 1912, էջ 311:

<sup>60</sup> Գ. Զարբենանալյան, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1897, էջ 411–412; Մ. Արելյան, Հայոց հին դրականության պատմություն, Ա, Երևան, 1944, էջ 399–403:

Յարձակէին ի միմեանս.

Տուր և առ գեղարդացն

Երբե ճայթին որոտմանց

Ելանէր յառաօտէ մինչև ցինն ժամ-

Գատապարտէր անհարին հակայն,

Եւ յազդողանայր քաշն Բարիկ

Եւ աճապարէր ի սուրն միասենի,

Որով անդէն սատակէր զմարդախոշոց գաղանն...<sup>61</sup>

Ինչպես երեսում է, պատմիլը մասամբ վերաշարադրելով  
այս տողերը, դրանք մերել է իր խոսքին, ստեղծելով մի նոր  
գործ՝ Աղվանից աշխարհի հայտը:

Վաշագան Երրորդի անվան հետ կապված Աղվանից աշ-  
խարհի գրականության ամենախոշոր հուշարձանը՝ նրա ա-  
նունով հայտնի կանոններն են:

Դրանք ևս պահպանված են և հայ մատենագրության  
առանձին աղբյուրներում, և Մովսես Կաղանկատվացու մոտ:  
Հովհան Օձնեցին իր կազմած «Կանոնագիրք Հայոց»-ից դուրս  
է թողել այս շարթը՝ հավանաբար ենելով այն հանգաման-  
քից, որ այն շատ որոշակի կերպով նվիրված է եղել Աղվա-  
նից երկրի իրադրություններին և շոշափել է կոնկրետ մի-  
ջոցառումներ: Դրան հակառակ, նա հատուկ տեղ է տվել նույն  
Վաշագան թագավորի անվան հետ կապված Արրաջամ Մա-  
միկոննեից հայսկոպոսի գրած կանոններին: Հետագայում,  
սակայն, անկախ վերոհիշյալ հանգամանքներից, «Կանոնա-  
գիրք Հայոց»-ի մեջ հն մտել նաև Վաշագան թագավորի կա-  
նոնները ել դա բնական է:

Եթե նախորդ հուշարձանները կապված էին Վաշագան  
Երրորդի, նրա վաշն նախորդի, Արսվաղենի անունների հետ,  
ապա այս գործը մինչ այդ եղած այն հազվագեց երկերից է,  
որ ցույց է տալիս հասարակական առավել լայն շրջաններ՝  
Աղվանքում: Նրա ստեղծման և հաստատման համար արքունի  
ամառանոցն են խմբվում Աղվանից երկրի բոլոր գալառնե-

րի անվանի ներկայացուցիչները: Ամեն ինչ հայկական էր և  
գիրը, և լեզուն, և անունների մեծ մասը, և ու. Գրքից կա-  
տարված մեջբերումները, և նույնիսկ հիշատակված ամսա-  
նունը կնշանակի, համախմբվածները խոսում և գրում էին  
մի ընդհանուր լեզուով, հայերենով: Դուցե այնտեղ կային նաև  
աղվանական բարբառներով խոսող բնակչության ներկայա-  
ցուցիչներ, բայց դա չի արտահայտվել կանոնադրության մեջ:  
Այս տեսակետից անհրաժեշտ ենք համարում ուշադրության  
ներկայացնել նիստի մասնակիցների ցանկը՝ իրենց իսկ շա-  
րադրած տողերով:

«Ես Կաշախան՝ Աղվանից արքայ,  
Եւ Ծովինադիշայ արքեպիսկոպոս Պարտաւայ,  
Մանաէ Կասպարայ եպիսկոպոս,  
Յունան Հաշուայ եպիսկոպոս,  
Անահեա և Սանակ և Ռուոյ քորեպիսկոպոս,  
Յովսէվ Կաղանկատունց երէց,  
Մարէ Պարտաւայ երէց,  
Քոմայ բագաւորի դրան երէց,  
Պողոս Խեցանայ երէց,  
Նմառն Ցառյ քորեպիսկոպոս,  
Մարէ Պարտանոյ երէց,  
Արիկազ Բերայ երէց,  
Ռուրար Այրմանուշաց երէց,  
Յովէլ և Պարպ և Միհէ և Յակոբ երիցունք,  
Եւ ազատ մարդիկ և նախավետ Արցախայ,  
Եւ Բակուր Կաղանկատունց նահապէտ,  
Եւ այլ բազում».

Որք միարան առաջի իմ եկին ի հանգստ ի հովոցի տեղուշա յԱղվանն,  
և կարգեցար այսպէս»<sup>62</sup>:

Պակաս ուշագրաւ չէ նաև սույն վավերաթղթի հաստատ-  
մանը վերաբերող հատվածը.

«Եւ զայս հրամանս մատանեցին Մուծիկ արքայի հրա-  
մանատար, Միհհաւրիկ հազարապետ, ազգապետք Մարութ,  
Տիրազգ, Ասպրակոս, Շամայ, Բակուր, Առատան, Արշէս,

«Եւ Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղվանից, Թիֆլիս, 1912,  
էջ 98:

61 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղվանից, Թիֆլիս, 1912,  
էջ 123—124:

Վարդան քաջ Գարդմանատէր, Խուրս, Գերմանոսան, Խոսդեան, Փիրոդ նահապետ, և ամենայն աղատք Աղուանից»<sup>63</sup>:

Եթե մեզ համար հեշտ է վերոհիշյալ անուններից կուահել, որ այնտեղ առկա են եղել մեծ թվով հայեր (որոշակի են, օրինակ, «Միքրաթ Այրմանուշաց երէց»-ը, «Մուժիկ արքայի հրամանատարը», «Միքրաթիկ հազարապետը», «Տիրապետ Կարելի է վստա՞ս ասել, որ «Վարդան քաջ Գարդմանատէր»-ը՝ Միքրանյան տոհմից էր»<sup>64</sup>; Մյուս անունների տակ, հայերից բացի, հնարավոր է ենթադրել նաև աղվանական և կովկասյան այլ ցեղերի ներկայացուցիչներ:

Այս կապակցությամբ քննության հատուկ առարկա պիտի դառնա Վաշագան Երրորդի ծավալած եկեղեցաշխնության, բրիստոնեության և դպրության հզորացման խնդիրը: Ինչպես տեսնում ենք, դա մի մեծ շարժում էր, որ իրականացվում էր երկրի թագավորի կողմից և նրա ամենաեռանդուն մասնակցությամբ: Տեսնում ենք նաև, որ այդ շարժման կենտրոնում գտնվել է Հայկականությունը: Համապետական նշանակության են բարձրացվում էջմիածնից տեղափոխված սրբությունները, որոնց մասին նշվեց վերևում: Առանձնահատուկ ուշադրություն է նվիրվում Աղվանքում սրբացված հայ առաջնորդի՝ Գրիգորիանի նշխարների հայտաբերմանն ու մեծարմանը:

Առանձնահատուկ ուշադրություն պիտի դարձնել համաժողովրդական այն թափորի նկարագրության վրա, որը վերաբերում է Հայկական վերոհիշյալ սրբությունների տեղափոխությանը.

«Եւ թագաւորական հանդերձիւք պատեալ զնշխարս նոցա բազում խնկօք և անուշահոտ ծաղկօք հանդերձ դնէր (իմա՝ Վաշագան Երրորդը) ի դեսպակի, զոր շիկակարմիր մորթով

63 Անդ, էջ 103:

64 Ուստի, այս փաստի հիման վրա, հնարավոր է մասնակի ճշտում մտցնել այդ տոհմի պատմության հնա կապված որոշ մութ կետերում (տե՛ս վերևում):

կազմեալ և սպիտակ կտաւով ի վերայ յարմարեալ, և ոսկի խաչ ի պատուականագոյն ականց քանդակեալ ի վերայ դեսպակին հարեալ, և ծիս սպիտակս կարմիր ներկուածով զադիսն կազմեալ, և զպուրս թագաւորական ծիոցն թագիւ պերճացուցիալ, և բազմութիւն պաշտօնէից արքունի դրանն յառաջոյ և ի վերջոյ դեսպակին խաչ ի ձեռն անհատ պաշտամամբք բարէբանէին զԱստուած: Եւ ինքն թագաւորն առ դիսպակովն երթայր և երգակից էր սպամոսաց օրհնութեան»<sup>65</sup>:

Չմոռանանք, որ հակառակ վատ եղանակներին և գարնային հեղեղաբեր անձրեններին, այդ մեծ թափորին մասնակցում էր նաև թագուհին՝ «զաշխարհատիկինն»...

Հայաշունչ այդ միջավայրում ամրանում էր ոչ միայն բրիստոնեական հավատքը, այլ ազգաբնակչության հայ մնալու բնական ու սրբազն կամքը: Վաշագան Երրորդի հայերին կանոնները՝ համերկրային կանոններ էին, որոնք միաժամանակ վկայում են Հոգևորականության պատկառելի քանակն այն օրերին: Միայն Վաշագանին վերագրված նորակառուց եկեղեցիների քանակը, ինչպես տեսանք, հավասար է եղել 365—366-ի: Անկախ որոշ շափազանցումներից, դա անուղղակիորեն խոսում է այն մասին, որ Աղվանքում այն ժամանակ եղել են անհամեմատ ավելի մեծ թվով եկեղեցիներ և հետեւապես գրական բազմաթիվ օջախներ, դպրոցներ:

Այդ օրերի Աղվանից երկրի գրականության մասին մոտավոր գաղափար է տալիս նույն թափորի նկարագրության այն հատվածը, ուր ասված է, թե թափորին մասնակցել են բոլոր Հոգևորականները՝ ավետարանով և խաչով:

«Անոյր այնուհետև թագաւորն զբազմութիւն ժողովոյն և հրաման տայր բոլոր եպիսկոպոսաց երիցամբք և սարկաւագործ անապատաւորոց և բոլոր ուխտի եկեղեցւոյ պաշտօնէիւք՝ իւրաքանչիւր անտարանաւ և խաչիւ և բազմութեամբ բուրվառաց խնկելոց ժխնելոց, և ինքն արքունի դրան երիցամբ և յոլովագոյն պաշտօնէիւք»<sup>66</sup>:

65 Անդ, էջ 77—78:

66 Անդ, էջ 77:

Ահա Աղվանից աշխարհի հայ գրականության մոտավոր պատկերը և Հայկական ոգու հզորացումը՝ Վաշագան Երրորդի օրերին:

Պարսկական բռնապետությունը, սակայն, քնած չէր: Ուստի շուտով այս ընթացքը պիտի խոշոնդուռվեր, վերացվեր Աղվանից Արշակունի թագավորությունը և փորձ արվեր այն՝ նոր կառավարողներով փոխարինելու:

ԳՐԱՎԱԴՐ ԵՐՐՈՐԴ, 7—8-ՐԴ ԴԱՐԵՐ

Յոթերորդ դարի սկզբին բռնկված եկեղեցական վեճերը թողել են մի շարք ուշագրավ թղթեր՝ կապված Հայ-Վրացական և Հայ-աղվանական եկեղեցիների տարածայնությունների հետ: Նրանց ուսումնասիրությունը նույնպես լույս է սփռում Արեւից աշխարհի մատենագրության պատմության Հարցի վրա: Դրանցից, տվյալ առումով, ամենագլխավորը հայտնի է «Պատասխանի ի հայոց» թրոյն Աղուանից, Վրանիսի Քերպողի» խորագրով<sup>1</sup>: Այն գրված է Հայոց Արքահամ կաթողիկոսի օրոք (607—615 թթ.) և ուղղված առ ռաէր Մխիթար Ամարանց եպիսկոպոս, և Սիմոն Մեծ Կողմանց, և թէ այլ եպիսկոպոսունք... և ազատ մարդիկ...»<sup>2</sup>:

Ինչպես երեսում է, Աղվանից եկեղեցու ներկայացուցիչներն առաքած են եղել դավանաբանական ընդարձակ թուղթ, որին և Հաջորդել է սույն պատասխանին: Աղվանական թղթի ընդօրինակությունը ցարդ ի հայտ չի եկել, սակայն նրա բովանդակած Հարցերի մասին բավարար տեղեկություն կա վերոհիշյալ պատասխանի մեջ: Այնպես է թվում, որ տեղ-տեղ էլ Հայկական եկեղեցու ներկայացուցիչները նույնպես ընդօրինակել են Աղվանական կողմին պատկանող թղթի առանձին Հատվածները, օրինակ, «Եւ դարձեալ որպէս ասեսդ, թէ զառ-

1 «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 196—211:

2 Անդ, էջ 196:

եալն ընդ եին է՝ արար. բատ այնմ... թէ բատ Պատղոսի ասելոյն Քրիստոսի անուն մարմնացեալ բանին առասացաւ, զով շինեաց իւր տուն ի միաւորութիւն: Արդ՝ զանց առնելով զնորաշարչար միտս բացայայտելոյ, զի իմաստնոցն յայտնի է, ի գրոց սրբոց վարդապետութիւնն փութասցուք<sup>3</sup>: Այստեղ մեր կողմից ընդդժված տողերը պիտի որ Աղվանից եկեղեցու դորժիւների (Հավանաբար՝ Ամարասի Մխիթար և Մհծ Կողմանցի Սիմոն հափսկոպոսների)<sup>4</sup> շարադրած թղթի բնագրային անփոփոխ մասը լինեն: Նույնը կարելի է ասել նաև հետեւյալ հատվածի՝ դարձալ մեր կողմից ընդդժված համարյա բոլոր տողերի վերաբերյալ: «Այսպէս գրեալ էր, թէ. Մե՛ զմարմանցն մեռանել ձեզ գրովք ցուցանեմք. թէ՝ Մարդ Յիսուս Քրիստոս. որ մեռան, մանաւանդ թէ յարուցեալ իսկ է, թէ զՅիսուս Քրիստոս զիսաշեցեալն խնդրէի, և թէ Խաչեցաւ ի մերմէ տկարութենէ, և թէ՝ Մարդ Յիսուս Քրիստոս, և այլ այսպիսիս, ուր ինքն Յիսուս Քրիստոս բատ խոնարհութեան մերոյ ցուցեալ ինի: Արդ, նախ զայս հարցանեմք, մինչ այդպէս զՈրդի, եր-

3 Անդ, էջ 199—200:

4 Այսպիս մտածելու հիմք է տալիս նախ և առաջ նամակի գիմողական մասը, որ հիշատակված են միայն նշված երկու եպիսկոպոսների անունները: Բացի դրանից, նամակի վերջին մասում, որը տպագրում չկա և առկա է №№ 2966, 3062 և այլ ձեռագրերում, կան այսպիսի տողեր. «Եւ քո, Մխիթար, որ կացեալ ես գլուխ Ամարասու եկեղեցւոյն, թէ Գրիգորի եղեալ է զհմունս սրբոց եկեղեցւոյն և զնուն հաւատ ունող և զաւակ բարիխօս առ Քրիստոս աստուած վասն մեզ ժառանգակից նմա եղանիւ...» և այն (Զեռ. № 2966, թիրթ 110թ): Այստեղից պարզ երեսում է, որ զիմանվոր հեղինակը՝ Ամարասի եկեղեցու առաջնորդ Մխիթար եպիսկոպոսն է եղել, որն իրեն համարէ կ զավակ և ժառանգակից Գրիգոր Լուսավորչի: Դա փաստարկվում է նաև «Պատմութիւն Աղոյանից» երկի օգնությամբ, որ նոյնպիս պահպանված է այդ վավերադիրը: «Պատասխանի թղթոյն Մխիթարյ Ամարասալ եպիսկոպոսի ի Հայոց խորագրով. այստեղ վերջին մասը լրիվ է (էջ 313—317):

Նշենք նաև, որ վերօնիշալ ձեռագրերում լրիվ է նաև Կոմիտասի թուղթը, որի սկիզբը՝ Վրթանես Թերթողի այդ թղթի վերջին մասի հետ՝ մի պահպանված «Գրք թղթոցի» համար հիմք ընդունված ձեռագրում (Խորագիրն է. «Թուիտ Կոմիտասաւ Հայոց կաթողիկոսի ի Պարս», ձեռ. № 2966, թիրթ 115թ):

կուս ասել սիրէք և զԵրորդութիւնն շորրորդութիւն ի մտաց ստեղծանէք»<sup>5</sup>:

Այսպիսով, ի դեմս այս ամբողջ թղթի, փաստորին մեր ձեռքին ունենք երկու վավերագիր՝ կապված Աղվանից աշխարհի դպրության հետ, երկուսն էլ գրված Հայերեն: Այլ կերպ էլ չէր կարող լինել, որովհետեւ գործի գլուխ կանգնած էին ոչ այլ ոք, քան Հայաբնակ Ամարասի և Մհծ Կողմանցի հոգեոր առաջնորդները: Բայց ուշագրավն այն է, որ նրանք ներկայացնում են ողջ Աղվանից հոգեորդը ուղղելու գործիներով, ազատներով և առանձին անհատներով: Ուստի և այդ նամակները ներկայացնում են Աղվանից աշխարհի այն ժամանակվա պաշտոնական լեզուն ու դպրությունը:

Այս կապակցությամբ հատուկ ուշագրություն են գրավում նույն օրերին, նույնպիսի դպավանաբանական ցնցող վեճերի պատճառով դեպի Վրաստան առաքված և այնտեղից ստացված նամակները: Վեճի առարկան քաղկեդոնական գաղափարների ներթափանցումն էր Հայաստան, Վրաստան և Աղվանից, որի դեմ և համառորեն պայքարում էր հայ եկեղեցին ոչ միայն իր ներսում, այլև նշված երկրներում, որովհետեւ նրանց եկեղեցիները գտնվում էին հայ եկեղեցու գերիշխանության սահմաններում:

Ուշագիր նայելով բոլոր թղթերը, տեսնում ենք, որ դպավանաբանական նույն վեճը Վրաստանում քախվում է երկու Հարցի. ա) դպավանանքի, բ) լիզլի, մինչդեռ Աղվանիքում լոկ մեկ հարցի՝ դպավանանքի: Դա վերին աստիճանի նուրբ խնդիր է կարու բացատրության:

Նախ բերենք մի քանի օրինակ Հայ-վրացական եկեղեցիների վեճին վերաբերող թղթերից՝ լեզվի կապակցությամբ:

Վրաստանի Ցուրտավ գավառից Հայակածված հայ առաջնորդ Մովսես հափսկոպոսը գրում է. «Դէպ եղեւ ինձ ի տիս տղայութեան հասանել յիպիսկոպոսարանն Ցուրտաւայ՝ որոյ եկեղեցւոյ բատ աւրինաց աշակերտ իսկ էի. որ սնայ և ուսայ դպրու-

5 «Գրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 208:

թիւմ հայերէն.և վրացերէն»<sup>6</sup>: Նույն տեղում հաղինակը չիշում է, որ «առայժմս գրեցի և ես ի հայ լեզու ցիշխանութիւնն Յուրատաւայ եկեղեցւոյն»<sup>7</sup>:

Սույն Մովսես եպիսկոպոսի թղթակից Վրթանես Քերթողը՝ նրա խորհրդով Վրաստան առաքած իր նամակի մասին խոսելիս գրում է. «Զթուղթն զոր խնդրեցեր ի հայ լեզուսն, արարի»<sup>8</sup>:

Մովսես եպիսկոպոսի՝ Յուրտավ առաքած թղթի մեջ ասված է. «հայալեզու իշխանութեանդ Յուրտաւայ եկեղեցւոյ»<sup>9</sup>:

Այդ վեճին միջամտելով, հայոց Աբրահամ կաթողիկոսը (607—615 թթ.) բողոքելով վրաց Կյուրիոն կաթողիկոսին, դրում է. «զպաշտանն հայերէն սրբոյ Շուշանկան զկարգաւորհայն՝ լսեմ թէ ի բաց փոխեցէք: Մեզ՝ մահու շափ և ես շարագոյն թուեցաւ գործգ այդով»<sup>10</sup>:

Վրաց Կյուրիոն կաթողիկոսը պատասխանում է. այժմ «Յուրտաւայ եպիսկոպոսն վասն ուղղափառութեան հալածեալ է, և զպաշտանն հայերէն ի բաց փոխեալ է. մեր պաշտանն չէ փոխեալ: Բայց զի որ եպիսկոպոսն եղէ՝ Վրացի ուսումն գիտէ և հայ նոյնպէս, և երկուումք դպրութեամբ պաշտանն կատարի»<sup>11</sup>:

Այդ կապակցությամբ Մովսես եպիսկոպոսը տալիս է Հետեյալ բացատրությունը. «զշեպիսկոպոսն նեստորական զոր արարին, դպրութիմ զի և վրացերէն չգիտէ, որպէս արժան է, թող թէ հայերէն»<sup>12</sup>:

Գործին միջամտող Ամբատ Վրկանա մարզպանը, դիմելով Կյուրիոն կաթողիկոսին, Հանդիմանում է. «Պաշտանդ և կարգդ հայերէն ի ձեր միջի էր, և փոխելդ թշնամութիւն ի մէջ արկանէք»<sup>13</sup>:

6 Անդ, էջ 110:

7 Անդ, էջ 111:

8 Անդ, էջ 112:

9 Անդ, էջ 113:

10 Անդ, էջ 164:

11 Անդ, էջ 166:

12 Անդ, էջ 173:

13 Անդ, էջ 169:

Այս և նման բազմաթիվ այլ նշումներից պարզ երևում է վիճող կողմերի ոչ միայն դավանաբանական, այլև ազգային կերպարը: Համառ պայմանը է զնում հայերենի և վրացերենի միջի, հայկական ծեսի և վրացականի: Այլ կերպ ասած, թէ՝ հայկական և թէ՝ վրացական պաշտոնական եկեղեցու լեզուն միշտ ընդգծվում է որպես կարևորագույն գործոն: Նման երեւութ, սակայն, Աղվանից աշխարհին վերաբերող ոչ այլ վեճերին պատկանող թղթերում, և ոչ էլ որևէ ուրիշ վագերագույն երեւան չի գալիս: Ինչո՞ւ:

Պատասխանը պարզ է: Նման հիշատակումներ չկան, որովհետև Աղվանից աշխարհի եկեղեցու պաշտոնական լեզուն եղել է հայերենը: Գուցի սկզբնական շրջանում որոշ դեպքերում նման հարց շոշափված լինի նաև բռն Աղվանքում, սակայն, քննվող ժամանակաշրջանում և մանավանդ դրանից հետո այդ մասին խոսք անգամ լինել չի կարող աղվանական ցեղերի թույցման պատճառուղի<sup>14</sup>:

Այս խնդիրն առավել անառարկելի կդառնա ստորև:

\* \* \*

Մինչեւառի պեղումներից հայտնաբերված մեծարժեք նյութերի մեջ իր հատուկ տեղն ունի քրիստոնեական տաճարի հայերեն արձանագրությունը: Այդ խնդրով շատերն են հետաքրքրվել, ոմանք գտնում են, որ տաճարն ու իր արձանագրությունները պատկանում են 5—6-րդ դարերին, ոմանք՝ 8—9-րդ,

14 Մինք, նպատակ շոնենայով տարածել լեզվի հարցամայն մեջընթած փաստերի քննության ճանապարհով, կկամենայինք առնասարակ արձանագրել այդ երևույթի կարևորությունը: Հիրավի, ամեն անգամ, վրաց թուրքեկեղեցու կապակցությամբ նման փաստեր կարելի է գտնել, մինչդեռ աղվանականի՝ ոչ Այս առումով հետաքրքրական է հայ-վրաց-աղվանից եկեղեցիների հետ-կապված այն կորած վագերաթղթի պատմությունը, որ հիշում է Արքահամ կաթողիկոսը (Անդ, էջ 180—184): Այստեղ էլ խոսք կա այդ վագերագրի՝ «հայերէն գրով» և «զրով ձեւով» (այսինքն, վրացերեն) գրված լինելու մասին, իսկ աղվաներենի մասին՝ ոչ:

իսկ Ա. Աբրահամյանը՝ 7-րդ դարին, ավելի ճիշտ, «640» թվականին<sup>15</sup>: Վերջինս նույնիսկ երկու անգամ փորձ է արիլ պահպանված և կորած տառերի հիման վրա ենթադրաբար վերակազմել արձանագրության ընագիրը: Առաջին անգամ նա, որոշ պայմանականությամբ, առաջարկել է հետևյալ վերծանությունը: «Ի ժամանակի երեսներորդի հինգերորդի ամին Երակի և Ներսեն շինեցի յանուն սրբոյ Եղիշայի»<sup>16</sup>:

Երկրորդ անգամ, վերանայելով իր վերոհիշյալ ընթերցումը, Ա. Աբրահամյանն առաջարկում է հետևյալ վերծանությունը: «Ի թուականության երեսներորդի ամիոյն Երակի... շինեցաւ քաւարան... սրբոյն Եղիշեայի»<sup>17</sup>:

Ինչպիս հայտնի է, նույն տաճարում գտնվեց նաև աղվաներեն տառերով փորագրված արձանագրություն, որի վերծանման ուղղությամբ ևս փորձ է կատարված Ա. Աբրահամյանի կողմից<sup>18</sup>:

Անկախ այդ վերծանությունների ընդունելի կամ մերժելի լինելուց, այստեղ գործ ունենք վերին աստիճանի մեծարժեք վկայությունների հետ: Ի վերջո, գտնված են շոշափելի փաստեր, որոնք վկայում են Հայերենի և աղվաներենի<sup>19</sup> համատեղ դորժածության մասին՝ Աղվանից աշխարհում:

<sup>15</sup> Ա. Գ. Աբրամյան, Դեшиֆրուկա համար Կավազական աշխարհում, Երևան, 1964, стр. 48.

<sup>16</sup> «Հյեմիածին», 1956, № 4—5, էջ 72:

<sup>17</sup> Ա. Գ. Աբրամյան, Դեшиֆրուկա համար Կավազական աշխարհում, Երևան, 1964, стр. 76. Զարմանաւի է, որ նույն գրքում կա նուև մի երրորդ վերծանություն՝ տարբեր նաև սրանից: «Ի ժամանակի երեսներորդի Երակիի լքարեպաշտ քարգաւորի... կառուցաւ քաւարան յանուն Սբ Եղիշայի» (էջ 19):

<sup>18</sup> Անդ, էջ 39—50:

<sup>19</sup> Մենք այս բարը («աղվաներեն») գործ ենք ածում որոշ պայմանականությամբ, որովհետ աղվանից այրութենք զարգացների լեզվի հիման վրա էր ստեղծված, իսկ աղվանական ոչ բոլոր ցեղերն էին գարգարներ: Եվ եթե Մեսրոպ Մաշտոցը և ուրիշներ աղվանից գրերի համար նպատակահարմար են գտել գարգարերենը, կնշանակի եղնել են նաև աղվանական այլ ցեղերի լեզուներ:

Այս փաստը միաժամանակ ցույց է տալիս, թե որքան սերտորեն էին միմյանց հետ կապված նոր Աղվանքի հայ և աղվան բնակիչները, որ միևնույն տաճարի արձանագրությունները փորագրվում էին երկու հատվածների մայրենի գրերով:

\* \* \*

Առհասարակ Աղվանից աշխարհի պետական ու իշխող լեզվի, ինչպես նաև համապատասխան գրականության ուսումնասիրության համար վիթխարի նյութ ունենք ի դեմս Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից» երկի: Եղել են արդյոք նրանից առաջ Աղվանից երկրի պատմությունը շարագրող այլ հեղինակներ, չգիտենք: Անհավանական չէ, որ երկրի թագավորները, իշխանները, նահապետները գրել տված լինենին իրենց տոռմային պատմության գրվածները, շարագրված լինենին Աղվանից եկեղեցու և քաղաքական առօրյայի պատմության որոշ էջերը, փորձեր արված լինենին նույնիսկ նրանց ամբողջացման ուղղությամբ և այն: Սակայն այդ բոլորը մնում են հնթագրությունների սահմաններում, որոնք որոշ առումով միայն գտնում են մասնակի հիմնավորմանը: Այսպիսս Մովսես Կաղանկատվացու մոտ խոսք կա այրված, ոչնչացված գրականության վերաբերյալ, նրա օգտագործած որոշ նյութերը՝ ենթագրում են համապատասխան կորած սկզբնագրություններ, որոնց մի մասը կապվում է Վիրո կաթողիկոսի անվան հետ:

Բացի զրանից, Ա. Աբրահամյանը փորձում է աղվանական համարված այդ արձանագրությունները վերծանել ուսիներենով: Այսպիսով միախառնում են աղվաներեն համբուգանուր հասկացողությունը, զարգացնենք և ուսիներենը: Ավելին, ինչպիս Հայունի և, ուսիները, հին աղրյունների համաձայն, ոչ թե աղվաններ են, այլ առանձին էթնիկական միավոր: Օրինակ, Ստրաբոնց միշտ առանձին է հիշատակում ուսիներին՝ աղվանների նման, նրանց և ուրիշների կողքին Մյուս կողմից էլ շմուռանանք, որ քննվող ժամանակի և ավելի վաղ ժամանակների համար ուսիների մայրենի լեզուն, մասնակի բաշառությամբ, արգելն հայերենն էր:

Դրանք նուրբ ու կարևոր հանգամանքներ են, որոնց անտեսումը կարող է մեծ շփոթությունների առիթ հանդիսանալ:

Այսուամենայնիվ, փաստը այն է, որ մեզ հայտնի մատենագրության մեջ Մովսես Կաղանկատվացին է, որ ճանաչվում է որպես Աղվանից երկրի առաջին պատմիչ: Եվ դա, մեր կարծիքով, իր բուն նշանակությամբ ճիշտ է, որովհետև, ինչպես երևում է, նրանից առաջ համանման, համընդհանուր ընդգրրկման պատմիչ չէր էլ կարող հանդես գալ մի շարք պատճառներով: Այդպիսինիներից հիշենք, օրինակ, համապղանական ընդհանուր միասնական լեզվի, ինչպես և զրի ու գրականության բացակայությունը՝ վաղ ժամանակների համար: Այնուհետև, գրերի դյուտից հետո, Աղվանիք բազմազգ բնակչության նոր կազմը՝ իր էթնիկական, քաղաքական և զավանաբանական կողմերով դեռևս որոշ միասնության չէր հասել: Հայկական տարրի ուժեղ աղդեցությունը այնտեղ, չնայած իրեն զգացնել տվեց 387-ից անմիջապես հետո, հայկական զավառների կցումով, ինչպես նաև քրիստոնեական կրոնի տարածման հետևանքով, սակայն նրա դերը հզորացավ հատկապես դպրության հիմնադրմամբ: 4—6-րդ դարերը, ըստ երեսութին, ներքին խոշոր տեղաշարժերի, ընդհանուր լեզու գտնելու, ներքին համամբվածության նորորակ երևույթների դարեր էին, որոնք 7-րդ դարում արդեն պայմանավորում էին առավել մեծ առաջադիմության, պետական համախմբվածության երևան դարը: Եթե պարսկական բռնակալությունը սկսում ուժեղ էր, ապա այն, այդ դարում, զգալիորեն թուլացավ և ի վերջո դուրս մըրգեց: Միհրանյան տոհմը, եթե Աղվանիք էր մտել որպես պարսկական տոհմ՝ իր կրոնով ու լեզվով, քաղաքական հատուկ ծրագրով, ապա աստիճանաբար տեղի տվեց և՛ էթնիկական, և՛ կրոնական, ինչպես նաև պարսկական քաղաքականություն վարելու առումով: Շատ շանցած, նրանք տեղական կենսունակ միջավայրում կորցրին այնպիսի կարեռ գործոնը, ինչպիսին է կրոնը, ընդունելով քրիստոնեություն: Այնուհետև, խնամիքական կապերը տեղական բնակչության հետ, վերջիններիս էթնիկական անկուտրելի դիմադրությունը, հայկական միջավայրի ուժեղացումը, հայ գրի և գրականության իշխող դիրքը— Միհրանյաններին քայլայեցին որպես պարսիկների՝ դնելով

հայացման ուղու վրա: Այդ ամենին զուգահեռ աղվանական ցեղախմբերն էլ ընկան նոր աղդեցությունների ոլորտը. և եթի ինքնուրույն պետության պայմաններում նրանք կարող էին համախմբվել աղվանական որևէ ցեղախմբի շուրջ, ապա այս նոր պայմաններում, հայկական տարրի և ներքին աղդեցության մեջ, նրանք համախմբվեցին վերջինիս շուրջը: Եվ դա՝ այն կինսական պահանջով, որ անհրաժեշտ էր ուղղվանքը հասկացողության գոյատեման համար: Այլապես այն պիտի բայրայլեր, զատվեր, միանար շրջապատի պետություններին: Աղվանից աշխարհի բնակչությունը, ինչպես երեսում է, գնացել է «Աղվանք» հասկացողության պահանջման ճանապարհով: Ուստի և այն ամբողջապես ներգրավվել է միասնականության, համախմբվածության և ներքին ամրապնդման գաղափարների շուրջը: Եվ անա այդ երեսութիւնը զարգացման այն աստիճանն է հանդիսանում 7-րդ դարը, որը, քաղաքական առումով, իր դրսնորումը գտավ ի դեմս Աղվանից աշխարհի Զիվանշիրի իշխանի և նրա օրոք տեղի ունեցած իրադարձությունների: Հենց այս ֆոնի վրա է, որ հասկանալի է դառնում նաև լուսնիս Կաղանկատվացին: Վերջինս, հայվանաբար Զիվանշիրի պալատական դպիրներից ու գործիչներից էր՝ կապված նաև երկրի հոգևոր կենտրոնի հետ: Նա մի առիթով նույնիսկ Զիվանշիրին համարում է իր տերը: Պարզ է, որ նաև այդ իշխանի գիտությամբ էր, որ նա գրեց Աղվանից աշխարհի պատմությունը՝ այնքան մեծ տեղ տալով Զիվանշիրի կյանքին, որոքին ու փառաբանությանը: Եվ այդ բոլոր՝ հայոց լեզվով, որը հեղինակի մայրենի լեզուն լինելով, նաև Աղվանից արքունիքի ու Զիվանշիրի լեզուն էր: Զմոռանանք նշել, որ Զիվանշիրի կինն էլ հայ էր՝ Սյունիքից: Մովսես Կաղանկատվացին չի մոռանում հիշատակել, որ նրան կին էին առաջարկում Վրաստանի հայերը, բայց նա ընտրեց Սյունիքից: «Յայսուիկ նայելով նախարարցն Հայոց ի վրաց աշխարհին՝ խորհէին ի ծննդոց իրեանց առնուլ նմա կին: իսկ նա յԱրուեծան տոհմէն առնոյր կին՝ զգուստը իշխանին Սիսական աշխարհին»<sup>20</sup>: Բւ-

20 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912,  
էջ 204:

շագրավ է նաև այն, որ Զիվանշիրի համար կին է որոնվել լոկ հայկական միջավայրում: Եվ դա բնական է, որովհետև նրա կրոնը, լեզուն ու միջավայրը հայկական էր: Ավելին, պարսիկները ցանկանում են նրան ամուսնացնել պարսկութու հետ, բայց «նա վասն լկամելոյ զոր յանօրինաց առնել կին՝ դիմեալ գայր յերկիր իր»<sup>21</sup>: Այս նոր իրադրությունները վաղուց էին մարել նրա պարսկական ծագման հուշը, մանավանդ, որ այդ օրերին նա ամբողջ ուժով ու հանճարով մարտնչում էր պարսիկ բարբարս բնատիրության դեմ, ազատելով երկիրը նրանց լժից: Այս առումով գրական թանկագին գոհար է Զիվանշիրի աղոթքը՝ իր իսկ կառուցած եկեղեցում — «ի Գարդման գաւառ».

«Տէր իմ Տէր՝ որովհետև եղեր անյիշաշար ծառայի քո բաղմամեղի, և պարզեցեր ինձ զիւալն, զորմէ զքեզ բնեուեալ կախեցեր յերկրի, առաքիա ի տաճարս յայս զշնորհս սուրբ Հոգուոյդ... Եւ եթէ ամենայն աշխարհս Աղուանից միարան զայցեն փառաւորել զանուն քո ի տանս յայսմիկ՝ աստուածընկալ զօրութեամբ խաչիս պղխեցիս զդրումս թշնամեացն և խափանեցիս զմարտիցն հէնս, զօտս քաղցրաբերս հրամայեցիս հեղուկ ի վերայ երկրիս, զի լիապատար բերմամբ որթ և թղենի և ամենայն բոյսք անդաստանաց պտղաւէտ լիցին, և յըղձալի երկրիս անվրդով հանգիցեն: Իսկ գջուանշիրս, որ ծանրաբեռնեալ եմ յանցանօք և ի քո Տէր, ամենազօր նշանիս օգնականութիւն... մի դարձուցաներ... Եւ զտունս զոր շինեցի՝ արա զսա հովանի զիմոյ յօր մարտի. զլարուցեալսն ի վերայ իմ՝ ներքոյ իմ արասցես... Իսկ համաշխարհական աւուրն յարութեան հասելոյ... այց արասցես ինձ և զուգակցի իմոյ Խոսրովի անվանութիւնը նախահարց իմոց, մանաւանդ ծաղկեալ ալեօր հօր իմոյ Վարազ Գրիգորի և մօր իմոյ Գորիդիստոյ և եղբարց իմոց Վարազ Գրիգորի և Յեղուտ Խոսրովու և զաւակաց իմոց...»<sup>22</sup>:

Ահա Զիվանշիրի խոսակցական լեզուն:

<sup>21</sup> Անդ, էջ 202:

<sup>22</sup> Անդ, էջ 215—217:

Ի՞նքն է շարադրել այս աղոթքը, թե նրա անունից ու նրա համար մի ուրիշը, զա էական չէ, էական այն է, որ այն պատմական վավերաթուղթ է, զրված է հայերեն, և Զիվանշիրը կարգացել կամ արտասանել է այն իր կառուցած եկեղեցու բացման պատարագին: Իր հայրենասիրական, ընտանեսիրական և կրոնասիրական մրժումներից բացի, Զիվանշիրն այդ աղոթքում զետեղել է նաև քաղաքական տուրքը, նշելով իր հնթակայությունը մի նոր տիրակալության՝ հունական (իմա՞րյուղանդական) իշխանությանը.

«Տէր իմ Տէր, որ պահեցեր զիս ի մանկութենէ իմմէ, ի շրջապատեալ փորձութեանց փրկեցեր, յաճախեցեր ինձ ոսկի և արծաթ, ծառայս և աղախնեայս, և ետուր ինձ իշխանութեամբս իմով արքայաբար առնել տհաշութիւն, ընկալ և այժմ զծառայս քո ի բարի, և ի վերայ ծննդոց իմոց հեղ զհանճար գիտութեան՝ զնալ ի ճանապարհս քո և հենազանդ կալ առ ի քէն պակելոյ կայսերն Յունաց աներկայաբար»<sup>23</sup>:

Այս առումով, սույն աղոթքը ու միայն անձնական մտուրումների ու զգացումների արգասիք է, այլև պետական-քաղաքական հնագանդության վավերագիր՝ իր և իր զավակների անունից: Հասկանալի է, որ դա արտահայտություն էր նաև հենց այդ բռնակալության հարկող պահանջի: Այս հանգամանքն ավելի քան վավերական է դարձնում սույն աղոթքի պատմական ձևմարտություն լինելը:

Եվ «բազմիմաստն Զիւանշիր»-ը, որ ինքն էր «ընդ զօրավարին Հայոց» խորհրդակցելով և նրան էլ հորդորելով ընդունել «Հնագանդութիւն կայսերն Հոռոմոց»<sup>24</sup>, բատ երեսոյթին մհծ հույսեր էր կապում նրանց հետ, մանավանդ, որպես քրիստոնյաների: Վերջիններս էլ, ինչպես բոլոր խորամանկ տիրողները, սկզբնական շրջանում օրոշ աղատություն տվին Աղվանից աշխարհին, որպեսզի սիրաշահելով ամրանային և ապա ծավալեին իրենց քաղաքական քայլքայիշ աշխատանքները: Ահա այս կարծ և սկզբնական համարվող շրջանում, երկիրը թևա-

<sup>23</sup> Անդ, էջ 216:

<sup>24</sup> Անդ, էջ 206—207:

կոխում է ազգային զարթոնքի մի շրջան, զարկ տալով քրիստոնեության ավանդական դավանանքին, համապատասխան դրականությանն ու հայաշունչ առօրյային, մինչև որ վրա կհասնեին հերթական սահմանափակումներն ու հալածանքը: Փաստերը ցույց են տալիս, որ Զիվանշիրի ժամանակ վերարձարձված հայկական ոգին գնում էր անմիջապես շարունակելու վաշագան Երրորդի ավանդները, որոնք բնդհատվել էին նրա (Զիվանշիրի) նախորդների կողմից: Ավելին, ժամանակի ընթացքում կուտակված և շուրջ մեկ դար զավված ազատաժրական տրամադրությունները ավելի քան համարական՝ ստացել: Զիվանշիրը մերգել էր հայերին, և նրա հզորությունը՝ վերջիններիս զարթոնքն ու հզորությունն էր:

Թե ինչպիսին էր այդ զարթոնքի կարճատև շրջանը, դա շատ գումագեղ արտացոլում է գտել Մովսես Կաղանկատվացու երկում: Զկամենալով մտնել այդ երևույթի մանրամասնությունների մեջ, այսուեղ կահմանափակվենք մի քանի հարցերով միայն, որոնք կապվում են մեր ներկա հետաքրքրությունների հետ: Այդ հարցերի բնդհանուր ոգին եթի մի զարձվածքով բնութագրելու լինենք, ապա կարող ենք անվանել Մաշտոցյան գաղափարների վերածնունդ՝ Աղվանից աշխարհում:

Հիրավի, պարսկական՝ բռնատիրությունից հետո, Զիվանշիրի պետության նոր փուլում, ասես ամրող Աղվանքով մեկ, հատկապես նրա կենտրոնական՝ Հայկական մասում, դրոշի վրա է բարձրանում Մեսրոպ Մաշտոցի սկսած գործի ծավալման ու հզորացման գաղափարը: Այս առումով ուշագրավ են հայացն իսրայել կրոնավորի ծրագրային տեսիլները, որոնք նապատակ ունեին համազգային նոր մակարդակի բարձրացնել քրիստոնեական եկեղեցու և հայոց գրի ու գրականության դերը: Ըստ այդմ էլ, Մովսես Կաղանկատվացին մեծ տեղ է հատկացնում այդ ամենին, մեր առջև բացելով պատմական այն օրերի մոտավոր պատկերը:

Իսրայել կրոնավորը իր երկու տեսիլներով վեր է հանում երկու խոշոր սրբավայր: մեկը՝ Արցախում, իսկ մյուսը՝ Ռոտ-

քում, կապված Մեսրոպ Մաշտոցի, նրա աշակերտների, Եքուսաղիմյան մասունքների և հայկական գրերի հետ: Գրանք ցընցում են ոչ միայն երկրի բնակչության ու հոգևորականությանը, այլև երկրի տերերին, իշխաններին, ընդհուպ մինչև Զիվանշիր իշխանն ու կաթողիկոսը: Համաժողովրդական և համապետական ցնծության նոր հեղեղ է հորդում երկրով մեկ՝ կապված հայաշունչ այդ սրբությունների հետ: Եատ շանցած, իսրայելի հոչակը զուրս է բերում նրան երկրից, տանում գեպի հոների աշխարհը՝ որպես նոր լուսավորչի, հավատքի և գպրության նոր տարածողի<sup>25</sup>:

Բայց մենք փոքր ինչ մոտիկից ծանոթանանք նրա տեսմիներին: Դրանցից առաջինի մասին Մովսես Կաղանկատվացին խոսում է հետևյալ խորագրի տակ. «Տեսիլ միաձնացելոյ առն աստուծոյ Խորայելի ի վերայ Մաշտոցի սրբոյ և նահատակարեան աշակերտացն, և զիստ սրբոյ խաչին, որ ի Գիսն էր»<sup>26</sup>: Այսպես էր վերածնվում և հզորանում Մաշտոցյան ոգին. այս խորագիրը յուրովի հենց իր ժամանակի նշանաբանն էր, նրա պայքարի ծրագրային պատղամը: Տեսիլքի հիմքում ընկած սրբավայրը Արցախումն է՝ ի «գաւառն Մեծկողմանց», «ի նըշանաւոր պրակին ի Խոնարերձ տեղուց», ուր «կայր մատուռն մի քարեղէն, խեցեղէն կերպաւորեալ և խաշանիշ զարդու յարմարեալ»: Այստեղ են խմբվում «արք պատուականք, քորեպիսկոպոսնք, երիցունք, սարկաւագունք, հարիւրաւորաց գաւառապետը, զիստաւորը և մեծամեծ զործակալը և բազմութիւն ժողովրդոց արանց և կանանց»: Կարգացվում է քարոզ, պատվիրվում է «եռօրինաց պահը և աղօթք», պեղվում է սրբավայրի սեղանը, ուր գտնվում են սրբազն մասունքներ՝ իսկ նրանց տուփի վրա՝ «գրեալ ասուերէն և հայերէն գրով»<sup>27</sup>: Տեղի է ու-

<sup>25</sup> Պատմիչը վկայում է, որ սույն Խորայելը կրթություն է ստացել Վաղարշապատում, «զվարկեցուցն լիշտակել ի միտո նորա զհամբակական տիւք զտեսին ցուցակութեան նմա ի սուրբ եկեղեցւոցն ի Վաղարշապատ քարի» (անդ, էջ 265):

<sup>26</sup> Անդ, էջ 231:

<sup>27</sup> Անդ, էջ 236:

նենում համաժողովրդական ցնծություն, ապա այդ ամենի մասին զրում են առ «Տէր Զիւանշիր՝ Ազուանից իշխան, ամենայն նախարարօք համանգամայն...»։ Պալատ են գալիս երկրի երեւելիները, կաթողիկոսը և պահանջում մասունքը բերել պայտ, «զի և մեք երկրոպագեսցովք երանաւէտ համբուրի հանդերձ տիեզերական ժողովով»<sup>28</sup>։ Պահանջն իսկովն կատարվում է, պալատ է բերվում Մաշտոցի աշակերտների թաղած երուսաղմայն սրբազն մասունքը՝ ասորի և հայ զրով, և պետական-պաշտոնական հանդիսավոր արարողությամբ նաև վաշվում որպես երկրոպագելի սրբություն՝ զետեղվելով Մհծկունեից երկրի «Գլխոյ վանք»-ում։

Այստեղ ոչ միայն քրիստոնեական սրբավայրերին նոր ուժ տալու հանդամանքի հետ գործ ունենք, այլև Մաշտոցյան այբուբենի։ Պեղվում է «Աղվանից Հողը», գտնվում է քրիստոնեական պաշտոնական օտար գրից՝ ասորերենից բացի, նաև տեղականը, և այն նորից հայ զիրեն է։ Եթե պատմական է այդ դեպքը, ապա կարող ենք ասել, որ հենց սկզբից էլ երուսաղման Աղվանք ձգվող հոգեւոր կապն իրազործվում էր հայ զրով և լեզվով՝ դեռևս 5-րդ դարից սկսած, որովհետև այդ մասունքը երուսաղմայից 5-րդ դարում էին բերել։ Իսկ եթե պատմական իրողություն շէր նշված պեղումից հայտարերված սրբությունը, այլ՝ այն օրերին ստեղծված «մասունք» (որն անհավանական է), ապա նորից համոզվում ենք, որ տեղական զիրն ու լեզուն, որ մասունքի հետ միասին երկրոպագվում է թագավորի և կաթողիկոսի կողմից, հայկականն է։ Հասկանալի է, որ երկու դեպքումն էլ նպատակը և արդյունքը նույնն է։ Հայ զրի, քրիստոնեական մասունքի և Մաշտոցի անվան պաշտոնական սրբացումը եվ դա՝ երկրի քաղաքական ու հոգեւոր կենտրոնների միջոցով։

Իսրայելի հաջորդ հայտնագործությունը՝ Արցախից տեղափխվում է հայկական մյուս մեծ քնաշխարհը՝ Ուտիք, ուր պահված էր «զփափագելի խաչն՝ զժածկեալն սրբոյն Մաշտոցի ի Գիս անուանեալ զիւղն, որ յՈւտի գաւառի»<sup>29</sup>։ Բազմամբոխ

<sup>28</sup> Անդ, էջ 243։

<sup>29</sup> Անդ, էջ 246։

հասարակությունը նորից ցնծության մեջ է, որովհետև ըստ տեսիլքի, փորված տեղում «յանկարծակի երևէր տապան մի արծաթի ժանդապագոյն հնացեալ, որ ունէր առհասարակ հայ, հոռոմ և ասորի զիր և ցուցանէր ի նմա գոլ զմասն կենդանար-մատ փայտին»<sup>30</sup>։

Լուրը նորից հասնում է արքունիք. «Եւ նոյն ժաման կամաւ իշխանին Զիւանշիրի զիր հրամանական առ Խարայէլ առաքէ՝ փութանակի զշքնաղագիւտ խաչն Քրիստոսի առ նա հասուցաներ»<sup>31</sup>, թիրվում է զյուտը. Զիվանշիրը, կաթողիկոսը և մյուս բոլոր հավաքվածները նայում, ստուգում և համոզվում են, «որ սրբոյ Մաշտոցի իր իսկ ձեռացն լեալ էր, որով զարձուցանէթ զաշխարհն Ազուանից ի կոոցն մոլորութիւնէ»։ Այս մասունքն էլ պետական-պաշտոնական բոլոր արարողություններով դասվում է աղվանական առաջնակարգ սրբությունների շարքը։

Այստեղ էլ, ինչպես տեսնում ենք, պեղումներից գտնվում են նաև արձանագրություններ, ուր քրիստոնեական պաշտոնական լեզուներից՝ հունարենից ու ասորերենից առաջ երկրի, տեղական զիրն ու լեզուն է՝ հայկականը. Պատմիլը մեջ է բերում նաև Արցախում գտնված մասունքի հայերեն մակագրությունը.

«Երուաղիմեան մասնաւորեալ նշխարք սրբոց են»<sup>32</sup>։

Կամ՝ «Երուաղիմեան են մասունք սրբութեանց տեառն»։

Թէ ինչպես է պատահել, որ նույն հեղինակի մոտ նույն մակագրությունը, ընդամենը մի քանի էջ հետո, այլ ձեսկերպում է ստացել, շենք կարող ասել։ Կարող ենք միայն կատարել որոշ ենթագրություններ։ Արցախ, ինչպես նշվեց, այդ նույն մակագրությունը եղել է և ասորերեն, և՝ հայերեն։ Արդզո՞ք դրանցից մեկը ասորերենի թարգմանությունը չէ։ Եթե ոչ, ապա մնում է ենթադրել, որ դրանցից մեկը ուղղակի, բառացի մեջքերումն է, իսկ մյուսը՝ նրա բովանդակության ազատ կրկնությունը՝ խոսքի մեջ։ Գուցե և գրչական անզգությունների հետքեր էլ կան այդտեղ։ Փաստը, սակայն, մնում է

<sup>30</sup> Անդ, էջ 247։

<sup>31</sup> Անդ, էջ 251։

<sup>32</sup> Անդ, էջ 237։

ժամանութեաւ կազմակերպությունները մակագրված են հղել ոչ թե գարգարերեն-աղվաներեն, այլ Հայերեն:

Ինչպիս երևում է, Զիվանշիրի ժամանակը միանգամայն բարենպատ է եղել, որպեսզի Խորայիլը հոգեոր և կրթական լայն գործունեություն ծավալեր նաև Աղվանշից դուրս՝ հյուսացին մյուս ցեղերի, Հատկապես Հոների մոտ:

Զիվանշիրը իր առաջին կող մահից հետո, Հավանաբար, քաղաքական նպատակներով, փեսայցել էր Հոներին: Բարիդրացիական այդ կապը մի պահ քայլքայլեց Զիվանշիրի սպանությամբ, որը, սակայն, շուտով վերականգնվեց, և Զիվանշիրի հաջորդի՝ Վարազ Տրդատի առաջին օրերին Խորայիլը, որ արդեն եղիսկոպոս էր, մեկնեց Հոների երկիրը: Այդտեղ նա, ըստ պատմիչի, մեծ հաջողություն ունեցավ՝ Հեթանոսությունը տապալելու, քրիստոնեություն և զգորություն Հիմնելու գծով: Բանն այնտեղ հասավ, որ Հոների իշխանը ամեն միշտ դիմեց, որպեսզի Խորայիլ եղիսկոպոսը մշտապես հաստատվեր Հոնաց աշխարհում<sup>33</sup>:

Դա մի ուշագրավ զրվագ է՝ սերտորեն կապված Մեսրոպ Մաշտոցի անվան և գործունեության հետ, որին հարկ ենք համարում փոքր ինչ անդրադառնալ:

Վերևում տեսանք, որ Ն. Ակինյանը առարկելով գարգարա-աղվանական այբուբենի ստեղծմանը, առաջ է քաշում ալանների (նաև գոթերի) այբուբենի հարցը:

Ն. Ակինյանի կարծիքը ալանների կապակցությամբ գուցե և ունենա որոշ հիմքեր՝ կարու ուսումնասիրության: Միայն թե այդ գեպքում իդուր են աղվանա-գարգարական այրուբենի ժմխտման փորձերը: Մեսրոպ Մաշտոցը ոչ միայն դպրության Հիմնադիր էր, այլև քրիստոնեություն տարածող խոշոր գործիչ: Այբուբենի և քրիստոնեության տարածման նրա զաղափարներն ու ջանքերը մի ամբողջություն էին կազմում: Ուստի և հասկանալի է, որ ամեն կերպ նա պիտի ձգտեր այդ զաղափարները տարածել նաև կովկասյան ուրիշ ժողովուրդների և

ցեղերի միջավայրում: Այս առումով ուշագրավ են, օրինակ, Մովսես Կաղանկատվացու հետեւալ տողերը՝ «Յաղագս սրբոյն Մեսրոպայ», որը «անցեալ ընդ Հայաստան՝ ճանապարհ առնէ Հասանել ի սահմանս արեկելից... եւ նորոգեալ զեկեղեցւոյ Հաւատու Հաստատէր. և ձգէր զքարոզութին... յաշխարհն Ռւտիացւոց, և յԱղուանս և ի կասպս և ի Գուրն Չորայ և յայլ ազգի ազգին, զորս գերութեամբն էր ածեալ Աղեքսանդրի Մակեդոնացւոյ և նատուցհալ զմեծ լերամբն Կովկասու՝ գֆարդառն և զկամիճիկ Հեփթաղսն դարձուցհալ ի Հաւատու՝ զկարդ աստուածապաշտութեան ուսուցանէր, զոր ի վաղնջուց ուսեալն էին և մոռացեալ. և բոլորովին քարոզ և առաքեալ խուժապուժ սարտանեացն լինելով ըստ նոցին բարքառոյ դպրութեան առնէր զնոսա ծանօթա»<sup>34</sup>:

Այս զպրությունն, անշուշտ, առանց այրուբենի պատկերացնել չի կարելի. ուստի մնում է հնիթագրել, որ Մեսրոպ Մաշտոցն այդ վայրերում, թերևս ոչ բոլոր թվարկված ցեղերի համար, օգտագործում էր իր ստեղծած հայոց, վրաց, աղվանից այրուբենները՝ պատշաճ հարմարեցումներով, որոնց մասին, սակայն, լրացուցիչ տեղեկություններ չունենք:

Հարցի այս կողմի քննության օգնում է նաև Զաքարիա Հոնեառի այն վկայությունը, որ Ե-րդ զարի կեսերին (540-ական թվականներ), Առանից՝ ոմն եղիսկոպոս՝ Կարգոստ անունով՝ Հոնաց աշխարհում ստեղծում է Հոնական գրականություն, Հոների լեզվով<sup>35</sup>: Տառաձերի մասին տեղեկություն չկա: Ուշագրավ է, որ նրան հաջորդում է «մի ուրիշ հայ եղիսկոպոս» Մակար անունով. «Տասնեւըրս տարի հետո նա (Կարգոստը) հեռացավ, և այնտեղ կար մի ուրիշ հայ եղիսկոպոս, Մակար անունով. նա լավ պատրաստված էր և այնտեղ մեկնեց իր կամքով՝ Հոդեորականների հետ: Նա աղյուսից եկեղեցի կառուցեց, տնկեց ծառեր, ցանեց զանազան սերմեր... եւ ահա

34 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 104—105:

35 Ի. Пигуловская, Сирийские источники по истории народов СССР, М.—Л., 1941, стр. 165—167.

նրանք այնտեղ են մինչև հիմա...»<sup>36</sup>: Այստեղից երեսում է, որ Առանից մեկնած Կարդոսուտն էլ հայ է եղել, որովհետև նրա հաջորդի մասին ասված է, թե այնտեղ գնաց մի ուրիշ հայ եպիսկոպոս: Մեր ամբողջ աշխատությունից էլ այն եպրակացությանն ենք զալիս, որ Առանից մեկնած եպիսկոպոսը պիտի որ անպայման հայ լիներ: Այդ հանգամանքի օգտին է խոսում նաև այն փաստը, որ թե՛ Կարդոսուտից և թե՛ Մակարից առաջ, այդ գործը հիմնադրված էր Մեսրոպ Մաշտոցի կողմից: Վերջապես, հիշենք նաև Խորայել կրոնավորին, որը 7-րդ դարում ավելի մեծ դեր խաղաց այդ երկրներում:

Փաստերի ամբողջությունը ցուց է տալիս, որ այդ գործիչները, հայ լինելով և Մաշտոցին հետեւելով, պիտի այնտեղ գործադրեն անպայման մաշտոցյան այբուբենի որևէ տեսակ ու հարմարեցում: Հանգամանք, որը վեր է ամեն կասկածից: Ուստի անհիմն է: Պիգուլևակայայի այն ենթադրությունը, թե Կարդոսութ պիտի օգտագործած լիներ «ուսմունքությունը ու սոցդո-մանահեյսկությունը»<sup>37</sup>: Հեղինակն ինքն էլ, իրավացիութեն, չի պնդում իր կարծիքը, ասելով: «Բոլոր գեպերում դա լոկ ենթադրություն է»<sup>38</sup>: Հեղինակին պակասել են այն փաստերն իրենց ամբողջությամբ, որ թվարկեցինք վերեւում:

Այս փաստերը միաժամանակ ցուց են տալիս, թե հայ եկեղեցին ու գպրությունն այնքան էին ուժեղացել Աղվանքում առհասարակ, որ 7-րդ դարում, երկրի հյուսիսային սահմանները վտանգազերծելու նպատակով, լուսավորչական աշխատանքների նոր նախաձեռնումներով էին հանդես գալիս Հոնաց աշխարհում: Հարցի այս կողմն էլ առհասարակ արժանի է հատուկ ուշադրության, բայց մենք սահմանափակվինք այսքան և վերադառնանք մեր բուն նյութին:

Ըստ երեսուցին, 7-րդ դարում հատկապես այդ օրերին, Աղվանից երկրի համար էլ Մաշտոցն ու հայերենը, մաշտոցյան կրոնական դավանանքի հետ՝ նույնն էր իր նշանակու-

թյամբ, ինչ Հայաստանում: Այդ միջավայրի կենտրոնում էին գտնվում Ե արքունիքը, և՛ կաթողիկոսարանը: Ահա հենց այդ միջավայրի ծնունդն է Մովսես Կաղանկատվացու «Պատմությունը շարադրված այդ երկրի մայրենի լեզվով: Եվ այդ պատճառով է, որ հեղինակի մոտ ու մի բացատրության շենք հանդիպում այն մասին, թե ինչու նա իր երկը գրել է հայերեն: Դա և՛ նրա, և՛ նրա բնթերցողների ու հաջորդների համար այնքան բան բնական ու հասկանալի է եղել, որ դրա մասին խոսելը ու միայն ավելորդ է համարվել, այլև ոչ-ոքի մտքով չի անցել: Ուստի Մովսես Կաղանկատվացու գիրքը այն մեծ ու վատահելի աղբյուրն է, որը բազմակողմանի նյութ տալով Աղվանից աշխարհի պատմության մասին, միաժամանակ ներկայացնում է նաև ժամանակի գրական լեզվի ու գլորության մոռավոր պատկերը:

Այս վերջին առումով, սույն երկի բովանդակած նյութերը բաժանվում են մի քանի խմբի: Այսպիս, ժամանակագրական առումով, ինչպիս նկատված է, այստեղ գործ ունենք երկու հեղինակի հետ.

ա) Մովսես Կաղանկատվացի, 7-րդ դարի գործի:

բ) Մովսես Դաստիարակության 10-րդ դարի գործի:

Այս երկու հեղինակներն էլ հայեր են, իրենց միջավայրը՝ հայկական և գրում են հայերեն: Այսուհետեւ, նրանցից յուրաքանչյուրին պատկանող մասը, որ գեր հստակ որոշված չէ, իր հերթին բաժանվում է առնվազն երկուական նյութախմբի:

ա) Շարադրված այդ հեղինակների կողմից:

բ) Ընօրինակված կամ քաղաքրված այլ հեղինակներից:

Սույն կետերից վերջինում նշվածներն էլ խիստ խայտարգետ են: Սակայն կարևոր այն է, որ նրանց մեջ գտնում ենք միայն և միայն հայ հեղինակների (5—10-րդ դդ.) գործերից հատվածներ՝ մեծ մասամբ բառացի նույնությամբ: Այդպիսի ներից են, օրինակ, Մովսես Խորենացուց, Կորյունից, Եղիշեից, Պետրոս Սյունեցուց, «Գիրք թղթոցից», Մտեփանոս Սյունեցուց և շատ ուրիշներից առնված նյութերն ու թղթերը: Բազմաթիվ

<sup>36</sup> Անդ, էջ 166—167:

<sup>37</sup> Անդ, էջ 87:

<sup>38</sup> Անդ:

նմուշներ կան նաև Աստվածաշնչի գանազան զրբերի հայկական թարգմանությունից<sup>39</sup>:

Այսպիսով, Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից»-ը՝ Հորինված Աղվանից աշխարհի երկու տարրեր հեղինակների կողմից, իր ամրողությամբ և իր բաղկացուցիչ բոլոր մասերով հայ զպրության արտահայտություն է, ուստի այդ երկը հայկական միջնադարյան մատենագրության մի եղակի հուշարձան է՝ արժանի բաղմակողմանի հետազոտության:

\* \* \*

Աղվանից երկրի մեծ իշխանին՝ Զիվանշիրին վիճակված էր երկար վայելել ստեղծված հաղթանակալից ու բարեկը ժամանակները: Եվ զրա համար չէին եկել հույն տիրակալները: Սկզբնական շրջանի համար այդքանն էլ շատ էր, անհրաժեշտ էր սանձ դնել նսրայելի և նրա զինակիցների հայաշեն գործունեությանը, մաշտոցյան ոգու վերածնունդին, հայ և աղվան հեղեցիների դավանարանական համերաշխությանը, զիվանշիրյան հովանավորությանն՝ այդ ամենին: Ավելին, նոր տերը պիտի մտածեին երկրի զեկը մի ուրիշ բրիստոնյայի հանձնելու մասին, որ կարողանար հեղաշրջել եկեղեցու կերպարանքը, տալով նրան հունական եկեղեցու ծեսն ու հավատամքը: Վաղ թե ուշ այս նպատակն էր, որ պիտի երևան գար հունական «օրհներգված» բաղաքական ծրագրերի ու միջոցառումների միջից: Եվ այն շուշացավ: Գտնվեցին մարդիկ, որ խարդախորհն խնջույքի տարան Զիվանշիրին, մեկուսացրին նրան գիշերային խավարի մեջ և սպանեցին:

Որոշ մասնագետներ այս սպանության պատճառները որոշում են Մովսես Կաղանկատվացու այն տողերում, ուր նկարագրում են այդ խարդախի խնջույքի որոշ մանրամասները: Նրանք անբարոյականության և կանացի հաշիվների մեջ են

տեսնում երկրի սիրելի ու հզոր իշխանի մահը: Սակայն այդ սպանության իսկական պատճառները լուսնից ամբ շաղ են տրը-ված «Պատմութիւն Աղուանից» երկի հաջորդ էջերում, ուր կը կրտուր ակնարկներով տրվում է երկրին հջնող հունական համար հայածանքի ընդհանուր պատկերը: Դեռևս հերոսի դիմակի մաս հայածանքի ընդհանուր պատկերը են առնում կասկածներ, զգացվում է զինքի անշուրջը սկիզբ են առնում կասկածներ, ամբոխ ոչ միայն հուզված է, այլև զինված:

«Ճայնմ ժամանակի ոչ սակաւ խոռվութիւն լինէր աշխարհիս,— ասում է պատմիչը,— զի կուտեալ զինեալ խուռն կանուացն, և մեծամեծ նախարարացն ժողովեալ, և ամենայն երկիրն առհասարակ վայիր լի եղեալ՝ ողբային զիշխանն կականաւոր և գժնդակ գոշմամբ. որ այնպէս անտանելի սուզ և անհնարին բնեկումն աշխարհիս հասուց»<sup>40</sup>:

Բայց իրազորությունների շարժառիթը դիու նրանց ըոլորին հայտնի չէր կարող լինել: Ուստի վիշտը մի կողմ դնելով, Զիվանշիրին փոխարինողի մասին են մտածում, կանգ առնելով արդեն հունական պարգևներով փայլող մի ուրիշ Միջրանյանի թիկնածության վրա: «Հաճեցան առժաման ընտրել հաւանութեամբ զնախարար ուն, որ մեծարեալ էր կայսերակերպ պատուով զապեհի պատրկութեան ստացեալ պատիւ, որոյ անուն վարագ Տրդատ, որդի Վարագ Պերոսի եղբօր Զիւանշիրի»<sup>41</sup>:

Այս առումով վերին աստիճանի ուշագրավ է հյուսիսային ցեղերի հուզմունքը, որոնք բարեկամական կապեր ունեին Զիվանշիրի հետ: Բայց երկույթին, նրանք տեղեկություն են ունեցել, որ նորընտիր իշխանը մեղսակից է Զիվանշիրի սպանությանը, ուստի հսկայագոր բազմությամբ խուժում են Աղվանից սահմանները և երկիրն ասպատակում: Միայն Աղվանից կաթողիկոս Եղիազարն է մի կերպ խաղաղեցնում նրանց՝ Վարագ Տրդատի հանձնարարությամբ. «Ապա առաքէր (իմա՞ Վարագ Տրդատը) պատգամ առ իշխանն Հոնաց զմեծ հպիսկոպոսապետն Եղիազար՝ ցուցանելով ի ձեռն նորա զիր միամիտ հա-

40 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 257:

41 Անդ, էջ 262:

39 Այս առումով ուշագրավ ցուցումներ կան ն. Ակինյանի նշված ուսումնաժողության մեջ («Հանդէս ամսօրեայ», 1953 և հաջորդ տարիներ):

ւատարմութիւն և զսէրն, զոր ունէր առ նա մտերմաբար իբրու եղքօր սիրելոյ, և թէ շեղա՛ մե՛ հաղորդ սպանմանն Զիւն-շիրի...»<sup>42</sup>

Հաղորդակի՞ց էր այդ եղեռնին Վարագ Տրդատը, հավա-նաբար ոչ, բայց նա գտնվում էր արդեն այն ցանցի մեջ, որ հուսել էին հույն տիրողները; Նա պարտավոր էր իրագործել նրանց ծրագիրն ու կամքը: Թէ ինչպիսի մանրամասնություններ է ունեցել այդ նոր շրջանի խսկական պատմությունը, շր-դիտենք, պատմիշի տվյալներից պարզվում է, սակայն, երկու խոշոր և ուշագրավ իրադարձություն:

ա) Ծատ շանցած, վարագ Տրդատն իր զույգ որդիներով բանտարկվում է հույների ձեռքով՝ Կոստանդնուպոլսում: Տա-ռապանքից նրա մազերը թափվում են, իսկ որդիները, ի վեր-ջո, բանտային խավարում կուրանում:

բ) Այդ օրերին նրա կինը՝ Սպարամը երկրում միջոցներ շի խնայում՝ իր իսկ շանքերով և ծրագրերով՝ կաթողիկոսական գահին բազմեցրած ներսես Բակուրի միջոցով հալածելու շի-վանշիրյան օրերի նշանավոր գործիշներին, առաջին հերթին Խորացելին, ապա երկրում տարածելու քաղկեդոնականություն:

Անկախ այլևայլ հանգամանքներից, այստեղ պարզ երևում է հունական աբբանի սեղմումը, որն իր մեջ էր առել մի կող-մից Վարագ Տրդատին և իր որդիներին, իսկ մյուս կողմից՝ նրա կնոջը: Դրանք էին այն պաշտոնական ամուր կետերը, որոնց վրա հենված, նրանց կյանքի գնով, հույները ձգտում էին հասնել իրենց նպատակին:

Ճիշտ է, պահպանված վկայություններում ընդգծված է Հարկացին ծանր բաղաքականության պարագան, համատարած սովոր, «Կորեկի թագավորությունը», սակայն դրանք բոլորը ուղղված էին բուն նպատակին, հունական դավանանքի տա-րածմանը, հունականացմանը:

Թագուհին՝ Սպարամը, որ շուրջ 5 տարի ինքն էր երկիրը

դեկավարում, սպասելով ամուսնու և որդիների վերադարձին, համառորեն իրագործում է հունական պահանջը՝ դավանանքի գծով: Այս կապակցությամբ արժէ հիշել «Աղուանից պատմութիւն» երկի «Վասն Բակուրայ երկարնակի, որում ներսէս ա-նուն, եղեալ կարաղիկոս» գլուխը:

«Ի վախճանելն Եղիազարու Սպուանից կաթուղիկոսի՝ ուն յերկարնակ կրօնէն, Բակուր անուն, երբեմն եղեալ եպիսկոպոս Գարդմանայ և ներսէս յորշորշեալ՝ ուխտադրեալ ընդ Սպարա-մայ Աղուանից տիկնոց Վարագ Տրդատայ, որ էր ի նոյն կրօն հետեւեալ, կնքէր դաշինս վասն փառամոլ տիրողութեանն, ա-սելով, «Եթէ կամ է քո կոչել զիս ի հայրապետութիւն Աղուա-նից՝ ես արարից զամենայն Աղուանս ինստովանութեամբն Քաղկեդոնին»: Եւ ունկնդիր եղեալ նմա կնոջն՝ խորհուրդ բե-րեալ ընդ եպիսկոպոսս և ընդ մեծամեծս աշխարհին Աղուա-նից, ոչ ոք իմացաւ զդաւաճանութիւնն, և յանձն առին առակ կատարել զինդիրն»<sup>43</sup>:

Եվ ահա առիթ է ներկայացել ծածկախորհուրդ կաթողի-կոսին՝ անցնելու գործի, «իսկ տիկնոցն Սպարամայ» ստիպել նրան՝ որոշ նախարարների կամակցությամբ: Եվ այդ օրերին առաջին զոհը ոչ այլ ոք է, քան Զիվանշիրի սիրելի Խորացելը, ինչպես և ուրիշներ<sup>44</sup>:

Կրոնական, ներքին այս հեղաշրջման և հալածանքների դեմ ըմբուտանում են «Յովհաննէս Կապաղակայ եպիսկոպոս, Սահակ Ամարասայ եպիսկոպոս, Միմէոն Հողաչայ»<sup>45</sup> եպիսկո-պոս և Եերոյ մեծ իշխանն Աղուանից՝ հանդերձ իր ապատօքն, որը բազմութեամբ ուխտից եկեղեցոյ գումարեալ հանդէս ժո-ղովոյ՝ նզովեցին զներսէս ընդ ամենայն հերձուածողս»<sup>46</sup>:

Եվ ահա այդ ժողովն է, որ որոշում է դիմել հայոց կաթո-ղիկոսի՝ Եղիայի օգնությանը, որի մասին խոսվեց վերևում:

43 Անդ, էջ 335:

44 Անդ, էջ 336:

45 «Հողաչայ» տեղանունը հիշեցնում է «Շահան»-ը («Հող-աշան»):

46 Անդ, էջ 336—337:

42 Անդ, էջ 263—264: Տիւ և Ս. Տ. Երեմյան, Մոնսեյ Կալանкатյու- սկий о посольстве албанского князя Вараз-Трдата... «Записки инсти- тута Востоковедения АН СССР», Ленинград, 1939, VII, стр. 129—155.

Պահը ճակատադրական է: Հուլիսիրն իրենց կալանքի տակ առած Վարպազ Տրդատին և նրա որդիներին, ամբողջ գաժանությամբ ձնշել են նրանց հարազատի՝ կնոջ և մոր՝ Սպարամի վրա, իրագործելու վաղուց նյութված ծրագիրը: Սակայն տեղական մյուս ուժերը, հատկապես Շերո մեծ իշխանը, չէին կարող լոկ որոշմամբ ու նզովքով հարցը լուծել, եթե երկրի ղեկը գտնվում էր Սպարամի ձեռքին, իսկ նա էլ չէր կարող լսել նրանց: Ահա այդ պահին է, որ իշխաններն ու ժողովուրդը զիմում են Հայոց կաթողիկոսի օգնությանը:

Պիտի ասել, սակայն, որ Հունական այդ խստությունները սպառնում էին նաև Հայաստանին: Ուստի և Եղիա կաթողիկոսը զիմում է վճռական ու գործոն միջոցի՝ արաբների օգնությանը: Կաթողիկոս Ներսես Բակուրն ու տիկին Սպարամց պատճեն էն:

Հովհաննես Դրասխանակերտցին վկայում է, որ Հայոց Եղիա կաթողիկոսի ժամանակ Ներսես Բակուրը և «ամիկին ուն... որ յայնժամ հրամանատար Աղուանից էր», կրոնական հեղաշրջում են կատարում, ուստի և «նախարարք աշխարհին իմացեալ՝ զեկուցին մեծի հայրապետին Եղիայի, որոյ գուն ի վերայ գործեալ ուղով շափ և բազում նամակն առաքեալ...», բայց քանի որ այդ նամակները լին օգնում, և Աղվանից իշխանները համառոքն պահանջում են նրա օգնությունը, ապա նա զիմում է արաբների օգնությանը<sup>47</sup>:

Ավելորդ չենք համարում ալստեղ ընդօրինակել Աղվանից աշխարհի ղեկավարների այն ժամանակ զումարած ժողովի անունից Եղիա կաթողիկոսին առաքված թուղթը:

«Թուղթ ժողովոյն Աղուանից առ Եղիա Հայոց կարութիկոս Տեառն Եղիայի Հայոց կաթողիկոսի ի միաբան ժողովոյն Աղուանից երկրպագութիւն:

Վասն զի զմի հաւատ ուղիղ հարքն մեր ընդ հարս ձեր ունեին և զմիմեանց հոգային զնուոյ փրկութիւն, ի ներել տեառն աստուծոյ զօրացեալ կրօնն Քաղկեդոնի՝ ելից զտիե-

<sup>47</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 99:

զերս, և մեր կողմունքս մինչև ցայսօր ժամանակի անխառն յայնմանէ էր մնացեալ: Իսկ այժմ զոր կարծէաք զու Հովի բարի մեզ զներսէս, սա գայլ եղեալ օձտել սկսաւ զրանաւոր հօտս Քրիստոսի, վասն որոյ կամեցաք յուշ առնել սրբութեան ձերում յայց ելանել մեզ որպէս ձերոց անդամոց և բժշկել զրեկումն մեր: Ուզ լերուք ի տէր»<sup>48</sup>:

Ահա իրերի մոտավոր պատկերը: Իսկ դա ցուց է տալիս, որ Եղիա կաթողիկոսը ոչ թե լոկ իր անձնական կամ կղերահետադիմական շահերի թելադրանքով է ձնշել քաղկեդոնականությունը, այլ այն ժամանակվա հայոց և աղվանից երկրների զեկավարների խորհրդակցությամբ ու պահանջով: Դա միենույն պահին այդ երկրների շահերի պահանջի թելադրության հետեւանքն էր:

Ինչ վերաբերում է արաբներին զիմելուն, ապա դա էլ տվյալ իրազրությունների հրամայական թելադրանքն է եղել: Կովկասը արաբներին վաղուց էր ծանոթ և այդ նույն արաբներն էին, որ երկրին բերին սորկացման նոր պայմաններ և շատ լանցած, 705 թվականին, Նախճավանում հրկիզեցին շուրջ 800 հայ նախարարների, իսկ Աղվանից իշխաններին, վերոհիշյալ Շերո իշխանի հետ միասին, դրանից մեկ տարի առաջ, արտաքսեցին գեպի գերություն ու մահ:

Շերո իշխանը՝ «ազատօքն հանդերձ», Եղիա կաթողիկոսը ելք էին որոնում և պարտավոր էին որոնել, իսկ եթե շկար այդպիսին, ապա մեղավորը ոչ թե նրանք էին, այլ պարսիկներն ու հոները, հովիներն ու արաբները՝ իրենց ավերիշ բռնատիրությամբ ու ասպատակումներով:

Մենք՝ երուսաղեմյան գրականության վերաբերյալ խոսենիս, տեսանք, թե ինչպիսի մեծ աշխատանք էր ծավալվում՝ քաղկեդոնականությունը Աղվանքում տարածելու համար համապատասխան դրականություն ստեղծելու ուղղությամբ: Հասկանալի է, որ ամիկին Սպարամը և Ներսես Բակուր կաթողիկոսը նույնպես պիտի մեծ հոգ տանեին այդ ուղղությամբ:

<sup>48</sup> Խովհաննես Կաղանեկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 337: Տե՛ս նաև ձեռ. № 2966, թերթ 120ր, «Յաղագ Եղիայի հայոց կարողիկոսի»:

Եվ քանի որ ամբողջ միջավայրը հայկական ու հայախոս էր, այժմ ավելի քան մեծ շափերով պիտի գրվեին ու տարածվեին աղանդավորական գաղափարները: Եվ հենց զրա մասին է վկայում պատմիչը, ասելով. «Եւ զեղկելի ներսիսի գրեանն, զորս լցեալ էր յարկեղս իի հերձուածովք, առեալ զամենայն (նոր կաթողիկոսը) ետ ի գետն Տրտու...»<sup>49</sup>:

Այդ դրականությունից բացի, մեզ համար կարեոր են նաև ներսես Բակուրի և Տիկին Սպարամի գործունեության հետ կապված մի շաբք ուրիշ գրավություններ, բոլորն էլ հայերեն, որոնք մեջ են բերված «Պատմոթիւն Աղուանից» երկում<sup>50</sup>:

Այդ թղթերից, որպես աղվանական աշխարհի հայ գրականության վավերագրերից՝ գիտավորը Սիմեոն կաթողիկոսի, կանոնըն է: Դրանից երեսում է, որ ներսես Բակուրն այլ կանոններ է մշակած և կիրառած եղել, որոնց վերափոխման նպատակով էլ գրված են վերջիններս. «...վասն ներսիսի եղել, որ զկարգս եկեղեցւոյ այլայլեաց, վասն այսորիկ հարկ եղել վերստին առնել ուղղութիւնն»<sup>51</sup>:

Վաշագան թագավորի կանոններից հետո, զա Աղվանից աշխարհի իրավաբանական գրականության հաջորդ հուշարձանն է, ուր կարեոր տեղեկություններ կան ոչ միայն հոգեոր կյանքի մասին, այլև սոցիալ-տնտեսական:

Մաշտոցի անվան Մատենադարանում պահպող երկու ձեռագրերում<sup>52</sup> ընդօրինակված է մի արժեքավոր վավերաթուղթ,

49 Անդ, էջ 340:

50 Անդ, էջ 337—356: Դրանցից ուշագրավ է արարների զորանրամանատարի պատասխանը Եղիա կաթողիկոսին, որի ընդամենը մի քանի տողանոց բնագրում առկա են մի քանի ոչ հայերեն բառեր, այսպիս, «Արմենեան աղքի շարիկդ» (վար. չարդիդ) կամ «Ե զեկին ի նիւմայիդ նիմին շղթայս երկաթաշրեալ...»:

Ուժանք անհիմն կերպով այն կարծիքն են հայտնել, թե «Պատմութիւն Աղուանից»-ը թարգմանություն է աղվաներներից: Եթե այդպիս լիներ, ապա այս գրքում կամա թե ակամա պիտի տեղ գտնեին աղվանական հարյուրավոր բառեր, մինչդեռ այդպիսի և ոչ մի նմուշ չկա:

51 Անդ, էջ 349:

52 Զեռ. Ա. 2966, թերթ 120ար. 3062, թերթ 199ար.

որն առաջին անգամ հրատարակված է Ա. Տեր-Միքելյանի կողմից<sup>53</sup>, քննության առարկա դառնալով նաև ուրիշների համար<sup>54</sup>:

Այն ունի ուշագրավ խորագիր. «Ալ՝ ի նոյն գրոց տեառն վիրոյի Աղուանից կարութիկոսի: Յառաջարան Պատմութեան աշխարհին Աղուանից: Կանոնն և սահմանադրութիւն ծողովոյն Աղուանից, որ եղև ի ժամանակս Եղիայի հայոց կարութիկոսի, որ էր Ա. արոռակալ սրբոյն Գրիգորէ»:

Մեր կարծիքով, այս խորագրի տակ ժամանակին զետեղված են եղել երեք նյութ-միավորներ. մեկը քաղված Վիրո կաթողիկոսի գրքից, մեկը՝ «Պատմութիւն աշխարհին Աղուանից» երկից, իսկ երրորդն իրենից ներկայացրել է առեր Միքայելի կանոնները՝ համապատասխան լիազորագրով: Պահպանված է միայն վերջինը (լիազորագիրը):

Ինչպես հայտնի է, Վիրո կաթողիկոսը Աղվանից աշխարհի խորոր գեմքերից մեկն էր: Ըստ երեսութին, իրո՛ք, նա ունեցել է պատմական երկ, որից վերոհիշյալ խորագրի ներքո առնված է եղել ինչ որ հատված: Այս առումով հնուաքրքրական է Մովսես Կաղանկատվացու անունով հայտնի «Պատմութիւն Աղուանից»-ի «Վասն սաստկացեալ սովոյն, սրոյն և գերութեանն ի միասին» գլուխը, որի հեղինակն, իսկապես, Վիրո կաթողիկոսն է: Այդ է վկայում հետևյալ հատվածը. «Ես Վիրոյ՝ Աղուանից և Լինաց և Չողայ կաթուղիկոս, Թողում ասել զայ ամենայն պէսպէս զազրալիս՝ զմարմնոյ սեութիւնս և զկնութիւն գլխոց...» և այլն<sup>55</sup>:

Անկախ մանրամասնություններից, կարող ենք ասել, որ իրոք, Աղվանից աշխարհի Վիրո կաթողիկոսը ունեցել է պատ-

53 Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 286:

54 Տե՛ս, օրինակ, Բ. Բարտիքյան, Արմանական պատմության աշխարհը («Պալեստինական պատմության աշխարհ»), Երևան, 1959, թիվ 1, էջ 133—146).

55 Մակար Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 152:

մական երկ՝ գրված մայրենի լեզվով՝ Հայերենով։ Փրկվածքը խոսում է նաև նրա գրական կարողությունների մասին։ Հետեւապես, մեր թվարկած մատենագրության մեջ պիտի մուծել ևս մի անուն ու մի երկ, որը պատկանում է 6—7-րդ դարերին։

Վերոհիշյալ ընդարձակ խորագրում նշված «Պատմութիւն աշխարհին Աղուանից» երկը, ամենայն իրավամբ, հանրածանոթ երկն է, որից այդ խորագրի տակ արտագրված է եղել, ինչպես նշված է, «Ճառաշարան»-ը։ Վիրո կաթողիկոսի և այդ երկի առնչությունները դեռևս լրիվ չեն բացահայտված։

Հաջորդ նյութ-միավորը՝ «Կանոնք և սահմանադրութիւն ժողովայն Աղուանից»-ն է։ Այստեղից պարզ երևում է, որ նրկատի են առնված գոյություն ունեցող կանոններ և սահմանադրություն, մինչ ընդօրինակության պահպանված մասում այդպիսիք չկան։ Մնացել է միայն այդ կանոնները մշակելու համար նախապես գումարված ժողովի լիազորագիր-Հանձնարարականը, որը լույս է սփռում նաև առ այժմ կորած կանոնների վրա։ Այստեղ ասված է, որ Հայոց Եղիա կաթողիկոսի օրոք Աղվանքում առաջնորդ է կարգվում տեր Միքայելը. երկրի Հոգնոր և աշխարհիկ առաջնորդները լիազորում են նրան մշակել կանոնները՝ «յաղակս քաղցրեղոնական աղանդոյն, և կամ Մայրագոմիցյոն, և թէ վասն Պայլիկենաց, և թէ վասն խառն ամուսնութեան, և թէ դինչ և իցէ»։ Այս լիազորագիրը որոշումը հաստատել է «Շերոյ ապահի պատրիկ Գարդմանից տէր և Աղուանից իշխան՝ հանդերձ ամենայն աղատօք»։

Նկատի ունենալով ժամանակի պատմական հանգամանքները և այն մեծ իրավունքները, որ այդ գրությամբ տրվում էին Միքայել կաթողիկոսին, համոզվում ենք, որ գործ ունենք Աղվանից աշխարհի այն ծանր տարիների հետ, երբ երկրի մեծ իշխանը՝ Վարազ Տրդատը՝ իր զույգ որդիներով գտնվում էր բյուզանդական կալանքի տակ, և նրա կինը՝ Սպարամ տիկինը նախապատրաստվում էր ներսին Բակուրին դարձնել կաթողիկոս՝ երկրում քաղկեդոնականություն հաստատելու նպատակով։

Այսպիսով, տեսնում ենք, որ 8-րդ դարն Աղվանից աշխարհում սկսվում էր քաղաքական լարված իրագրություններում՝

առիթ հանդիսանալով Հատկապես կանոնական գրականության դարգայման։ Դրանց մեջ իր ուրույն տեղն են ունեցել տեր Միքայելի կանոնները և Համապատասխան որոշումը։ Ինչպես երևում է, վերջինիս պահպանված ընդօրինակությունից, այստեղ էլ ամեն ինչ հայերեն է, այսինքն, տեղի հայության մայքնի լեզվով։

Որոշ մասնագետներ իրար վրա կուտակելով՝ Աղվանից աշխարհի հայությանն անտեսելու, իրը թե դրսից այնտեղ հայկական ներգաղթ կազմակերպելու, տեղի աղվաններին բրոնի հայացնելու, աղվանից եկեղեցին թշնամքար ճնշելու և այլ նման անհիմն փաստարկներ, հեշտությամբ անցնում են հայ եկեղեցու (նաև իշխանության) մեղադրությանը։ Այս առավել նրանց համար սիրված փաստ է վերոհիշյալ դեպքը՝ կապված հայոց Եղիա կաթողիկոսի հետ։ Այդ պատմությանը մեղադրանքի մի նոր թափով է մուտքել Զ. Բունիաթովը՝ իր վերջին գրքում։ Նրա համար ոչ մի նշանակություն չունի ո՛չ Վարազ Տրդատի, ո՛չ էլ նրա որդիների հունական բանտերում գտնվելը, ո՛չ Աղվանից երկրի իշխանների և աղատների հուղմունքը այդ բռնության գեմ, ո՛չ նրանց ժողովն ու գրավոր դիմումը՝ հայոց կաթողիկոսին։ ընդհակառակը, նա նույնիսկ այն տեղն է հասնում, որ գրում է, թե այդ ժամանակ «աղվանական եկեղեցին» («Երկարնակ») հենվում էր Բյուզանդիայի օդնության վրա»<sup>56</sup>։ Հապա ինչո՞ւ էին բանտարկվել երկրի տերերը։ Հապա ո՞վեր էին Երբո իշխանն ու այն ժողովականները, որ դիմեցին Եղիա կաթողիկոսին։ Հապա ինչո՞ւ այդպես չի մտածել ժամանակակից պատմիչ Մովսես Կաղանեկատվացին։ Վերջապես, հապա բյուզանդական ի՞նչ բռնությունների մասին է խոսում ինքը՝ Զ. Բունիաթովը 699—704 թվականների կապակցությամբ<sup>57</sup>։

Զ. Բունիաթովը իր խոսքին ուժ տալու համար, շլատելով հարցի ողջ պատմությունը, միակողմանիորեն մեջ է բերում

56 Յ. Բունիատով, Ազերբայջան վ VII—IX աւ., Բակու, 1965, ստ. 95.

57 Անդ, էջ 206.

Եղիա կաթողիկոսի և արաբների միջև եղած գրագրություններն ու այլ թղթերը, որպեսզի դրանից հետո անցնի այնպիսի մեղադրանքների, ինչպիսիներից է աղվաներեն ողջ գրականության մտածված ոչնչացման հերթամբ:

Ճիշտ է, աղվանից նորընտիր Միմեռն կաթողիկոսը ուշնչացրեց Ներսես Բակուրի գրքերը, որոնք հերձվածողական էին, սակայն դա չի նշանակում, թե դրանով ոչնչացավ ողջ Աղվանքի գրականությունը: Հերձվածողական գրականությունը նույն դաժանությամբ ոչնչացվում էր նաև Հայաստանում և ամենուր, ինչո՞ւ հապա այդ երկրների գրականությունը մնաց: Չմոռանանք նաև, որ Ներսես Բակուրի գրքերն էլ, ինչպես կտևնենք ստորև, հայերեն էին և ոչ աղվաներեն, իսկ նրանց ոչնչացնողն էլ Աղվանից աշխարհի կաթողիկոսն էր: Զ. Բունիաթովին, սակայն, նման հարցերը շեն հետաքրքրում, ուստի նա մի կողմից «ստեղծում» է աղվաներեն գրականություն, իսկ մյուս կողմից՝ նրա ոչնչացման առասպեկտը: Այդ «ոչնչացումն» էլ՝ հայ գործիչների ձեռքով, որոնք Աղվանից գրի ստեղծողն էին:

Ահա թե ինչպես է պատկերացնում նա իր հորինած առասպեկտը:

«Հայ հոգևորականությունը աստիճանաբար առ ոչինչ հասցրեց աղվանական եկեղեցու աղղեցությունը այդ (իմա' ինոնային Առանի—Ա. Մ.) բնակչության վրա և արաբական իշխանության ձեռքով ոչնչացրեց աղվանների ամբողջ գրական ժառանգությունը,— այն ամենը, որը կարող էր թեկուզ անհշան շափով հիշեցնել աղվանական գրականության մասին: Դա կատարվեց, կրկնում ենք, սկզբում խալիֆաթի օգնությամբ, իսկ հետագայում ուրիշ բոնակալների օժանդակությամբ և համաձայնությամբ»<sup>59</sup>:

Իր այս աներեակայնի մեղադրանքը նա փաստարկելու ու մի ջանք չի էլ գործադրում, միայն թե նշում է տողատակային երկու հիմք, ուր ցանկացողը, իբր թե, կարող է գտնել համապատասխան ապացույցներ: Դրանք են Մ. Օրմանյանի և

Ա. Երեմյանի երկու տարբեր աշխատությունները<sup>60</sup>, ուր, սակայն, ոչ մի ակնարկ իսկ չկա աղվաններեն գրականությունը հայերի կողմից ոչնչացված լինելու վերաբերյալ: Այդպիսի հիմք չի էլ կարող լինել որիէ լուրջ հեղինակի մոտ:

Հարց է առաջանում. ի՞նչ նպատակով է հորինված այս տխուր պատմությունը: Պատասխանը կարելի է գուշակել հետևյալ տողերից՝ գրված նույնքան անպատասխանատվությամբ.

«Ոչնչացնելով Առանի գրական հուշարձանները, Գրիգորյանական եկեղեցականները (իմա' հայ հոգևորականները — Ա. Մ.) նախապես դրանք թարգմանեցին գրաբար: Դա տեղի ունեցավ մասնավորապես Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից»-ի և աղվանների գրական շատ ուրիշ ստեղծագործությունների հետո»<sup>60</sup>:

Հաջորդ տողերում հեղինակի նպատակն արգեն բոլորովին բացահայտ տեսք է ընդունում, եթե նա այս եղանակով փորձում է հայ գրականությունից «նվաճելը ոչ միայն Մովսես Կաղանկատվացուն, այլև Դավթակ Քերմողին, Մխիթար Գոշին, Կիրակոս Գանձակեցուն և շատ ուրիշների»<sup>61</sup>:

Այսպիսի դեպքերումն է ահա, որ գիտությունը կորցնելով իր միակ հենարանը՝ ճշմարտությունը, վեր է ածվում քմահաճույքի:

\* \* \*

Աղվանից աշխարհի հայ իրականության 7-րդ գարի ականավոր գեմքերից մեկն է նաև Դավթակ Քերմողը: Այս բացառիկ հեղինակի մասին պահպանված միակ վկայությանը հանդիպում ենք դարձյալ Մովսես Կաղանկատվացու մոտ: Նրանք ժամանակակիցներ են, Զիվանշիրյան օրերի ու իրադրություն-

59 Մ. Օրմանյան, Армянская церковь, Москва, 1913, стр. 45, 118. Ս. Տ. Երեմյան, Идеология и культура Албании III—VII вв. (Очерки истории СССР, III—IX вв., Москва, 1958, стр. 329).

60 Յ. Բոննատով, Азербайджан в VII—IX вв., Баку, 1965, стр. 97.

61 Անդ, էջ 97—99:

Ների ծնունդ, երկուան էլ՝ Աղջանից իշխանի մեծ գովերդուներն ու երկրպագուները: Եվ եթե Մովսես Կաղանկատվացին հիշել է Դավթակ Քերթողին ու փրկել նրա հիշատակը, ապա դա լոկ ի սեր Զիվանշիրի, որովհետև Դավթակին էր վիճակված նրա մեծ ողբերգուն զառնար:

Ինչպես առհասարակ նման գեպքերում, այնպես էլ այս անվան շուրջը որոշ տարածայնություններ են ծագել: Եվ քանի որ ամբողջ տղվանահայության դեմքն էր մշուշի մեջ, այնպես էլ՝ առանձին անհատների: Ոժանք մինչև օրս էլ այն անհիմին կարծիքն են Հայտնում, թե Գավթակ Քիրթողի Ողբը աղվաներենից է թարգմանվել Հայերեն: Դա, առհասարակ սխալ լինելով, միաժամանակ աներեկակայելի է, որովհետև այս առումով կան անհերքելի ապացույցներ: Ինչպես Հայտնի է, Գավթակի Ողբը շարադրված է Հայկական այրութենք կազմող ակրոստիփուով: Ուստի այն ամբողջապես պիտի կազմված լիներ 36 տնից: Արդ, մի պահ ընդունենք, թե այն իրոք գրված է եղել աղվաներեն և ապա թարգմանվել: Այդ գիտքում պիտի հնիթադրել, որ այն նախապես աղվանական այրութենով պիտի կաղմեր ակրոստիքոս, որպեսզի թարգմանությունն էլ ձգտեր այդ ձերն: Հետևապես, այն նախապես պիտի ունինար 52 տուն, ըստ աղվանից այրութենի, մինչդեռ Հայերենում 36 տուն է: Ուր մնաց 16 տունը, ամբողջի մոտ մեկ երրորդը:

Փաստերը ցույց են տալիս, որ ակրասիկոսներն անքագ-  
մանելի են, մանավանդ, եթե առկա է այրութենի հնչյունների  
ժանակական տարբերություն: Թերենք մի օրինակ: Աստվա-  
ծաշնչի հայերեն թարգմանությունը, որ իրավացիորեն համար-  
վում է բոլոր թարգմանությունների թագուհին, չի կարողացել  
տալ գեթ մի կտոր թարգմանություն՝ ակրոստիքոսի պահպան-  
մամբ: Իսկ, ինչպես հայտնի է, Աստվածաշնչում նման գործեր  
շատ կան. հիշենք Երեմիայի մի քանի ողբերը, որոշ սաղմոս-  
ներ և այլն: Զի էլ կարելի ասել, թե թարգմանիչներն այդ քանը  
(նրանց ակրոստիքոսով գրված լինելը) չեն նկատել: Երանք  
նկատել են դա, բայց չեն կարող ըստ հրեական այրութենի  
գրված 22 տնանոց երգերը շափել հայոց այրութենի պահպան-

շած 36 միավորի վրա: Այդ գեպքում նրանք պիտի 14 տուն ավելացնեին, այսինքն, 22 տնանոց երգերը գարձնեին 36 տնանոց: Այդպիսի անհեթեռության, իհարկե, ոչ մի թարգմանիչ չի դիմել և չէր էլ կարող դիմել: Ուստի Աստվածաշնչի թարգմանիչները դրանք թարգմանել են առանց ակրոստիքոսին հետևելու, միայն թէ ամեն առան դիմաց, լուսանցքում նշել են բնագրային ակրոստիքոսի համապատասխան հնչյունները («ալիֆ», «բեթ», «գամեի» և այլն): Ճիշտ այդպես էլ անհնարկիներ աղվանական 52 տնանոց ակրոստիքոսով գրված ողբը շափել հայերեն 36 հնչյունների վրա: Բայց քանի որ այդ ողբը հայերեն է և հայկական ակրոստիքոսով գրված, ապա այլևս ոչ մի խոսք չի կարող լինել այն մասին, թէ այդ ողբը, թարգմանություն է:

Եվ առհասարակ Աղվանից աշխարհի գրականության մասին վերելում բերլած նյութը, նույնիսկ ավելորդ է՝ դարձնում այդ մասին խոսելը:

Ըստ երևութին, Հենց նշված սխալ կարծիքին լուղայն հակառակն է, որ մեծանուն հայագետ Մ. Աբեղյանը նաև տողատակային ծանոթությամբ փորձում է ապացուցել, որ Դավթակը Զիվանշիրի թաղման վայրումն էր գտնվել՝ ուսիշ տեղից եկած լինելու-ով<sup>62</sup>:

Դրան հակառակ, փորձ է արվել ապացուցելու, որ Դավթակը ոչ թի ուրիշ տեղից էր ժամանել, այլ Զիվանշիրի պալատական բանաստեղծն է եղել։ Համապատասխան մի անտիպուատմանասիրություն է վկայակոչվում Ազրբեջանի գիտությունների ակադեմիայի արխիվից<sup>63</sup>։ Դրա հիման վրա էլ, ահա, Կ. Վ. Տրեսերը գրում է. «Պարզվեց, որ «Ողբ ի վերայ Զիվանշիրի»-(ղեկավարած 7-րդ դ.) բանաստեղծությունը, հորինված նրա պալատական բանաստեղծ Դավթակ ճարտասանի կողմէից,

62 Մ. Արեգյան, Հայոց հին գրականության պատմություն, Ե., 1944, էջ 270:

<sup>63</sup> Научный архив Института истории АН Аз. ССР, № 991, стр. 12.

բնագրի հայկական երկու հրատարակություններում և ոռուերեն թարգմանության մեջ ներկայացված է ոչ ամբողջապես, բացակայում են վերջին 16 տները, որոնք կան № 3043 ձեռագրում (ընդօրինակված 1839 թվականին արքեպիսկոպոս Բարամյանի ձեռքով՝ թավրիդում): Այդ բացթողման պատճառությունը ցարդ շնչաջողվեց պարզելը<sup>64</sup>:

Այստեղ, ինչպես տեսնում ենք, ոչ միայն հակադրություն կա, այլև մեղադրանք, թե ինչո՞ւ հայ հրատարակողները չեն հրատարակում Դավթակի ողբի երկրորդ կեսը, որն իբր թե վերջին հայտարերված է բարեցի ոմն բանասերի կողմից:

Թերևս շարժեր այստեղ անդրադառնալ բանասիրական նման խնդիրների, եթե դրանք արդեն հրատարակված չլինեին և եթե կապված չլինեին այն հիմնական խնդրի հետ, որին նվիրված է մեր ներկա գործը:

Պիտի ասել, որ Դավթակի Ողբը ձեռագրերում պահպանված է ե՛ կես մասով, ե՛ ամբողջական տեսքով: Սկզբնական շրջանում այն տպագրվել է ոչ լրիվ, որովհետեւ հիմք հանդիսացող ձեռագրում լրիվ չեղել: Սակայն, շատ շանցած, մեզանից 100-ից ավելի տարիներ առաջ, Մսեր Մսերյանը «Ճռաքաղ»-ում տպագրեց այն ամբողջը<sup>65</sup>, որ 1939 թվականին ցուց է տրվել որպես բանասիրական գյուտ:

Դրանից բացի, այն ամբողջապես տպագրվել է նաև Փարիզի հրատարակության մեջ, 1860 թվականին<sup>66</sup>, մեր օրերում՝ «Բնտիր էջեր» հատորում<sup>67</sup> և այլուր: Ուստի անհիմն է այն կարծիքը, թե Դավթակի Ողբի լրիվ օրինակը չի տպագրված: Եվ առավել անհիմն է այն ակնարկը, թե «Այդ բացթողման պատճառը ցարդ շնչաջողվեց պարզել»:

Նկատենք նաև, որ շատ տասնամյակներ առաջ այդ Ողբի

64 Կ. Վ. Տրևեր, Очерки по истории и культуре Кавказской Албании, Москва—Ленинград, 1959, стр. 13, 314.

65 «Ճռաքաղ», 1860, տետրակ 6, էջ 79—83:

66 Մովսես Կաղանեկատվացի, Պատմութիւն Հայոց, Ա, Փարիզ, 1860, էջ 354—359, նաև՝ 86:

67 «Էլստիր էջեր», կազմեցին՝ Կ. Մելիք-Օհանջանյան և ուրիշներ, Երևան, 1946, էջ 210—212:

երկու բնագրին էլ (լրիվ և թերի) ծանոթ են եղել հայ բանասիրներից շատերը և խոսել այդ մասին, Այլիշանիներից են, օրինակ, Ղ. Ալիշանը<sup>68</sup>, Խաչիկ վարդապետ Դավթյանը<sup>69</sup> և ուրիշներ:

Ինչ վերաբերում է Դավթակի Քերթողի ծննդավայրին, որ հատուկ ուսումնասիրության հարց է, որի մասին որոշակի տվյալներ չեն պահպանվել: Նույնը կարելի է ասել նաև նրա պալատական բանաստեղծ լինելու մասին: Ավելին, այս առումով ճիշտ է Մ. Աբեղյանը ուշադրություն հրավիրելով Մովսես Կաղանկատվացու՝ այն դարձվածքի վրա, թե նա «յոլով աւորքը յառաջ ժաման էր ի դրան արքունիքում» (տարբ. «Ժամանեալ էր»): Անկախ ձեռագրական մասնակի տարրերություններից, երևում է, որ Դավթակը հյուր էր Զիվանշիրի պալատում, եկած էր այնտեղ, ինչպես ճիշտ նկատել է Մ. Աբեղյանը, «ուրիշ տեղից»—«յոլով աւորքը յառաջ»: Պալատական բանաստեղծին այդպես չեին բնութագրի: Բայց ո՞րն է այդ ուրիշ տեղը, զժվար է ասել: Մեզ այնպես է թվում, որ նա, համենայն գեպս, Պարտավի բնակիչներից չէր, այլ՝ Ավելանից աշխարհի մի ուրիշ հայաշատ զավարի: Այդպես է մտածել տալիս նրա Ողբի ընդհանուր շունչը: Նա Զիվանշիրի ոչ միայն ծանոթը, բարեկամը, երկրպագուն, այլև համերկրացին է, որովհետեւ նրա կորուստը բանաստեղծը համարում է իր երկրի և իր ժողովրդի մեծ կորուստը:

Ձի սպաի ձայնիւ անդադար ողբասցուք  
Ի վերա զննակ կորստեան մերամ:  
Բեկումն մեծ որ եղա Արևելից աշխարհին...  
Պարձաւ ի զառնութիւն խաղաղութիւն մեր  
Եւ զրունք հինից տեղացին ի մեզ...  
Եկին հասին ի վերայ մեր անէծք...

68 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 237—239: Այստեղ մեջ են բերված միայն Ա—Ծ տները՝ այսպիսի դիտողությամբ. «Ուրիշ անձ մի թվի լրացնել ուզեր է Ծ գրեն վերջի տուներն, բայց անարվեստ և անհարմար»: Ուստի զրանք զուրս է թողել:

69 «Արարատ», 1895, էջ 347:

70 Մովսես Կաղանեկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 257:

Ժամանեցին առամայն չարիքն մեր  
Եւ աճգեղջ մոլորովին յանդմանեաց՝  
Քարկացուցաք զԱրարին գործովք մերով...  
Ճրագ ճշմարիտ խաղաղութեան էր նա մեր...<sup>71</sup>

Այս և առհասարակ բոլոր մյուս տողերի միջից երկում է Արևելից աշխարհի հարազատ զավակի և միաժամանակ տիրոջ սրտակսկիծ մորմոքն ու ցասումը: Եվ այդ անձնալորությունը հայ է, հայախոս ու հայկական զպրության լավագույն դիտակ, թերևս նաև մեծ ուսուցիչ:

Եվ երբ երկրի իշխաններն ու նախարարները, «և ամենայն երկիրն առհասարակ վայրիք լի եղեալ ողբային զիշխանն...

Յայնժամ ճարտասան ոմն ի մէջ անցեալ, տեղեակ արհստական իմաստից, Դաւթակ անուն կոչեցեալ՝ Հնարազիւտական վարժիւքն յաջողակ և վերծանական քերթությամբ յառաջադէմ, յառատարեր բանից պաճուճանացն ճարտարութեամբ և քաջապէս հրատարակող, լիզու ունելով նման երադագիր գրչի... յայնժամ սկսաւ նա երգել ըստ ալֆաֆիտաց զիխակարգութեանց զողրս զայս ի վերայ բարեացապարտին Զիւանշիրի, և ասէր այսպէսաւ<sup>72</sup>:

Այստեղ միանգամից ուշադրություն է գրավում երկու հանգամանք. առաջին՝ Դավթակի որպէս Աղվանից երկրի հայ բանաստեղծի կերպարը, երկրորդ՝ միջավայրի հայկական և հայախոս լինելը: Համերկրային սգո այդ թափորում, ողբացողների բազմամբոխ զանգվածի վրա հանկարծ տարածվում է հմուտ ճարտասանի ու արտասանողի հումկու ձայնը և այն էլ ընտիր հայերենով և հայոց այրութենը փառաբանող տաղաշտությամբ.

Աստուածային բանին արունեատոր Հոգի,  
Յօրինեա իմաստս ի տիրական երգմունս,  
Զի սկայի ձայնիւ անդադար ողբացուք  
Ի վերայ դժնակ կորստեան մերում..<sup>73</sup>

71 Անդ, էջ 258—261:

72 Անդ, էջ 257—258:

73 Անդ, էջ 258:

Ահա Աղվանից աշխարհի 7-րդ դարի պաշտոնական, համապատասխան լիզուն, նրա զեղարքեստական խոսքն ու շափածոն: Եվ Մովսես Կաղանկատվացին, մատնացուց անկորվ նշված Ողբի ակրոստիքոսային կառուցվածքը, այնպէս է ընդունել նրա «բատ ալֆաֆիտաց զիխակարգութեանց» լինելը, ինչպէս առհասարակ նշված են հայ զրականության համանման գործերը՝ հայ մատենագիրների կողմից: Նրանց համար, այն ժամանակ, ամեն ինչ է բնական էր, և հասկանալի. այդ մեզ համար է այսօր պիտական վեճի և ապացուցման կարու պրոբլեմ, որովհետեւ աղվանագիտության բնագավառում սերմանվել ու սերմանվում են մեծ թյուրիմացություններ:

\* \* \*

Վերեւում շարադրված փաստերից մենք ծանոթացանք Մովսես Կաղանկատվացու երկում առկա զրական նյութի բազմազանությանը, նկատելով, որ այնտեղ կան ինչպէս Աղվանքի հայության, այնպէս էլ Հայաստանի հայ հեղինակների գործեր, որոնց բոլորի ընդհանուր հայտարարն ու հզոր շաղկապը՝ հայ լիզուն է: Այս առումով եղակի բնույթ ունի մի ուրիշ հեղինակի՝ Հովսեփ Արցախսկոյ մի հիշատակարանը: Նրա հեղինակի մասին խոսված է լոկ հետեւյալ խորագրում, որին էլ հաջորդում է բուն հիշատակարանը. «Կասն Յավսեփայ անապատականի բնակիչ լԱրգախ, և երբն յերսաղէմ, ընդ նմին և բերումն նշխարաց սրբոց»<sup>74</sup>: Դրա տակ գտնվող հիշատակարանը բոլորովին ինքնուրայն միավոր է, որի բացակայությունը ոչնչով չէր կարող զգացվել և որի առկայությունը ոչնչով չի մերգում ընդհանուր շարադրանքին: Ո՞վ է նա. ոի գաւառէն Գեղամայ, յանապատէն Բրտի Այրեաց» մի հոգևորական, որ Հայաստանում տեղի ունեցած քաղաքական վտանգվոր անցուդարձերից խույս տալով, տեղափոխվում է Արցախ, ովասն չար նեղութեան ժամանակիս... մանաւանդ արինարրու աղդն տաճկաց սկսան զօրանալ և դնել զամենայն աշխարհն իբրև

74 Անդ, էջ 318:

գհող ի կոխումն. յայսպիսի նեղութեանց խոյս տուեալ եկի ի գաւառս Արցախոյ..., առ ծերունի եպիսկոպոսն Միջր...<sup>75</sup>: Վերաբնակվելով այստեղ, Հովսեփ Գեղամեցին վերանվանվում է Հովսեփ Արցախոցի և զբաղվում եկեղեցական ու կրոնական բարեկարգումներով, որոնց մասին և թողնում է այդ հիշատակարանը: Ահա ամբողջապես հայ հեղինակի հայերեն մի գործ, որը մեջ է բերված ի շարս մյուս նյութերի, և այդ, «Արցախոցուա վրա հիմնվելով, ոմանք նաև այս գործն են համարում աղվանական, այդ հասկացողության ոչ հայ առումով»:

Հայոց Արեւելից կողմանց գրականության և դպրության կապակցությամբ, ինչպես Մովսես Կաղանկատվացու մոտ, այնպես էլ հայ մատենագրության մեջ պահպանված հաջորդժամանակների փաստերից ուշագրավ են 7—8-րդ դարերի հեղինակ Ստեփանոս Սյունեցու անվան հետ առնչվողները:

Հայ մատենագրության և մշակութի այդ խոչոր գործիշը մանավանդ, որ պաշտոնավարում էր Սյունիքում, չէր կարող սերտ կապերի մեջ մինել Աղվանից աշխարհի գրական հասարակության հետ: Դրա փայլուն ապացուցներից մեկն է, ահա նաև մեր Մատենադարանի № 2042 ձեռագրում պահպանվող մի թուղթը՝ հետեւյալ խորագրով և սկզբնատողով. «Երանելոյն Քերոսի Ստեփանոսի Սիմեոն Եպիսկոպոսի բան պատասխանոյ առ վարդապետն Աղուանից. — Ակիզն և հիմն ամենայն պահոց՝ զՄւրբաթ և զՉորեքշարաթ գտաք...»:

Հասկանալի է, որ նման թղթակցությունները պիտի որքավականին շատ լինեին, մանավանդ, որ «Պատմութիւն Աղուանից» երկը ցուց է տալիս, թե Ստեփանոս Սյունեցին այնքան սիրված հեղինակ է եղել Աղվանից կողմերի համար, որ այնտեղ տարածված է եղել նրա եղենական մահվան հետ կապված մի սրտառուշ զրուց: Վերջինիս համաձայն այդ եղեռնագործության պատճառով է Ստեփանոս Սյունեցու սպանության վայրը կուվել «Հայոց Զոր»: Ահա այդ հատվածը.

75 Անդ, էջ 318.

«Իսկ միայնակեաց ոմն՝ նոյ անուն, տեսանէր ի տեսլեան, թէ Ստեփանոս զգող արեամբ լի ունէր առաջի Փրկչին և ասէր. «Տե՛ս, Տէր, զայս, զի քո են դատաստանք արդար»: Եւ ազդեալ ի գաւառն զգալ բարկութեան՝ բողոքէ կալ յազօթս. և ի վերուստ խաւար անասանելի կալաւ զՄողանն սահման, և զաւորս քառասուն շարժեցաւ վայրն և խորասոյզ նղեալ ընկղմեցան կենդանւոյն հոգիք իրեւ տասն հազար: Վասն այնորիկ Վայոց Զոր անուանեցաւ»<sup>76</sup>:

Այս զրուցի հյուսողը կամ գրի առնողը չէր կարող չհիշել նաև Ստեփանոս Սյունեցուն որպես զրագեալի: Եվ հիրավի, համապատասխան գլուխը առաջին հերթին այդ մասին է խոսում. «Յաղագս Ստեփանոսի Սիմեոն եպիսկոպոսի երթալն ի Հոռմս և բերել զգրեանս, որ յարեւելս ոչ գոյին, և վախճան նորին և պատիքը, որ հասին յԱստուծոյց»<sup>77</sup>:

«Պատմութիւն Աղուանիցը» նույնիսկ մի ուշագրավ վերապատում ունի դրված հետեւյալ խորագրի տակ. «Ի գրենոյն Ստեփանոսի Սիմեոն եպիսկոպոսի գտաւ այս պատմութիւն սակա աւերման Դիոն բաղադի և շինելն Հոռվմայ»<sup>78</sup>:

Ահա այս հեղինակի մոտ է, որ հանդիպում ենք նաև այն արժեքավոր վկայությանը, որ վերաբերում է Հայոց աշխարհի լեզուներին, այդ թվում նաև Սյունիքի և Արցախի, որպես հայկական բարբառների:

Բայց Ստեփանոս Սյունեցին միայն թղթերի ու դրսից բերված գրքերի շնորհիվ չէր, որ ծանոթ էր Աղվանքին: Հայկական բնարերգության, երածշտության, քերականության, մեկնողական գրականության և այլ բնագավառների խոշոր գործիշը որքան Սյունիքին ու Հայաստանին էր պատկանում իր ամբողջությամբ, նույնքան էլ՝ հայկական Աղվանքին:

76 Մովսես Կաղանեկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 365—366: Այդ զրուցը՝ համարյա նույնությամբ, տե՛ս Կիրակոս Գանձակեցից, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 72—74:

77 Անդ, էջ 364:

78 Անդ, էջ 370: Սույն հատվածը հանդիպում է նաև առանձին, օրինակ, № 4284 ձեռագրի 48-րդում՝ «Սակա աւերմանն Ելիոնի և շինելոյն Հոռմա խորագրով» առանց հեղինակի անվան: Կան մասնակի տարբնթերցումներ:

Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից» երկը և իր՝ և իր ճաշորդի՝ Մովսես Դասխուրանեցու, և թիրես նաև ուրիշների շարահարմամբ, ինչպես նաև նրանց ընդգրկած մյուս բոլոր նյութերը Աղվանից աշխարհի այն դարերի հայդրականության և առհասարակ արևելահայ գրականության հարազատ արդյունքն են: Նրանց լեզուն՝ նրանց հեղինակների լեզուն է, Աղվանից երկրի գլուխության, պետության, եկեղեցու և բնակչության մայրենի լեզուն: Անշուշտ, այն ժամանակի էլ բուն Աղվանքում կային և պիտի լինեն նաև այլակեզու ցեղեր, ցեղախմբեր, տոհմեր ու ընտանիքներ, բնակչության առանձին զանգվածներ, որոնք գուցե և շեն գործածել ու շեն հասկացել Հայերենը, սակայն դա առանձին խնդիր է, որը կապ չունի երկրի ընդհանուր լեզվի ու գլուխության այն սահմանների հետ, որոնք հանդիսանում են մեր քննության առարկան:

«Պատմութիւն Աղուանից» երկի լեզուն միաժամանակ այն աղբյուրների լեզուն է, որոնցից այնքան առատորեն օգտվել են նրա հեղինակներն ու նրանց լրացնողները: Այստեղ նկատի ունենք Ազաթանգեղոսին, Փալստոս Բուլզանդին, Մովսես Խորենացուն, Յղիշեին, Ղազար Փարպեցուն և այն տասնյակ այլ հայ մատենագիրներին, որոնց նյութերով այնպես ողողված է այդ երկը: Ինքը, հեղինակն էլ այդպիսի քաղաքարկան եղանակը համարում է քաջալիքի արվեստ. «Որքան պայծառ է երկներ աստեղօք և երկիրս բուսով, այնպէս է և զանք աշխարհագիր պատմողի՝ յայլոց նիւթոց պարագարդից<sup>79</sup>, — գրում է հեղինակը:

Եվ երբ այսպիսի ծրագրով աշխատող հեղինակը «յայլոց նիւթոց» իր գործը գեղազարելու ժամանակ օգտվում է միայն հայ գորոշներից, դա նշանակում է, որ նա միայն այդ գորականության մշակներից մեկն է, ուստի և իր երկը՝ այդ գրականության մասն է:

Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից»-ը, ըստ էության, ոչ թե մեկ կամ երկու, նույնիսկ երեք հեղինակ-

<sup>79</sup> Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 119:

ների ստեղծագործություն է, այլ մի գանձարան, բազմապիսի հեղինակներից առնված քաղվածքների ու գրագրությունների մի իսկական «Գիրք թղթոց» ուղղված Աղվանից պատմությունն ստեղծելու նպատակին: Այն, միաժամանակ, յուրահատուկ «քրթուկ» է, տոհմամատյան, այդ բառի լայն առումով, ուր աստիճանաբար մուծվել են երկրի կյանքի հետ այս կամ այն կերպ առնվազող նյութեր ու թղթեր, որոնք, սակայն, հաճախ ուղղակիորեն չեն առնվազել մյուս նյութերի և երկի ամբողջական այն նպատակի հետ, որին հետամուտ է եղել նրա հիմնադիրը՝ Մովսես Կաղանկատվացին: Այն ստեղծվել և հարըստացվել է ոչ միայն 7-րդ և 10-րդ գարերում, այլ ամբողջ 7—10-րդ գարերի ընթացքում. միայն թե ոչ հետևողականորեն: Եվ բոլոր սերունդները, որ մաս են բերել այդ գործին, եղել են հայեր: Նրանք բոլորը, ինչպես և ուրիշները այդ երկի վրա նայել են որպես ազգային սրբազն մատյանի և կրոնա-պատմական վեճերի ժամանակ այդ գիրքը որոնել ու նրա՝ վրա հենվել: Այստեղից էլ հասկանալի է, թե ինչո՞ւ նրա մեջ կան և պիտի լինեին զանազան հակասություններ: Դրանք մեխանիկական բնույթ ունենալուց բացի, նաև քաղաքական տարրեր հայացքների արդյունք են:

Ինչպես երևում է, 10-րդ գարից հետո «Պատմութիւն Աղուանից» երկի վրա տարվող հետագա շարահյուսումների գործը մատնվել է անուշադրության: Այս առումով ուշագրավ է Մխիթար Գոշի մի նամակը Գրիգոր Տղային, որ նա նշում է, թե ինքը, ցանկանալով վերականգնել Աղվանից աշխարհի պատմություն գրնելու հին ավանդությունը, որոշ աշխատանք է կատարել: Նա միաժամանակ հորդորում է Հայոց կաթողիկոսին՝ անձամբ հոգալ այդ կարևոր գործը.

«Գրեալ էաք և սակաւ ժամանակագրութիւն ընդ Պատմատանի գրոց ի մերն աւրինակ... յատուկ և այդ կացցէ զիրք: Սկիզբն արարաք ի կատարածէ Պատմութեանն Աղուանից՝ զշար Հայրապետացն... որքան լուաք և տեսաք: Զի և այդ այժմ ի մերս շիշաւ յագէք, զի թէպէտ ունէաք սովորութիւն գրել զժամանակս իրաքանչիւր զկնի եկեալքն ի միասին յարմա-

բելով՝ առնեխն լիով պատմութիւն։ Բայց, զի ծովացեալ թողաք, հասաւ և ժամանակաց կարգ, զոր թէպէտ այժմ կամ Զեղ իցէ և զայս ևս Դուք ևս զրել փութայք, զոր ինչ յաւորս Զերոյ Հայրապետութիւն պատահեաց, զի մերձ եք յամենեսեանդ դիտել անթերի, բանզի Զեր է զպատշաճն զամենայն լոռով իշխանութիւն, թողութիւն արացես ներելով և յանդուն մերոյդ համարձակութիւն»<sup>80</sup>։

Միսիթար Գոշի նշված ժամանակագրությունը պահպանվել է և հրատարակվել. այդուղի էլ նա մոտավորապես նույնն է Հիշեցնում. ասելով, որ ինքը շարադրել է դա «զկնի գրեցելումն պատմութեանն Մովսեսի Դասխուանեցայն, որ զրովանդակ պատմէ զանս Աղուանից... զի յայն ժամանակէ մինչև ցայժմ ոչ որ գրեաց»<sup>81</sup>։

Այս վկայություններն օգնում են մի շարք կարեռ եզրակացությունների հանգել՝ ինչպես «Պատմութիւն Աղուանից» երկի ստեղծման եղանակի, այնպես էլ նրա ազգային պատկանելիության մասին։ Միսիթար Գոշը աղվանից ազգի տակ հաւականում է ոչ այլ ինչ, քան հայոց ազգ («մերս... յազգէ») և առաջարկում, որ Գրիգոր Տղան ևս օգտակար լինի մեր ազգի պատմության այդ բնագավառին։ Եվ դա՝ ոչ միայն նրա, այլև շատ ուրիշների վկայությամբ։ Մենք նման փաստեր տեսանք վերսում (օրինակ, Հովհաննես Դրասխանակերտցու մոտ), այստեղ Միսիթար Գոշի նշված տողերի կապակցությամբ տեղին է հիշել Գրիգոր Տղայի կարծիքը։

«Պահանջի ի մէնք...,— զրում է նա,— հոգալ և քննել զբովանդակ Հայոց լրումն՝ իրեւ զանդամոց և զընդեռամբ անկելոց, հոգալ և զտունն Աղուանից և զվերատեսուշն նորա իրեւ զազդականակից և զաշտիճանակից և զեղբայր... և ի վտանգաւորութիւն օգնել և կանգնել»<sup>82</sup>։

Ութերորդ դարի աղվանական հայ մատենագրության

80 Հ. Ռուկան, Մատենագրական բննութիւններ, Վիճննա, 1926, էջ 180—181.

81 Դ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 384։

82 «Արարատ», 1893, էջ 240։

պատկերը ճիշտ լի կարող լինել, եթե հաշվի շառնենք նաև Պարտավի հանրահայտ կանոնները։ Այդ գործը պատկանում է այն ստեղծագործությունների թվին, որոնք կյանքի էին կուլտուրամ և հայ, և աղվան եկեղեցու ու նրանց հնդակա բնակչության համար՝ նրանց ներկայացուցիչների համատեղ շանքերով և փոխարժեումմամբ։

Պատմական սկզբնաղբյուրները միահամուռ հավաստում են հետևյալ իրողությունը։ 768 թվականին հայոց Սիռն կաթողիկոսը, կամենալով մշակել եկեղեցական նոր կանոններ, քաղաքական անրարենպաստ պայմանների պատճառով, համապատասխան ժողովը գումարեց ոչ թե Դիլինում, այլ Պարտավում, այսինքն՝ Աղվանից աշխարհում։ Հրավիրված ոչ բոլոր զավանների ներկայացուցիչներին հաջողվեց մասնակցել այդ ժողովին, որոնք, սակայն, իրենց համաձայնությունը ներկայացրին զրավոր եղանակով։ Այդուամենայնիվ, Պարտավում հավաքվել էր հայ և տեղի գործիչների մի պատկառելի թիվ, որի մասին բալարար տվյալներ կան հենց Պարտավում հաստատված կանոնների նախարանում։ Մ. Օրմանյանը, խոսելով այդ մասին, ընդգծում է հատկապես ժողովին մասնակցած այդ երկու խոշոր կողմերի՝ հայ և աղվան եկեղեցիների առկայությունը. «Հայոց կողմենն Սիռն կաթողիկոս, Գեորգ Ռատանի, Սաղովկ Սյունյաց և Խոայի Գողթան հպիսկոպոսներ, Սահակ Թագրատունի պատրիկ... իսկ Աղվանից կողմեն, Գավիթ Կաթողիկոս և Վարազքուրդակ Վաշագանյան, Վարդան Սատոնյան և Տիրիկ Քարոնյան նախարարներ»<sup>83</sup>։

Պարտավում ընդունված այդ կանոնների նախարանում, այդ առումով ուշագրավ են Սիռն կաթողիկոսի հետևյալ տողերը՝ ուղղված Աղվանից Դավիթ կաթողիկոսին. «Այդոր (իմա՝ Պարտավում) աջողիաց ուղղիչն խորհրդոց հոգին սուրբ զկատարումն մերոյ աստուածահաճոյ խորհրդոյ ձերով համախո՞քնդ մեզ միաբանութեամբ, ով աստուածապատի սրբութեամբ և պայծառացեալ ի Քրիստոս առաքինազարդ ուղղափառ վար-

83 Մ. Օրմանյան, Աղվապատում, Ա., Պելրութ, 1959, էջ 882։

դապետութեամբ յառաքելականդ վերամբարձեալ յաստիճառն տէր Դաւիթ Կաթողիկոս Աղուանից, դուք և որ ընդ ձեզդ էին աստուածապահ տէարք աշխարհիդ ձերոյ, Վարազ Թուրդակ Վաշագանեան, Վարդան Սատոյեան, Տիրակ Քարոյեան այլովք ազատովք ձերովք...

Եւ արդ, կարդեցաք միաբանութեամբ զայս դնել սահման րարեկարգութեան առաջնորդաց եկեղեցոյ և ժողովրդոց նոցին»<sup>84</sup>:

Այս ամենից հստակ ու մեկին երեսմ է, որ Պարտավի կամ Միոն Հայոց կաթողիկոսի անունով Հայտնի կանոնները ոչ միայն մշակված էին Հայաստանի և Աղվանից աշխարհի ներկայացուցիչների կողմից՝ Աղվանքում, այլև ընդունված էին ի կիրառություն և Հայոց, և՝ աղվանական եկեղեցիների համար:

Մեզ այստեղ, բնականաբար, ամենից առաջ, հետաքրքրում է ոչ թե այդ կանոնների իրավաբանական կողմը, այլ երեսով՝ կապված Հայ և աղվան եկեղեցիների փոխարարերության, միասնականության, ինչպես նաև ընդհանուր լեզվի ու գլորության հետ: Այդ կանոնները, որպես մատենագիտական միավոր, որքան Հայաստանին են, նույնքան էլ՝ Աղվանքինը: Ռւստի նույնը պիտի ասել նաև այդ կանոնների լեզվի մասին, որը նորից Հայերենն է: Ավելին, այդ կանոններում նկատի առնված արդեն վաղուց գոյություն ունեցող գրականությունն էլ Հայկական է: Այսպիս կանոնների վերջում Հրահանդ կա նաև Աստվածաշնչի ընդունելի և արտաքին գրքերի մասին, որը հիմք ունի Հայերեն թարգմանությունը.

«Եղիցի ձեզ ամեննեցուն եկեղեցականաց և աշխարհականաց պաշտել ի գիրք սուրբք ի հին և ի նոր կտակարանաց: Մովսէսի գիրք՝ Սննդոցն, Ելիցն և Ղետականն, Թիւք, Երկրորդ արքէնք, Յետու Նաւեալ, Դատաւորացն, և Հոռութայն, Թագաւորութեանցն. Դ. Մնացորդացն գրոց աւուրք, և Բ Եղրի

84 «Կանոնք Պարտավի աղվանին ժողովի», աշխ. Ա. Ղլուժան, Վաղարշապատ, 1905, էջ 12—13:

բանք. Գիրք Յորայ, Սաղմոսացն գիրք մի. Սողոմոնի Գ գիրք: Բ — տասան (իմա' Երկոտասան) մարգարէքն, Եսայի, Երեմիա, Եզեկիէլ, Դանիէլ: Եւ արտաքուստ պատգամաւորեսցի առ ի ուսուցանել զձեր մանկունս զուսումնաբազումսն Միրաքայ իմաստութիւնն»<sup>85</sup>:

Հիմք կա պնդելու, որ Աղվանից եկեղեցու համար էլ այդ օրերին, անշուշտ, նաև դրանից առաջ (Հաշված առանձին դիմքերը), Հանձնարարված են եղել նախորդ ժամանակներում ընդունված կանոնները: Աղվանի լոկ այդ լրացուցի կանոններով չէր կարող առաջնորդվել Աղվանից եկեղեցին: Այդ մասին վկայություն կա նաև սույն կանոնների նախարանում, ուր Միոն կաթողիկոսն ասում է. «Կոչեցի գեղիսկոպոսակիցս իմ ի հոգեկան հարկիս այսորիկ, խորհուրդ տնտեսել մեզ սպասաւորաց բանին, զոր ընկալաք յանձն հովուել զժողովուրդ տեառն, հաստատել զաւանդեալ արթինադրութիւն սուրբ հարցն, իսկ զբերին լնուլ»<sup>86</sup>: Ուստի պիտի ընդունել, որ Պարտավի ժողովը ու միայն մշակեց ու հաստատեց նոր կանոններ, այլև վերանայեց ու վերահաստատեց նախկին բոլոր ընդունված կանոնները: Այս իրովությունը վկայված է նաև նույն նախարանի հետեւյալ տողերում: «Ի սոյն միարանական ժողով ամ յամէ մեզ արժան է հասանել, քննել և տեսանել զկարգս եկեղեցու, զոր կանոննեցին սուրբ հարցն, թէ որպէս ունիցին առաջնորդք կամ ժողովուրդք եկեղեցույք»: Ահա զրա համար էլ, ասում է Միոն կաթողիկոսը, Հավաքէլ հնք այժմ հիաստատել զաւանդեալ արթինադրութիւն սուրբ հարցն, իսկ զբերին լնուլ»<sup>87</sup>:

85 Անդ, էջ 25:

86 Անդ, էջ 11:

87 Անդ Այս հարցի առնչությամբ առանձին հետաքրքրություն է ներկայացնում հետեւյալ փաստը: Աղվանից Միքայիլ կաթողիկոսը, ոժգոհելով Թալիի վրաց կաթողիկոսից, գրում է. «Զի՞ իշխեցեր լուծանել զկանոննեալն ի սուրբ առաքելցն աշակերտաց, որք յԱնտիոք ժողովեալ... սահմաննեցին ականականն... և սրբոյն Աթանասի կանոնական հրաման... և երանելույն Բարսղի Արդ մեք ուղղափառութեան ժողովին և զքեզ նողովեցաք ընդ ամենայն հերձուածուս» (Մ. Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, 1912, 178

Ահա այս հիման վրա կարող ենք պնդել, որ Աղվանից աշխարհի մատենագրության պատկերն ամբողջացնելու նպատակով պետք է անպայման հաշվի առնել նաև, այսպես կոչված, «Կանոնագիրը Հայոց» ժողովածուն: Իսկ դա մեզ նորից է տանում դեպի պատմական այն իրողությունը, թե Աղվանից աշխարհն իր սեփական հայկական գրականությունն ունենալուց բացի, գտնվել է Համահայկական մատենագրության սահմանների մեջ: Եվ միանգամայն հասկանալի է, թե ինչու Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից» երկը հայկական լինելուց զատ, նաև հայկական մատենագրության յուրատեսակ քաղածո հավաքածուն է:

Այսպիսին են փաստերը. Համառ, հարուստ և տրամաբանական: Ուստի նրանց առջև է, որ պիտի ասպարեցից զուրս մղվեն այն բոլոր մտացածին ու բռնազրոսիկ դատողությունները, որ շարունակում են գոյատել և ժավալվել աղվանագիտության բնագավառում:

(էջ 360): Այդուղ մեջ է բերված նաև Աթանասի կանոնի համապատասխան զարձվածքը, որը աղպականների միջև կայացած ամուսնությունը համարվում է ոչ թե ամուսնություն, «այլ պոռնկութիւն» (անդ): Հիրավի, Աթանասի Ժէ և Ժէ կանոնների հայերեն թարգմանության մեջ այդպիսի ամուսնությունը որակված է բառացիորեն այդպես. «այլ պոռնկութիւն» կամ «պոռնկութիւն» («Կանոնագիրը Հայոց», աշխ. Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 297--298):

Ուշագրավ է նաև հետեւյալ վկայությունը. «Ուռենալը արքայ եճուտ յաշխարհն Աղուանից, ուսույց, կատարեաց զնոսա առաքելական կանոնօք» (Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 27), Պակաս ուշագրավ չէ հեղինակի՝ Աղվանից աշխարհի (իմա՝ բուն Աղվանիքի) մասին գործածած «զնոսա» բառը:

#### ԴՐԱԿԱԴ ԶՈՐՅՈՒԹԻՒՆ 9—10-ՐԴ ԴԱՐԵՐ

Իննից-տասներորդ դարերում Արևելից աշխարհի գրականությունը մտնում է զարգացման մի նոր փուլ: Դա պայմանավորված էր մի կողմից արաբական բռնազետությունից ազատագրվելու, իսկ մյուս կողմից՝ երկրի թագավորական իշխանությունը նրա իսկական տերերի՝ հայերի ձեռքն անցնելու պատմական մեծ իրադարձությամբ: Այս նոր շրջանի ինչպես քաղաքական, այնպես էլ զրական կյանքի պատմությունը սերտորեն կապված է Համամ Բագրատունու կամ Արևելցու անվան հետ:

Սիսակ կլիներ կարծել, թե ամեն ինչ սկսվեց Համամի գործունեությամբ: Այս շրջանն էլ ունեցավ իր աստիճանական զարգացման առանձին զրվագները, որոնց մասին, սակայն, բավարար տեղեկություններ չունենք: Եղածներից հատուկ ուշադրություն է գրավում նսայի Արու Մուսեի անվան հետ կապված մի նամակ-պատասխանը՝ ուղղված արաբական արյունաբերության բուղային, երբ վերջինս նրանից պահանջում էր իշնել հայրենի Քթիշի լեռներից և իր հայկական զորագնդով հանձնվել: Բուղան իր հայ ուղեկիցների ձեռքով պատշաճ նամակ ուղարկեց նրան, իսկ նսայի զորավարը տվեց մի հանգույն և աղատությամբ շնչող պատասխան, որը բարեբախտաբար պահպանված է Թովմա Արծունու պատմության մեջ: Թաղմադաշտում, թշնամու դեմ-հանդիման գրված այդ բո-

ցաշումը նամակը տեղ-տեղ, ներքին ոգեռվածությունից, վեր է տօված ազատ բանաստեղծության, հանդիսանալով այն ժամանակներից մեզ հասած զրականության ամենաուշագրավ նկատքներից մեկը: Այս մի-երկու հատված այդ պատասխան-նամակից:

«Օրէն է աշխարհակալաց արքունի խնամակալութեամբ գնալ ընդ աշխարհ իբրև առ Հնազանդս և զնեղութիւնս տառապեկոց բառնալ և ի գիւր հանել իբրև զինամարկուս, և ոչ աւազակարար աւերել, և սրով և գերութիւնմբ յաւեր դարձուցանել...Եւ արդ յայտնի լիցի, զի որչափ բաւէ զօրութիւն իմ և ի ցիսմ կենդանի՝ կացից ընդգեմ զօրութեամբ և ուժով տէառն Աստուծոյ, և ոչ տեսից զբեղ սիրով խաղաղութեան. այլ տեսից զբեղ զինու և աղեղամբ և սրով, քաջ արամբք և ընտիր հրիվարօք. և քեզ եթէ հաճոյ թուիցի ապրեցուցանել զբեղ և զօրս քո՛ արի ե՛լ աստի և զնա ի սահմանաց իմոց... Արդ վճարեալ է յիմմէ կողմանէ շատախօսութիւն ընդ քեզ. ի ձեռս քո է խաղաղութիւն և խոռոշութիւն: Եթէ, որպէս ասացի, ի բաց զնա յինչէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կոիւ և ճակատամարտ:

Եւ դու՝ նպատակ, և աղեղն իմ՝ խցոտիւ,  
Դու՝ ախոյժեան, և մանկունք իմ՝ լաղթանակ,  
Դու՝ սոսի, և զօրք իմ՝ զատապարտիք,  
Քո՞ պատերազմ, և մեր՝ լաղթութիւն,  
Քո՞ մարմին, և իմ՝ նիզակ,  
Քո՞ պարանող, և իմ՝ սուսեր...<sup>ըլ</sup>

Այստեղ մենք Գրիգոր Նարեկացուց շուրջ մեկուկես դար առաջ նկատում ենք բանաստեղծական այնպիսի շունչ ու առկայժումներ, որոնց իսկական մարմնավորողը Նարեկացին հանդիսացավ: Թա ցուց է տալիս ժամանակի գրականության որոշակի մակարդակ՝ Աղվանից աշխարհում: Այս առումով ուշագրավ է նաև այն փաստը, որ Բուլղարի բանակում գտնվող հայ իշխաններից մեկը՝ երիտասարդ Սույշե Բագրատունին

1 Թագմա Արծունի, Պատմութիւն տանն Արծունեաց, ՍՊԸ, 1887,  
էջ 178—179:

(Սմբատ Սպարապետի որդին), այդ բանակցություններից շատ շանցած, սկսված ահեղ ճակատամարտերից մեկի ժամանակ, լեռնային մի բարձունքի վրա նստած, դիտում էր ճակատամարտը և նկարագրում այն բանաստեղծությամբ.

Անզրադեկտ ական սրտի նայեցող անձն իմ,  
ի միւսանգամ դալուստն...<sup>2</sup>:

Դժբախտաբար լոկ այս բնեկորն է պահպանվել այդ ուշադիրավ բանաստեղծությունից։ Անհավանական չէ, որ եսայի Աբու Մուսեիհն՝ Բուղազի անունից առաքված թուղթը գրված լիներ հենց այս բանաստեղծ Մուշեղի ձեռքով, որին էլ ոչ պակաս բանաստեղծությամբ պատասխանել է քաջ գորավարու

Ժամանակի Աղվանից աշխարհի իսկական գրականությունն ու մատենագրությունը, սակայն, ինչպես նշեցինք, կապված է Համամ Բագրատունու անվան հետ: Նա մի եղակի դեմք է՝ կանգնած արաբական բռնապետության վերջալույսի և Կովկասյան ժողովուրդների ազատագրության արշալույսի սահմանադին, արժանի հատուկ մենագրության: Բայց մենք փորձենք ծանոթանալ նրա հետ ընդհանուր գծերով:

Համամ Բագրատունու մասին սկզբնաղբյուրներում պահպանված են բալվականին շատ տեղեկություններ, որոնք, սակայն, կցկտուր են և մի ամբողջական տեսք չունեն: Սկզբում հայ բանասերները, նկատի առնելով եղած նյութերի միջից երեացող Համամ Արենեցու գործունեության և հետաքրքրությունների բազմազանությունը, ենթադրեցին, թե եղել է ոչ թե մի, այլ երկու համանուն Հեղինակ, երկուսն էլ ապրած նույն ժամանակամիջոցում: Անվանի բանասեր Կ. Կոստանյանը ձեռնամուխ եղավ համապատասխան փաստերի և մեկնաբանությունների հանգամանալից հետազոտությանը և փաստարկեց, որ եղել է մի Համամ Արենեցի, որը 9-րդ դարի երկրորդ կեսերին Աղվանից երկրի թագավորն էր և միաժամանակ գրադիում էր գրական աշխատանքներով: Հետագայում այդ Համամ Արենեցին հրաժարվում է գահից, դառնում հոգևորական, վերանվանվում Հովհաննես և նվիրվում՝ մատենագրու-

<sup>2</sup> Անդ, էջ 182: Տաղի մասին՝ «Ե տուն ի յութերորդ վանդէ»:

թյան բնագավառին, թողնելով բավականին հարուստ ժառանգություն<sup>3</sup>:

Հնայած հետագայում բանասիրության մեջ այդ կարծիքն արժանացավ ընդունելության, սակայն գտնվեցին մասնագետներ, որոնք նորանոր, չպարզաբանված հարցերի կամ փաստերի հանդիպելով, մասամբ կասկածի տակ առան Կ. Կոստանյանցի կարծիքը: Հայկական միջնադարյան քնարերգության մի քանի հարցերի քննության ժամանակ, մենք, անկախ սույն աշխատանքից, ստիպված եղանք ամենայն մանրամասնությամբ զբաղվել Համամ Բագրատունու հարցով: Մեղ համար ևս միանգամայն պարզ եղավ Կ. Կոստանյանցի հմտալից ուսումնասիրության մեջ փաստարկված կարծիքի ճշտությունը: Այն է, 9-րդ դարում եղել է մի Համամ Արևելցի գործիշ, որը և՛ Աղվանից թագավորն էր, և՛ հայ մատենագրության խոշոր ներկայացուցիչներից մեկը: Զկամենալով այստեղ մտնել բանասիրական մանրունքների մեջ, վերհիշենք մի երկու նմուշ այն հարցերից, որոնք առաջացան Կ. Կոստանյանցի գրքից և նրա մահից հետո, մնալով ցարդ անպատասխան:

Մեծանուն գիտնական Հ. Աճառյանը, ըստ էության, համաձայն լինելով Կ. Կոստանյանցի հետ, թվարկում է նրա եղակացությունները և ասում. «Այս բոլորը շատ գեղեցիկ, բայց բախում է դժվարությանց»<sup>4</sup>: Կնշանակի, եթե բացատրվեն այդ «դժվարությունները»՝ խնդիրը լուծված կհամարվի: Այդ հարցերից ամենակարևորը հետևյալն է: Հ. Աճառյանը հարց է տալիս, եթե Համամ Արևելցին իրոք հետո դարձել է Հոգևորական և եթե իրոք նա կոչվել է նաև Հովհաննես, հապա ինչո՞ւ նրա «երկերը շեն հիշված Հովհաննես կրոնավորական անունով, այլ միայն Համամ»<sup>5</sup>: Պիտի նկատել, սակայն, որ կան նաև այդպիսի փաստեր, որոնցից մեկը հայտնի է եղել դեռևս շատ վաղ ժամանակներից, իսկ մյուսները երեան են գալիս

3 Կ. Կոստանյանց, Համամ Արևելցի, Վաղարշապատ, 1896:

4 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Դ, Երևան, 1947, էջ 24:

5 Անդ:

ձեռադրերից: Դրանցից առաջինը պահպանված է Մխիթար Արքիվանեցու մոտ, նա գրում է. «Համամ, որ և Յովհաննես Բագրատունի, մեկնեաց զԱռակսն և եղ զվերշի գուրղայմ ի վլուխ Սաղմոսացն»<sup>6</sup>: Հաջորդ վկայությունը հանդիպում էնք 14-րդ դարի երկու ձեռագրում, ուր կարդում ենք. «Հարց»— Ո՞վ է Համամն՝ Առակաց մեկնիչն: Պատասխան — Բագրատունեաց իմաստասէր արեղա Յոհաննէս անուն: Հարց — Զի՞նչ արարեալ: Պատասխան — Զվերշին գորողացքտ նա է կարգել ի Սաղմոսին վերայ և զՔերականն մեկնեալը: Համամնման մի ուրիշ փաստ էլ կտեսնենք ստորև՝ № 5128 ձեռագրից:

Այսպիսով, Հ. Աճառյանի մատնանշած դժվարություններից մեկը հաղթահարված է: Հաղթահարվում են նաև մյուսները, որոնք անհամեմատ ավելի թույլ հիմքեր ունեն:

Միաժամանակ նշենք, որ այդ «դժվարություններ»-ից ելնելով, Հ. Աճառյանը փորձելով ստեղծել երկու Համամ Արևելցի, ընկել է աղաղակող հակասությունների մեջ: Այսպես, նա Համամ Արևելցի—Հովհաննես ասելով հասկացել է Աղվանից թագավորին, իսկ Համամ Արևելցի՝ մատենագրին, վերջինիս շղիտելով նաև որպես Հովհաննես անվամբ հայտնի անձնագործյություն: Մինչ հենց նոր տեսանք, որ մատենագիրն էլ Հովհաննես է կոչվել («Բագրատուննեաց իմաստասէր արեղա Յովհաննէս անուն»): Կան նաև այլ հակասություններ:

Մի ուրիշ փաստի վրա է ուշադրություն հրավիրել վերջերս ակադ. Աշ. Հովհաննիսյանը: Նա մեր Մատենադարանի № 5128 ձեռագրում (17-րդ դ.) հանդիպել է այսպիսի տողերի. «Ճեծ վարժապետն հայոց Համամ Յովհաննէս աւծօղ թագաւորին Աշոտոյ Բագրատունոյ»: Այստեղից էլ նա եղրակացրել է, որ այդ Համամը չէր կարող Աղվանից իշխան Համամը լինել, որովհետև նա այդ ժամանակներին վարդապետ չէր<sup>7</sup>:

Պիտի նկատել, սակայն, որ նշված ձեռագրում առկա վկայության հեղինակը շփոթության մեջ է, որովհետև Աշոտ Բագ-

6 Մխիթար Արքիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկա, 1860, էջ 55:

7 Զեռ, № 2152, թերթ 210ա:

8 Աշ. Հովհաննիսյան, Գրադներ հայ աղամագրական մաքի պատմութան, Ա, Երևան, 1957, էջ 120—121:

բատունուն կարող էր օծել և օծել է ամենայն հայոց կաթողիկոս Գեորգ Բ Գառնիեցին: Դա ամեն մի հոգևորականի չէր կարող հանձնվել: Որ իրոք դա այդպիս էլ եղել է, կան մի շարք վկայություններ. օրինակ, Հովհաննես Դրասխանակերտցին գրում է. «Կոչեցաւ... հայրապետն Գեորգ....» և օծեց «զնաթագաւոր»<sup>9</sup>: Ստ. Օքելլյանը գրում է. «Կացուցանեն զԱշոտ Բագրատունի թագաւոր... զոր էօծ Տէր Գեորգ Հայոց կաթողիկոս...»<sup>10</sup>: 14—15-րդ դարերի մի գրի վկայում է. «ի... հայրապետութեան տեսան Գեորգա կաթողիկոսին, որ օծեաց զԱշոտ թագաւոր Հայոց...»<sup>11</sup>: Այդ կարծիքը կասկածի առարկա չի եղել նաև մասնագիտական գրականության մեջ: Ուստի միանդամայն պարզ է, որ № 5128 ձեռագրի վկայությունը շփոթության արդյունք է: Հնարավոր է կարծել, որ այդ օծմանը մասնակցել է Համամ Արևելից իշխանը, որը հետո դարձել է թագավոր, իսկ հետո՝ վարդապետ: Այս տվյալներից, իրոք, անգուշության գեպքում, հնարավոր կլիներ այնպիսի ոչ ճիշտ ձեակերպման երևան գալը, որպիսին առկա է № 5128 ձեռագրում: Զմոռանանք նաև «վարժապետ»-ության պարագան:

Այսպիսով, տեսնում ենք, որ դա ևս բանասիրական հիմք չէ՝ Կ. Կոստանյանցի կարծիքին հակադրվելու համար:

Մեզ հայտնի են նաև մի քանի բոլորովին անհիմն հայտարարություններ՝ խարսխված ոչ թե նոր փաստերի, այլ Հ. Աճայշանի մատնանշած «դժվարությունների» վրա, որոնց անդրադառնալու հարկ չի զգացվում:

Այժմ ամփոփ գծերով անդրադառնանք Կ. Կոստանյանցի փաստարկումներին, անելով որոշ լրացումներ, որոնք մի կողմից ցուց կտան, որ 9-րդ դարում ապրել է լոկ մեկ Համամ Արևելից՝ և թագավոր, և մատենագիր, իսկ մյուս կողմից առիթ կհանդիսանան ծանոթանալու նրա կենսագրության մեջ հայտնի գլխավոր էջերին:

<sup>9</sup> Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 139.

<sup>10</sup> Ստեփանոս Օքելլյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 175:

<sup>11</sup> Գ. Հովհանիս, Յիշտակարանք ձեռագրաց, Ա. Անթիլիաս, 1951, էջ 81:

«Պատմութիւն Աղուանից» երկում Համամ Արևելցու մասին գրված է.

Եկապա բարեպաշտն Համամ՝ նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տանն Աղուանից նորոգէր, որպէս Աշոտ Բագրատունի՝ զՀայոց թագաւորութիւն. այսք ի միում ժամանակի գործեցան: Եւ նոյն ինքն Համամ, սակա առ աստուած մեծապէս յանցանացն, որ վասն սնուած այսր կենաց զպարտ արեան եղորն ժողովիաց յանձն իւր, մեծագոյն բարեգործութիւնս առ եկեղեցիս և առ ամենայն կարօտեալս և չքաւորս առատազուարթ անսպառ կատարէր, որ և զմեծ հայրապետն Հայոց Գեորգ յանօրէն տաճկաց կապարանէն բազմաբաշխ զանձիւք տայր արձակիլ և յոզնամեծար զնա արարեալ՝ առողջ առ Հայաստանեայս առաքէրը»<sup>12</sup>:

Այստեղից որոշակիորեն տեղականում ենք, որ Համամ Արևելցին է Աղուանից թագավորության վերականգնողը: Իմանում ենք նաև, որ նա ապրել ու գործել է նույն օրերին, երբ՝ Աշոտ Բագրատունին Հայաստանում: Հայոց Գեորգ կաթողիկոսին արաքական բոնությունից ապատելու գործում նրա բերած օգնությունն ավելի քան հաստատում է վերոհիշյալ երկու վկայությունների իսկությունը, մանավանդ, որ այդ մասին հավաստի վկայություն կա նաև Հովհաննես Դրասխանակերտցու մոտ<sup>13</sup>, ինչպիս և այլ սկզբանաբյուրներում:

<sup>12</sup> Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 333:

<sup>13</sup> Վերշինս, պատմելով Գեորգ կաթողիկոսի արաքական գերության մասին, գրում է, թե Հավաքեցինք փրկազին և «Վազգաղակի առաքեցաք ըստ Հրամանի արքայի Մծրատայ առ մեծ իշխանն Արևելից Համամ: Վասնդի սատիկանն (իմա՝ Ափշինը) բնդ այն ժամանակս հասեալ ի Փայտակարան (իմա՝ Բալլական) բաղաք՝ ընդ իւր տանէր զմեծ կաթողիկոսն, յոր իրու ժամանակ հապճապով մերքս հասին առ նա: Իսկ նա յինքն հայցեալ զհայտապետն, և յառաքեալ զանձն առ յիւրմէն ևս յաւելեալ ի լրումն սակին՝ տայր տանի սատիկանին: Եւ հայտաց պաշտպանութեամբ թեակոխեալ փափարձար իշխանն ի տեսանել զհայրապետն մեծ, և մարմնաւոր պիտոյից բովանդակապէս բաւականացեալ ի հեռաւոր օտարութեան և յարրանեկութեան պայմանի սպասաւորեալ առաք զնա ի Հայու» (Հովհ. Գրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 170—171):

Կ. Կոստանյանցը վերոհիշյալ վկայությունից վերցնում է Հատկապես այն տեղեկությունը, որը խոսվում է Համամ թագավորի անձնական հանցանքի մասին, որը նա չի մոռացել երբեք և միշտ մեծամեծ բարերարություններով ու զղանքով փորձել է փարատել: Խոսքը վերաբերում է հետեւյալ հատվածին. «...Համամ, սակա... մեծապէս յանցանացն, որ... զպարարեան եղորն ժողովեաց յանձն իւր...», այսինքն, Համամը, որ մտել էր իր եղրոր արյան մեղքի տակ:

Եվ հենց այս հանգամանքն էլ օդնել է Կ. Կոստանյանցին տեսնելու այն անբակտերի կապը, որով թագավոր Համամն ու մատենազիրը կապված են միմյանց, որպէս մի անբաժանելի անձնավորություն: Դրա ցայտուն ապացույցը Համամ Արեկեցու Հանրահայտ Շարականն է, որը տեղ է գտել Հայկական Շարականուներում, «Շարական Համամայ» խորագրով: Այդտեղ կարողում ենք.

Հայր երկնաւոր...  
Աղաշեմ ըգբեզ,  
Ներեա յանցանաց իմոց...  
Արք անօրէնք կոչեցին զիս Հաղորդիլ արեան մահու,  
Գրնացի բղանապարհ ձախակողմեան,  
Կատարեցի ըզչար խորհուրդ նոցա...  
Հրամանաւ իսմայլէնան բրնաւորին  
Երագեցի հեղուլ զարին եղորին,  
Աղաշեմ ըգբեզ,  
Ներեա յանցանաց իմոց...

Եղրայրասպանության նույն ծանր հանցանքի ու նրանից անբաժան զղումի մասին է խոսվում նաև այստեղ:

Համամ մատենազիրն ունի նաև մի ուրիշ ստեղծագործություն. «Մեկնութիւն Առակաց Սողոմոնի», որի մեջ զարձյալ իր արձագանքն է գտել այդ հանցանքն՝ իր հետ կապված զղումով: Ավելին, այստեղ առկա են սողեր, որոնք փոքր ինչ տարրերությամբ գտնվում են նաև վերոհիշյալ Շարականում, որով կրկին ու կրկին նրանց հեղինակները նույնանում են, նույնանալով նաև Համամ թագավորի անձնավորության հետ: Որպէս ապացույց բերենք միայն մի հատված մատնանշված

մեկնությունից. «Եթէ կոչեսցեն զքեզ և ասիցեն. Եկ ընդ մեզ, կցորդ լիր արեան... որոյ ծածկի լիք հնար որպէս Արեկին... խոտորեա ի շաւղաց նոցա... Երագին ոտք նոցա հեղուլ զարին... Զայն որ առաւել խօսի, քան զշաբելին, և զի՞նչ խօսի, եթէ ոչ զանպարտութիւն և զթողութեան մեղաց...»<sup>14</sup>:

Ինչպիս տեսնում ենք, այստեղ Սողոմոնի Առակներում նշված մարդասպանության ընդհանուր զաղափարը («կցորդ լիր արեան», «հեղուլ զարին»...) Համամ Արեկեցու կողմից կոնկրետացված է բոլոր տիսակի սպանություններից միմիայն մեկի միջոցով, այն է, եղբայրասպանության՝ ի գեմս Արեկի և Կայենի զրույցի: Բայց դա էլ թույլ է թվացել հեղինակին, որովհետև դա դիցարանական եղբայրասպանություն է, մինչ նա ալելի սոսկալին ու կոնկրետն է ուղում հիշեցնել. ուստի ասում է. «Զա՛յն, որ առաւել խօսի, քան զշաբելին»: Այստեղ էլ Համամը չի մոռանում զղումի և մեղքերի թողության պարագան:

Ինչ վերաբերում է նման տողերի առկայությանը, ապա հիշենք Շարականից «Երագեցի հեղուլ զարին եղբօրն», իսկ Առակներից՝ «Երագին ոտք նոցա հեղուլ զարին», Շարականից՝ «Կոչեցին զիս Հաղորդիլ արեան մահու», Առակներից՝ «Եթէ կոչեսցեն զքեզ... կցորդ լիր արեան», և այլն: Կարեռն այն է, որ այդ նմանությունները գալիս են նույն աղբյուրից— Սողոմոնի Առակներից, որն էլ իր հերթին է ապացուցում, որ գործ ունենք տվյալ տողերը տարրեր ձեռվ օգտագործող նույն հեղինակի հետ:

Կա մի ուրիշ զորեղ հանգամանք ևս, որ ապացուցում է Համամ թագավորի և Համամ մատենազիր նույնությունը: Դա նրանց երկուսի էլ բանաստեղծ լինելն է: Մենք դրանում արդեն համոզվեցինք Շարականի շնորհիվ: Բայց կարող են ասել, թե, այս, թագավորը նաև բանաստեղծ էր, մինչդեռ մատենազիրը՝ ոչ, ուստի և դրա հիման վրա նրանց անջատելու փոքր կատարել: Նման միտք առկա է հենց Հ. Աճայշանի մոտ: Բայց

14 Զեռ. № 1151, թերթ 2ա—2բ:

այստեղ էլ փաստերն ավելի գորեղ են, քան բոլոր այն հնիմառըրությունները, որ նպատակ ունեն Համամ Արևելցուն կիսել երկու անձնավորության: Այս առօտեղ կարեոր վկայություններ կան Համամ մատենագիր Արևելցու Քերականության մեկնության մեջ: Այդտեղ սակավ են այն պարբերությունները, որոնք չեն շնչում բանաստեղծական ոգով, իսկ շատ տեղեր էլ շարադրված են որպես բանաստեղծություն, նույնիսկ ակրոստիքոսով: Ավելին, մի տեղ էլ Համամն ինքն է նշում, թե քերականական տվյալ միտքը պարզ դարձնելու նպատակով ինքը բանաստեղծություն է հորինելու մարդու մասին:

«Բայց արդ դառնամ միւս ևս յենթանկեալ տեսակացս խաղաղացմունս և զես պատեհան ի մատոյ պարզիկ իմն առնում՝ բատ յիս առելոց՝ ժերդելով բան ազդողականաց, բատ որում, մարդս ասիմ»: Եվ նա զրում է իսկապես բանաստեղծությունը քերականական նպատակով<sup>15</sup>: Այս և նման այլ նմուշները կտևնենք ստորեւ:

Ահա այս և այլ փաստերը ոչ մի հիմք չեն տալիս կասկածելու, թե Ազգանից թագավոր Համամ Արևելցի թագրատունին նույն Համամ Արևելցի մատենագիրն է: Կ. Կոստանյանցը, եթե գտնում է, որ նա մատենագրությամբ է զբաղվել թագից հրաժարվելոց հետո, ապա կարելի է այդ մտքի հետ ևս Համաձայնել, միայն թե հնարավոր համարելով, որ նա կարող էր այդ գործով զբաղվել նաև թագավորության տարիներին, ինչպիս, ասենք, Վաշագան Երրորդը, կամ հենց իր որդին՝ Արքներսէց և եղրայրը՝ Փիտեն:

Համամ Արևելցի թագրատունու որպես Ազգանից հայազն թագավորի մասին, անկախ որոշ մանրամասների տարրեր մեկնաբանությունից, Հայ մասնագիտական գրականության մեջ ևս բավականին շատ է խոսվել: Ըստ էության դա կասկածից վեր մի իրողություն է: Ուստի նրան հանդիպում ենք նաև որոշ մասնագիտների գրած աշխատություններում: Նկատելի

է, սակայն, որ նրանք բոլորովին չեն նշում նրա հայ լինելու և մանապվանդ նրա մատենագիր լինելու պարագաները: Սովորական պայմաններում դա կարելի էր բացատրել անտեղյակ լինելու պատճառով: Սակայն Ազգանից աշխարհի բնիկ հայությանը հետևողականորեն անտեսելու այն սխալ սկզբունքը, որ արմատացած է որոշ մասնագիտների մոտ, թույլ է տալիս ասելու, թե նրանք նույն եղանակով են վարկում նաև այս գեպքում:

Հիշենք մի երկու փաստ:

Զ. Ի. Բունիքաթովի գրքույկում Համամ Արևելցին հիշվում է այսպիս:

«Ատ-Տաբարիի հեղինակության մեջ կան կարենոր վկայություններ թուրքերի դերի մասին՝ խալիֆաթի թաղաքական կյանքում և Աղրբեջանում. Աղրբեջանի տերիտորիայում—յաղդիղների և սաշխների թաղաքական կազմավորումների վերաբերյալ, առանձին գավառների կառավարիչների—Սահմ իբն Սունարաթի, իսա իբն Ստեփանոսի, Գրիգոր Համամի, Ասրբներսէջի և ուրիշների մասին»<sup>16</sup>:

Փաստերին անտեղյակ ընթերցողը այս պարբերությունից այնպիսի տպավորություն կարող է ստանալ, թե նշված անունների տերերը թուրքեր են, մինչ նրանք ոչ այլ ոք են, քան Սըմբատի որդի Սահմը (Սահակը), Ստեփաննոսի որդի Եսային, Համամ Արևելցին և ուրիշներ, բոլորն էլ Հայ: Մենք երբեք էլ չենք ընդգծի այս պարագան, եթե Համամ Արևելցին և նրա հաջորդներն էլ այնպիսի Հայ թագավորներ լինեին, որոնք եղել են մայր Հայրենիթից կտրված, օտար գահերի վրա (ինչպիս Բյուզանդական), և բատ ամենայնի, Հայության հետ ընդհանուր ուժինչ չունեին: Այստեղ, սակայն, Համամն ու նրա հաջորդները ոչ այլ ոք են, քան իրենց երկրի՝ Ազգանից հնամենին ու բնիկ Հայության հարազատ զավակները, Հայ լեզվի և գրականության արժանահիշատակ ներկայացուցիչները:

<sup>15</sup> Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи. Петроград, 1915, стр. 258—259.

<sup>16</sup> З. Буниятов, Обзор источников по истории Азербайджана, Баку, 1964, стр. 10—11.

Աղլանից աշխարհի գրականության պատմության մեջ Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից» երկից հետո, հաջորդ խոշոր երևութիւնը Համամ Արևելցու ստեղծած մատենագրությունն է՝ լիարժեք, բազմակողմանի, հարուստ եթե այնուղեք գործ ունենինք երկու և ավելի հեղինակների հետ, որոնց սեփական ձայնը խլացված էր տասնյակ մատենագրիներից առնված վկայությունների ու վավերագրերի համերդինք, ապա այստեղ գործ ունենիք անհամեմատ մեծ զիտելիքների ու ընդունակությունների տեր մի հեղինակի, իսկական մատենագրի հետ:

Համամ Արևելցու գրական ժառանգության մոտավոր պատկերը, սկզբնաղրյուրների և նրա գործերի պահպանված ընդօրինակությունների համաձայն, հետևյալն է.

1. Հարական Համամայ, Պահպանված է ձեռագիր տասնյակ Շարականոցներում որպես պարականոն շարական և հրատարակված է բազմաթիվ աղբյուրներում<sup>17</sup>:

2. Մեկնուրին Քերականին—Դիրոնիսիոս Թրակացու Քերականության հայ մեկնություններից մեկն է, որի լրիվ բնագիրը մեզ չի հասել: Այն ժամանակին օգտագործվել է Հովհաննես Երգնկացու քերականության մեջ ճոխ մեջբերումներով, որտեղից էլ արտածելով Ն. Աղոնցը կազմել է նրա պահասավոր, բայց «ամրողական» ընագիրը<sup>18</sup>: Մեզ հայտնի է այդ աշխատության մի նորահայտ բեկորը ևս, որն առաջին շի հրապարակված<sup>19</sup>:

3. Մեկնուրին Առակացն Սողոմոնի—Պահպանվել է մեկ ընդօրինակությամբ, որը գտնվում է Մաշտոցի անվան Մատենադարանում և որից ժամանակին օգտվել է Կ. Կոստանյանցը: Բնագիրը ցարդ անտիպ:

4. Մեկնուրին Սաղմոսաց — Հիշատակվում է լոկ սկրզնաղրյուրներում: Համարվում է կորած:

<sup>17</sup> Սահմանական Ամառունի, Հին և նոր պարականոն... շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 163—164:

<sup>18</sup> Ա. Ածոնց, Դիոնիսի Փրակիական և արմանական տոլկօտելի, Պետրոգրադ, 1915, էտր. 251—285.

<sup>19</sup> Տե՛ս ստորև:

5. Մեկնուրին Ամբիծք սաղմոսին — Կորած:

6. Մեկնուրին Յորայ Ով է դա-ին, Անտիպ, ցարդ անհայտ: Ըստ Մեսրոպ Մագիստրոսի անտիպ ցուցակի, պահպանված է Վեհաբիկի № 611 ձեռագրում, «Համամ վարդապետի մեկնութիւն Ով է դա-ին Յորայ (լոր)» (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագրատուն, Մ. Մագիստրոսի նշված ցուցակ, էջ 1290—1292):

7. Պատմական մի երկ — Կորած:

8. Մեկնուրին Դիրոնիսիոսի Արխապատցոյ—Պահպանված է մեկ ընդօրինակությամբ, անտիպ<sup>20</sup>:

20 Գտնվում է Փարփիղ ազգային գրադարանում (№ 60): Ձեռագիրը նախ նկարագրված է Մակերի Հայտնի ցուցակում, ապա Մեսրոպ վրդ: Մագիստրոսի անտիպ ցուցակում (§ 3333, էջ 1290): Այս վերջին ավելի ընդարձակ է, ըստ որի ձեռագիրը հանդիսանում է 15-րդ դարի ընդօրինակություն, բաղկացած է 34 թիրթից, 14,5×9 ամ ծավալով: Մեկնության հորագիրն է՝ «Համամ վարդապետի բան լուծաբաց բանից Դիրոնիսի»: Վերջինը հատուկ խնդրանքով, մեծարդք բանասնը և Պերսկերյանի միջոցով, ստացանք արդ ձեռագիրի լուսանկարը: Որոնումներից պարզվեց, որ այդ մեկնության մի այլ ընդօրինակություն էլ պահպանված է Մաշտոցի անվան Մատենադարանի № 6362 ձեռագրում (թիրթ 1—45թ)՝ թիրորինակված 1182 թվականին: Զեայած այստեղ Փարփիղ նշված ձեռագրի համեմատությամբ, սկզբից պահպանում են մի բանի թիրթեր, սակայն վերցից առկա է ընդարձակ շարունակություն: Իր ծավալով Մաշտոցի անվան Մատենադարանի օրինակը 3—4 մեզամ ավելի մեծ է (վերը պահպան): Պիտի նկատել, սակայն, որ այդ վերջին մասնությունը համեմատում են մի բանի այնպիսի տվյալներ, որոնք կամկած են գոյում որոքի հեղինակային պատկանելիության հարցի վրա: Այսպէս, օրինակ, 13րդ թիրթում կարում ենք, ուս է գիրս արարաւալ քահանայիցն: Կառավար նա է, զոր նարեկ լիլ, ի գիրս, սաէ, քահանայիցն: Խնչան հայտնի է, Համամ Արևելցու մաշվան և Գրիգոր Նարեկացու Մատյանի (Նարեկ) երկունքի միջև ընկած է մի ամբողջ հարյուրամյակ, ուստի Համամը Նարեկի մասին շըր կարող խոսել: Այսուհետև, երեսում է, որ Դիրոնիսիոսի այդ մեկնության հեղինակը Կիլիկիայի հայ ժամանականներից է եղել և ոչ թե Աղվանիքի Դա զգացվում է, օրինակ, հետևյալ տողերից, որպէս այժմ մեր վաներս, այլ է Դրազրկուն կրօնքն, այլ՝ Միհնոյն (թիրթ 43ա): Կամ՝ «Որպէս այժմ տեսաննեմք, որ ով վանք է շինել, նա՝ իր առանձին կրօնք, այս է ասհման գրել, որպէս այլ սահման է Դրազրկուն, այլ Խորնին և Ակներուն, Խոյնակ ֆունկաց...» (նույն տեղում):

№ 6362 ձեռագրում սույն մեկնությանը հաջորդող մեկնության վերցում կարգում ենք «Զվահրամ գերարդաւ բանի սպասաւոր և զարարօղ լուծանց...

9. Կարգումն Գոբողայից—Ուսումնասիրության կարուր հարց, որով դեռևս ոչ ոք չի զբաղվել:

Ինչպես տեսնում ենք, ուազմական և քաղաքական ականավոր գործիշ Համամ Արևելցին իր այս ստեղծագործությունների միջից մեզ է նայում նաև որպես բանաստեղծ, երաժիշտ, պատմիչ, Աստվածաշնչի և աստվածաբանական գրականության մեկնիչ, քերական, մանկավարժ, եկեղեցական ժամերգության կանոնավորող: Այս ամենով նա Հայոց Արևելից աշխարհի առաջին դասական մատենագիրն է, նրա խոշոր լուսավորիչներից մեկը: Եվ երբ այդ բոլորին ավելացնում ենք արարական բռնապետության ձեռքից Աղվանքը (Հետեապես նաև Անդրկովկասը) ազատագրելու գործում նրա դերը և Աղվանից խորտակված թագավորության վերականգման մեծ գործը, ապա ավելի բան ամբողջական է դառնում նրա եղակի կերպարանքը՝ առհասարակ:

Համամ Արևելցու մասին որպես բանաստեղծի՝ մենք մասնակի գաղափար արդեն կազմեցինք նրա Շարականի մասին խոսք եղած տեղում: Դա հայկական հին քնարերգության մի եղակի նմուշ է, իր տեսակի մեջ միակը՝ մեր ողջ շափածո խոսքի անդաստանում: Այն որքան հոգևոր, նույնքան էլ աշխարհիկ բնույթ ունի: Եթե մի կողմից այսուղի խոսքն ուղղված է դեպի աստվածային վերացականությունը, ապա մյուս կողմից այն զալիս է անհատի սրտի վշտամորմոք ու զղջանքով լեցուն խորքերից: Նրա մեջ մղկտում է ոչ թե առհասարակ մարդու մեղանշականությունը դիտակցող հեղինակի միջնադարյան վիշտը, այլ իրական, անձնական հանցանքի փոթորկող զգացմունքը: Այն՝ մարդկանց մղում է ոչ թե դեպի հրա-

և երշանիկ բարունիս Գէորգ... կամաւ սորին եղեւ գրութիւն սորաւ (թերթ 66):

Հարց է առաջանում, արդյո՞ք «լուծմանցաւ ասելով գրիչը նկատի չի ունեցել նաև մեզ հետաքրքրող լուծմունքը Այնուհետև, արդյո՞ք, Փարիզի ձեռադրի խորագրում կարդացված «Համամ»-ը (որը լուսանկարում չի երեւմ) «Վահրամ» չէ կամ նրա աղավաղմամբ չի ստեղծվել:

Այս հարցերը մնում են քննության կարուտ:

Ժարումը կյանքից, այլ դեպի սերը նրա նկատմամբ, մարդու նկատմամբ և հատկապես եղբօր: Դա մարմնական եղբօր գովքն է ու ավելի բարձր, քան Աստվածաշնչի համապատասխան զաղափարը՝ Կայենի և Արելի զրուցում:

Հրամանաւ Խամայէլեան բրոնաւորին  
նրագեցի հեղուկ զարին եղօրն...

Հառաչում է զղցացած ու զգայուն բանաստեղծը՝ եղբայրասպան բռնություններով հագեցված այն ժամանակներում արարական արյունահեղ քաղաքականության օրերին և զրանով իսկ ատելություն սերմանում օտար տիրողների դեմ, եղբայրասիրական հորդոր կարդալով յուրայիններին:

Դավթակ Քերթողի Ողբից հետո Համամ Արևելցու Շարականը մեր հին քնարերգության հաջորդ աշխարհիկ ստեղծագործությունն է:

Համամ Արևելցին որպես բանաստեղծ զգացվում է իր Քերականության համարյա ամեն մի պարբերության մեջ: Հմուտ ու շնորհալի հեղինակը այդուղի իր ամբողջ կարողությունը գործի է դրեւ, որպեսզի, բանաստեղծական հնարանքների օգնությամբ, ավելի քան զյուրամարս ու հեշտ հիշելի զառնան քերականական օրենքները, վարժությունները: Այլ կերպ ասած, նա բանաստեղծությունն այսուղի ծառայեցրել է քերականությանը, ուստի և անաղարտ բանաստեղծություններ ձեւական առումով այսուղի չկան: Սակայն, անկախ դրանից, այդ հատվածները մեծ արժեք ունեն ոչ միայն հեղինակին, այլև իր ժամանակի ու միջավայրի շափածո խոսքի մասին զաղափար կազմելու առումով, մանավանդ, որ 9-րդ դարը խիստ աղքատ է բանաստեղծական արտադրանքով:

Ինչպես երեսում է, Դավթակ Քերթողի, Կոմիտասի, Ստեփանոս Սյունեցու սիրած ակրոստիքոսային եղանակը շատ է սիրել նաև Համամ Արևելցին, ուստի նրա մոտ էլ առկա են հայոց այրութենով հյուսված ուշագրավ նմուշներ: Եվ եթե Դավթակ Քերթողի մոտ Ա-Ք-ի ձգտող շարքը լոկ ձեւական է, ապա Համամ Արևելցու մոտ տառերը բառային իմաստ ունեն և այդ

պատճառով էլ, թե՛ ձեռվ և թե՛ բովանդակությամբ, նրանք ձուզած են ընդհանուր խոսքին: Այստեղ թեկուղ անհիմն ձեռվ խոսք անդամ չի կարող առաջանալ նրանց թարգմանված լինելու մասին, որովհետև դրանք շափված են հայոց այրութենի վրա: Ահա մի օրինակ.

Աղբ-թենն է բաղադանել ի դէպ,

Ազգ-Գիմն է սերաւորելով ազգս,

Մարգ-Գայն է սենաւորել զնասարակաց զձայն...<sup>21</sup>

Ինչպես քննվող հարցի առումով, այնպես էլ առհասարակ, որպես անտիպ նորություն, հարկ ենք համարում մեջ բերել Համամ Արևելցու Քերականության մի նոր հատվածը՝ պահպանված Մաշտոցյան Մատենագարանի №№ 836 (թերթ 83աբ) և 2152 (թերթ 210) ձեռագրերում:

«Հարց—Համամ՝ վասն առաջի գրուն»

Պատասխանի — Այս, գիր առաջին և թէ առ ի քեզ և թէ ուսիր. երեք սատ և չորս անգիմ, որ լինի եւթն: Այս է չափ ամենայն գրոյս հայոց: Կերպարան երեքանգիմն և ձն՝ առ շեղեալս, թափանցս, խորանակս, ահանցեալս, բովանդակս, բատկանս, ուղղաժինս չորեքանգիմնիս, կէստո՞մեակս, զարձարձաւս, կրինապատս, կողաձնս, դարձաւս, շողակոշտս:

Հարց—Զի՞նէ, որ՝

Առաջին տառն երեստեղեալք ձնովք հաւասարք միմնանց.

Բ—զգուին խոնարհցուցեալ

և զրագուկն տարածեալ ընդ արևմուսու,

Ե: Գիմն թագ ածեալ

զգիսովն և անփոփեալ,

Դայն գէմս եղեալ

և ի թիկանցն շառաւեղեալ,

Ելն ի վեր զսպեալ

և զգուին բարձրացուցեալ,

Զայն թագ ածեալ

և զոտն արձակեալ:

Եւ որ ի կարգին է<sup>22</sup>:

21 Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр. 256.

22 Զին. № 836, թերթ 83աբ:

Դրանք, աշակերտական վարժությունների համար գրված լինելով հանդերձ, յուրովի մեր այրութենի առաջին գովքն են, երեսլիթ, որին երեք դար հատու միայն պիտի անդրադառնար ներսես Ծնորհալին: Հանգերն էլ պակաս նշանակալից երևույթ չեն:

Մի այլ շափածո հատվածում, որի մասին նշվեց վերևում, հեղինակը քերականական առումով մոտենալով խնդրին, ըստ էության, տվել է «մարդ» հասկացողության («...քերդելով բան ազդողականաց... մարդս ասիմ») գովքը, որը փաստորին առաջինն է մեր քնարերգության մեջ:

Ահա մի քանի տող այդ հատվածից.

Պատկեր եմ պատկերի

Եւ նմանութիւն նմանուն,

Կենդանի և բանաւոր

Եւ երկուց կոչմանց տէր...

Ջի վեհս եմ հոգուով,

Եւ երենախոն դեսական,

Եւ նմանականն հրեշտակի...

Եւ քերգելով զբնաւու

Բատ իմոյ անձին առնում զձեռ՝

Զուգին հրաշ...

Եւ կենդանի ըստ անմահիցն վեհական...

Եւ մահանացուն լուծաւու,

Եւ զասական՝ յետ աստուծոյ և հրեշտակաց —

Ե՛ս, բանական

Ե՛ս սպասաւոր, և՛ ազատ...<sup>23</sup>

Մարդու այս բնութագրականը շնայած շատ է կապված կրոնական ըմբռնումների հետ, սակայն և շնչում է ազատության որոշ զաղափարով.

Ե՛ս, բանական

Ե՛ս սպասաւոր, և՛ ազատ...

23 Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, стр. 258—260.

Մենք այստեղ որոշ բառեր գորս ենք թողել ոտանակորի որոշ տողերից, որոնք գորս քերականական նշանակություն ունեն:

Զմոռանանք, որ այստեղ խոսքը 9-րդ դարի մասին է։ Միաժամանակ հիշենք, որ այդ դարում մանավանդ Համամ Արևելցու օրերին, լարված պայքար էր մղվում արարական լժից ազտագրվելու համար։

Նշելով Համամ Արևելցու որպես բանաստեղծի մի քանի բնութագրական գծերը, քննվող երկի՝ Քերականության կապակցությամբ, շնչք կարող լասել, որ նա այստեղ միաժամանակ հանդես է գալիս ոչ միայն որպես քերական, այլև մանկավարժ։ Նրա ջանքերը՝ քերականության օրենքներն ու վարժությունները զնել գեղեցիկ, հետո հիշվող, անգիր արվող ձևի մեջ, նշանակում է, հոգալ աշակերտների մասին, աչքի առջև ունենալ նրանց։ Այս առումով ևս, ինչպես իր «բարեպաշտ» մականունով, Համամ Արևելցին հիշեցնում է Աղվանից աշխարհի իր անմիջապես (ոչ ժամանակի առումով) նախորդ թագավորին՝ Վաշագան Երրորդին, որը գեռևս 6-րդ դարի սկզբներին, այն է, շուրջ 370 տարի առաջ, անձամբ գասեր էր տալիս դպրոցներում։ «Նստեալ ինքն ի դպրոցատանն՝ զորդիս դիմաց և քրմաց զինքեամբ կացուցանէր՝ զուբզայարար բակ առեալ բազմութեանն յոյժ, ոմանց գիրս և ոմանց պնակիտս ի ձեռին ունելով, և միաբան առհասարակ ամենեցուն մեծաձայն հրամայէր կարդալ, և ինքն ուրախ լինէր առաւել, քան թէ մեծագոյն ուրուք գտեալ աւար»<sup>24</sup>։

Համամ Արևելցին նույնիսկ կարող էր ծանոթ լինել Մովսես Կաղանկատվացու այս տողերին և մասամբ ազդվել նաև նրանցից, մանավանդ այն գիտակցությամբ, որ ինքը վերականգնում էր Վաշագան Երրորդից հետո խղված թաղավորությունը։

Հասկանալի է նաև, որ նա ուսուցանում էր և՛ քերականական օրենքներ, և՛ լեզու, և՛ բանաստեղծական արվեստ։

Նա իր քերականության ձեռնարկով, միաժամանակ մեծ ուշադրություն էր դարձնում Աղվանից եկեղեցու կրոնական սույնության վրա, դավանաբանական խնդիրներին, որոնք, ինչ-

պես կտեսնենք ստորև, քաղաքական, հայրենասիրական ձեռնարկումների անբաժան մասն էին կազմում՝ այն ժամանակվա Աղվանքում և Հայաստանում։ Այս առումով խիստ է վարվել Գ. Զահուկյանը՝ Համամ Արևելցու քերականության այդ երանգը միակողմանիորեն քննադատելով<sup>25</sup>։ Անշուշտ, նա նեղ առումով գուց և ճիշտ է, սակայն յուրաքանչյուր ստեղծագործություն իր ժամանակի արդյունքն է և նրա պահանջների արտացոլքը։ Համամը ձգտել է անգամ քերականությունը ժառանցնել երկրի և հկեղեցու շահերին, որն այն ժամանակվա փորկուս օրերին մեծ դեր պիտի խաղար։

Համամ Արևելցու որպես բանաստեղծի, քերականի, մանկավարժի, շարական գրողի մասին խոսելիս, լավ կլիներ շոշափել նաև նրա երաժշտական ընդունակություններն ու աշխատանքները։

Վ. Հացունին, անդրադառնալով այս հարցին, Միհթար Այրիվանեցու վերոհիշյալ վկայության հիման վրա («Համամ, որ և Յովհաննէս... եղ զվերջին գուրզայսն ի զլուխ սաղմոսացն»), գրում է, որ այդպես ասելով Միհթար Այրիվանեցին «կիմանար, թե նա (իմա Համամը) յուրաքանչյուր կանոնի վերջին գուրզային մեծագույն կարևորություն մը տվավ, ինչ որ արդեն շափով մը ունեին ե դարեն. և ինք հավանորեն ծանրացուց անոնց եղանակը»<sup>26</sup>։

Մենք շգիտենք, Համամ Արևելցու նպատակն է եղել ամբողջ հայ եկեղեցու ժամերգության մեջ մուծել այդ նորությունը, թե՛ լոկ Աղվանից, բայց այն, ինչ որ արել է նա, առաջին հերթին, կապված է եղել իր տնօրինած երկրի առօրյայի հետ։ Ուստի նա իր այդ միջամտությամբ որոշ բարեփոխություն ժացնելով, միաժամանակ «ժանրացուց» վերջին գուրզաների եղանակը։ Իսկ զա նշանակում է, որ նա երաժշտական նուրբ գիտելիքներ և ունակություններ է ունեցել։

Այս առումով, որպես ուշագրավ վկայություն, կարելի է

25 Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները Հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 198—202։

26 Վ. Հացունի. Պատմութիւն Հայոց աղօթամատուցին, Վենետիկ, 1965, էջ 222։

24 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, 1912, էջ 60—61։

Հիշել նաև մեր Մատենադարանի № 5128 ձեռագիրը, որ մի այլ առիթով նշել է ակադ. Աշ. Հովհաննիսյանը: Այստեղ առաջին անգամ, հանդիպում ենք վկայության, որը կարող է օգնել մասնագետներին ավելի քան մոտիկից բժբանելու Համամ Արևելյու աշխատանքը՝ գուրզաների կապակցությամբ Ահա այդ վկայությունը:

### «Յաղագ մեկնութեան ալէլուեայ ասելոյն

Պարտ է գիտել ուսումնասիրաց և բանայսիրաց անձանց, զի Ը կանոն սաղմու՝ աստուծածօր մարդարէին Գաւթի, և ամէն կանոն է գորդա է և զետին գորդայք ի մարդարէիցն առեալ մեծ վարժապետն Հայոց Համամ Յոհաննէս աւծող թագաւորին Աշուոյ Քարքատունոյ, և ետ ասել ի վերջ տան սաղմուացն «Փառք յարութեան քո տէր» և զայն ամենայն ըստ պատշաճի տօնին, որ ունի խորհուրդ գութերորդ հանդերեալ աւուրն, և պարտ է ամենայն կարգաւորաց եկեղեցոյ կրկին ալէլու ասել ի մին տուն սաղմուին և դիտաւորութիւն սաղմուացն, որ ասէ զառաջինն ալէլուիայ, որ թարգմանի աւրհութիւն ի բարձունս, և միւս ընկերն ասէ ալէլուիայ, որ ասի Փա՛ռք քեզ աստուած...»<sup>27</sup>:

27 Զեռ. № 5128, թերթ 249ր: Տե՛ս նաև ձեռ. № 4913, 104ր: Այս վերջին ձեռագրում (թերթ 107ր) առկա է մի որիշ ստեղծագործություն՝ «Բանն ի Յովհաննէս Գառնեցոյ հոգելի վարդապետի վասն Գաւթիանն Սաղմոսի, որ ումանց երերաց թուիք խորագրով: Այստեղ նշվում է, որ Սաղմոսները ճիշտ չեն երգուում. «Եւ հայր ի բերան առեալ ասեն վայրապար և ծերատ քահանայք և ումիկք, մանկութ և կողեռք, նաև կանայք ևս»: Ուստի ինքը ստիպված հողացել է այդ մասին, զնալով Հաղբատ Հովհաննես Սարկավագի մոտ: «ԿԱ ևս նուաստ Յովհաննէս Գաւնեցի ծառայակից ձեր... ճանապարհ արարեալ զնացի ի մայրաբաղաքն մենաստանից ի Հաղբատ և զտի զրած ի թարգմանչացն Սաղմուարան: Ձոր առեալ սուրբ վարդապետին Յովհաննու, որ Սարկաւագն կոչիր, այն որ գտումարն երևեցոյց զի՞ն հային: Եւ նա սերմանեաց զայս ուղիղ և զուղորդ Սաղմոս և զի ոմանց այլ և այլ թոփ սա: Թայց ով սիրելի, ընկալ զայս զաղափար իբր բազում երկամք ըստուգեալ...»: Կից Սաղմուարան, նրա մեջ (122ա) «Փարոզ մասահակայ... Մեօրու պատ... վասն ի վերուած...»:

Այստեղ, ինչպես տեսնում ենք, Համամ Արևելյուն ավելի շատ գործ է վերագրված, քան զտնում ենք Միթթար Այրիվաննցու մոտ. ուստի և նրա գերթ նշված գուրզաների և երաժշտության հարցում հարցում ավելի մեծ է եղել:

Համամ Արևելյու հետաքրքրությունների այս կողմը ևս, առաջին հերթին, գնում է կապվելու Աղվանից եկեղեցու ամրապնդման և նրա Հեղինակության բարձրացման անհրաժեշտության հետ: Հենարան, առանց որի դժվար թե դիմանար նրա ստեղծած քաղաքական իշխանությունը՝ այն ժամանակվա բարդ իրադրությունների մեջ:

Այս տեսակնետից հատուկ կարևորություն են՝ ստանում Համամ Արևելյու մեկնությունները՝ նվիրված Աստվածաշնչի տարրեր դրբերին: Վերջիններիս ընդհանուր միտքը նույնն է՝ Հզորացնել կրոնական ոգին՝ Հայ-աղվանական ավանդական բմբանունների համաձայն, յուրովի շաղկապելով իր օրերի իրադրությունների հետ: Այստեղ էլ առկա է ոչ թե սոսկ մեկնարան-աստվածարան Հեղինակը, այլև ուսուցանող-մանկավարժ Համամ, Արևելյուն: Հստ որում, Սողոմոնի Առակները դրա լավագույն ապացույցն են, որոնք հենց սկզբից էլ հայ իրականության մեջ մուտք գործեցին մանկավարժական-ուսումնառական նպատակներով: Հորի Ո՞վ է դա-ի կորած մեկնությունը, ինչպես կարելի է ենթադրել Հորի այդ գործից, մեղ պիտի ծանոթացներ նրա Հեղինակի բնագիտական-տիեզերագիտական հայացքներին և իմացություններին:

Դրե՛լ է արդյոք Համամ Արևելյուն պատմական երկ, դրժվար է ասել: Այդ մասին հին սկզբնադրյուններից մեզ կոնկրետ վկայություն՝ հայտնի չէ: Միայն պատմաբան Մ. Զամշյանի մոտ է առկա մի հիշատակություն այդպիսի գործի երբեմնի գոյության մասին<sup>28</sup>: Վերևում տեսանք, որ Միթթար Գոշն էլ՝ Մովսես Գասխուրանցու անունով իրեն հայտնի «Պատմութիւն Աղուանից» երկից գուրս՝ նման այլ գործ չի շում: Արդյո՞ք Մովսես Գասխուրանցին չի օգտվել իրենից մեկ

28 Մ. Գամշյան, Պատմութիւն Հայոց, Բ, Վենետիկ, 1785, էջ 689:

դար առաջ ապրած Համամի նշված գործից, եթե այզպիսին, իրոք եղել է, կամ արդյո՞ք «Պատմութիւն Աղուանից»-ի մեջ առկա արարական շրջանին վերաբերող նյութերը նրան չեն պատկանում, մնում է լոկ ենթադրելի Սակայն, անկախ այդպիսի աշխատանքի լինելուց ու չլինելուց էլ, այն պատկառելի ցանկը, որ ունենք Համամ Արևելցու գրական ժառանգության մասին, լիովի բավարար է ասելու, որ ի դեմս այս բազմաշնորհ, հայրենասեր ու զգայուն անձնավորության, Աղվանից աշխարհն ունեցել է մի մեծ առաջնորդ ևս, որի ռազմական հանճարով երկրի զգալի մասը փրկվել է արարական բռնապետությունից, իսկ մատենագրական հանճարով՝ այդ երկրի բնակչությունն ստացել է հոգեոր մշակույթի մի անսախրնթաց դանձարան:

Ծառ հավանական է, որ նա կյանքի վերջին տարիներին թագավորությունից հրաժարվել է ոչ թե ճգնավորական կյանք վարելու և մեղքերից ազատվելու նպատակով, ինչպես կարծում է Կ. Կոստանյանցը, այլ որպեսզի կարողանար ըստ ամենայնի ղեկավարել նույնքան և էլ ավելի ծանր այն բնագավառը, որ կոշվում էր ժողովրդի հոգեոր կյանք: Մանավանդ, որ նա որպես գաճի փոխանորդներ ուներ և՛ եղբորը՝ Փիպեին, և՛ որդուն՝ Ատրներսեհին, որոնց և միաժամանակ զիշեց նա իր քաղաքական-պետական իշխանությունը: Այսպիսով նա փաստորն ուժերի համալրում և նոր տեղաբաշխում կատարեց, որպեսզի ավելի քան ապահովեր հայրենիքի հանգիստն ու անկախությունը:

Հայրենասիրություն, գիտություն, կրթություն, ավանդական սրբություններ, ահա թե ինչ մասին էր մտածում Համամ Արևելցին: Եվ դա ոչ թե լոկ իր և իր ընտանեկան ու արքունական միջավայրի համար, այլ ողջ երկրի, ընդհուպ Աղվանից կաթողիկոսությանը հնթարկվող ամենահեռավոր ծայրագավառները: Իսկ ինչպես գիտենք, հոգեոր իշխանության սահմաններն այն ժամանակ շատ ավելի ընդարձակ էին, քան քաղաքականը: Այս առումով վերին աստիճանի ուշագրավ տողերի ենք հանդիպում նրա Քերականության մեկնության մեջ,

որտեղ նա զրվատելով այդ մեծարժեք գործը, միաժամանակ տալիս է նաև ցանկ այն միջավայրերի ու գործիչների, որոնց համար շարադրված է այդ մեկնությունը.

Այսոքի եղիցի ի մեզ  
Առողմանս զորի և բնութեանց զէն,  
Եւ քերողութեանց՝ զգստք,  
Եւ նախակրթութեանցն՝ սեղան,  
Եւ խոկացն՝ բաժակ,  
Եւ կարողացն՝ նոխութիւն,  
Եւ ճեմականացն՝ իմացական սանձք,  
Եւ սիրվնականացն՝ հետեւումն ազնի,  
Եւ եկեղեցականացն՝ վանդ լիմուր սեղանականաւը,  
Եւ աստուածարանականացն՝ մեկնոց փոքր,  
Եւ համբակացն՝ վայելու զարդ,  
Եւ մեզ՝ ստորապայծառ պատմումանք անգին...<sup>29</sup>

Այստեղ, ինչպես տեսնում ենք, նա նկատի ունի և՛ նախակրթականներին, և՛ համբականներին, և՛ ճեմականներին, և՛ խոկուններին, և սիրվնականներին, և՛ քերթողներին, և՛ սեղանավորներին, և՛ եկեղեցականներին, և՛ աստվածաբաններին, ուստի և ողջ երկրի գաստիարակչական-կրթական բնագավառների, այն է՝ ամբողջ հոգեոր աշխարհի ներկայացուցիչներին: Իսկ դա համբակովրդական այն ցանցն է, որ տարածվում էր ողջ երկրով մեկ և նրա սահմաններից դուրս:

Այստեղ այլևս ավելորդ է գառնում խոսք բացել այն մասին, որ հեղինակն ինքը և նրա նկատի առած վերոհիշյալ ողջ միջավայրը հայկական է: Ավելորդ է նույնպես նշել, թե Աղվանից երկրի պետական ու պաշտոնական լեզուն Համամի օրոր ևս նրա քաղաքական իշխանության սահմաններում և Աղվանից հոգեոր թեմների լնդարձակագույն բնակավայրերում եղել է հայերենը:

Եվ եթե նախահամամյան շրջանի գրական հուշարձանները, հիմնականում, իրենց շոշափած հարցերով վերաբերում

29 Հ. Ածոնց, Դիոնիսի Փրակուսկի և արմանական տոլկօվատելի, Պետրոգրադ, 1915, ստ. 270.

էին Աղվանիքի բնակչությանը, կրում էին աշխարհագրական որոշ սահմանափակության դրոշմ, ապա նույնը բնավ չի կարելի ասել Համամ Արևելցու զրական ժառանգության մասին։ Այն, բայտ ամենայնի, համահայկական բնույթ ունի, չնայած երկնվել է Հատկապես Աղվանից կոչված աշխարհի համար։ Պատմականորեն նորորակ այս երևույթի հիմքում ընկած են այն իրազարձությունները, որոնց շնորհիվ ի վերջո Աղվանից երկրի հայկական գավառների թագավորությունն անցավ այդ երկրի գարավոր տերերի՝ հայերի ձեռքը։

Մենք, այսպես ասելով, շենք մոռանում բուն աղվաններին, որոնք սակայն էթնիկական առումով վաղուց արդեն տարրալուծվել էին քրիստոնյա և մահմեդական միջավայրերում։ Երևույթ, որը պարտադրվեց նրանց մի կողմից 387 թվականի պայմանագրի շնախատեսված բնական հետևանքներով, իսկ մյուս կողմից՝ պարսիկների, հոների, հույների, արաբների և այլ ասպատակողների ու տիրողների երկարատև ու անդրդիմ բռնություններով։

\* \* \*

Համամին աղվանից գահի վրա հաջորդում են նրա եղբայր՝ Փիպեն և որդին Ալտրներսենց։ Վերջիններիս մասին կենսագրական տեղեկություններ շեն պահպանվելու նրանց համատեղ թագավորության մասին ուղղակի վկայության հնք հանդիպում հայ մատենագրության մի մեծարժեք ստեղծագործության խորագրում։ «Տիրանայ հայոց վարդապետի պատախանի հարցմանց քազարուացն Աղուանից Ալտրներսէնի և Փիպէի»<sup>30</sup>։ Որ այս Ալտրներսենը Համամ Արևելցու որդին է, այդ մասին հիշատակում է, օրինակ, Անանիա Մոկացին, որը 10-րդ դարի կեսերին լինելով Աղվանքում, երբ արդեն թագավորում էր Համամի թոռը՝ Իշխանիկը, գրում է։

«Քանդի ուներ զաթոռ թագաւորութեան յայնժամ իշխա-

<sup>30</sup> Տե՛ս ձեռ. № 3710, թերթ 325, 497, թերթ 415, 3006, թերթ 315, 6380, թերթ 291, 625, թերթ 76, 3824, թերթ 59։

նակ-որդի տեսան Ալտրներսէնի, թոռն երանելոյն Համամայ թագավորին Աղուանից»<sup>31</sup>։

Ալտրներսէնի մասին արժեքավոր վկայության հնք հանդիպում նաև արտաք մատենագիր Մասուրիի «Մուրուց» կոչված գործում՝ գրված 943-ին։ «Մանարների թագավորությունից հետո գալիս է Շաքին, որի բնակիչները քրիստոնյաներ են, բայց նրանց թվում կան նաև մահմեդականներ... Նրանց թագավորը ներկա ժամանակում, երբ գրվում է այս գիրը՝ Համամի որդի Ալտրներսէնը է»<sup>32</sup>։

Ինչ վերաբերում է Փիպեն, ապա նրա մասին հայունի է հետեւալ վկայությունը։ Պատմաբան Ս. Բարխուդարյանը վերջերս Բարվի պետական թանգարանում պահպանվող հայկական հուշարձաններից մեկի մասին հրապարակնեց մի փոքրիկ հաղորդում, որը պատմական մեծ՝ նշանակություն ունի։ Այդ հուշարձանը ոչ այլ ինչ է, քան այս տապանաքարը, որ Համամ Ալտրներսին իր մյուս երկու եղբայրների հետ զրած է եղել իր իսկ ձեռքով զոհված եղբոր գերեզմանին։ Այն մասամբ վնասված է, սակայն հմուտ գիտնականը կարողացել է վերականգնել նրա տապանագիրը։

1. Այս գիր... եղբայր Համամ իշխանի
2. եւ տն Գլիպիչի եւ տն Սնպատա... գրկ-
3. եալ ի ճորտ հասակէ ելա յաշխարհէս. դառն թռղի սուզգգիրս զայս

4. Մի ոք իշխացէ մերձհնալ ի սմա նզովեալ եղիցի ի քէ այ<sup>33</sup>։

Ինչպես ճիշտ եղբակացրել է հետազոտողը, նշված Փղիպին և Սնպատը Համամի եղբայրներն են, զոհվածի անունը չի

<sup>31</sup> «Ալտրներս», 1897, էջ 131։

<sup>32</sup> В. Ф. Минорский, История Ширвана и Дербенда, Москва, 1963, стр. 211.

<sup>33</sup> «Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ, Երևան, 1964, № 1, էջ 63։ Այս արձանագրության մասին ևս խոսում է Զ. Թոնիաթովը, սակայն չնշելով ոչ նրա հայերն լինելը և ոչ էլ նրա մեջ հիշատակվածների հայ լինելը (Յ. Բոննատ, Ազերբայջան V-VI վա., 1965, Բակու, стр. 190)։

պահպանվել: Այստեղ էլ պարզ է, որ վերևի խորագրում հիշատակված «Փիպէ»-ն նույն «Փղիպէ»-ն է:

Արդ, թե ինչպես են Աստրներսեհն ու այդ Փիպեն համատեղվել թագավորական նույն գահին, դժվար է ասել: Անհավանական չէ, որ նրանք տիրած լինեն Ազգանքի տարրեր մասնակի վրա, փոխադարձ կապ պահպանելով միմյանց հետ: Գուցե և նույն գահին են բազմել, ինչպես որ ընդունված էր այն ժամանակ:

Աստրներսեհի կապակցությամբ վերևում այն իմացանք, որ Ազգանից թագավորությունը շատ շանցած (10-րդ դարի կեսերին) վիճակվել է նրա որդուն՝ Իշխանիկին: Անանիա Մոկացուց քաղված վկայության մեջ առկա են նաև այսպիսի տողեր՝ նույն Իշխանիկի վերաբերյալ: «Էր զարձեալ յաղանդն քաղկեդոնի և մոռացեալ զհարցն դաւանութիւն»<sup>34:</sup>

Դրան համապատասխան վրացական աղբյուրները հազորում են.

«Եվ Հերքում (Հերքում) սկզբներում՝ մինչ Իշխանիկի թագավորությունն ըոլորը հերձվածող էին: Իսկ Իշխանիկը Գուրգեն իշխանաց-իշխանի քրոջ որդին էր. և նրա մայր Դինար թագուհին դարձեց նրան ուղղափառ»<sup>35:</sup>

Ն. Յ. Մարք, անդրադառնալով այս խնդրին, գրում է, որ Իշխանիկից հետո «Հարյուր տարի անց... Հերքին ընդմիշտ մտավ Վրաստանի կազմի մեջ»<sup>36:</sup>

Այս կարծ ու կցկուր տեղեկությունների մեջ ամփոփված է մի ամրող պատմություն: Պարզվում է, որ Համամի որդի Աստրներսեհն ամուսնացած է եղել վրաց իշխանաց-իշխան Գուրգենի քրոջ՝ Դինարի հետ, որը քաղկեդոնական էր: Աղվանից արքունիքի դռները, որ Համամի ձեռքով այնպես ամուր փակված էին դավանաբանական հերձվածների առջև, այս եղանակով արդեն բացված ենք նկատում, ուր և թափանցելով

34 Անդ:

35 Լ, Մելիքսեբ-Թեկ, Վրաց աղբյուրները... Ա, 1934, էջ 203: Այստեղ հերձվածող են Կոչվել հայ եկեղեցուն դավանողները:

36 Խ. Մարք, Արքան, մոնղոլսկու անուանությունը, ՍՊԸ, 1905, стр. 7.

Դինար հարսնացուն, ծավալում է իր քաղկեդոնական գաղափարների տարածումը: Հստ երևույթին, նրա ամուսինը՝ Աստրներսեհը կարողացել է զսպել նրան, սակայն հետագայում, հավանաբար Աստրներսեհի մահից հետո, Դինարը իշխել է իր որդու հշխանիկի վրա և նրա օգնությամբ ողջ Հերքիթը դավանափոխել: Եվ, շատ շանցած, կրոնական այդ հեղաշրջումին էլ հաջորդել է ազգափոխությունը՝ իր բոլոր սովորական հետեւանքներով: Ահա թե ինչից էր զգուշանում Համամ Արևելցին, ահա թե ինչից դեմ էր ուղղված նրա գրական գործունեությունը: Իսկ նրանից առաջ նույն վտանգի դեմ այլ եղանակով պայքարում էին ուրիշները՝ օգնության կանչելով հայոց կաթողիկոս Եղիային:

Պարզվում է, որ դավանաբանական գրականության ուսումնասիրությամբ են զրադիկ նաև Աստրներսեհն ու Փիպէն՝ հետեւով Համամ Արևելցու օրինակին: Եվ հենց զրա վկաներից մեկն է վերևում հիշատակված հայոց Տիրան վարդապետի պատասխանիքը՝ նրանց հարցումներին:

Վերևում նշված ձեռագրերում այդ բնագիրը բովանդակում է 200 հարցի պատասխան<sup>37:</sup> Հստ որում, № 3710 ձեռագրի գրիլը նշել է, որ այդ 200-ն էլ դեռ լրիվ չէ. «Պակաս է իրան առ բան հարցմանց... զայս գտաք յաւրինակին»<sup>38:</sup>

Հովհաննես արքակերոր պատմերով 13-րդ դարում գրված այդ ձեռագրի գրիլը հետո, ինչ-ինչ աղբյուրներից, ճշտելով նշված հարց ու պատասխանիների լրիվ պատկերը, ձեռագրի վերջին թերթերից մեկի վրա ավելացրել է այսպիսի տեղեկություն. «Տիրանուն կաթողիկոսն Աղուանից Շ բան են հարցել, պատասխանի է գրել, և ինքն Ֆեուլանց վանքն է թաղած»<sup>39:</sup> Այստեղից պարզվում է, որ նշված հարց ու պատասխանիքը բաղկացած է եղել 500 կետից, որից 300-ը մեզ հայտնի չէ: Բացի դրանից, Տիրանուն հայոց վարդապետը այստեղ կոչվում

37 № Ա 625 և 6280 ձեռագրերում առկա է միայն մի փոքրիկ հատված, իսկ մնացածներում 200-ական պատասխան:

38 Զեռ. № 3710, թերթ 347:

39 Անդ, թերթ 377: Աստ նաև Մովս. Դաստիարակությունը մասին:

է Աղվանից կաթողիկոս. նման տվյալ կա նաև Մխիթար Այրիվանեցու մոտ<sup>40</sup>: Մեզ համար այժմ՝ դժվար է այս շփոթը ճշգրտել, սակայն անկախ դրանից էլ, այսպիսով ձեռքի տակ ունենք մի կարևոր հուշարձան, որը նոր լույս է սփռում Աղվանից երկրի ներսում 10-րդ դարում ծավալված դավանարանական ալենոծումների պատմության վրա:

Աղվանից թագավորների 500 հարցումները, ինչպես երեսում է պահպանված 200-ի պատասխաններից, ունեն դավանարանական, աստվածաբանական բովանդակություն և վերաբերում են հին ու նոր կտակարանների զանազան գրություններին: Դա ինքնին ցույց է տալիս, որ այդ հարցերով հետաքրքրվելու անհրաժեշտությունը պայմանավորված է եղել երկրի ներքին խռովություններով: Եվ Տիրապի, Տիրան վարդապետի պատասխանների առաջարանում հատուկ խոսք կա այդ լարգած և փոթորկութ իրականության մասին: Ուրախ եմ, գրում է նա, «որ ի ժամու այդշափ վտանգից մրրկաց բքացելոց և կուտակս յալեաց լեռնացելոց, հարուցելոց զինի մի զմիւոյ—հետազոտեալ բանիւրս այսորիկ վերստին երկրորդեալ մխիթարէք»:

Ահա թե ինչպիսին է եղել Աղվանից երկրի իրականությունը՝ դավանանքի, իսկ նրա հետ էլ նաև առհասարակ տնտեսական և քաղաքական առումով: Երեսում է նաև, որ անհանգիստ թագավորները դրանից առաջ էլ են հարցումներ կատարել, որոնց Տիրան վարդապետը պատասխանում է «վերստին երկրորդեալ»: Նայելով պահպանված պատասխաններին, տեսնում ենք, թե հարց տվողները որքան շատ են հետաքրքրվել կրոնական խնդիրների մանրունքներով, նրբություններով: Տիրան վարդապետն էլ նշելով դա, գովում էր նրանց գիտելիքներն ու ոճը. «ստացեալ զաւետիս բարեաց ի հեռաստանէ եկեալ անընշին կարաւտելոյ, զի այնշափ անդուլ իմաստու-

40 Սույն հարց ու պատասխանիրի մասին տե՛ս «Արարատ», 1876, էջ 93—96, ապա՝ Գ. Տ. Մկրտչյան, Հայկականը, Ա., 1894, էջ 21—26, ուր Տիրան ուղղվում է Տիրանունով: Տե՛ս նաև Գ. Զարեհանալյան, Հայկական չին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1897, էջ 793—794:

թեամբ և զանազան ընտրողութեամբ շարայարեալ էին յուն ըստ կարգի գրեալքս առ ի Զէնցը<sup>41</sup>:

Յավալի է, որ Տիրան վարդապետը՝ պատասխանելիս չի կրկնել իրեն ուղղված հարցերը: Ուստի և պահպանված նյութը բովանդակում է միմիայն պատասխանները: Սակայն տեղադրեալ նկատելի են հարցումների որոշ հետքեր: Օրինակ, «Ճիկ» կետն սկսվում է այսպես: «Երկառասան լրտեսքն, որ բարձին զողկոյզն». դա ըստ էության հարցն է, որին հետեւում է պատասխանը. «Ճողկոյզն Արքահամ առակի...»: Այդպիսի կետերից է նաև «Ճիճ»-ն. «Մաղաղերայն սաղմոս—Մաղաղեթայն տեղի է, յորում հա՞ր հրեշտակն զօրսըն ասորոց...»: Ավելի յրիկ է թվում «Ճիճ» հարցը. «Ո՞ր է երրորդ օր, յորում եղեն հարսանիքն Կանայ — Յորժամ լցաւ և օր, էջ տէր մեր առ Յովհաննէս. յիտ անապատին և և աւուրն՝ երրորդ օրն հարսանիաց...»:

Սակայն նման կետերը բացառություն են. օրինաշափն այստեղ այն է, որ հարցումները դուրս են թողնված և ըստ նրանց հերթական համարակալման շարադրված են պատասխանները: Ահա մի օրինակ.

«Ճիճ. է և այլ սքանչելի խորհուրդ և զարմանալի մտաց քննութիւն, որ իբրև զձեղ մաքրեալ լինի հոգւոյ ակն, զի տէր մեր զմարմինն հնձան արար...»:

Դա ցույց է տալիս, որ այս պատասխաններից օգտվելու համար Աղվանից թագավորները պիտի ձեռքի տակ ունենային նաև իրենց առաքած հարցումների ընդորինակությունը:

Սույն վավերաթղթից միաժամանակ երեսում է, որ հարցասերների տրամադրության տակ կար հարուստ գրականություն, որին հաճախ հղում է պատասխանողը: Այդպիսիներից են, օրինակ, հին ու նոր կտակարանները, Դիոնիսիոսի մատենագրությունը, Կյուրեղ Երուսաղեմացու Պարապմանց գիրքը, Ծփրեմ Ասորու, Եղիշեի և շատ ուրիշների գործերը:

Ինչպես երեսում է, այդ ժամանակ էլ Աղվանքում առկա են

41 Զեռ, № 3710, թերթ 325թ

եղել նաև քրիստոնեությունը մերժող կամ հեղնող հայացքների տեր այնպիսի ուժեր, որոնց հասցեին Տիրան վարդապետն ըստ «ԺԹ» հարցի պատասխանել է. «Մտեն, որք ասեն կաշեգործ էր աստուած»<sup>42</sup>:

Այս հարուստ և բազմակողմանի հարց ու պատասխանին մի կողմից ցուց է տալիս Աղվանից թագավորների գրական, աստվածաբանական և առօսասարակ գիտական իմացությունների հարստությունը, իսկ մյուս կողմից, որ կարեորն է, երկրում ծավալված գավանաբանական վեճերի սրվածությունը: Հստ էության, այն դրականությունը, որ ունեին և զարգացնում էին Աստրներսեւն ու Փիպեն, ոչ այլ ինչ էր, քան Համամ Արևելցու մատենագրության զարգացումը: Սակայն, ինչպես երեսում է, քաղաքական ու տնտեսական հանդամանքները մեծապես խոչընդոտել են, որ այդ գրականությամբ բարողվող գաղափարները ներգործեին Աղվանիքի բոլոր գավառներում հավասար ուժով: Հասկանալի է, որ, դրան հակառակ, որոշ տեղերում, հատկապես Հերեթում, պիտի տարածված լիներ վրացական եկեղեցու դավանանքը բարողող բաղկեդրնական դրականություն: Դա մի համար ու հետևողական պայքար էր, որը, վերջին հաշվով, քաղաքական բնույթ ուներ և նշված տարածության վրա ավարտվեց վրաց քաղկեդրնիկների հաղթանակով: Հերեթը հարեց Վրաստանին: Ճիշտ է, հետո իշխանիկը

<sup>42</sup> «ԺԹ» հարցի պատասխանն ուշագրավ է իր բանաստեղծականությամբ:

Մնաւ մայր իւր դժովնան ի ծովն,  
Եւ ծնաւ ծովն ի նաւ անդ,  
Եւ ծնաւ նաւն ի փոր կիսին,  
Եւ ծնաւ կիտուն զժովնան ի ցամաք անդ ի նինուէ:  
Մնաւ տէր մեր ի ծոցու հօր յարդանդ կուսին:  
Եւ ծնաւ կոյսն զնա ի թեղդէմ,  
Եւ ծնան արարած ի փոր վիմին,  
Եւ ծնաւ վէմն ընդ աշմէ հօր,  
Ո՞ւր է մաշ յաղթութիւնը քո, նաբուզունոսոր,  
Ե՞ւ դժոխք, և թաքելովն:

կրկին անցավ հայ հկեղեցու կողմը<sup>43</sup>, սակայն դա այլևս չկանչից գալիք դեպքերի բնթացքը՝ Հերեթում:

Այդ ժամանակների դավանաբան վեճերը Աղվանքից բացի, աստիճանաբար ընդգրկել էին նաև Սյունիքը: Ուստի դարի կեսերին դեպի այդ վայրերն է ուղերզում Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին՝ կամենալով «մաքրել զընծիւղեալ աղանդ Քաղկեդոնի», որ յաշխարհիս Հայոցը<sup>44</sup>: Անանիա Մոկացու այդ և հաշորդ ուղերձությունը նկարագրված է իր իսկ ձեռքով և կից թղթերով: Հայոց Արեւելից կողմանքի գրականության պատմության համար դրանք մեծ նշանակություն ունեն: Մեզ համար այդ ամենից կարեոր են հատկապես մի քանի փաստեր Գրանցից առաջինը վերաբերում է Աղվանից թագավորության սահմաններին: Ընդունված է ասել, թե Իշխանիկը թագավորում էր Հերեթի կողմերում, իսկ Հերեթ ասելով էլ հասկացվում է մոտավորապես Կամբեճանի գավառը: Անանիա Մոկացու տված տեղեկությունները գալիս են որոշակի ճշտում մտցնելու այդ կարծիքի մեջ, ցուց տալով նրա իշխանության ավելի քան լայն տարածումը: Այսպիս, Անանիա Մոկացին խոսելով իր՝ դեպի Աղվանք կատարած ուղերձության մասին, նշում է, որ այդ կողմերի թագավորն է Իշխանիկը, անցած քաղկեդոնական դավանանքի հոսում է նաև այն մասին, որ ինքն իշխաննել է Խաչենում՝ Գրիգոր Եշիանի մոտ, ուր չնայած որոշ աշխատանք է կատարել ընդգեմ քաղկեդրնականության, բայց և այնպիս չի կարողացել արմատական միջոցառումների զիմել: Գրանցից շուրջ 17 տարի անց Անանիա Մոկացին հաղորդում է, որ վերջապես Աղվանքի թագավորն ու իշխանները, այդ թվում նրա և Խաչենի Գրիգոր իշխանի որդին, Հրաժարակի են իրենց խոտոր դավանանքից և իրենց նորընտիր կաթողիկոսին՝ Դավիթի Խոտակերցուն ուղարկել Շիրակ՝ Հայոց կաթողիկոսից ձեռնադրվելու:

«Մագեաց ի սիրս հզօրացն Աղուանից ի թագաւորն, որ կոչէր իշխանակ՝ որդի տեառն Աստրներսէնի, և Սենեքերիմայ Աղուանից իշխանաց իշխանի, և նորին ամուսնոյ, և քեռ նա-

<sup>43</sup> «Արարատ», 1897, էջ 144.

<sup>44</sup> Անը, էջ 132:

րին, և տեսան Սենեքսրիմայ՝ որդոյ Գրիգորի Խաչեան իշխանի և Տեսան Վաշագանայ Գորողուաց իշխանի, և այլ բազում մհծամհծաց...»<sup>45</sup>:

Այսպիսով, տեսնում ենք, որ այն ժամանակ Աղվանից աշխարհ կոչված Հասկացողությունն իր մեջ ընդգրկել է քաղաքական առումով նաև Խաչենը, այսինքն Լեռնային Ղարաբաղը, Եվ Իշխանիկը թագավոր է Համարվում այն բոլոր վայրերի, որոնց վրա իշխել են Սենեքսրիմ իշխանաց իշխանը, Սենեքսրիմ Խաչենի իշխանը, Գորողուաց Վաշագան իշխանը, և այլն, Եվ եթե Իշխանիկի թագավորությունը տարածվում էր Կամրջանի և Խաչեն-Գորողուաց երկրների վրա, ապա Հասկանալի է, որ նրանք պիտի կապված լինեն միմյանց հետ նաև միջանկյալ տարածություններով:

Անանիա Մոկացու թղթերում առկա հաջորդ արժեքավոր տեղեկությունը կապվում է մեզ Հետաքրքրող ամենազլիսավոր խնդրի՝ գրականության հետ:

Հայոց կաթողիկոսն իշխանելով Խաչենում, տեղի Գրիգոր իշխանի միջոցով առաքում է «Լուր առ բոլոր սուրբ ուխտս, որ էին յաշխարհին Աղուանից»: Հավաքվում են՝ Գագիկ կաթողիկոսը, Գարդմանի Պետրոս, Փափսոսի Դավիթ առաջնորդները, «Գրիգոր իշխանի կողմանէն» Աթախալ, Մաքնացոց, Շիկաքարի, Գանձասարու, Խաչենա, Խանգին, և այլ վայրերի առաջնորդները, «Հայր Ստեփանոս, որ կոչէր Քերական և այլ բազում զլատաւորք»: Առաջացած դավանաբանական վեճերը լուծելու նպատակով Անանիա Մոկացին ասում է. «Խնդրէաքի նոցանէ զՊատմութիւնն Աղուանից՝ ուսանել զսկիզբն լուսաւորութեան նոցա, թէ զի՞նչ պատճառաւ»: Սակայն նրան մերժում են տալ այդ գիրքը. «Եւ ոչ հտուն մեզ տեսանել... գրաւեալ գաղէին զՊատմութիւնն Աղուանից»<sup>46</sup>:

Հետո, մի այլ առիթով Գանձասարի եկեղեցապանը Հայոց կաթողիկոսին է հանձնում կարգալու իրենց եկեղեցական գոր-

45 Անդ, էջ 144: Տե՛ս նաև Ստեփանոս Թօբելյան, Պատմութիւն նաւագին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 286.

46 «Արարատ», 1897, էջ 124–125:

քերից մեկը. «Եկին քերին յեղակարծս գրքունս ինչ Ցովհաննու Ոսկեբերանի կարգալով վասն գիշերոյն ժամուա: Անանիա Մոկացին ընթերցում է այն, և պարզվում է, որ ի գեմս այդ գրքի գործ ունի որոնված «Պատմութիւն Աղուանից»-ի հետ<sup>47</sup>:

Ստեփանոս Օրբելյանն այսպես է պատմում այդ գեպքը. «Ե գիշերի պաշտամանն զնէ եկեղեցապանն Գանձասարու գիրք մի որպէս թէ Յիվհաննու Ոսկեբերանի է. և մհծարեն զկաթողիկոսն յընթեռնուլ, զոր և բացեալ եղիտ զոր խնդրէն, զի էր Պատմութիւնն Աղվանից»<sup>48</sup> Պատահարաբ՝ է լինում գա, թե եկեղեցապանն ուզում է օգնած լինել կաթողիկոսին, էական չէ. էականն այն է, որ այստեղ էլ միջավայրն ամբողջապես հայկական է, իսկ զրականությունը՝ Հայերեն: Եվ հենց այդ պատճառով էլ Անանիա Մոկացին, խոսելով նաև Աղվանքի մասին, գրում է. «յաշխարհիս Հայոց»:

Պարզ է, որ այդ «Աղվանքը» լոկ աշխարհագրական հասկացողություն էր, ինչպես, ասենք, «Սյունիք»-ն ու «Վասպուրական»-ը: Եվ այդ Աղվանքը ըստ էության ոչ այլ ինչ էր, քան պատմական Հայաստանի Ուտիք, Արցախ և Անդրկուրյան Հայք տարածությունների հանրագումարը:

\* \* \*

Հայոց Արենից կողմանց դպրության ծաղկման գործում, 9-րդ դարի վերջերին և 10-րդ դարի սկզբներին աշքի ընկնող դեր է կատարել նաև մի ուրիշ Հայացն տոհմ: Այդ մասին «Պատմութիւն Աղուանից» երկում կարդում ենք. «Գրիգորի լինին որդիք հինգ, յորոց երեց որդին Ապուկի սպանանի յազգակցէն Սմբատաց. և միւս որդին Սահակ, որ և Սևագայ կողշեցաւ, այր քաջ և յաջող, սա առհասարակ տիրեաց Գարդմանայ և Քաւսայ և Փառնայ գաւառաց, այլ և աւազակապետաց

47 Անդ, էջ 135–136:

48 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 279:

Զորոյգեառոյն բովանդակ եղև իշխան, և խնդրող իսկ գրագիտութեան, և զպապեաս ի տան իւրամ կարգեաց»<sup>49</sup>:

Ինչպես երևում է, Սահակ Սևադայի «ինքրող իսկ գրագիտութեան» լինելը և «զպապեաս ի տան իւրամ» կարգելը, ժամանակին հանդիսացել է մեծ ու հիշարժան երևույթ, որին հատուկ նշանակություն է տվել հեղինակը: Իսկ որ այդ իշխանն էլ եղել է Հայաղն, դա երևում է նույն աղբյուրի լրացուցիչ տվյալներից: Այսպես, բերված վկայության մեջ ասված է, որ Սահակ Սևադան ուներ նաև եղբայր Ապոլի անունով՝ սպանված յուր ազգակից Մմբատի ձեռքով: Այդ մասին նման հիշատակություն կա նաև հիշված տողերից մի քանի էջ վերևում, ուր ասված է. «Իսկ յատ շորից ամաց, յորում տարեմուտն ի սրբումն հանդիպէր պասերին օր, սպանանի Պօլի Աղուանից իշխանն Հայկազն յիւրմէ Հարազատէ ի Մմբատայ»<sup>50</sup>: Պարզ է, որ խոսքը վերոհիշյալ Ապոլի (=Պօլի) իշխանի մասին է, որն այստեղ հիշատակված է որպես «Հայկազն» իշխան:

Նույն իրողությունը նույն աղբյուրում վկայված է նաև այլ եղանակով<sup>51</sup>:

Ցավոր, Սահակ Սևադայի խրախուսած դպրության պատուղների, ինչպես և նրա համապատասխան միջոցառումների մասին այլ տեղեկություններ չեն պահպանվել:

Հայոց Արևելից կողմանց մատենագրության արժանահիշատակ դեմքերից մեկն է նաև 10-րդ դարի հեղինակ Մովսես Դասխուրանցին, «Պատմութիւն Աղուանից» երկի շարունակողը, որի մասին փոքր ինչ խոսվեց վերևում և դա առայժմ կարող է բավարար համարվել: Ավելացնենք միայն մի հանգամանք, եթե ոմանք, Մովսես Կաղանկատվացու մասին խոսելիս, փորձ էին անում նրա գրած պատմության բնագրի տակ տեսնել նախնական-աղվաներն բնագիր, ապա այս հեղինա-

49 Մովսես Կաղանկատվացի, «Պատմութիւն Աղուանից», Թիֆլիս, 1912, էջ 389:

50 Անդ, էջ 383: Համապատասխան տարեթիվն է «Հայոց երեք հարիր քառասուն և երկու», ուստի ույն թվականը կլինի  $342 + 4 + 551 = 897$  թ.:

51 Անդ, էջ 388—389:

կի կապակցությամբ նման կարծիք, բնականաբար, չեն կարողանում հայտնել, լոելոյան համաձայնելով նրա հայ լինելու իրողության հետ (բայց իրենց բացատրության): Մեզ համար դա մի նոր փասուն է հերքելու «Պատմութիւն Աղուանից» երկի աղվաներն բնագրի գոյության մասին եղած կարծիքը, որովհետ Մովսես Կաղանկատվացին և Մովսես Դասխուրանցին նույն երկը շարադրել են նույն լեզվով և պատկանել են նույն աղգին: Այս առումով «Պատմութիւն Աղուանից»-ն անբակտեր միասնություն է:

Այս ժամանակամիջոցի Հայոց Արևելից կողմանքի գրականության զարգացման բարձր աստիճանի մասին անուղղակի վկայություն է պահպանված նաև Մատթեոս Ռուհայեցու մոտ: Մենք վերևում ծանոթացանք այս հեղինակի՝ Դավիթ Անհողինի մարտական որոշ գործողություններին վերաբերող տեղեկություններին: Այդ նույն տեղում, նույն 1040-ական թվականների ճակատամարտերի կապակցությամբ, ասված է, որ Դավիթ Անհողինը, զիմելով Աղվանից աշխարհի հոգմորականությանը, պահանջում է, որպեսզի «ամենայն որ իր զէն պատերազմի խաչ առցէ ի ձեռս իր և միայն զաւեարանն Քրիստոսի»: Եվ քանի որ միայն եպիսկոպոսների թիվը հավասար էր «Երկերիւր»-ի, ապա ամբողջ Հոգևորականությունը պիտի որ կազմեր մի վիթխարի քանակ: Խաչով ու ավետարանով հայոց զորաբանակին միացած Աղվանիք հայերի այդ հեղեղը նկարագրելով, պատմին ասում է. «բանակն խաչ և Ամետարան դարձաւ»<sup>52</sup>:

Ահա Աղվանից աշխարհի գրականությունը: Եվ դա՝ միայն Ավետարանների մասին: Իսկ եթե մասնակի շափազանցումները մի կողմ զննենք և մտովին պատկերացնենք նաև այդ թվին հարաբերաբար համապատասխանող մյուս գրականությունը, այն ժամանակ կստանանք մի վիթխարի մատենագրություննը<sup>53</sup>:

52 Մատթեոս Ռուհայեցի, «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 81:

53 Հետաքրքրության համար, թույլ ենք տալիս կատարելու այսպիսի հաշիվ. եթե տվյալ դեպքում առկա է 200 եպիսկոպոս, ապա քահանաների

Այս հենքի վրա է ահա, որ հասկանալի է դառնում այն  
տառապալից որոնումների և ոգորումների աննպատակ լինե-  
լը, ովքեր ցանկություն ունեն վեր հանել Աղվանից աշխարհի  
գրականությունը և անտեսում են այս պերճախոս փաստերը:

Թիվը կարող էր լինել 7—10 անգամ ավելի մեծ, հասնելով շուրջ 1500—  
2000-ի: Ուստի՝ այդքան Աղվանական, իսկ եթե ամեն մի Աղվանանին հա-  
րաբերող մյուս գրականության թիվը հաշվենք 10, ապա կստանանք  
14,000-ից 20,000 ձեռագիր, ավելի քան առկա է մեր արդի Մատենադա-  
րանում: Եվ դա միանդամայն սովորական թիվ է: Աղվանից աշխարհի նման  
ընդարձակ երկրի բնակչության համար:

ԴՐԱՎԱԳ ՀԻՆԳԵՐՈՌԻ. 11—13-ՐԴ ԴԱՅՐԻ

Վերևում նշեցինք, որ հատկապես Համամ Արևելցու ժա-  
մանակներից և մասնավորապես՝ նրա ստեղծած գրականու-  
թյամբ Աղվանից աշխարհի հայ մատենագրությունը, մնալով  
հանդերձ առաջին հերթին որպես տվյալ երկրի գրավոր գպարու-  
թյուն, միաժամանակ զուրս է գալիս այդ անհմաններից և ներ-  
կայանում նաև որպես համահայկական մատենագրության մի  
անբաժանելի մաս: Հենց դրա փայլուն ապացուցներից են  
Համամ Արևելցու Շարականը՝ զետեղված Հայկական շարակ-  
նոցներում, Քերականության մեկնությունը՝ միահյուսված  
մյուս բոլոր հայ քերականների համապատասխան մեկնու-  
թյունների ընդհանուր շղթային, Սաղմոսների գուրդաների  
վերակարգավորումը՝ մտած եկեղեցական արարողությունների  
մեջ և այլն: Եվ դրանք այնքան են համահայկական մատենա-  
գրության ոգուն ու բնույթին հարազատ, որ ցարդ իրավացիո-  
րեն ըննվել են որպես հենց այդպիսին: Մեկ որ այդպիսին էր  
Աղվանքի մատենագրությունը, ապա դա նշանակում է, որ  
առանձին անջրպետներ շպիտի լինեին, որպեսզի մայր Հայաս-  
տանի ընդհանուր գրականությունը ծառային նաև Աղվանից  
երկրի բնակչության կրթական և գրասիրական ընդհանուր կա-  
րիքների բավարարմանը: Այլ կերպ էլ չէր կարող լինել: Ուստի  
հենց սկզբից էլ Աղվանից աշխարհը պիտի իր գրական պա-  
հանջները բավարարեր ոչ միայն տեղի, այլև առնասարակ

հայկական մատենագրության շնորհիվ: Այլ կերպ ասած, Հայ գրականությունը՝ նաև Աղվանից աշխարհի գրականությունն էր: Ուստի, Աղվանից աշխարհի գրական կյանքն ուսումնասիրելիս, պիտի հաշվի առնել ոչ միայն բուն աղվանական, այլև ողջ հայկական մատենագրությունը:

Այստեղ է Աղվանից գրի և գրականության պրոբլեմի իսկական գաղտնիքը:

Այն բնական կամուրջը, որ նետված է եղել Հայաստանի և նրա Արևելյան կողմերի հայ բնակչության միջև մատենագրության առումով, գնալով այնքան է լայնացել ու տարածվել, որ հետագայում այլևս ոչ որի մտքով չի անցել խոսք բացել նրանց աշխարհագրական սահմանների մասին: «Հայկական մատենագրություն» զարձվածքը եղել է մի այնպիսի համահավասար հասկացողություն, որի տակ նույնիմաստ են հնչել և՛ Աղվանիքի, և՛ Սյունիքի, և՛ Ալրարատի, և՛ Վասպուրականի, և՛ Հայկական մյուս երկրամասերի գրական-մշակութային բոլոր երկունքները:

Եվ միանգամայն բնական է, որ Կիրակոս Գանձակեցին, խոսելով հայ մատենագիրների մասին, գրում է. «Իսկ հայոց ազգի պատմագիրը յոլովք ցուցին աշխատութիւն», ապա Ազաթանգեղոսի, Խորենացու, Եղիշեի, Թովմա Արծրունու և այլոց անվանաշարքում, որպես «հայոց ազգի պատմագիր» հիշատակում նաև Մովսես Կաղանկատվացուն. «...Թովմայ վարդապետն, պատմագիր տան Արծրունեաց... Մովսէս Կաղանկատուացի, պատմագիր Աղուանից...»<sup>1</sup>:

Նման թվարկումներ կատարել են նաև ուրիշ մատենագիրներ, որոնք միշտ էլ Մովսես Կաղանկատվացուն զետեղել են հայ պատմիչների շարքը<sup>2</sup>: Ուշագրավ է, որ Մխիթար Այրիվանեցին նրան կոչում է «Մովսէս Աղուանիցի», ճիշտ այնպես, ինչպես ունենք Մովսես Խորենացի, Մտեփանոս Սյունիցի, Կիրակոս Գանձակեցի և այլն:

1 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Սրբան, 1961, էջ 7:

2 Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիրություն, Ա, Սրբան, 1959, էջ XLVIII—LIV:

Ինկ որ այն ժամանակներում հայ հեղինակը կարող էր նաև «աղվանեցի» կոչվել, եթե այդ կողմերից էր, դա միանգամայն հասկանալի է, որովհետև նրանց հասկացած Աղվանը՝ Հայաստան էր եվ հենց այդ իմաստով է, որ նույն ինքը Մովսես Կաղանկատվացին, Դիզափայտի նահատակների մասին խոսելիս, գրում է. «որոց բարեխօսութեամբ միշտ զթացի աստուած Աղուանից աշխարհին և Հայաստանեաց երկրին»<sup>3</sup>:

Հիշենք մի ուրիշ օրինակ. Հայ մատենագրության խոշոր գործիչներից մեկը՝ Վարդան Արևելցին, իր երկերից մեկի խորագրում կոչվում է Վարդան Աղվանեցի. «Վասն բանին մասնց ի խնդրոյ բարեզարդ քահանայի Թորոս անուն կոչեցելոյ եղբարորդոյ տեառն Կոստանդիայ հայոց կաթողիկոսի վարդապետացուայ՝ Կարճառաւաւոց»<sup>4</sup>:

Իսկ որ այդ նույն հեղինակը հայ է և ինքն էլ իրեն համարում է հայ, դա երեսում է նրա հենց նույն երկի հետևյալ տողերից. «...մերն Մեսրոպ ետ նոցա գիր: Եւ զՎարձիոյ խաչն, որ Մեսրոպ աւրծնել է և յաջ թեկն հայ գիր...»<sup>5</sup>:

Հայոց Արևելից կողմանց հայությունը, 387 թվականից հետո, ապրելով արդեն Աղվանք կոչվող իր հայրենիքում, որդեգրվելով Աղվանից եկեղեցուն, ճիշտ էլ պահպանեց իր ագոյին զիմագծերը, զարդացրեց իր հայկական մշակույթը, իրեն հավասարապես կոչելով և՝ «աղուանեցի», և՛ «հայ», և՛ «աղվան», և՛ «հայազն աղվան»՝ ընդուած մինչև 20-րդ դարի սկիզբը, եթե ոչ ավելի ուշ ժամանակները<sup>6</sup>:

Հստ այդմ, այդ կողմերում կերտված դրականությունն

3 Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 134:

4 Զեռագիր № 2544, թերթ 201ա:

5 Անդ, թերթ 62բ:

6 Տե՛ս Վ. Քարենացաւընճ, Աղուանից եզրեր՝ և ոքազեւ, Թիֆլիս, 1893, էջ 131-ում Հովսեփ-Բեկի (1824—1862) տապանագիրը. նա համարում է «կալուածատէր հայկակն տոհմին Ղաղարեանց» և միաժամանակ՝ «հայասէր աղուանեան»:

էլ, իր տեղային առանձնահատկություններով հանդերձ, եղավ ու մնաց Հայ գրականության մի պատկառելի հատվածը՝ աստիճանաբար ընդունելով համահայկական բնույթ ու նշանակություն:

Տասնմեկից տասներեքերրորդ դարերի համար այս երեխույթն էլ ավելի բացարձակ տեսք ունի Նույնիսկ Հարկ չի զգացվում փաստարկելու, թե մեզ հետաքրքրող աշխարհագրական վայրերի այն ժամանակվա գրականությունը համահայկական ժառանգություն է։ Այստեղ նկատի ունենք Փառիսոսը, պատմական Ուտիքի Գանձակ քաղաքը և նրա մերձակայքը, որտեղից, 11-րդ դարից սկսած, հրապարակ եկան այնպիսի խոշոր դեմքեր, ինչպիսիք են Հովհաննես Սարկավագը<sup>7</sup>, Գավիթ Ալավելառդին, Մսիթար Գոշը, Հովհաննես Վանականը, Վարդան Մեծը կամ Արևելցին, Կիրակոս Գանձակեցին և ուրիշներ՝ համապատասխան զպրոցներով։

Մատենագիրների այս բույրը և նրանց կրթական օջախները՝ կազմում են այն ժամանակվա Հայ դպրության փառքը։ Նրանց վերհանմանն ու ուսումնասիրությանն են նվիրված Հայ և օտարազգի բանասերների բազմաթիվ մենագրություններ, առանձին հոդվածներ, ինչպիս նաև բնագրային ճոխ հրատարակություններ, որոնց վրա հանդամանորին ժանրանալը դուրս է ներկա մենագրության և սահմաններից, և հնարավորություններից։ Միաժամանակ, այս ամենի կողքով անցնելն էլ միանգամայն հակադիր կլիներ մեզ հետաքրքրող հարցերի ճիշտ լուծման նպատակին, որովհետև զպրության այդ հատվածը՝ պերճախոս հանրագումարն է Հայոց Արևելից կողմանքի հոգերը ժառանգության Ավելին, այն, ժամանակի կիլիկիահայության վերընթաց դպրության հավասարազոր երկվորյակն էր՝ հայրենի բնաշխարհում։ Եվ, ամենից առաջ, հենց այդ երկու խոշոր միջավայրերն էին, որ պատմական իրա-

7 № 3710 ձեռագրում հանդիպում ենք հետևյալ տողերին. «Սարկաւագ վարդապետ Հաղբատ, ի գեղչէ Մանջար Գետեղը» (թերթ 377թ, ԺԴ դար)։ Որքան գիտենք այս վկայությանը գեր ոչ ոք չեն անդրագարձել և այսուղից է, որ հայտնի է գանձում Հովհաննես Սարկավագի ծննդավայրի անոնք։

դարձությունների շնորհիվ, գլխավորում էին Հայ ժողովրդի մտավոր առաջընթացը, նշված դարերում։

Համամ Արևելցու և նրա հաջորդների թագավորության հետագա վիճակը, ինչպիս հայտնի է, շատ հեղեղուկ եղավ։ Այդուամենայնիվ, ինչպիս հայտնի է Այստեղ նկատի ունենք Կյուրիկյան թագավորական տան ներկայացուցիչներին և Հատկապես Դավիթ Անհողինին, որոնց տիրուվթը ձգվում էր մինչև պատմական Հերեթի հայկական գավառները։

Լեռն, հենվելով Մատթեոս Ուուայիցու վրա, գրում է. «Կյուրիկյան թագավորությունն այնքան առաջ էր մխվում Աղվանից երկիրը կազմող այդ նահանգի (իմա՝ Ուտիթի) մեջ, որ նրան նույնիսկ սկսում են անվանել Աղվանից թագավորությունն»<sup>8</sup>։

Ուշագրավ է Գավիթ Անհողինի կոչը՝ Աղվանից Հավսեփ կաթողիկոսին. «Արդ ժողովնա զամենայն եպիսկոպոսունսդ Հայոց աշխարհիդ, որ յԱղուանսն են և ի բանակ այսր հասիր, զի ընդ մեզ մեռանիշիք»<sup>9</sup>։ Ըստ այդմ էլ կաթողիկոսի կոչով հավաքվում են երկրի ազատության համար մարտնչելու ողամենայն քահանայս Աղուանից աշխարհին և զսարկաւագունսն»<sup>10</sup>։

Նույն հեղինակը, նկատի առնելով իր ժամանակի քաղաքական իրազարձությունները, գրում է. «Արդ այս ամենայն խոռվութեանցս և հանդէս բարկութեանս ոչ կարաց մտանել յաշխարհն Աղուանից, որ ասի Խորին աշխարհ Հայոց»<sup>11</sup>… Հայրապետութեամբ և թագաւորութեամբ մինչև ցայսօր ժամանակի, որ նստէին առաքելական աթոռովն ի քաղաքն Հայոց ի

8 Լեռ, Հայոց պատմություն, Բ, Երևան, 1947, Էջ 632։

9 Մատթեոս Ուուայիցի, Ժամանակագրութին, Վաղարշապատ, 1898, Էջ 81։

10 Անդ։

11 Նկատի ունի, հիմնականում, Հայկական Աղվանը։

Պարտաւ, որ ասի Փայտակարան... էին և այլ թագաւորք Հայոց ի Դարբանդ աշխարհին, որ ասի Կապանք... սահմանակից Օզաց և Աղուանից... Վաշագան և Գոշակտակն՝ նորին որդին, Փիլիպէ որդի Գոշակտակին, Սևադա որդին Փիլիպէի, Սենեքարիմ որդի Սևագայի, Գրիգոր որդի Սենեքարիմայ, որ դեռ կենդանի էր մինչև գրէաք զայս...»<sup>12</sup>:

Մի այլ առիթով նույն պատմիչը գրում է. «Դարձեալ ի թուականութեանն Հայոց ի յամի Շլ (1081) արքեպիսկոպոսն Շիրակայ... Տէր Բարսեղ, յարուցեալ գնայր յաշխարհն Հայոց ի յԱղուան զաւառի... առ թագաւորն Հայոց Կիրիկէ, որդի Անհողինին Դաւթի, և ինդրէր Բարսեղ առնել ձեռնադրութիւն կաթողիկոսութեան Հայոց: Զոր ժողովեալ թագաւորն Կիրիկէ զեխիսկոպոսունս Աղուանից աշխարհին... ի վանքն, որ կոչի Հաղբաթ, ձեռնադրեցին զՏէր Բարսեղ կաթուղիկոս յաթոռ սրբոյն Գրիգորի՝ ի վերայ ամենայն աշխարհին Հայոց Հրամանաւ Կիրիկէ թագաւորին և Տեառն Ստեփանոսի՝ որ ունէր զաթոռ սրբոյ առաքելոյն Թագէոսի»<sup>13</sup>:

Այստեղ ոչ միայն Աղվանքն է զիտված որպես Հայաստանի ամբողջության մաս, այլև այդ կողմերի թագավորն ու Հոգևորական զամբ՝ կաթողիկոսի գլխավորությամբ: Խոսքն, անշուշտ, աշխարհագրական առումով, ոչ թե ողջ Աղվանքի մասին էր, այլ Հիմնականում, Հայոց Արևելից կողմանքի: Հոգևոր իրավունքի առումով այդ սահմաններն ավելի ընդարձակ էին և ընդգրկում էին ողջ Աղվանքը:

Այս իրողությունը ավելի քան որոշակիորեն է փաստարկվում Մատթեոս Ուռհայեցու Հետելյալ վկայությամբ: 970-ական թվականներին, երբ բյուզանդական ուժերը, Զմշկիկի հրամանով, ուզում են մտնել «յաշխարհն Հայոց», «Յայնձամ ամենայն թագաւորազունին Հայոց՝ զայտքատքն... ժողով արարին առ թագաւորն Հայոց Աշոտ Բագրատունի»: Այդ ժողովին մասնակցող Հայոց թագավորներն էին. «թագաւորն Կա-

պանին Փիլիպպէ և թագաւորն Աղուանից Գուրգէն, Արաս Կառուց տէրի և Սենեքերիմ Վասպուրականիս տէրն և Գուրգէն Անձեացեաց տէրն... զամենայն տունն Հայոց ժողովեալ ի մի վայր»<sup>14</sup>:

Այստեղ էլ Աղվանքը հայոց տան անբաժանելի և հարազատ անդամն է և դա՝ ոչ միայն աղգագրական առումով:

Հետաքրքրական է նաև նույն պատմիչի տված հետելյալ տեղեկությունը, որի մէջ նորից Աղվանքը իր վերոհիշյալ առումով Հայաստանի և Հայ եկեղեցու մի մասն է.

«Ի նժ (961) թվին, «որդւոյն Աշոտի Գաղկայ» թագավոր օժիշիս կոչեցին «զՏէր Ցովհաննէս կաթուղիկոսն Աղուանից աշխարհին և քառասուն եղիսկոպոսունք ընդ նմա... զՓիլիպպոս զթագաւորն Աղուանից՝ զայր աստուածային և զուրբ, զորդին Գողազգակայ որդւոյ Վաշագանայ, որք էին թագաւորք Աղուանից աշխարհաց»: Հետաքրքրական են նաև Հաջորդ տողերը Աղվանից Երկրի ներկայացուցիչների վերագարձի մասին: Այնուհետև, զրում է պատմիչը, «զթագաւորն Աղուանից զՓիլիպպէ և զկաթուղիկոսն զՏէր Ցովհաննէսն, զեպիսկոպոսն և զզօրսն, որ եկին զհետ թագաւորին և Հայապետին և յուղարկեցին մհծամիծ տրօք և սիրով յաշխարհն Աղուանից, որ էր աթոռ սուրբ առաքելոցն Թագէոսի և Բարգուղիմէոսի, որք են նահապետք առաջինք Հայոց Մեծաց»<sup>15</sup>:

Այսպիսով, ավելի քան որոշակիորեն ենք համոզվում, որ Մատթեոս Ուռհայեցու նկատի առած Աղվանքը ոչ այլ ինչ էր, քան մասն «Հայոց Մեծաց», այսինքն, Մեծ Հայքի: Կրկնում ենք, խոսքը ողջ Աղվանքի, ավելի ճիշտ բուն Աղվանքի մասին չէ, այլ՝ Հայոց Արևելից կողմանցի:

Ինքնին ավելորդ է դառնում կրկին Հիշեցնել, թե Աղվանից վերոհիշյալ թագավորների նման հայեր էին նաև Հոգևորականներն ու կաթողիկոսները: Այդ մասին խոսք կլինի ստորև, սակայն, կանխելով մեզ, Հիշենք վերոհիշյալ փաստերի հետ

14 Անդ, էջ 17:

15 Անդ, էջ 3—5:

12 Մարքոս Առենայեցի, Ժամանակադրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 230—231:

13 Անդ, էջ 220—221:

սերտորին առնչվող հետեւյալ տողերը՝ դարձյալ նույն պատճից.

1038 (1036<sup>\*</sup>) թվականին, Պետրոս Գետաղարձին կաթողիկոսական գահի վրա վերահաստատելու և Դիոսկորոսին Հրաժարեցնելու նպատակով, Անիում գումարվում է համահայաստանյան մեծ ժողով: Այստեղ էլ, բնականաբար, ներկա է Հայոց Աղվանքը՝ իր իշխաններով ու կաթողիկոսով. այն էլ, որպես որոշակի դեր խաղացող ուժ:

«Եւ յայնժամ թագաւորն և իշխանքն Հայոց սարսեալք յահէ անիծիցն, կամեցան դարձուցանել զՏէր Պետրոս յաթոռ իւր... և յայնժամ գրեաց թագաւորն թուզթ և ամենայն իշխանքըն Հայոց ի յԱղուանք և կոչեցին զկաթուղիկոս Աղուանից աշխարհին զՏէր Ցովսէփ, զի գայցէ ի բարեխօսութիւն և ի հաստատութիւն Տէր Պետրոսին ի բաղաքն Անի:

Եւ եղէ ի թուականութեանս Հայոց նԶէ (տարր. նԶօ) լինէր մեծ ժողով ի բաղաքն յԱնի եպիսկոպոսաց, Հայրապետաց, կրօնաւորաց և վարդապետաց, ազատաց և իշխանաց իբրև շորք Հազարաց, որ էր գլուխ ժողովոյն ծերունին Ցովսէփ՝ կաթուղիկուն Աղուանից»<sup>16</sup>:

Փաստերի այս խումբը իր ամբողջությամբ (նաև Հիշատակվածները) ավելի քան հստակ լույս է սփռում 10—12-րդ դարերի Աղվանքի կամ Հայոց Արևելից կողմանքի պատմական իրականության վրա<sup>17</sup>:

16 Անդ, էջ 27:

17 Այս տեսակի հոգորոշ օրինակ կարող է համարվել Ստեփանոս Օքբելյանի հայտնի «Ողբքա-ի հետեւյալ հաշվածը», ուր թվարկվում են Հայոց տան անվանի տոհմերն ու զավառները: Հեղինակը, դիմելով վշտամորդք Հշմիածնին՝ որպես ողջ Հայության մոր, գրում է:

Վա՛յ զքո երէցն՝ Արշակունին,  
Վա՛յ զքո կրտսեր՝ Բագրատունին,  
Վա՛յ զքո Միւնին և զԱրծրունին,  
Վա՛յ զՄամիկոնին և զԱղուանին,  
Վա՛յ Երական զՂանանդին,  
Վա՛յ զՏարօնան և զՄոփային...

(«Ողբք... Ստեփանոսի Միւնեաց..., Կալկաթա, 1846, էջ 25):

Այս առումով արժեքավոր է նաև հետեւյալ վկայությունը, որտեղ ներսեւ

Ինչպես հայտնի է, Մատթեոս Ուոհայեցին իր այս երկը, Ժամանակագրական առումով հասցրել է մինչև 1133 թվականը, ուստի նրա վերևում նշած թագավորներից վերջինը՝ այդ ժամանակ «ղեռ կենդանի էր» և թագավորում էր Աղվանքում:

Բանասեր Դ. Մովսեսյանը, Կյուրիկյաններին նվիրած հատուկ ուսումնասիրության մեջ գրում է. «Այսպիս Գուգարաց և Ուտի նահանգները մնացին Հայոց իշխանության ներքեւ մինչև Աշոտ Գ., որ իւր որդին Գուրգեն դրավ թագավոր Աղվանից երկրին՝ տալով անոր Տաշիր, Սևորդվովքն Զորագետին, Կային, Կայժոն, Խորխոռովնիք, Բաղկերտ և ուրիշ շատ մը բերդեր, որոնց Վիրք Սոմիեր ընդհանուր անունը կու տան: Գուգարաց և Արցախի այս փոքրիկ իշխանությունը Թավիթ Անհողնի ժամանակ և վերջին ասոր Հաջորդին՝ Կյուրիկին Ա-ի ատեն ավելի ընդարձակվեցավ և շենցավ և Հընթացս ժամանակի իրեն կցեց Տավուշ, Գարդման, Փաղսոս, Կողթ, Ջավե և այլն վայրերն...»<sup>18</sup>

Ուշագրավ են նաև «Կախեթի մեջ Հայազգի թագավորներ Կյուրիկյան տնեն» հնթարածնի մեջ քննված փաստերը, որոնց համաձայն 11—12-րդ դարերում Կախեթի թագավորներն էին նույն Կյուրիկյան տան ժամանակները<sup>19</sup>:

Այս շրջանի հայկական թագավորությունների մասին հարուստ վկայություններ են Հավաքված նաև Մ. Զամշյանի կողմից, «Ի վերայ հայկազուն բազատաց Սղուանից» հնթախորագրի տակ որոնք, սակայն, Հանգամանորեն չեն քննված<sup>20</sup>:

Եղած հարուստ փաստերի դեմք անբավարար հետազո-

Շնորհալու մասին ասված է, թե նա ցանկանում էր եկեղեցիների միության գաղափարը ընդունելի դարձնել «յամենայն Հայաստանեալյամ սկսեալ յաթոռուն Աղուանից» (Գ. Հովսեփյան, Ցիշատակարանք, Անթիկաս, 1951, էջ 442): Համանման փաստ կա նաև Լ. Խաչիկյանի հրատարակած Հիշտատակարաններում (օրինակ, ԺԴ դ., էջ 194):

18 Գ. Մովսեսյան, Լոռի Կիուրիկեան թագավորներու պատմությունը, Վիեննա, 1923, էջ 10—11:

19 Անդ, էջ 83—87:

20 Մ. Զամշյան, Պատմություն Հայոց, Բ, Վենետիկ, 1785, էջ 1046—1048:

տությունից անկախ, դարձյալ նրանց միջից հստակորեն երեք վում է հայ թագավորությունների անընդմեջ գոյությունը Արցախ-Ռուսիքյան զավառների վրա:

Ի վերջո քայլբայման զատապարտված այդ թագավորությունները վեր են ածվում առանձին իշխանական տների, որոնցով հոչակավոր է եղել, օրինակ, Խաչենը կամ Լեռնային Ղարաբաղը: 12—14-րդ դարերում վերջիններս, մասնավորապես Խվանե և Զաքարի եղբայրների և նրանց հաջորդների օրոք, մեծ դեր են խաղում հայ իրականության մեջ:

Այս մոտավորապես այդ ժամանակամիջոցումն է, որ հայկական դպրությունն ու մատենագրությունը, ինչպես նաև վանական շինարարությունը զարգացման մի նոր թափ է ստանում: Եվ հնո՞ց այդ շրջանի ծաղիկն են հանդիսանում վերևում հիշատակված հեղինակները:

Նպատակ չունենալով նույնիսկ բննության առարկա դարձնել Հովհաննես Սարկավագին, Դավիթ Ալավելարդուն, Վանականին և մյուսներին, կիորդնք մի քանի խոսք ասել միայն նրանցից մեկի՝ Մխիթար Գոշի կապակցությամբ՝ որպես այդ շրջանի ներկայացուցչի: Հատկապես այդ հեղինակին ենք նաև այն պատճառով, որ նրա մասին ևս որոշ անձինք սիալ հայցաքներ են դրսենորել և ապա, այն պատճառով, որ նրա աշխատանքները յուրօքի կապված են Աղվանից կոչված աշխարհի պատմագրության, գեղարվեստական գրականության, ինչպես նաև կաթողիկոսության ու այլ կարևոր խնդիրների հետ: Դրանց շնորհիվ նա հնարավորություն է տալիս՝ զարգացնել և ամփոփել մեր խոսքը՝ մեզ հետաքրքրող հարցերի առնչությամբ:

Մխիթար Գոշի, հայ մատենագրության այդ կարկառուն ներկայացուցչի մասին ևս որոշ անհատներ այն անհիմն կարծիքն են հայտնել, թե նա, ըստ էության, աղվան կամ նաև աղվան մատենագիր է: Այս սիալ հայացքը, ինչպես տեսանք, իր վերջին արտահայտությունն է ունեցել Զ. Բունիաթովի մատնանշած դրքում: Նրա փաստարկումներից մեկն այն է, որ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» հրատարակող Վ. Բաս-

տամյանցը և ուրիշներ սիալ կերպով են կազմել «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրը Հայոց» խորագիրը, այնտեղ ավելացնելով «Հայոց» բառը, որպիսին չկա ձեռագրում: Սակայն պետք է նկատել, որ Վ. Բաստամյանցի մշակած այդ խորագիրը վերաբերում է ոչ թե բնագրին, այլ իր աշխատասիրությանը, որովհետև բուն բնագրին ունի իր ուրույն գիտական ճշգրտված խորագիրը՝ «Դատաստանագիրը Մխիթարայ Գոշի», ուր չկա «Հայոց» բառը, ուստի և այդտեղ միաւում կամ որևէ սիալ որոնելու հարկ չկա: Պետք է միաժամանակ նկատել, որ նման եղանակը խիստ անբավարար կլիներ մի խոշոր հեղինակ՝ իր գրական որոշակի ժառանգությամբ աղգափոխել, ուստի Զ. Բունիաթովը նաև այն միտքն է հայտնում, թե այդտեղ ամեն ինչ աղվանական է, բացի մի տվյալից՝ լիզվից: Նախ պիտի ասել, որ այդ պարագան այնքան էլ երկրորդական չէ, որպեսզի մենք այն արհամարհնենք, ինչպես առարկում է նա: Բայց արդյո՞ք դրանով խնդիրը կարող է լուծված համարվել, այսինքն, Մխիթար Գոշը և նրա ժառանգությունը կգառնա՞ն աղվան կամ աղվանական: Իհարկե ոչ Զնայած Մխիթար Գոշը շի կասկածել, թե կզա ժամանակ, երբ կվերանայվի իր աղվային պատկանելիության հարցը և այդ մասին հատուկ հիշատակություն չի թողել, սակայն, նրա երերի ուշագիր ընթերցումից միշտ էլ կարելի է զգալ ու համոզվել: Որ գործ ունենք հայ հեղինակի հետ, որը պայքարում է իր ժողովրդի ֆիզիկական ու հոգեկոր գոյության, նրա մշակութի ծաղկման ու զարգացման համար: Բերենք մի քանի օրինակներ: Դատաստանագրքի երկրորդ մասի Ա հոդվածում, հիշելով Հայոց Արքար թագավորին, Մխիթար Գոշը գրում է. «Զի այզպէս մերեն արքայ Արգարիս կարգեաց զտոն թագաւորութեանն Պարսից»<sup>21</sup>: Ազգով աղվան հեղինակը հայոց թագավորի մասին խոսելիս չէր ասի «մերն արքայ»: Նույն Դատաստանագրքի առաջին մասի Կծ հոդվածում, հեղինակը, հակառվելով հունաց և վրաց եկեղեցիներին, պաշտպանում է իր

21 Մխիթար Գոշ, Դատաստանագրքի Հայոց, Վազարշապատ, 1830, էջ 301:

աղքային եկեղեցու շահերը, տալով իր աղքի անունը. «Եռիցեն Յոյնք և Վիրք... ոչ Գանգրայն ժողովեալք և ոչ Նիկիայն Հայք էին, այլ յամենայն ազգաց»<sup>22</sup>: Գատաստանագրքի հիշատակարանում, խոսելով իր ժողովրդի պետականազրկման մասին, Հեղինակը հիշում է մնացած իշխաններին, որոնք Խաչենի ու Կիլիկիայի ղեկավարներն են. «Իշխանաց ի կողմանս Խաչենոյ... Հայթերք... և կողմանցն Կիլիկիայ...»<sup>23</sup>: Պարզ է, որ Հայեր էին ոչ միայն Կիլիկիայի և Խաչենի նշված իշխանները, այլև իրեն նրանց ազգազավակ համարող Հեղինակը: Հիշենք մի երկու օրինակ էլ «Թուղթ Մխիթար վարդապետին, որ Գոշն կոչիւր ստեղծագործությունից»<sup>24</sup>: Այս ամբողջ թուղթը նվիրված է հայ-վրացական հարաբերությունների առողջացման նպատակին: Որպես Հայ ժողովրդի ներկայացուցիչ նա, դիմելով վրացիներին, գրում է «Մի՛, սիրելիք աստուծոյ, լող լինիք թշնամեաց մերոց, զի շկայ ի Հայք Հերձուած...»<sup>25</sup>: Խոսքն ուղղելով իվանե և Զաքարի սպասալարներին, Մխիթար Գոշը նույն թղթում գրում է. «Զի զուք իշխան էք Հայոց և վրաց..., ձեզանից «ոչ թաքուցաք զմեր ազգիս թերությունները և խրնդեւմ է Հայրծել, թե ինքը «վասն Հայոց» սուտ տեղեկություններ է հաղորդում: Հիշելով վրաց Կյուրին և պահպանուին, նա գրում է, որ Կյուրինը «նախանձեալ ընդ պատուոյ աթոռոյն Սիւնեաց և Աղուանից, քան զիւն որոշեցաւ ի մէնց» և այլն:

Այս ամենը և բազմաթիվ նման նշումներ ցուց են տալիս, որ Մխիթար Գոշը ոչ միայն լեզվով ու գրով էր Հայ, այլև իր ամբողջ էությամբ<sup>26</sup>:

22 Անդ, էջ 165:

23 Անդ, էջ 71—73:

24 «Արարատ», 1900, էջ 497:

25 Անդ, էջ 498:

26 Նույնը պիտի ասել նաև Կիրակոս Գանձակեցու վերաբերյալ, որի պատմության էջերում նույնպես առատորեն շաղ են տրված իր աղքային պատկանելիությունը վկայող բազմաթիվ արտահայտություններ: Այսպես, օրինակ. «Իսկ սուրբ վարդապետն Մհարոպ, իբրև եից զերկիրս Հայոց ուսմամբ և Բարգմանութեամբ... գնացեալ յԱղուան՝ առնէ և նոցա նշանագիրս, և վարդապետ թողեալ նոցա...» (Կիր. Գանձակեցի, Պատմություն Հայոց,

Մխիթար Գոշը, Հայ և Համաշխարհային իրավաբանական մտքի այդ հանձարեղ ծնունդը, իր եղակի նշանակության երկերով և գործունեությամբ մեզ է ներկայանում, ամենից առաջ, որպես Հայոց Արևելից կողմանց գործիչ: Բայց նա, լինելով Հայ ժողովրդի զավակը, մտածում էր ոչ միայն այդ զավաների, այլև ողջ Հայության ճակատագրի, նրա անելիքների և գոյատեման մասին: Դրա փայլուն արտացոլումն էր ահա նրա Դատաստանագրիքը, գրված պատմական Ուտիքի Գանձակ քաղաքից ոչ հեռու Գասնո անապատում, տեղի հայ հոգնորականության օճանդակությամբ և հորդորով: Ահա Հեղինակի խոսքն այդ մասին:

«Բայց ձեռնարկութիւն մեղ յայսմ իրողութիւն եղէ ի թուականութիւնս Հայոց ՈՂջ և շրջանին երթալոյ ի բաց ՃԱ, որ կոչի Փոքր, իսկ Հոռոմին նե, յամս անիշխանութիւն թագաւորութիւն մերոյ ի վազնչուց, ի ժամանակի մնացելոց սակաւ իշխանաց ի կողմանս Խաչենոյ, ընդ ժամանակս անուանելոյ Հասանայ կրօնաւորեցելոյ և որդույն նորա Վախտանգայ, ի զգեկին որ անուանի Հայթերք, գլխաւորի այլոց իշխանաց... ի դիտապետութիւն տեսան Ստեփաննոսի տանս Աղուանից յաշխարհիս Առանայ, ի նահանգիս, որ կոչի մայրաքաղաքին Գանձակ, յանապատս և յեղբայրանոցս անուանեալ Գասնոյ, սկզբնաւորեալ ի լեռնակողմն մենաստանին կոչշեցելոյ Հոռոմաշէն, ընդ հովանեաւ սրբոց եկեղեցեաց կուսաստանացն յիշեցելոց, ձեռնտութեամբ Հօր Յովսէփայ, և եղրօր Պաւոսի յորդորմամբ յառաջարկութիւնս...»<sup>27</sup>,

Տեղական բնիկ Հայության այս հոգնոր միջավայրը, բնա-

նրեան, 1961, էջ 30): Հիշենք թեկուզ այն տողերը, ուր նա, խոսելով Ազգանքի մասին, գրում է. «...Խակ երկրորդ հատուածին դիցուք գլուխ զլուստորիս կողմանցն Աղուանից, որպէս զազգայնոց և զհաւատակցաց մերոց, մանաւանդ զի և առաջնորդք նոցա Հայակեզուք, Հայերէնախօսք... Թագաւորքն Հնազանդ թագաւորացն Հայոց... և ազգն ուղղափառութեամբ ընդ մեզ կացեալ» (Անդ, էջ 192) և այլն: Ավելորդ ենք համարում նույնը կրկնել նաև Հովհաննես Սարկավագի և մյուս գործիւների վերաբերյալ:

27 Մխիթար Գոշ, Պատմաստանագիրք Հայոց, Վազարշապատ, 1880, էջ 69—74:

կանարար, առաջին հերթին, շահագրգուված էր Աղվանից երկրի կարդ ու կանոնով, ինչպես որ այդ օրերից առաջ՝ Դավիթ Ալավերդին՝ իր կանոններով, որոնք միաժամանակ նաև դատաստանագրքային երանդ ու ուղղություն ունեին։ Վերջինս, խոսելով իր նպատակի մասին՝ արմատախիլ անել հասարակական շարիբը, գրում է. «Եւ այլ մեծագոյն շարիս, որով լցին զաշխարհն Աղուանից... վառեցաւ և տարածեցաւ ընդ ամենայն լեռնայինս, և դաշտայինս...»<sup>28</sup>։ Այդպիսի սահմաններ էր նկատի ունեցել նաև Աղվանից երկրի այն ժամանակվակաթողիկոս Տեր Ստեփանոսուր, որ կամեցել էր հովանավորի Մխիթար Գոշին, թելադրելով հավանարար նաև իր անձնական միտումների ավելի նեղ հաշիվները։ Մխիթար Գոշը, սակայն, այդպես չէր մտածում, նրան մտահոգում էր ողջ հայության ճակատագիրն ու ապագան։ Այդ առումով, ըստ երևույթին, նըրանք միմյանց լրիվ չէին հասկացել։ Հավանարար, Մխիթար Գոշը չէր կամեցել լրիվ բացատրվել իր հովանավորին, այլապես կարող էր դատաստանագրքի շարադրման գործը տապալվել։ Ուստի Աղվանից կաթողիկոսը մի քանի անգամ է չոգեր հարկ դնում Մխիթար Գոշի վրա. «Բայց եղև պատճառ գրելոյ զա ի հարկելոյ զմեղ Տեառն Ստեփանոսի Աղուանից կաթողիկոսի միանգամ և երկիցս. և ես պատճառեցի զանձինս տկարութիւն և զտղիտութիւն։ Իսկ իրեն առաւել ստիպեց, յանձն առի, մոռացեալ զիմ տկարութիւնս, զիտելով թէ պարտ է հնազանդ լինել հոգնոր հրամանի»<sup>29</sup>։

Բայց Մխիթար Գոշն այսեղ արհեստականորեն մեծացնում է հոգնոր հովանավորի զերը, որովհետև, ինչպես ինքն է խոստովանում, դրանից զեր շատ առաջ էր ինքը մտատանշվել դատաստանագիրը ստեղծելու հարցով։

«Ի բազում ժամանակաց տարակուսեալ լինէի վասն սո-

28 «Դավիթ Ալավերդու կանոնները» («Էջմիածին», 1953, առանձնատիպ, էջ 44)։

29 Մխիթար Գոշ, Դատաստանագիրը Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 17։

թին իրաց՝ նախատելն զմեղ մերոց և օտարաց»<sup>30</sup>։ Այնուհետև նրան ստիպել ու հարկել էն «աշակերտն սուրբ գրոց Պաւղոսը» և ուրիշներ, բայց նա վախեցել է խանգարողներից, հաւածողներից, մինչև որ հայտնվել է այնպիսի հզոր հովանավոր, ինչպիսին էր Աղվանքի կաթողիկոսը։

Այս առումով ուշագրության արժանի է նաև այն թուղթը, որ Մխիթար Գոշն ուղղել է իր հովանավորին և զետեղել Դատաստանագրքի նախադրության մեջ. «Օրինակ սակատով վասն զօրութեան գրոց և աղերսաբնուրին առ տէր Ստեփանոս կաթողիկոսն Աղուանից—Աղվանքմ զբեզ, պատուական գլուխդ եկեղեցաց տանս Աղուանից, մի՛ վայրապար և թեթև գործ համարիր զհոգնոր հարկս, զոր եղիր Քանզի պարտ է մեղ ցուցանել քեզ սակաւուր, թէ զի՞նչ է զօրութիւն գրոցս, զոր ձեռնարկեմքս. դի զիրս Դատաստանի զնմանութիւն Կանոնաց ունի...»<sup>31</sup>։

Այստեղ արգեն ավելորդ է ուշագրություն հրավիրել Աղվանից կաթողիկոսին առաքված խոսքի վրա, փորձելով ապացուցել, թէ նրա լեզուն հայերենն է, ինչպես դա անում էինք վերևում, ասենք, Արաս կաթողիկոսին Երուսաղեմից առաքված գրքերն ու դրությունները քննելիս։ Այստեղ արդեն առաջնակարգ է Աղվանից աշխարհում երկնվող գրական մտքի թոփշը ու խոյանքը դեպի համահայկական հրատապ պրոցեմները։ Եվ այստեղ նորից երեան են գալիս հայ-աղվանական եկեղեցների միջև ընկած զավանարանական վեճերն ու տեղական ընդդիմադիր ուժերի շահերը՝ որպես ավանդական խոշոնութներ։ Ավելին, նրանց միանում են օտար իշխողների թշնամանքն ու հալածանքը։

Դատաստանագրքի 1-ին ժամանակածից պարզ երևում է, թէ Մխիթար Գոշը, անկախ իր կամքից, շարադրության ընթացքում ներգրավվել է դավանարարանական վեճերի ոլորտը։ Այլ կերպ էլ չէր կարող լինել, որովհետև խոսքը հանել էր «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» կնճոռ հարցին, այն է

30 Անդ, էջ 16։

31 Անդ, էջ 18։

հոշակավոր «ինը դասին», որին բախվել էին հայ, վրաց և աղվանից եկեղեցիները դեռևս 7-րդ դարում։ Ըստ էության, վիճաբանության ընթացքում այդ հոգվածը կամ կանոնը այնքան է աճել, որ ստացել է աստվածարանական առանձին մեկնարանության տեսք։ Երևում է նաև, որ մի ազգեցիկ անձնավորություն հակագրվել է Հեղինակին, մղելով նրան նորանոր փաստարկումների։ Եվ այս Հեղինակն էլ, կրկին ու կրկին դարդացնելով իր միտքը, պատասխանում է նրան։ «պատմմեք քում Հարցասիրութեանդ»<sup>32</sup>։ Բայց երբ վերջինս շատ է համառում, Միիթար Գոշը, իր խոսքին որոշ խստություն տալով, գրում է.

«Այս են ինն դասք երկնայինք և այս է գործ նոցա. աւելի քան զայս մի ինչ իմասցուք, որպէս եղկելին Որոգինէս, որ աւելի քան զգրեալսն իմանալով՝ կործանեցաւ անկանգնելի...»<sup>33</sup>։

Նշենք նաև, որ վեճի ծնունդ այս կետը հետո էլ հանգիստ չունեցավ. կաթոլիկ գործիչները նրա մեջ կատարեցին աղաղակող եղծումներ, որոնց մասին շատ խոսվեց մասնագիտական գրականության մեջ, սակայն խնդիրը լուծվեց միայն վերջերս, երբ մեր Մատենադարանի № 6398 ձեռագրում ի հայտ եկավ այդ կետի անաղարտ ընդօրինակությունը<sup>34</sup>.

Թի ո՞վ է եղել Միիթար Գոշի Դատաստանագրքի նշված 113-րդ կետի շուրջը վեճ ծավալող անանուն անձավորություն-

<sup>32</sup> Անդ, էջ 240։

<sup>33</sup> Անդ, էջ 242—243 (ամբողք՝ 234—272)։

<sup>34</sup> «Գրական թիրթ», 1963, ֆետրվար 8, Նկատենք, որ այդ հարցը քննելիս, Միիթար Գոշն օգտվել է նաև Սովուս Կաղանկատլացուց, գրելով. «Այ զի զիտացիք եթէ այսոքիւք պարտին Հայք ի Հոռոմոց և ի փոնակաց, որպէս Աղուանիցն ուսուցանէ Պատմութիւն» (էջ 270—271)։ Ինչպն նշել է Վ. Բաստամյանը, խոսքն այստեղ վերաբերում է Մովսես Կաղանկատվացու Հետևյալ տողերին. «Հայք ի հաւատոյ մասին.., այսուհետ լոյժ եղեն պարտեալ, զի ասացին Յոյնք, եթէ կարգաւորեաց Աստուած զեկեղեցի ինն դասուք» (Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 309)։ Ասենք նաև, որ այս վերջին աղբյուրում եղած տեղեկությունները՝ ինք դասերի մասին (անդ) նորից են հավաստում, որ ուրիշներն են եղել Միիթար Գոշի նշված կանոնը։

նը, բանասիրության մեջ պարզված չէ։ Վ. Բաստամյանը կարծում է, որ նման առիթ կարող էր տված լինել Զաքարիա ամիրսպասալարը<sup>35</sup>։ Մակայն դա ճիշտ չէ, որովհետեւ Դատաստանագիրքը վաղուց էր ավարտված, երբ Միիթար Գոշն առիթ ունեցավ շփփիու Զաքարիա ամիրսպասալարի հետ։ Բնական կլիներ մտածել, որ այստեղ էլ առկա է Աղվանից կաթողիկոսը, երկի հովանագորը, որովհետեւ այդուղի շոշափվում էր հայ և աղվան եկեղեցիների գավանանքը, որի համար տվյալ դեպքում պատասխանատու էր Ստեփանոս կաթողիկոսը։ Ճիշտ է, այդ եկեղեցիները Հիմնականում միասնական էին, բայց, ինչպես նշեցինք, շատ էին նաև նրանց միջև ծագալված վեճերն ու տարածայնությունները։ Պարզվում է, որ նման վեճեր կային նաև այդ օրերին, և նրանց զիսավորողը ոչ այլ ոք էր, քան նույն Ստեփանոս կաթողիկոսը։ Այս առումով վերին աստիճանի կարևոր վկայության ենք հանդիպում Գրիգոր Տղայի թղթերից մեկում՝ ուղղված Հաղպատ-Սանահինյան Հոգենոր առաջնորդներին և մասնավորապես Գրիգոր Տուտեռորդուն։ Գրիգոր Տղային բազմաթիվ նամակներ են հասել Աղվանքից Ստեփանոս կաթողիկոսի բոնած թշնամական դիրքի կապակցությամբ, նույնիսկ առանձին անհատներ են այդ նպատակով ուղղորդվել գեպի Կիլիկիա, հայոց կաթողիկոսարանը։ Ուստի Գրիգոր Տղան իր նամակում գրում է, որ Աղվանից Ստեփանոս կաթողիկոսը «ջանայ աղաւաղել և խափանումն առնել... աթոռոյն սրբոյ..., զգինանք և զայլ անօթք եկեղեցւոյ յանպէտս վատնէ և ցրուէ..., իրու թշնամի...»<sup>36</sup>.

Այսպիսին էր ահա այն օրերին Աղվանից կաթողիկոսի դիրքը հայ եկեղեցու նկատմամբ։ Գուցե և այստեղ առկա լինեն շափաղանցումներ, սակայն, անկախ դրանից, անժխտելի է այն խռովքը, որ լարել էր Աղվանից առաջնորդը հայ կաթողիկոսության և եկեղեցու դեմ։ Աղվանից եկեղեցու «գրեանք»-ի և «զայլ անօթք»-ի դեմ նրա բոնած թշնամական դիրքը, ուղն-

<sup>35</sup> Միիթար Գոշ, Գատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 274—275 (տողատակ)։

<sup>36</sup> «Արարատ», 1893, էջ 241։

շացնող ձեռնարկումները ինքնին մատնացուց են անում մի շատ կարևոր հանգամանք. զավանաբանական պայքար՝ նաև դրական ժառանգության նկատմամբ: Բնագավառ, որի մեջ էր մտնում նաև Մխիթար Գոշի Դատաստանագիրքը՝ դեռ խանձարուրում: Ուստի հասկանալի է, թե ինչու այն, նույնիսկ լույս աշխարհ չեկած, պիտի հալածվեր, և հալածվեր ամենից առաջ Ստեփանոս կաթողիկոսի կողմից, որովհետեւ նրա հեղինակը համառոքն ամրապնդում էր հայ եկեղեցու ավանդական դավանանքն ու հեղինակությունը: Էլ չենք խոսում կաշառակերության, եկեղեցական կարգերի խախտման, կամայականությունների այն դեպքերի մասին, որոնք սանձազերծված էին հատկապես Աղվանքում՝ նույն Ստեփանոս կաթողիկոսի նախաձեռնությամբ<sup>37</sup>, և որոնց դեմ արգելքներ էր հարուցում Մխիթար Գոշի Դատաստանագիրքը:

Հալածանքը չի հապաղում. Ստեփանոս կաթողիկոսը չի բավարարվում իր Հոգենոր իշխանությանը հասու պատժական միջոցներով, որոնք կարող էին ուզած արդյունքը լուալ, ուստի նա դիմում է մահմեդական բռնակալության ներկայացուցիչների օգնությանը: Կիրակոս Գանձակեցին, խոսելով այդ մասին, զրում է. «Եւ ապա նեղեալ (իմա՝ Մխիթար Գոշը) ի տաճկաց՝ ի սաղրելոյ կարողիկոսին Աղուանից Ստեփաննոսի, և եկեալ նորա յաշխարհն հաշենոյ առ Վախթանկ, իշխանն Համերեցոյ, և առ եղբարս նորա, որք բազում պատուով պատուեցին զնա, և անդ դադարեալ ամս ինչ»<sup>38</sup>.

Մխիթար Գոշն ինքն էլ Գրիգոր Տղային գրած նամակում նշում է, որ հալածվել է «ի խնդրողէն զԴատաստանացդ, գիրք»<sup>39</sup>, իսկ մի այլ առիթով՝ անդրադարձել իր կրած ծանր տառապանքներին, որոնք տակն ու վրա են արել ոչ միայն նրա հոգու անդրորը, այլև մարմնի առողջությունը: «Թազում հնչեաց ի վերայ մեր փորձութինք՝ ներեց և արտաքոյ, յորմէ յողգողգեցաք... տկարացաք...»<sup>40</sup>:

<sup>37</sup> Անդ:

<sup>38</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 209:

<sup>39</sup> Հ. Ռուսակով, Սատնանագրական բննութիւններ, Վիեննա, 1926, էջ 149:

<sup>40</sup> Անդ, էջ 186:

Իրերի ներկա դրության մեջ թերևս գտնվեն որոշ անհատներ, որոնք փորձեն ի դեմս Ստեփանոս Աղվանից կաթողիկոսի տիսնել ոչ թե հայազգի, այլ աղվան գործիչ: Նման անհարկի շփոթությունները կանխելու նպատակով ասենք, որ նա Աղվանքի բնիկ հայերից մեկն էր, հայալեզու և հայերենախոս, որին Գրիգոր Տղան հիշում է «իբրև զագականակից և զաշտիճանակից և զեզրայիր...»<sup>41</sup>, իսկ մահմեդականները հայածում են, որպես հայի, ստիպելով, որ նա էլ հեռանա Գանձակից իր իսկ հալածած Մխիթար Գոշի հետքերով «ի կողմանս հաշենոյ»<sup>42</sup>: Այստեղ էլ աստանդական կարճատես կյանքից հետո մեռնում է նա: Մահից առաջ Վահանավանքում նա թողել է մայրենի լեզվով շարադրված և իր կողմից հորինված հետեւալ հիշատակարանը.

«Ես տէր Ստեփանոս Աղվանից կաթողիկոս նեղեալ ի տաճկաց եկա եւ հանդեայ աստուածաեր թագուհեայ Շահանդիստին եւ Կատարին շինած եկեղեցւոյս դաւթիս...»<sup>43</sup>:

Որքան էլ նա ներքին ու արտարին հանդամանքների գրդումով պայքարեց Մխիթար Գոշի դեմ, սակայն ի վերջո չկարողացավ խոսափել ընդհանուր թշնամու հալածանքից և իր հայրենակիցների վիճակից ու ճակատագրից:

Այստեղ էլ, ինչպես տեսնում ենք, Տեր Ստեփանոսը, որպես Աղվանից եկեղեցու առաջնորդ, որոնել է համապատասխան անկյուն, Վահանավանքը, որտեղ «կան ի շիրմ բազում թագաւորք և թագուհիք Աղուանից և Բաղաց...», և որտեղ մի ժամանակ ապաստանում էին հայ եկեղեցուն հակադրվող Աղվանից երկրի առաջնորդները<sup>44</sup>:

Ավելորդ շէր լինի ասել, որ Աղվանից երկրի մեծամեծներից այդտեղ հանդում էին նաև թագավորագարմ Շահան-

<sup>41</sup> «Արարատ», 1893, էջ 240:

<sup>42</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 178—181:

<sup>43</sup> «Գրիգոր հայ վիմագրության», կազմեց Ս. Գ. Բարխանգարյան, II, 1960, էջ 139:

<sup>44</sup> Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն հահանդին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 238—241, 282—287:

դուխտն ու իր քույրը, որոնք նույնպես թողել են մայրենի լեզվով շարադրված արձանագրություններ.

«Ի ՇԵ Թվականիս ես Շահանդուխտ դուստր Սեւադաի Աղվանից թագաւորի և ամուսին իմ Գրիգոր թագաւորի որդու Աշոտկա, վասն ու գոլո մեր ի մասին ժառանգ լրաց մարմնու, ես և քոյրս իմ Կատայս շինեցաք զսուրբ Աստուածածինս փոխարեն զից նորա...»<sup>45</sup>:

Այստեղ են նաև նրանց մոր և այլոց հիշատակները:

Աղվանից աշխարհի վերոհիշյալ Ստեփանոս կաթողիկոսը 1181 թվականին թողել է մի այլ արձանագրություն և, որը մեջ ենք բերում ամրողապես. «Ի թվ. Ո. և տէր Ստեփանոս Աղուանից կաթողիկոս եղէ միաբան սուրբ ուխտիս Այրիվանաց յառաջնորդութեան Հաւրն Գրիգորի և ետու զԱնդրէի առաքելոյ նշխարհն և սուրբ նշան և ծննդոց Յովհանն և բնակիչք տեղոյս խոստացան ինձ զտաւն փոխման Տիրամաւրն Դ առւրան յամենայն եկեղեցին պատարագել զՔրիստոս»<sup>46</sup>:

Պարզ է, որ այստեղ գործ ունենք ոչ թե օտարազգի քրիստոնյայի, այլ հայազգի հոգինը առաջնորդի հետ:

Այս արձանագրությունները մեզ միտք են տալիս անդրադառնալու Աղվանից աշխարհի հայերեն հնամենի արձանագրություններին և, որոնք սփոված էին ու գեռ սփոված են այդ երկրով մեկ, ընդհուպ մինչև Դեբրենտ, և որոնց մի մասը հավաքված է Ս. Զալալյանի և Մ. Բարիսուտարյանցի հատորներում<sup>47</sup>: Սակայն զա մեզ կարող էր հեռու տանել, մանավանդ, որ գեթ այդ քարեղին համատարած փաստերի դեմ առարկություններ չեն կարող լինել: Բացի դրանից, մենք վերելում, այլ հարցերի կապակցությամբ, արդեն բավականաշատ անդրադանք նաև դրանց:

45 «Դիվան Հայ վիմագրության», կազմեց Ս. Գ. Բարիսուտարյան, II, 1960, էջ 138:

46 «Материалы по археологии Кавказа», вып. XIII, Москва, 1916, стр. 19.

47 Այժմ այդ արձանագրություններն առավել լրիվ հավաքումով պահպանվում են հրատարակության Ս. Բարիսուտարյանի կողմից:

Կցանկանայինք, սակայն, ուշադրություն հրավիրել Ստեփանոս Աղվանից կաթողիկոսի հետ կապվող մի այլ հանգամանքի վրա: Տեսանք, որ նրա հայ ու հայախոս լինելը վեր է ամեն տարակուսանքից: Խսկ վերեւում տեսանք, որ այդպիսիք էին նաև Աղվանից մյուս կաթողիկոսները: Բայց երեւյթին, կաթողիկոսական զիջը Աղվանքում, զուցե որոշ ընդհատումներով, կրել է ժառանգական բնույթ: Այս առումով ուշագրավ է հետևյալ փաստը: Վերոհիշյալ Ստեփանոս կաթողիկոսի մահից հետո, երբ Աղվանքում նոր կաթողիկոս են ձեռնադրում (նախ զիմելով հայոց եկեղեցուն), Գանձակի Օմար ամիրը, տեսնելով ձեռնադրվողի մանկահասակ լինելը, զարմանալով այսպիս է դիմում մյուս հոգեռորականներին: «Կարի մանուկ է տիօք, գուք, որ կատարեալքո էր հասակաւ՝ ընդէ՞ր ո՛լ լինիք կաթողիկոս»: Նրան պատասխանում են: «Վասն զի սա է յազգէ կաթողիկոսացն, և մա անկ է աթոռն»<sup>48</sup>:

Այս փաստը մի ավելորդ անգամ ապացուցում է, որ ոչ միայն տեր Ստեփանոսը, այլև նրա տոհմն ու նրա նախորդ կաթողիկոսներն էին հայեր: Գա մեզ յուրովի տանում է դիմի ամենավաղ շրջանները, երբ աղվանները Հայաստանից խնդրեցին և ստացան Գրիգոր Լուսավորչի թոռանը՝ որպես հոգեռ առաջնորդ: Այս առումով ցայտուն օրինակ է հանդիսանում Համայն Արևելցու օրերին Աղվանից կաթողիկոսական զահին բազմած տեր Հովնանը: Ինչպես Հովհաննես Դրասիսանակիրտցին և որիշներն են վկայում, նա ոչ միայն հայ էր, այլև Հայաստանի հայերից, հայոց կաթողիկոսարանի հոգեռորականներից: Երբ Հայոց կաթողիկոս Գեորգ Երկրորդը գերվում է արարեների կողմից, իսկ Աղվանից կաթողիկոսը՝ մեռնում, Հայոց կաթողիկոսարանից այդ Հովնանը մեկնում է Աղվանից ձեռնադրվությունից Աղվանից կաթողիկոս: Համամի օժանդակությամբ գերությունից ազատված Գեորգ Գառնեցի հայոց կաթողիկոսն իմանալով տեր Հովնանի արարքը, փորձում է կարգաւուժ անել նրան, սակայն Համամ թագավորը և այլ իշխաններ

48 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 184—185:

խնդրում է նրան՝ հրաժարվելու այդ մտքից; Եվ շուրջ ինը տարի տեր Հովհաննը վարում է իր պաշտոնը՝ Աղվանից Հովհանոր գահի վրա: Այդ մասին «Պատմութիւն Աղուանից»-ում հետևյալ տողերին ենք հանդիպում.

«Տէր Յովնան, ամս ութ և կէս Սա էր զրան եպիսկոպոս Հայոց. և մինչդեռ ի գերութեան էր Գէորգ, սա գայ յԱղուանս, և անդէն ձեռնադրի առանց կամաց տեառն Գէորգայ: Եւ իրք գնեցին զտէր Գէորգ իշխանքն Աղուանից, լուծանէ զնա ի պատույն. բայց աղաշեալ զնա իշխանացն Աղուանից վասն հրախտեացն որ առ նա՝ կրկին ձեռնադրէ զնա»<sup>49</sup>:

Եվ Հայոց կաթողիկոսի գժգոհությունն էլ ըստ էության ոչ թե այն բանի զեմ է եղել, որ ձեռնադրված կաթողիկոսը Հայաստանից էր եկած եղել, այլ այն, որ առանց իր Համաձայնության է եղել դա, այսինքն, անտեսվել է Հայոց կաթողիկոսության գերիշխանությունը՝ Աղվանից եկեղեցու վրա: Ուստի և նա բավարարված է զգացել իրեն՝ կրկին ձեռնադրելով նույն անձնավորությանը՝ նույն գահի վրա:

Փաստերը ցույց են տալիս, որ օտար բռնակալները կարողացել են իշխել միայն տնտեսական և քաղաքական առումով. նրանց իրավունքը չի տարածվել Հավատքի վրա: Ճիշտ է, նրանք համար պայքար են տարել նաև այդ ուղղությամբ, սակայն այդ բնագավառում, սովորաբար, տեղական կրոնը գեթ ձևականորեն ազատ է համարվել: Այլպես է եղել նաև Աղվանքում: Զնայած այդտեղ հերթով իշխել են պարսիկները, հույները, արաբները, երբեմն նաև լեռնային ցեղախմբերը, սակայն Աղվանից աշխարհում պեսական համընդհանուր կրոնը եղել է բրիստոնեսությունը<sup>50</sup>, Եվ այն՝ Հայ եկեղեցու դավանակցությամբ, նրա գերիշխանությամբ: Իսկ զա հենց սկզբից էլ Հնաբավոր է գարձրել Հայ Հովհանոր իշխանության դեկավար

49 Մովսես Կադանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 395:

50 Այս առումով ուշագրավ է Հատկապես Դաշտային Ղարաբաղը կամ Առանը (նեղ առումով):

դերը: Դրան մի կողմից նպաստել է Հայության որպես միաձույլ զանդվածի անհամեմատ մեծությունը՝ Աղվանքում, իսկ մյուս կողմից, հայ գրի և զրականության ծնունդը: Եվ եթի փաստերը թույլ են տալիս ասելու, որ Աղվանից կաթողիկոսությունը սերնդարար վիճակվել է Հայութին, ապա դա միանգարայն հասկանալի է ու բնական<sup>51</sup>: Այլ բան էր բաղաքական իշխանության և թագավորության հարցը, որն էլ իր հերթին ի վերջո բացարձակապես անցավ Հայության ձեռքը:

Պատմական իրադրությունները հետազոտում, սակայն, ինչպես մայր Հայութիքում՝ Հայաստանում, այնպես էլ Աղվանքում ճակատագրական ու ծանր Հարվածների տակ ընկան: Ե՛վ մեկում, և մյուսում խորտակեցին վերականգնված թագավորությունները, և երկրի բախտը տնօրինեցին միշին ասիական տափաստաններից Կովկաս և մանավանդ Աղվանք ու Հայաստան ներխուժած քոչվորական կործանարար ցեղախմբերը: Հատկապես 13—14-րդ դարերից սկսած առաջացան միծ տեղաշարժեր, էթնիկական, քաղաքական, աշխարհագրական, դավանաբանական նորանոր փոփոխություններ, որոնց անդրագառնալը դուրս է մեր ծրագրից: Նշենք միայն, որ այս նոր պայմաններում ևս Աղվանքի Հայ զանգվածները հակառակ բնաջնջող, տեղահանող և ալլասերող բոլոր խորշակներին, կարողացան պահպանել իրենց գոյությունը, լեզուն, կրոնը և աղջային հնամենի ավանդները: Նրանք առանձնապես լավ դիմացան կեռնային Ղարաբաղի անանց բարձունքներում և կիրճերում:

51 Այս Հարցի կապակցությամբ քննության է արժանի 12—13-րդ դարերի Աղվանից կաթողիկոս Բենիկի (Հովհաննես) կյանքն ու հարուստ մատենագրությունը. դրանցից են, ա) «Աղօթք աստուածահանոյ և բան մաղթանաց... ասացեալ տեառն Բենիկ վարադպետէ յԱղուանից կաթողիկոսէ» (Զեռ. № 38, թիրթ 1ր, ընդօրինակված Գանձասարում), բ) «Տեսիլ Բենիկ վարդպետի Վանակեցւոյ մինչ էր ի Գանձակ շահաստանի և յամենայն վերին աշխահին» (Զեռ. № 9, թիրթ 38ա).

## ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով կարող ենք ասել, որ 387 թվականից հետո Աղվանից երկրի և աշխարհագրական, և էթնիկական պատկերը էապես փոխվում է՝ նրան կցված հայկական գավառների և այդ գավառներում ապրող հայ բնակչության շնորհիվ։ Այսուղի, կողք-կողքի, մի ընտանիքում ապրող աղվաններն ու հայերը շարունակում են զարգացնել իրենց մշակույթը՝ ամեն-մեկն բատ իր ազգային ավանդությունների ու հատկանիշների։ Բայց այդմ էլ, Մեսրոպ Մաշտոցը Աղվանից աշխարհում հիմնում է երկու գիր և երկու դպրություն։ ա) Հայկական — հայերի համար, բ) Աղվանական — աղվանների համար։

Հենց սկզբից էլ հայկական գիրն ու դպրությունը ստանձնել են պաշտոնական գիր։ Աղվանականը, սակայն, պատմական կոնկրետ իրադրությունների պատճառով, որոշ ժամանակ զուգահեռարար գոյատելուց հետո, աղվանական էթնոսի վերացման պատճառով, դադարում է գոյատելուց և մատնվում մոռացության։

Որոշ մասնագետներ, հստակ շպատկերացնելով իրերի այս գրությունը, սխալմամբ, Աղվանից կոչված ողջ աշխարհի, այդ թվում նաև հայկական գավառների համար, ընդունում են մեկ գիր ու մեկ դպրություն և այն՝ աղվաններն։ Դրանով էլ, ահա, մի կողմից առեղծվածի է վերածվում առհասարակ Աղվանից աշխարհի դպրության հարցը, իսկ մյուս կողմից՝ յուրովի անտեսվում, իսկ երեմն էլ անհիմն վեճի առարկա է դառնում Հայոց Արեելից կողմանց դպրության պատմությունը։

Այսօր զբաղվել Աղվանից կոչված ողջ աշխարհի դպրության պատմությամբ, նշանակում է հավասարապես զբաղվել

վերբհշյալ երկու ուղղություններից թե՛ մեկի և թե՛ մյուսի հետազոտությամբ։

Ներկա մենագրության մեջ մենք նախ կանգ առանք ըստ աղվանական գրի և գրականության հարցերի վրա, սահմանափակվեցինք եղածի վերբհշումով, անելով մի երկու դիտազություն։

Փաստերը ցույց են տալիս, որ իրոք, Մեսրոպ Մաշտոցը աղվանների համար, զարգար-աղվանների լիզվական ատաղձի վրա, ստեղծել է հատուկ այրութեն՝ բաղկացած 52 հնչունից։ Եվ հենց այդ այրութենն է, որ գտնված է Մաշտոցի անվան Մատենադարանի № 7117 ձեռագրում։ Անհիմն պիտի համարել որոշ բանասերների այդ հարցի նկատմամբ ցուցաբերած ժխտական դիրքն ու առանձին վերապահումները։ Այս առումով արծեքավոր գործ է կատարել Ա. Արքահամյանը՝ հայկական, վրացական և աղվանական այրութենների համադիր հետազոտությամբ՝ իր հիշատակած, «Դեшиֆրօվկա...» աշխատության մեջ։

Աղվանական գրի և դպրության երբեմնի գոյության հզոր փաստերից են հատկապես Մինդեշառը պեղումներից երեվան եկած արձանագրությունների բեկորները, որոնց վերծանման գործը գտնվում է մասնագետների ուշագրության կենտրոնում։

Անհավանական չէ, որ աղվան հոգեռականները ձեռնամուխ եղած լինեին անգամ Աստվածաշնչի թարգմանությանը։ Նրանք իրենց նկրքին հարաբերությունների մեջ, անշուշտ, կիրառած պիտի լինեին իրենց մայրենի լեզուն ու այրութենը։ Գոյություն պիտի ունեցած լիներ նաև աղվաններն այլ բնույթի գրականություն։ Այսօր, սակայն, փաստերի շոյության պատճառով, որոշակի խոսք ասել այդ մասին անհնարին է։ Չափազանցված պիտի համարել որոշ մասնագետների կարծիքը՝ աղվաններն դպրության համակովկանյան և նույնիսկ միշտազային նշանակության մասին։ Նրանց վկայակոչած փաստերը և հատկապես հայոց Բարգեն կաթողիկոսի՝ Պարսկաստան առաքած երկու թղթերը ոչ մի հիմք չեն տալիս դրա հա-

ժար: Այդ թղթերը գրված են եղել ոչ թե հայերեն, վրացերեն և աղվաներեն, ինչպես կարծում են, այլ «պարսկերէն և հայերէն»:

Այն մեծ հետաքրքրությունը և համառ հետազոտությունները, որ իրավագիրեն ծավալված են ողջ աշխարհով՝ աղվաներեն գրի և դպրության հետազոտման ուղղությամբ, անշուշտ, գեռնս շատ անելիքներ ունեն և գեռ շատ գաղտնիքներ կարող են լուծել այդ բնագավառում: Հիմնական խոսքը նորից մնում է պեղումներին և նորանոր հիշատակների հայտարկմանը:

Գալով մեր ներկա աշխատանքի հիմնական առարկային, Աղվանից աշխարհի հայ դպրության պատմությանը, կկամենայինք ասել հետեւյալը: Հաշվի առնելով այդ երևութիւն հետ կապված և վերևում կատարված հիմնական եզրակացությունները, այստեղ, մեզ կրկնած վիճելու և հարցի լուսարանությանն ավելի ևս օգնած լինելու նպատակով, հարկ ենք համարում տալ այդ դպրության ուրվագիծը՝ համապատասխան կոպիտ խմբավորումներով:

Ինչպես յուրաքանչյուր երկրի գավառի, շրջանի, այնպիս էլ Հայկական Աղվանիքի դպրությունը մեր առջև ներկայանում է երկու խոշոր հատվածով. ա) անգիր, բ) գրավոր:

Ներկա աշխատանքում անգիր դպրության առնչությամբ քննված նյութերի մեջ առանձին տեղ են գրավում Արա Գեղեցիկի և Շամիրամի, Աստղիկ դիցուհու և Թագուհի նահատակուհու, Անահիտ աստվածուհու և Հայկական դիցարանության պանթեոնին պատկանող այլ աստվածությունների հետ կապված վկայությունները՝ Արեկելահայոց անցյալի իրականության մեջ: Այս բնագավառից զատ, անգիր դպրության մի ծանրակշիռ փաստախումը ունենք 19—20-րդ դարերում ժողովրդից գրի առնված նյութերի մեջ, որոնց մասնակի հետազոտությամբ զբաղվել են անվանի աղքագրագետներ ծ. Լալայանը, Ստ. Լիսիցյանը և ուրիշներ:

Գալով Արևելից Հայոց գրավոր դպրությանը, որը և մեր հետազոտության բուն առարկան է, ապա քննված հա-

մապատասխան ողջ նյութը կարող ենք բաժանել հետևյալ խմբերի. ա) արձանագրություններ, բ) մատենագրություն:

Արձանագրություններ.—Այստեղ նկատի ունենք.

ա) Երուսաղեմի աղվանական վանքերի և նրանց այլնամ հուշարձանների վրա եղած արձանագրությունները, որոնք ըստ 7-րդ դարի ականատես հեղինակ Անաստատ վարդապետի, գրված են եղել հայերեն և հայկական տառերով,

բ) Երուսաղեմի աղվանական Պանտա վանքի փլատակներից գտնված «Եսվաղան-ի խճանկարային հայերեն արձանագրությունը, որը հավանաբար Աղվանից աշխարհի եսվաղին թագավորի (5-րդ դ.) հիշատակներից է:

գ) Մինգեշառուրի պեղումներից հայտաբերված հայերեն արձանագրության բեկորները, որոնք պատկանում են 7-րդ դարին, եթե ոչ ավելի վաղ ժամանակների:

դ) Մովսես Կաղանկատվացու վկայած և 7-րդ դարում Արցախում և Ուտիքում կատարված պեղումներից ի հայտ եկած մասունքների հայերեն, ասորերեն և հունարեն արձանագրությունները:

ե) Աղվանից աշխարհի Վաշագան թագավորի (5—6-րդ դդ.) հայերեն տապանագիրը՝ վերանորոգված Զև (1286) թվականին՝ Աղվանից Սիմեոն կաթողիկոսի ժամանակ:

զ) Աղվանից աշխարհի հայ իշխան Հովհաննեսի արձանագրությունը 853 թվականից:

է) Աղվանից երկրի թագավոր Համամ Արևելցու և նրա եղբայրների՝ իրենց սպանված եղբոր գերեզմանին դրած տապանաբարի հայերեն արձանագրությունը 870—880-ական թվականներին:

ը) Աղվանից աշխարհի կաթողիկոս տեր Ստեփանոսի, ինչպես նաև Աղվանից աշխարհի թագավորի զավակների արձանագրությունները՝ Վահանավանքում (12—13-րդ դդ.):

թ) Ի վերջո բուն Աղվանից և Հայոց Արևելցու կողմանքի համարյա բոլոր մասերում սփռված հայկական արձանագրությունները, որոնք մասամբ միայն հավաքվել են Ս. Զալալանի, Մ. Բարիսուտարյանցի, Ս. Թարխուդարյանի և ուրիշների կողմից:

Այս է Աղվանից աշխարհի հայության թողած գրավոր դպրության վկայությունների մի ամբողջ հատվածը, որի ակունքները թաղված են Մեսրոպյան ժամանակների խորքում:

Այդ կողմերի գրավոր դպրության հաջորդ խոշոր և անհամեմատ նշանակալից հատվածը՝ մատենագրությունը, նպատակահարմար ենք գտնում ներկայացնել հետևյալ խմբերով.

ա) Գալիանաբանական գրականություն. — Գրականության այս տեսակը, թիրևս Աղվանից աշխարհի հայ գրականության ամենակարգացած ճյուղն է եղել: Այս առումով կարելի է հիշել հայոց Գյուտ կաթողիկոսի երկու թղթերը, Թովմաս վարդապետի՝ Երուսաղեմի Պանդա վանքում ստեղծած թարգմանական գրականությունը, զանազան թղթերը, Աղվանից վաշագան Գ թագավորի անվան հետ կապված գործերը, «Գիրք թղթոց»-ում և «Պատմութիւն Աղուանից» երկում պահպանված բազմաթիվ թղթերը, Ներսես Բակուրի և հայոց նղիա կաթողիկոսի հետ առնչվող գրագրությունները, գրավոր միջոցառումները, Ներսես Բակուրի դավանաբանական գրագարանը՝ հանձված Թարթառ գետի ալիքներին, Համամ Արևելցու, Ասրուելի, Փիպեկի (Փիլիպպե) և հայոց Տիրան վարդապետի հարց ու պատասխանիները և այլն:

Եթե հաշվի առնենք նաև այդ գործերում մատնանշված համապատասխան բնույթի գրականությունը, որին ժանոնթ են եղել Աղվանից երկրի հայ գործիչները կամ որը հանձնարարվել է նրանց, կտանանք ոչ այլ ինչ, քան հայ մատենագրությանը հայտնի ողջ դավանաբանական գրականությունը:

բ) Երավարանական գրականություն. — Իր գերով և նշանակությամբ բննության առարկա գրականության հաջորդ խոշոր հատվածն է դա: Փաստերը ցույց տվին, որ Աղվանից երկրում ևս գործածվել են այն բոլոր կանոնները, որոնք հայ իրականության մեջ Հովհան Օձնեցու ձեռքով կազմեցին «Կանոնագիրը Հայոց» ժողովածուն, հետագայում ևս շարունակելով հարստանալ:

Աղվանից եկեղեցին էլ, հայ եկեղեցու հետ միասին, սովորություն է ունեցել հաճախ վերանայել, վերահսատառել այդ կանոնները և հարկ լինելիս նոր կանոններով լրացնել նը-

րանց ամբողջությունը: Այս առումով մեծարժեք հուշարձաններ են Վաշագան թագավորի կանոնները, Արքահամար Մամիկոններից հպատակուոսի՝ նույն թագավորի խնդրանքով մշակված կանոնները, Տէր-Միքայելի կորած, ներսես Բակուրի ոչնչացված կանոնները, Սիմեոն Աղվանից կաթողիկոսի կանոնները, Պարտավի կանոնները (հայտնի նաև Հայոց Սիոն կաթողիկոսի անունով)՝ բնդուաւ մինչև Դավիթ Ալավկառդու կանոնները և Միհիթը Գոշի Պատաստանագիրը; Վերջինս, համահայկական ձեռնարկ լինելով, հավասարապես ընդգրկում էր նաև Աղվանից աշխարհի հայության շահերն ու հետաքրքրությունները:

գ) Պատմագրություն, ժամանակգրություն. — Աղվանից պատմությանն առանձին հատորով անդրագառնալու անհրաժեշտությունը ծնվեց 7-րդ դարում ցիվանշիրյան բարենպատարիներին՝ ի դեմս «Պատմութիւն Աղուանից» երկի: Որպես օրինաշափ երկույթ, այն իր ուրույն տեղն ունի հայ մատենագրության շլթայում, որը ձգված է հատկապես Խորենացուց մինչև Թովմա Արծրունի, Ստեփանոս Օրբելյան և ուրիշներ: «Պատմութիւն Աղուանից»-ը տոհմական մատենագրության ձյուղին պատկանելով, միաժամանակ բոթուկային բնույթ ունեցող ստեղծագործություն է, որը իր արժանի լուման է մուծել 10-րդ դարի հեղինակ Մովսես Դասիսուրանցին: Հետագայում այն յուրովի «լրացնելու» փորձ է արել Միհիթը Գոշը, առավել լուրջ աշխատանք խնդրելով Գրիգոր Տղայից: Սկզբնական շրջանում այդ «Քոթուկի» մեջ իր լուման է մտցրել նաև Վիրոկաթողիկոսը («Ես Վիրոյ՝ Աղուանից և կինաց և Չողայ կաթուղիկոս, թողում ասել զայլ ամենայն պէսպէս զարրալիս...»): Երկի այս բնույթը մեզ հիշեցնում է ոչ միայն Թովմա Արծրունու տոհմային պատմությունն առհասարակ, այլև այն, որ այդ երկն էլ, իրավացիորեն, հետո շարունակվել է անհանուն պատմիչի կողմից<sup>2</sup>: Ենթադրվում է, որ Աղվանից աշխարհի պատ-

1 Մովսես Կաղանեկատավացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 189:

2 Արծրունիների տան պատմությունը «Քոթուկային» ձևով թողնելու այս հզանակը յուրովի շարունակվել է նաև Սերբաստիայում՝ մանր ժամանակագրությունների կարգով:

մությանն անդրադարձել է նաև Համամ Արևելցին։ Հավանաբար նաև ուրիշներն են այդ գործին մասնակցել։

Հայոց Արևելից կողմանց պատմագրության մասին խոսելիս շպիտի մոռանալ Կիրակոս Գանձակեցուն, որը իր «Համառոտ պատմութիւն ժամանակաց ի սրբոյն Գրիգորէ մինչև յշետին ատւրա թևացեալ...» խորագրով հատորում անդրադառնում է նաև «կողմանցն Աղուանից, որպէս զազգայնոց և գիտատակցաց»<sup>3</sup>։

Այստեղ նկատի պիտի ունենալ նաև քաղաքրական այն ամբողջ նյութը, որ առնված է հայ մատենագրությունից և գետեղված «Պատմութիւն Աղուանից» հատորում։ Այս հղանակով մատնանշված քաղաքրությունը դարձել է ոչ միայն «Պատմութիւն Աղուանից» երկի, այլև Հայոց Արևելից կողմանքի դպրության անրաժանելի և օրգանական մասը։

Պատմական բնույթի երկերից, համապատասխան լրացումներից բացի, պատմության բնագավառին վերաբերող վիթխարի նյութ կա արձանագրությունների և ձեռագրային հիշատակարանների ձևով, որոնք նույնպես կարող են մտնել նաև այս բաժնի մեջ։

Դ) Գեղարվեստական գրականություն։—Մեզ հետաքրքրող գավառներում ևս, բնականաբար, պիտի զարգանար արվեստավոր խոսքը՝ ոչ միայն տարբեր բնույթի երկերի մեջ, այլև առանձին ստեղծագործություններով։ Մեր քննության ընթացքում այս առումով ուշագրավ եղան մի շարք գործեր։ Դրանցից մեկը Հայոց Գյուտ կաթողիկոսի թուղթն է՝ առաքված Վաշագան Երկրորդ թագավորին։ Գեղարվեստական խոսքի մեծարմեք նմուշ է Զիվանշիր իշխանի աղոթքը։ Իր ժամանակի հայ բանաստեղծության եղակի նմուշներից է Դավթակ Քերթողի Ողբը՝ Հայկական այբուբենը հողող ակրօստիքոսով։ Նշանակալից պիտի համարել, որպէս գրական երեսով, եսայի Արու Մուսեի պատասխանը՝ Բուզա ոստիկանին Բացառիկ նշանակություն ունի Համամ Արևելցու շարականը՝ «Համամ» ակրոս-

<sup>3</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 192։

տիքոսով։ Պակաս ուշագրավ չեն նույն հեղինակի քերականական աշխատության շափածո էջերը, երբեմն էլ՝ կանոնավոր հանգավորմամբ։ Ավելորդ կլիներ խոսել Հովհաննես Սարկավագի որպէս բանաստեղծի մասին, որովհետև նա արդեն համահայկական նշանակության խոշորագույն հեղինակներից է։ Նույն պատճառով անհարկի ենք համարում անդրագառնալ նաև Մխիթար Գոշի առակներին և առհասարակ նրա և նրա անմիջապես նախորդն ու հաջորդը հանդիսացող գրողներին, մատենագիրներին։ Սակայն շմոռանանք արձանագրել, որ այս բնագավառում իր մատղաշ ծիլերով առկա է նաև գեղարվեստական արձակը՝ խանձարուրային և նախնական վիճակով։ Վերոհիշյալ զործներից Գյուտ կաթողիկոսի նշված թուղթը, Զիվանշիրի աղոթքը, եսայի Արու Մուսեի պատասխանը և մասնավորապես Մխիթար Գոշի առակները դրա լավագույն օրինակներից են։ Քիչ չեն նաև համապատասխան հատվածները «Պատմութիւն Աղուանից» երկում, հիշենք թեկուզ «Յաղագս սրբակը բրոն առն Խրայէլի... վիպասանումն զրուցաւրաբար» գլուխը, ուր ի գեմս վերջին բառերի ունենք շարադրանքի բնույթագրությունը։ Ահա մի քանի տող այդ գործից։ «Այլ քանզի աղբիւր ուղիւրածեմ իշիւր էր այրն երջանիկ, և ի յորդահոս քաղցըր վտակաց իւրոց յոպունց արբուցանէր...»<sup>4</sup>։ Պակաս պերճախոսությամբ և արվեստով չի շարադրված Զիվանշիրին և Ուխտանիս կաթողիկոսին առաքված թուղթը՝ «Ուղիւրածեմ հոգեճաշակ համբուրիւ...»<sup>5</sup>։

Առանձին ուշագրության արժանի են Վաշագան Գ թագավորի կազմած ծիսական թափորի նկարագրությանը<sup>6</sup>, Զիվանշիրի գովքին ու նրա նկարագրությանը<sup>7</sup> նվիրված էջերը և շատ ուրիշ հատվածներ, որոնք առանձին վերցրած գեղարվեստա-

<sup>4</sup> Մավսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 245։

<sup>5</sup> Անդ, էջ 238—241։

<sup>6</sup> Անդ, էջ 77—78։

<sup>7</sup> Անդ, էջ 227—229։ Ուշագրավ են նաև «ճա» տառի կրկնությամբ հարուստ հետևյալ տողերը. «Պերճազարդ նեմող նեպող և նախրասլաց...» (229)։

կան արձակի ընտիր նմուշներ են: Մեծ արժեք ունի ժողովրդից զրի առնված առակը՝ կորեկի մասին<sup>8</sup> և այլն:

Ե) Քերականական՝ — ինքնին հասկանալի է, որ դպրոցների Հիմնագրման տարիներից ինչպես Հայաստանում, այնպիս էլ Հայոց Արևելից կողմանքում պիտի գործածության մեջ դրվելին Դիոնիսիոս Թրակացու քերականության թարգմանությունը, ապա նաև համապատասխան մեկնությունները: 9-րդ դարում Աղվանից թագավոր Համամ Արևելցին իր ժողովրդին տալիս է նաև այդ գործի սեփական մեկնությունը՝ պատշաճցված տեղի իրադրություններին: Պետք է նկատել, որ այստեղ քերականագիտական ուսուցումից զատ, ավելի քան գործնականորեն հոգ էր տարված բանաստեղծական արվեստի մասին:

Դավթակ Քերթողի վերաբերյալ Մովսես Կաղանկատվացու դրվատանքից երևում է, որ նույն Արևելցից կողմերում զարգացած է եղել նաև ճարտասանական, վերծանական արվեստը, որն այն ժամանակ կապված էր քերականական գիտելիքների հետ:

Հայոց Արևելցից կողմանց դպրության պատկերը լրիվ չի կարող լինել, եթե մենք չհիշատակենք նաև համահայակական ողջ մատենագրությունը, առանց որի չէր կարող ապրել և ստեղծագործել Հայ ժողովրդի արևելյան այդ հոծ զանգվածը: Իրերի ներկա դրության մեջ Հարցի այս կողմը կարիք ունի ոչ թե ողջ Հայ մատենագրական միավորների թվարկման, այլ համապատասխան իրողությունը փաստարկելու: Խնդիր, որը բավարար հիմնավորման արժանացավ մենագրության մեջ՝ ս. Գրքի, ավետարանների, կանոնագրերի, պատմական, մեկ-

նողական և այլ բնույթի գրական հուշարձանների կապակցությամբ գրված էջերում:

Մասնագետների խնդիրն է հանգամանորեն վերհանել և ուսումնասիրել այդ ողջ գրականությունը, որպեսզի նրա օգնությամբ ավելի քան հստակ պատկերացում կազմենք հայ ժողովրդի մի խոշոր հատվածի՝ Հայոց Արևելից կողմանց, ինչպես և ողջ Աղվանից աշխարհի կյանքի և մշակույթի պատմության մասին:

8 «Եւ եղել ի նորին աւուրս Վարագ Տրդատայ սով անտանելի լԱղուանից սահմանս, վասն որոյ առասպելաբանիւր լումանց եթէ. «Ես կորեակ ի Շակաշէն զաւառի ծածկեալ կայի ի վայրին Կակուայ, և զանց առնէին զինն բազմութիւնը զնողաց և ոչ զնէին զիս. եկն ժամ բարի, որ եղրայրն իմ Սովտիրանայր, և ահա գտայ ես երևելի ի սեղանս Վարագ Տրդատայ իշխանի և նղիազարու կաթողիկոսի: Եւ որք կերանն զիս՝ արինարերը եղեն, անմադիք լերսւք» (Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 357—358):

## ՀԱՎԵԼՎԱՆԵՐ

### Ա. ՈՒՏԻՔ ԵՎ ՈՒՏԻՆԵՐ

Վերևում քանիցս անդրադանք և՛ Ուտիքին, և՛ ուտիներին՝ որպես Հայաստանի և Հայ ժողովրդի հատվածների: Անշուշտ, ինչպես ուրիշ զեպքերում, այնպես էլ այստեղ գործ ունենք պատմական անհամեմատ բարդ երևոյթների հետ: Խոսքը վերաբերում է ուտիների էթնիկական և ծագումնաբանական հեռավոր ժամանակներին: Ովքե՞ր են եղել նրանք՝ նախքան Հայ ժողովրդի կազմավորման երևոյթի մեջ ներկրավվելը: Այս խնդրին մենք մեր բուն խոսքի մեջ շանդրադանք, ինչպես շանդրադանք նաև Հայ ժողովրդի մյուս հատվածների նախնական կամ ավելի շուտ նախահայկական շրջանների պատմությանը: Եվ դա միանգամայն բնական է, որովհետև մեզ զրադեցնող Հարցերը իրենց բուն էությամբ դրա կարիքը չունեն: Այստեղ, սակայն, կկամհնայինք տալ նաև մի երկու բացարություն ուտիների մասին:

Ամենից առաջ պիտի ընդգծենք, որ մասնագետները սխալվում են, երբ ուտիներին մտցնում են Ստրաբոնի Հիշատակած աղվանական 26 ցեղախմբերի մեջ: Այդպիսի մոտեցումը ճիշտ չէ, որովհետև ինքը՝ Ստրաբոնը աղվանների և ուտիների միջև դնում է որոշակի տարրերություն, դիտել տալով

նրանց որպես առանձին միավորներ: Այսպես, օրինակ, նա, խոսելով Վրկանա ծովի Հարավ-արևմտյան լեռնալանջերի բնակչության մասին, թվարկում է. «ամարդներ, անարիակներ, կատիշներ, աղվաններ, կասպեր, վիտիներ (ուտիներ)...»<sup>1</sup>: Մի այլ առիթով ևս նա մոտավորապես նույնն է կրկնում՝ աղվաններին և ուտիներին դիտելով որպես տարրեր ցեղախմբեր, նախ հիշելով «աղվաններին և Հայերին», ապա թվարկելով՝ «գելեր, կատիշներ, ամարդներ, ուտիներ և անարիակներ»<sup>2</sup>: Հեղինակի համար նրանց միջև եղել է այնպիսի տարրերություն, ինչպիսին եղել է, ասենք, աղվանների և Հայերի կամ Հայերի և ամարդների միջև:

Սակայն միաժամանակ շպիտի մոռանանք, որ Ուտիքի բնակչությունը այդ ժամանակ, հիմնականում, խռոսում էր Հայերին և գտնվում էր Հայաստանի կազմում: Պարզվում է, որ բուն Ուտիքից գորոս ուտիները ապրել են նաև Կասպից ծովի ափերին՝ և՛ Հյուսիսում, ի՛ Հարավում: Կնշանակի, այն ժամանակ նրանք աշխարհագրական առումով մի ամբողջություն չէին կազմում, հետևապես, ենթադրելի է նախնական ամբողջուրյան կոտորակում: Այդ կոտորակումն էլ կապվում է տեղաշարժերի հետ, այլապես նույն ամբողջության մասերը միմյանցից հեռու ընկնել չէին կարող: Եվ քանի որ նրանց որոշ բեկորներն են միայն հիշատակվում Կուր գետից հյուսիսի ընկած լեռնամասերում, իսկ բուն զանգվածը՝ Կուր գետից Հարավ, մնում է ենթադրել, որ տեղաշարժը կատարվել է Հարավից-Հյուսիսի:

Այս առումով վերին աստիճանի ուշագրավ են Ն. Մառի, Ի. Մեշշանինովի, Ս. Թարխուղարյանի, և. Մելիքսեթ-Բեկի և ուրիշների հետազոտությունները, որոնց համաձայն ուտիները Կովկասի հնագույն բնակիչներից են՝ ապրած Սեանի ավագանից մինչև Ախալքալաքի, Ալաշկերտի շրջանները ձգված տա-

<sup>1</sup> Страбон, География, 1964, XI, VIII, 8.

<sup>2</sup> Անդ, XI, VII, 1:

3 Հիմք՝ Ստրաբոնի և Մ. Խորենացու վերևում քննկած վկայությունները:

րածությունների վրա և հիշատակված գեռնս 8-րդ դարի (նախ. մ. թ.) ուրարտական արձանագրություններում՝ գտնված Վանի և Սևանի շրջակայրում:

Ուտիները, ըստ Ն. Մառի, հանդիսանում են իր ժամանակին Կովկասում ապրող մի մեծ ժողովրդի մնացորդները, որոնք բնակված էին Էտիունի (Էլի-սու) երկրում, հետագայում պատմականորեն ծանոթ հույներին որպես օ-տե-ո-..., իսկ հայերին՝ ս-է-զ: «Այդ ուտիները հին Հայաստանում կազմում էին նրա գալապոներից մեկի բնակչությունը, որը հայտնի է ս-տե. ուղղ. հոլով Ալի-զ» անոնով<sup>4</sup>:

Այդ կարծիքը պաշտպանում է նաև Ի. Մեշշանինովը: Ուշագրավ է, որ նրանցից շատ առաջ ադրբեջանցի գիտնական Ա. Բակիխանովը գրել է. «Ուղիները... Հայաստանի հին բնակիչների մնացուկներից են, որոնք հետզհետե հասել են Շաքի, Շիրվան, Դուրա և այլն»<sup>5</sup>:

Առանձին ուշադրության արժանի է Ս. Բարխուդարյանի այդ հարցին նվիրած մեծարժեք ուսումնասիրությունը, որտեղ նա ի մի է բերում ուրարտական բոլոր արձանագրությունների (գտնված Վանում, Պողոս-Պետրոսի եկեղեցում, էլառում, Սևանում և այլն) վկայությունները՝ էտիունիների-ուտիների մասին, ցույց տալով նրանց աստիճանական տեղաշարժերը հարավից՝ Սարդիլամիշ — Կարս — Արագածոտն — Կոտայք — Սևան ճակատով մինչև Կուր գետի ավազանը, այսինքն, Ուտիք: Ուշագրավ է նաև Ստ. Բյուզանդացու վկայությունը, թե Կուրի մոտ ապրում են օվարացիք և ուտիսցիք, որ Հայաստանի նշանավոր (=նշանակալից) մասերն են կազմում:

810—733 թվականներին էտիունիները մի քանի անգամ ենթարկվել են իրենց հարավային հարևանների՝ ուրարտացիների հարձակմանն ու ստիպված տեղաշարժվել դեպի

<sup>4</sup> Н. Я. Марр, Языковая политика (Избр. работы, том V, Москва—Ленинград, 1935, стр. 523—524).

<sup>5</sup> Համապատասխան նյութերի անհամեմատ լրիվ ցանկն ու օգտագործումը տե՛ս է. Մ. Մելիքսեթ-Բեկովի «Կ истории удин» հոդվածում, տպագրված «Труды Тбилисского Гос. университета», XXIII, 1942, стр. 25—55.

<sup>6</sup> Հ. Հյուրշման, Հին Հայոց տեղույթ անունները, Վիեննա, 1907, էջ 107:

Հյուսիս: Մեծ արժեք ունեն նաև էտիունիների երկրագործական նստակյաց կյանքի մասին եղած տվյալները. «Էտիունի երկրը ոսովվող է, ասված է Արգիշտիի արձանագրություններից մեկում: Եվ իրավացի է Ս. Բարխուդարյանը, երբ իր ուսումնասիրությունն ավարտում է հետևյալ եղբակացությամբ. «Հայ ժողովրդի կազմի էթնիկական բաղկացուցիչ տարրերից մեկը ուղիներն են. նախ և առաջ բազմացել էտիունները»:

Այս այն վաղ ժամանակներում, երբ Հայկական բարձրագնակում տարբեր էթնիկական միավորների վերածումմամբ, կազմավորվում և հզորանում է հայ ժողովուրդը, իրենց բնաշխարհում, հայացման պրոցեսի մեջ են մտնում նաև ուտիները՝ թերևս որպես արյունակից ցեղեր:

Ինչ վերաբերում է Կուր գետից Հյուսիս ընկած նրանց զանգվածներին, ապա նրանք ապրեցին մի այլ կյանքով և փոքրիկ բեկորներով հասան մինչև մեր օրերը: Այն հանգամանքը, որ սակերի Հայաստան ներխուժելը և Ուտիքում Շակաշին հիմնելը տեղի է ունեցել 7-րդ դարում (ն. մ. թ.), ցույց է տալիս, որ Ուտիքի համապատասխան տարածությունները դեռ այն ժամանակ Հայաստան են համարվելու: Ուտիք և ուտիների հայացման հիմնական ժամանակաշրջանը տեղագրվում է հայ ժողովրդի կազմավորման նախնական դարերի սահմաններում:

Այսպես մոտենալով խնդրին, տեսնում ենք, որ ճիշտ չեն այն մասնագետները, որոնք ուտիներին մտցնում են աղվանական ցեղախմբերի մեջ և նրանց գոյությունը Կուր գետից հարավ՝ ցույց տալիս ընդհուպ մինչև 7—10-րդ դարերը: Դրանով էլ նրանք Ուտիքը համարում են Աղվանք, ուտիներին՝ աղվաններ, մի քանի, որը միանգամայն սիսալ է:

Ուտիքիների պատմությունը բավականին բարդ ու նուրբ ծալքեր ունի: Նրա տարրալուծման երկույթը ամրողական բր-

<sup>7</sup> Ս. Բարխուդարյան, Այսուհեր հայ ժողովրդի էթնիկական կազմի մասին, Ուղիների ծագումը (տե՛ս Տեղեկագիր ՀԱԽՀ Պատմության և դրականության ինսփիտուտի, գիրք 2, 1937, էջ 195—221):

<sup>8</sup> Տե՛ս վերևում, էջ 33: Страбон, География, 1964, XI. VIII. 4. Տե՛ս նաև XI. VII. 2: «...в Сакасене и Араксене — в Армении».

Նույթ չի ունեցել Ուստի չի կարելի այժմ ամենուր որոնել միատարր ուտիներ, զանց առնելով նրանց կյանքի կարևորագույն դրվագները՝ կապված Հայաստանի և Հայ ժողովրդի հետ:

Երեսում է նաև, որ Մովսես Խորենացու հաղորդումը՝ Առան նախնու և ուտիների մասին՝ ունի իր պատմական հեռավոր հիմքերը: Եվ եթե յոթերորդ դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացին հավատացած կրկնում է այդ գրույցը, կնշանակի նա ոչ մի անհավանական բան չի նկատել դրա մեջ: Իսկ զա ցուց է տալիս, որ յոթերորդ դարում ուտիները ոչ միայն հայ էին համարվում, այլև՝ սերված Հայազգի Առան նախնուց՝ հեռավոր անհիշելի ժամանակներում:

Այժմ է միայն հասկանալի դառնում, թե ինչու 3—2-րդ դարերում (նախ. մ. թ.) Երվանդ — Արտաշեսյան ընդհարումների առաջին կենտրոնը Հայաստանի Ռւտիք գավառն էր:

Թե որն է եղել Ուտիքի այն հեռավոր ժամանակների ճշգրիտ սահմանը, այժմ դժվար է ասել: Սակայն հետագա պատմիչների մոտ այն մերթ ավելի ընդարձակ, իսկ մերթ էլ համեմատաբար փոքր տարածություններով է Հիշատակվում: Բուն էտիունիների համար հնագույն տեղեկությունները հավաստում են, որ նրանք մեղացիներից բաժանվում էին Արաքս գետով, և սփոյած էին մինչև Կուր գետի սահմաններոց:

Այս ամենից հասկանալի է, որ էտիունիները — ուստիները — ստենները Հայոց բնաշխարհի հնագույն ժողովուրդներից մեկն էին, ինչպես ուրարտացիները և ուրիշներ, որոնց էթնիկական հիմքի վրա էլ հզորացավ կազմավորվող հայ ժողովուրդը: Եթե նրա որոշ բիկորները ինչ-ինչ պատճառներով դուրս էին եկել իրենց բնաշխարհից և ապրել առանձին կյանքով, զա բոլորովին այլ հարց է կարոտ այլ գնահատման:

9 Հտիունիների մասին մի արժեքավոր դիտողություն է արել նաև Գր. Ղափանցյանը: Նա, անդրդառնալով Մասի և Օրբելու 1916 թվականին Վանում գտած ուրարտական արձանապուրպյանը, գրում է, որ այնտեղ «Հտիունի երկրի բաղաքների թվում... կարդացվում է իշ-մա-ա-ն» բաղաքի առունը, որը կարող է արտաքիրելի և Էշ-մա-նի (=Erman!): ահա Գր. Կապանցյան, Խայасա—կոլյել արման, Երևան, 1948, ս্তր. 180—181.

Այս կապակցությամբ արժեք հիշել նաև սակերին կամ սակասիններին: Ինչպես Հայտնի է, նրանք սկյութական ցեղեր էին, որոնք մի ճյուղով մտան Հայաստան և որոշ օջախ թողին Ուտիքում, կամ ինչպես Ստրաբոն է ասում՝ Հայաստանում: Բնականաբար այն հին ժամանակներում սակերն էլ տարրերվում էին աղվաններից, ինչպես, ասենք, կատիշները: Այս առումով արժեք հիշել Արփանի հետևյալ տողերը, որոնց մեջ հիշատակվում են Աղեքսանդրի կողմն անցած տեղական ցեղերի զորքերը. «մեղացիների հետ միասին էին կատիշները, աղվանները և սակասինները»<sup>10:</sup> Մի այլ առիթով ևս նա հիշում է՝ «այնուհետև աղվանները և սակասինները»<sup>11:</sup>

Ուշագրավ է նաև ինքը «շակաշեն» կամ «սակաշեն» բառը, որը հայկական առումով, թերևս գալիս է Աղեքսանդր Մակեդոնացու ժամանակներից: Եվ քանի որ վերոհիշյալ դիպ-քերը զուգընթաց էին Հայ ժողովրդի կազմավորման բուն թափին, ուստի սակերի Ուտիրում մնացած մասն էլ աստիճանա-բար Հայացավ՝ նախաբրիստոնեական դարերում: Գեթ Ստրա-բոնի ժամանակ, Հայաստանում նրանց հիշատակությունը կապված է եղել հեռավոր ժամանակների այնպիսի հուշերի հետ, որոնց համաձայն նրանք այս նոր երկրում թողին լոկ իրենց անունը կրող մի գավառ՝ Սակաշեն կամ Շակաշեն:

Հասկանալի է, որ ճիշտ չի լինի Հայաստան մտած այդ տար ցեղերին վերջին հաշվով «մացնել» աղվանական ցեղերի մեջ և դրա հիման վրա ևս նրանց գրաված տարածությունները (Շակաշեն) համարի ազգանական Առավելն, կարելի է այդպես վարվել միայն բուն Աղվանքում հանգրվանած սակերի հետ:

Համապատասխան ճշգրտումի կարիք ունի նաև գարզա-  
րացիների հարցը։ Հին վկայությունների համաձայն, գարզա-  
րացիները ապրել են Կովկասյան լեռների բարձրադիր լանջե-

<sup>10</sup> Ариан, Поход Александра, 1962, III, IV, 4.

11 Անդ, III. XI. 4.

րին՝ ամաղոնուհիների հարևանությամբ<sup>12</sup>: Հայկական որոշ սկզբնաղբյուրների համաձայն, Կուրի ափերին է ցուց տրվում նրանց բնակավայրը և «դաշտն Գարգարացւոց»: Մասնագետներն այս հակասության մասին հայտնի են տարբեր կարծիքներ: Բանասեր Հ. Համբարյանը գտնում է, որ այդ դաշտաբը նաև գարգարները՝ գուգարներն են<sup>13</sup>; Չնայած, իսկապես, հին մատենագիրների մոտ կան դրա համար որոշ հիմքեր (օրինակ, Ազաթանգեղոսի Պատմության ձեռագրերը «Գուգարացւոց»-ի դիմաց ունեն նաև «Գարգարացւոց» ձեր)<sup>14</sup>, բայց առաջիկ համոզիլ է մեծանուն հայագետ Հ. Հյուրշմանի կարծիքը: Վերջինիս համաձայն պիտի, ամենայն հավանականությամբ, գարգարների «բնակավայրը Ուտիի քովերը, բայց Կուրի արևելակողմը՝ Շարիի և Շիրվանի կողմերը փնտուել»<sup>15</sup>: Դրանով, անշուշտ, չեն հերբվում գարգարների գեպի հյուսիս ձգվող սահմանների մասին եղած հնագույն տեղեկությունները: Այս առումով ուշագրավ են Մովսես Կաղանկալվացու վկայությունները: Նա մի դեպքում հաստատում է, որ Մաշտոցը սատեղծ զնշանագիրս կոկորդախօս, աղխալուր, խժական, խեցրեկագունի լեզուին Գարգարացւոց»<sup>16</sup>, իսկ մի այլ դեպքում՝ զրում, Մաշտոցը «ձգէր զքարոզութիւն աւետարանին յաշխարհն Ուտիացւոց, և յԱղուանս և ի Լիինս և ի Կասպս և ի Գուռն Զորայ և յայլ ազգի ազգին, զորս գերութեամբն էր ածեալ Աղեքսանդրի Մակեդոնացւոյ և նստուցեալ զմեծ լեռամբն Կովկասու, զԳարգառսն և զԿամիճիկ Հեփթաղսն... առաքեալ... սարոտանեացն լինելով բատ նոցին բարբառոյ դրաբութեան առնէր զնոսա ծանօթս»<sup>17</sup>: Այս տեղեկության համա-

ձայն գարգարները նորից տեղադրվում են Ստրաբոնի ցուց տված վայրերում: Մակայն Մովսես Կաղանկալվացին ևս մեկ համար որոշակի չէ այդ հարցում, որովհետև այս «սարոտանեաց» համար Մաշտոցի մշակած դպրությունը այլ է՝ այն գարգարների դպրությունից, որը մշակվեց աղվանների համար:

Այս խնդրի հետ կապվում են նաև ուրիշ հարցեր, որոնց ամբողջական քննությունն այլ գործ է, սակայն, այդ ամենի ամփոփման հիման վրա գալիս ենք այն եղբակացության, որ բնդունելի համարելով Հ. Հյուրշմանի կարծիքը, պիտի ավելացնել, թե նրա նշած վայրերը («Եաքիի և Շիրվանի կողմերը») գարգարների հարավային սահմաններն են հանդիսացել:

<sup>12</sup> Страбон, География, 1964, XI, V. 1.

<sup>13</sup> «Հանդէս ամսօրեայ», 1910, էջ 241—242:

<sup>14</sup> Ազաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տփդիս, 1909, էջ 414:

<sup>15</sup> Հ. Հյուրշման, Հին Հայոց տեղույթ անունները, Վիեննա, 1907, էջ 111—112:

<sup>16</sup> Մովսես Կաղանկալվացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912, էջ 132:

<sup>17</sup> Անդ, էջ 104:

## Բ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՄԻՍ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳԱՎԱՌՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒՄԸ ՍՏՐԱԲՈՆԻ ՄՈՏ

Մեր աշխատության նախորդ էջերից երևաց նաև Հայաստանի պատմական աշխարհագրության բնագավառում առկա մի շարք կարեռ հարցերի ուսումնասիրության անբավարար վիճակը։ Պիտի նկատել, սակայն, որ այդ անբավարարությունը պայմանավորված է ոչ այնքան փաստերի բացակայությամբ, որքան եղած նյութերի ոչ հանդամանալից ուսումնասիրությամբ։

Այս կապակցությամբ անհրաժեշտություն է դառնում ուշադրություն հրավիրել Ստրաբոնի այն վկայությունների վրա, որոնք վերաբերում են Հայաստանի հյուսիս-արևելյան սահմաններին և հատկապես Փավենն (Փավնենն)։ Կոմիսենն և Օրբիստենն գավառներին, որովհետև մյուսները տեղադրված են։

Մեր կարծիքով ուսումնասիրողները սույն հարցում մոռացության են մատնել մի հանդամանք. զա Ստրաբոնի այն մեթոդն է, որով նա առաջնորդվում է գավառները և աշխարհագրական այլ միավորները թվարկելիս։ Այսպիսի դեպքերում նա, բնականաբար, թվարկում է մի որոշ սիստեմով, որի նպատակն է սպառել աշխարհագրական տվյալ միջավայրը և անցնել հաջորդ տարածություններին։ Պարզ է, որ նման դեպքերում, որքան էլ հեղինակը հմտորեն դասավորի իր թվարկում-

ները, դարձյալ թոփշներ կլինեն, սակայն միշտ էլ այդ թոփշները հեռավոր չեն լինի և կպատճառաբարանվեն։

Թերենք մի օրինակ. Ստրաբոնն՝ Աղվանիք նկարագրելիս, հանկարծ, կարծես անսպասելիորեն, անցնում է Հայաստանին։ Քաղաքական-վարչական հասկացողությամբ շպատճառաբանվող այս թոփշը, սակայն, պատճառաբարանվում է աշխարհագրական անմիջականությամբ, որովհետև հեղինակը դունվելով քարտեզի առջև և հասնելով հաջորդ բնագծին, լի կարող նրա մասին շխոսել, թեկուզ և այն պատկանում է ուրիշ պետության։ Այսպիսի դեպքերում նա հետապնդում է աշխարհագրական առումով տվյալ կողմերի լրիվ թվարկման նպատակը, ուստի և կատարում է նկարագրական թոփշ՝ վարչա-քաղաքական առումով։ Այլ կերպ ասած, նրա համար հաճախ կարենոր է դառնում տերիտորիալ լրիվ թվարկման, համապատասխան կողմերի հետ հաշիվը լրիվ «մաքրելու» պարզաբնակություն։

Զորոաստրով այս հանգամանքը, փորձենք հասկանալ նրա հետևյալ առողերի իմաստը, ուր նա թվարկում է Հայաստանի մեղ հետաքրքրող գավառները։

«Հայաստանի ներսում կան շատ լեռներ և շատ լեռնադաշտեր, որոնց մեջ խաղողի այդին հեշտությամբ չի աճում։ Նաև շատ հովիտներ, ոմանք չափավոր, ոմանք էլ շատ բերրի, ինչպիս Արաքսինի գաշտը, որով Արաքս գետն է հոսում մինչև Աղվանիքի ծայրը և թափվում է Կասպից ծովը, և սրա հետ հակաշներ՝ սահմանակից Աղվանիքին և Կուր գետին, հետո Գուգարքը։ Ամբողջ այս երկիրը լիբն է հացահատիկներով, պտղատու և մշտադաշտ ծառերով։ կա նաև ձիթենի։ Հայաստանի գավառներից են նաև Փավենն (կամ Փավնենն), Կոմիսենն և Օրբիստենն՝ որ հայթայթում է մեծաքանակ պատերազմական ձի։ Խորձենն և Կամբրյուսինն՝ Հայաստանի ամենահյուսիսային գավառներն են և շատ ձյունառատ, որովհետև մաս են կովկասյան լեռներին և Վրաստանին ու Կողքիսին...»<sup>1</sup>.

1 Ստրաբոն, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 55—57։

Ինչպես տեսնում, ենք, անկախ այն հանգամանքից, որ հեղինակն իր խոսքն սկսեց Հայաստանի լեռներից ու դաշտերից, նա իր նկարագրության տեսադաշտի՝ տակ առաջ պատմական Հայաստանի հյուսիս-արևելյան գավառների խումբը, թվարկումն սկսելով արևելքից Ըստ որում, թվարկման մեջ ընդգրկեց հետեւյալ 8 գավառները.

1. Արաքսինե
2. Շակաշեն
3. Գուգարք
4. Փալբենե (Փալնենե\*)
5. Կոմիսենե
6. Օրիխստենե
7. Կամբյուսենե (Կամբենան)
8. Խորձենե

Նա նույնիսկ, որոշ առումով, տվեց նաև աշխարհագրական այն մոտավոր սահմանները, որը պիտի որոնել նրանց այդպիսիք են, օրինակ, Արաքանենի Համար՝ Արաքս գետը՝ մինչև Կասպից ծովին ու «Աղվանքի ծայրը», Շակաշենի Համար՝ Աղվանքի Հարավային սահմանն ու Կուր գետը, Կամբյուսենեի և Խորձենեի Համար՝ Վրաստանի սահմանները, Կովկասյան լեռների բարձրագործ լանջերը և այլն:

Նկատելի է, սակայն, որ Ստրաբոնը նման օժանդակ տեղեկություններ չի տալիս այդ գավառներից այն երեքի Համար, որոնց տեղադրման գործն էլ հենց այդ պատճառով զժվարացել է: Ուշադիր նայելով մտածողության այս եղանակին, նկատում ենք, որ նշված գավառները բաժանվում են երկու խմբի, մի խմբի սահմանների մասին ավյալներ՝ կան, իսկ մյուսի Համար՝ ոչ: Ըստ որում, այն գավառները, որոնց սահմանների մասին խոսք կա, բոլորն էլ ճայրամասային են և հեղինակը տալիս է նրանց ու օտար երկրների շփման սահմանագծերը: Այդպիսիք են և՝ «Աղվանքի ծայրը», և՝ Կուրն ու Աղվանքը, և՝ Վրաստանն ու Կողքիսը, և՝ Կովկասյան լեռները: Ինչ վերաբերում է այդ գավառների այն սահմաններին, որոնցով նրանք

հարավից, արեելքից և արևմուտքից շփում են Հայկական մյուս գավառներին, ապա Ստրաբոնը նրանց այդ սահմանների մասին այստեղ չի խոսում: Այլ կերպ ասած, նա նշում է Հայկական գավառների արտաքին և շի նշում ներքին սահմանները:

Քանի որ վերևում թվարկված 8 գավառներից 5-ը արտաքին սահմաններ ունեն և այդ սահմանները նշված են, ուստի մասնադիտները ոչ մեծ դժվարությամբ կարողացել են մոտավոր ճշտությամբ գտնել նրանց տեղերը՝ քարտեզի վրա և բնության մեջ:

Նույնը չի կարելի ասել Փալենե (Փալնենե\*), Կոմիսենե և Օրիխստենե գավառների մասին: Նրանցից և ոչ մեկի որևէ սահմանը չի նշված, կնշանակի, նրանցից և ոչ մեկը արտաքին սահման չի ունեցել: Եվ հիրավի, մյուս 5 գավառների տեղադրումով Հայաստանի արտաքին սահմանները հյուսիսում և հյուսիս-արևելքում սպառվում են: Բայց այն հանգամանքը, որ շտեղադրվող 3 գավառները թվարկված են այդ հյուսիսային և հյուսիս-արևելյան 5 գավառների հետ, ցույց է տալիս, որ նրանք էլ գտնվում են նույն կողմերում, միայն թիւ այդ 5 գավառներից հարավ՝ նրանց անմիջական հարևանությամբ:

Արդ, ուր տեղադրել այդ 3 գավառները:

Այս հարցի պատասխանը հեշտությամբ կարելի է գտնել քարտեզի առջև կանգնելիս: Հատկապես Արցախն ու Սյունիքը, ինչպիս նաև Ռոտիքի մի մասը (ոչ Շակաշենը)<sup>2</sup>, որոնց անունները շկան Ստրաբոնի մոտ, բայց փաստորեն պիտի լինեին, գալիս են օգնելու հարցի լուծմանը: Եթե բատ ումանց Փալենետիսը կարող է Սավենիտիս կարդացվել, Համապատասխանելով Սյունիքին, ապա տվյալ գեպքում, Փալենե (Փալնենե) անունը կարող է փոխարինել Փալնիտիսին և ընդունվել Սյունիքի փոխարեն: Օրիխստենե անունն էլ թերևս Արցախի փոփոխված բառադրումն է: Ս. Տ. Երեմյանի կազմած որոշ քար-

2 Գրանով գերատին կապացուցվի, որ ուսիները հարավից են շարժվել հյուսիս:

տեղներում, մեր կարծիքով, միանգամայն իրավացիորեն, Օբխստեննեն տեղադրված է Արցախում<sup>3</sup>:

Անդրագանալով Հ. Հյուրշմանի «Փավնիտիս»-ը՝ «Սավ-նիախս-ով (Սյունիք) փոխելուն, պիտի ասել, որ դա բոլորովին սխալ է, որովհետև Սյունիքը Հայաստանին կցված նոր դավաներից չէր: Ուստի մնում է Փավնիտիսի տեղը որոնել ուրիշ կողմերում: Դրա համար ևս մոտավոր որոշիլը Ստրա-րոնի մեթոդն է: Հետեւելով այդ եղանակին, կարող ենք մո-տավորապես ճշտել նաև նրա գրաված տեղը: Այստեղ նա առաջնորդվում է հարեան երկրների անուններով և ապա նրանց գավաներով թվարկելով: Մարերից խլված հողերի մա-սին նա գրում է. «Մարերից Կասպիանեն, Փավնիտիսը և Բա-սորոպեդան»: Մասնագետները, համարյա միաձայն, ընդու-նում են, որ Կասպիանեն Կազբք գավառն է, ընկած Կասպից ծովի ափերին, իսկ Բոսրոպեդան—Վասպուրականը: Հասկա-նալի է, որ թվարկման այս եղանակը ենթագրել է տալիս մի տարածություն, որը պիտի գտնվեր բուն Հայաստանից դուրս և միջին տեղը գրավեր Կազբք-Վասպուրական տարածության վրա: Այս ուղղությամբ ուր էլ որ տեղագրվելու լինի այն, մին-նույնն է, չի կարող նույնացվել Սյունիքի հետ, որովհետև Սյունիքն էլ Արցախի հետ միասին արդեն հիշատակված են որպես Հայաստանի բնաշխարհի մասեր:

Այսուհետև, լզիտի մոռանալ, որ Հ. Հյուրշմանը ու մի գիտական փաստարկ չի բերել Փավնիտիսը Սյունիքի հետ նույնացնելու համար: Բացի դրանց, նույն եղանակով մի այլ նշանավոր հեղինակ Փավնիտիսը նույնացրել է, օրինակ, Ա-պահունիքի հետ, որը նույնպես գիտականորեն չի հիմնավոր-ված: Եվ հենց այս անորոշ իրազրությունների մեջ է, որ Հ. Հյուրշմանը գրել է. Փավնիտիսի «մեջ Մարթար» (Երան., 108) կուզե Տուրուբերան նահանգին Ապահունիք... գավառը տեսնել, որ Վանա լճին հյուսիսակողմը Արածանվո... վրա էր... բայց հայերենի սկզբան-ապա-ն հուն. գո-ին հետ չի հա-

մածանիր և երե հարկ է սրբագրություն մ'ընել, ես մես եմ Փասնիւն-ը Սոսնիւ: Կամ Սօսնիւ: ընել և այս նոր անվան մեջ Սյունիքը նահանգը տեսնել, երե հարկ չկա ենթարելու, թե Սյունիքի Արտաշեսի նախնական երկիրներուն կարգեն եղած թվա»<sup>4</sup>:

Հենց այս ծայրահեղ զգուշավորությունը պահանջում էր մասնագետներից նորանոր որոնումներ և ոչ թե անվերապահ հետեւումն: Այստեղ ուշագրավ է այն պարագան ևս, որ մեծա-նուն գիտականը նույնիսկ մտածել է, որ Սյունիքը կարող էր Արտաշես Առաջինի «նախնական երկրներուն կարգին...» պատկանել: Եվ, ինչպես տեսանք, ճիշտը դա է:

4. Հ. Հյուրշման, Հին Հայոց տեղույթ անունները, Վիեննա, 1907, էջ 17 (ընդգծումները մերն են—Ա. Մ.): Ուշագրավ է Գր. Ղաֆանցյանի նշումը՝ «ուրարտական և այլ» վերջածանցի մասին, որը պահպանվել է նաև Տիոն, Վագրանուց հասկացություններում (Տե՛ս Խանասա—կօլեբել արման, Եր-ևան, 1948, ստ. 212).

<sup>3</sup> С. Т. Еремян, Атлас к книге «История армянского народа», часть I, Ереван, 1952, карта «Армения во II—I вв. до н. э.».

ՑԱՆԿԱԳՐԸ

#### ՑԱՆԿ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՅԵՅԻՐՆԵՐԻ

11) 8911910

- Արել արենապիկոպոս, Տիրան վարդապետ, «Արարատ», 1876, էջ 93—96:

Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, Ա, Երևան, 1944:

Աբրամյան Ա. Ղ., Դեшифровка надписей Кавказских агван, Ереван, 1964.

Արքանային Ա. Գ., Մինքելառորում գտնված հայտառ բեկորների վերծանությունը, «Էզմիածին», 1956, № 4—5, էջ 66—72:

Աբոլաձե Ի., Կ открытию алфавита Кавказских албанцев, Тбилиси 1938.

Ագարակեղոս, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:

Ածոնց Հ., Արmenia в эпоху Юстиниана, СПб, 1908.

Ածոնց Հ., Լионнисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915.

Աղոնց Ն., Պատմական ուսումնասիրութիւններ, Պարիս, 1948:

Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901:

Ակինյան Ն., Թուղթ Մակարայ Բ. Երուսաղէմի հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սինեաց, յաղագս կարգաց եկեղեցոյ, «Հանդէս ամսօրեայ», 1930, էջ 509—578:

Ակինյան Ն., Մկրտիչ եպիսկոպոս Աղամումին, Միարանք և այցելու Երուսաղէմի Երուսաղէմ..., 1929 (գրախոսական), «Հանդէս ամսօրեայ», 1930, էջ 366—369:

Ակինյան Ն., Մովսէս Քամիփորանցի (կոչուած Կաղանկատուացցի) և իր պատմութիւնն Աղուանից, «Հանդէս ամսօրեայ», 1953, էջ 552—596:

Ակինյան Ն., Վրթանէս վարդապետ Քերթող և իր երկասիրութիւնները, «Հանդէս ամսօրեայ», 1910, էջ 37—46:

Ակինյան Ն., Ս. Մաշտոց վարդապետ, Վիճնա, 1949:

- Անապյան Հ., Աղվանից գիրը, «Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ-ի, 1941, № 3-4  
(8-9), էջ. 3-11:

Անապյան Հ., Հայոց անձնանունների բառարան, թ, Երևան, 1944:

Անապյան Հ., Հայոց անձնանունների բառարան, Գ, Երևան, 1947:

Անապյան Հ., Հայոց անձնանունների բառարան, Ե, Երևան, 1962:

Ամասոսին Ս., Հին և նոր պարականոն կամ անվաեր շարականներ, Վա-  
ղարշապատ, 1911:

Անանիա Մովսեսից, Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի յաղաք ապրո-  
տամբութեան տանն Ազուանից, որ ընդ ժամանակս ժամանակս իւալ  
ից ձեռնադրութիւնն արտաքոյ սուրբ Լուսաւորչի աթոռոյն, «Արա-  
րատ», 1897, էջ. 129-144:

Անասյան Հ. Ս., Հայկական մատենագիտություն, Ա, Երևան, 1959:

Արրան, Պոխօ Ալեքսանդրա, Մոսկավ, 1962:

Բարիստարյան Ս., Նյութեր հայ ժողովրդի էթնիկական կազմի մասին.  
Ուղիների ծագումը, «Տեղեկագիր» ՀՍԽՀ Պատմության և գրականո-  
թյան ինստիտուտի», գիրը 2-րդ, Երևան, 1937:

Բարիստարյան Ս., Տապանագիր Համամ իշխանի անունով, «Տեղեկագիր»,  
ՀՍՍՌ ԳԱ-ի, Երևան, 1964, № 1, էջ 61-64:

Բարիստարյանց Մ., Աղուանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893:

Բարիստարյանց Մ., Արցախ, Բագու, 1895:

Бартиկян Բ. Մ., Армянские источники для изучения истории пав-  
ликианского движения, „Палестинский сборник, выпуск 4-  
(67). 1959, стр. 133-146.

Буняков Յ. Ի., Азербайджан в VII-IX вв., Баку, 1965.

Буняков Յ. Ի., Обзор источников по истории Азербайджана, Ба-  
ку, 1964.

Гам К., Известия древних греческих и римских писателей о Кав-  
казе, 1, Тифлис, 1884.

«Գիրը թղթոց», Թիֆլիս, 1901:

Դյուուերոգ Կ., Հռովմէական Հայաստան և Հռովմէական սատրապություն-  
ները Դ-Զ դարերում, Վիեննա, 1914:

Գրքուր Տղա, Հարցումն խրատուց, զոր խնդրեալ է կաթուպիկոսն Հայոց  
Գրիգոր Տղայն կոչեցեալ ի մեծապատի վարդապետէն Գրիգորէ որ-  
դոյ Տուտեալ..., «Արարատ», 1893, էջ 238-243:

«Դավիթ Ալավարորու կանոնները», «Էջմիածին», 1953, № 1-3 (նաև ա-  
ռանձնատիպ):

«Դիվան հայ վիճագրության», կազմեց Ս. Գ. Բարիստարյան, Ա, Երևան,  
1960:

Եղիշէ, Վասի Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխատությամբ Ե. Տեր-  
Միասյանի, Երևան, 1957:

Երեմյան Ը. Ռ., Ատлас к книге „История армянского народа“, 1, Ере-  
ван, 1952, карта „Армения во II—I вв., до н. э.“.

- Еремян С. Т., Идеология и культура Албании III—VII вв., «Очерки истории СССР (III—IX вв.)», Москва, 1958, стр. 323—330.
- Երեմյան Ս. Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963.
- Еремян С. Т., Моисей Каланкатуйский о посольстве албанского князя Вараз-Трдата к хазарскому хакану Алл-Илантверу. «Записки Института Востоковедения АН СССР», Ленинград, 1939, том 7, стр. 129—155.
- Զարբենալյան Գ., Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1897:
- «Ընտիր էջեր», կազմեցին Կ. Մելիք-Օհանչանյան և որդիներ, Երևան, 1946:
- Թովմա Արծրունիք, Պատմութիւն տան Արծրունեաց, ՄՊր, 1887:
- Ժամկոչյան Հ. Գ., Արցահամյան Ա. Գ., Մելիք-Բախչյան Ստ. Տ., Հայ ժողովրդի պատմություն, Ա, Երևան, 1963:
- Латышев В. В., Известия древних писателей, I, СПб, 1893.
- Լեռ, Հայոց պատմություն, Բ, Երևան, 1947:
- Խաչիկյան Լ., ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950:
- Խաչիկ Վարդ, Գայլյան, Մովսէս Կաղանկատուացոյ Աղուանից պատմութեան Երկաթագիր (Ա խումբ) օրինակից մի պակաս հատուած, «Արարատ», 1897, էջ 161—163:
- Խաչիկ Վարդ, Գայլյան, Մովսէս Կաղանկատուացոյ Աղուանից պատմութեան Մայր Աթոռուու մատինագարանում գտնուած ձեռագիր օրինակներ, «Արարատ», 1895, էջ 333—348:
- «Կանոնագիրը Հայոց», Ա, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1964:
- «Կանոնը Պարտակի ազգային ժողովի», աշխատասիրությամբ Ա. Ղումանի, Վաղարշապատ, 1905:
- Կաпанցян Гր., Խանас-коалыбель армян, Ереван, 1948.
- Կրցակոս Գանձակիցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիքսեպ-Օհանչանի, Երևան, 1961:
- Կոսանյանդ Կ., Համամ Արենիցի, Վաղարշապատ, 1836:
- Կոյրուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:
- Крымский А. Е., Страницы из истории Северного или Кавказского Азербайджана (классической Албании), «Сборник статей—Сергею Феодоровичу Ольденбургу», Ленинград, 1934.
- Համբարյան Հ., Գարգարացիք թէ զովարացիք, «Հանգիւ Ամսօրեայ», 1910, էջ 241—242:
- Հացունի Վ., Պատմութիւն Հայոց աղօթամատոյցին, Վենետիկ, 1965:
- Հերում պատմի քարացաց, Վենետիկ, 1842:
- Հյուրջման Հ., Հին Հայոց տեղուոյ անունները, Վիեննա, 1907:

- Հովհաննես Գրախանակերացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:
- Հովհաննես Երևանականի եպիսկոպոս, Այս թուղթ Յունանու Երևանականի եպիսկոպոսի է առ Արա Աղուանից կաթողիկոս, «Արարատ», 1896, Հավելված, էջ 252—256:
- Հովհաննեսիան Աշ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Ա, Երևան, 1957:
- Հովհանիքան Գ., Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անդիխաս, 1951:
- Ղազար Փարսիկի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904:
- Շճաբարդ, 1860, Տետրակ Ե, էջ 79—83 (Գավթակ Քերթող):
- Մանանյան Հ., Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946:
- Մանանյան Հ., Տիգրան Երկրորդը և Հոսմը, Երևան, 1940:
- Մանանյան Հ., Թնական տեսություն հայ ժողովրդի պատմության, Բ, Երևան, 1957:
- «Материалы по археологии Кавказа», вып. XIII, Москва, 1916.
- Մատթեոս Ունայիցի, Փամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898:
- Մատիկյան Ա., Արայ Գեղեցիկ, Վիեննա, 1930:
- Marr H. Я., Избранные работы, V, Москва—Ленинград, 1935.
- Marr H. Я., Аркаун, монгольское название христиан., СПб, 1905.
- Меликшишвили Г. А., К истории древней Грузии, Тбилиси, 1959.
- Меликшет-Беков Л. М., К истории удин, «Труды Тбилисского Гос. университета», XXIII, 1942, стр. 25—55.
- Մելիքսեպ-Քեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, Ա, Երևան, 1934:
- Մելիքսեպ-Քեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, Բ, Երևան, 1936:
- Մելիքսեպ Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին, Հայոց Վագիսուրու, Ցուցակ ձեռագրաց (անտիպ. պահպանվում է Մաշտոցի անվան Մատինադարանի ձեռագրերի բաժնում):
- Մինօրեկայ Վ. Փ., История Ширвана и Дербенда, Москва, 1963.
- Միկրաց Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860:
- Միկրաց Գոյ, Պատմատանագիրը Հայոց, Վաղարշապատ, 1880:
- Միկրաց Գոյ, Թուղթ Միկրաց գարդապետին որ Գոյն կոչիր, «Արարատ», 1900, էջ 497—504, 562—568 էն:
- Մնացականյան Ա., Միկրաց Գոյի Պատմատանագիրի մի հզակի ընդօրինակություն, «Գրական Անդրբ», 1963, գետրվար 8:
- Մովսէս Կաղանկատացի, Պատմութիւն Աղուանից, Թիֆլիս, 1912:
- Մովսէս Խորենացի, Աշխարհացոյց, Վենետիկ, 1831:
- Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:
- Մովսէսյան Դ., Հոռի Կիրիկեան թագաւորներու պատմութիւնը, Վիեննա, 1923:

Мурадян П., Не опубликованная статья Н. Я. Марра об „Арк'яуне“, «Տեղեկագիր», ՀՍՍՌ ԳԱ-ի, 1964, № 12, էջ 49—59:

Юшков С. В., К вопросу о границах древней Албании, „Исторические записки АН СССР“, I, 1937, стр. 132.

Նախարարության Հ., Ստորագրութիւն Կաթողիկէ Եջմիածնի և հինգ պատուցն Արքարատայ, Բ, Էջմիածնի, 1842:

Шаниձե Ա., Криптографическая запись в одной армянской рукописи из Мюнхенской коллекции, «Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ-ի, 1960, № 9, էջ 96—97:

Шаниձե Ա., Новооткрытый алфавит Кавказских албанцев и его значение для науки, Тбилиси, 1938.

Ներսես Շեռնեալի, Բանք շափակ, Վենետիկ, 1928, էջ 550:

Ավալյան Հ., Մատենագրական բնութիւններ, Վիեննա, 1926:

Ավստրան Եպիսկոպոս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871:

Չամչյան Մ., Պատմութիւն Հայոց, Բ, Վենետիկ, 1785:

Չամչյան Մ., Պատմութիւն Հայոց, Գ, Վենետիկ, 1786:

Пигуловская Н., Сирийские источники по истории народов СССР, Москва—Ленинград, 1941.

Платарх, Сравнительные жизнеописания, Москва, 1963.

Ջալալյան Ա., Ճանապարհորդութիւն ի Մեծ Հայաստան, Բ, Տիֆլիս, 1858:

Ջանովյան Գ., Քերականական և ուղղագրական աշխատություններ Հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954:

Սամվել Անեցի, Հաւաքըմութ ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:

Սարգսյան Բ., Աբրահամ Մամիկոնէց Եպիսկոպոսն և իր առ Վաշագան գրած թուղթն, Վենետիկ, 1899:

Սարգսյան Բ., Մայր ցուցակ Հայերէն ձեռագրաց մատենադարանին Միլիոնի արքան ի Վենետիկ, Բ, Վենետիկ, 1924:

Սեբոս, Պատմութիւն ի Հերքակն, Թիֆլիս, 1913:

Սահմանու Աստիկի, Պատմութիւն տիեզերական, ՍՊ, 1885:

Սահմանու Օրբելյան, Թղթք և Հառաշանք ի դիմաց մօրս մեր սրբու Աթոռու էջմիածնի, Կալկաթա, 1846:

Սահմանու Օրբելյան, Պատմութիւն նահանգին Ախական, Թիֆլիս, 1910:

Страбон, География, 1964.

Strabo, The Geography of Strabo with an English Translation by Horace Leward Jones, vol. V, London, 1954, p. 322—324.

Սաւարոն, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940:

Վարդան Վարդապետ, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862:

Տաշյան Հ., Ակնարկ մը Հայ հնագրութեան վրայ, Վիեննա, 1898:

Տեր-Հովհաննեսյան Ա. Տ., Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսա-լէմի, Ա, 1890:

Տեր-Մկրտչյան Գ., Հայկականը, Ա, 1894:

Тревер К. В., К вопросу о культуре Кавказской Албании, Москва—Ленинград, 1960.

Тревер К. В., Очерки по истории и культуре Кавказской Албании, Москва—Ленинград, 1959.

Փավստոս Բագանդ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912:

Օրմենյան Մ., Ազգապատում, Ա, Փեյրութ, 1959:

Օրմանյան Մ., Армянская церковь, Москва, 1913.

8) ԶԵԽԱԿԻՒ (Մաշտոցի անվան Մասնեապարան)

1. № 9. Բենիկ Վանանդեցու «Տեսիլ»-ի կապակցությամբ:
2. № 38. Բենիկ Վանանդեցու «Ազօթք»-ի կապակցությամբ:
3. № 497. Ազգանից թագավորներ Ալարներսէնի և Փիպէի Հարցմունքների և Տիրան վարդապետի պատմախանիների կապակցությամբ (նաև ձեռ. № 625, 3006, 3710, 3824, 6380):
4. № 625. Տե՛ս 3-րդ կետ (№ 497):
5. № 836. Համամ Արևելցու Քերականության կապակցությամբ (նաև ձեռ. № 2152):
6. № 993. Հոգհաննես Երանակեմի Եպիսկոպոսի «Ներբողյանի» կապակցությամբ (նաև ձեռ. № 2124):
7. № 1151. Համամ Արևելցու՝ Սողոմոնի առակների մեկնության կապակցությամբ:
8. № 2121. «Յաղաք պատմութեան սուրբ... իւղոյն... յԱղուանի գիրս...» նյութի կապակցությամբ:
9. № 2124. Տե՛ս 6-րդ կետ (ձեռ. № 993):
10. № 2152. Տե՛ս 5-րդ կետ (ձեռ. № 836):
11. № 2544. Վարդան Արևելցու «Վասն բանին մասնեց...» երկի կապակցությամբ:
12. № 2678. Վրաց և Ազգանից գրերի կապակցությամբ (նաև ձեռ. № 3527):
13. № 2679. Ազգանից Վաշագան Գ թագավորի տված Հարցերի և Պետրոս Սյունեցու պատմախանիների կապակցությամբ (նաև ձեռ. № 3074, 4381, 6228):
14. № 2966. 1) Վրթանես Թերթողի՝ Ազգանից Հոգհորականների թղթին գրած պատմախանի կապակցությամբ (նաև ձեռ. № 3062)  
2) Վիրու և Միքայել Ազգանից կաթողիկոսների գրվածքների կապակցությամբ (նաև ձեռ. № 3062).  
3) Հայոց Եղիա կաթողիկոսի կապակցությամբ:  
4) Գյուտ կաթողիկոսի առ Վաշե Ազգանից թագավոր գրած թղթերի կապակցությամբ (նաև ձեռ. № 3062);
15. № 3006. Տե՛ս 3-րդ կետ (ձեռ. № 497):

16. № 3062. *Sh' u* 14-րդ կետ (ձեռ. № 2966);  
 17. № 3074. *Sh' u* 13-րդ կետ (ձեռ. № 2679);  
 18. № 3527. *Sh' u* 12-րդ կետ (ձեռ. № 2678);  
 19. № 3710. 1) *Sh' u* 3-րդ կետ (ձեռ. № 497);  
     2) Հովհաննես Սարկավագի ծննդավայրի կապակցությամբ;  
 20. № 3824. *Sh' u* 3-րդ կետ (ձեռ. № 497);  
 21. № 4284. Ստեփանոս Սյունեցու կապակցությամբ;  
 22. № 4381. *Sh' u* 13-րդ կետ (ձեռ. № 2679);  
 23. № 4913. 1) Համամ Արևելցու «Վասն գորողայից»-ի կապակցությամբ  
     (նաև ձեռ. № 5128);  
     2) Հովհաննես Գառնեցու «Վասն Գալթեան Մաղմոսի» վկա-  
         յության կապակցությամբ;
24. № 5128. *Sh' u* 23-րդ կետ (ձեռ. № 4913);  
 25. № 6228. *Sh' u* 13-րդ կետ (ձեռ. № 2679);  
 26. № 6362. Դիոնիսիոս Արքապազցու երկերի՝ Համամ Արևելցուն վերա-  
         դրված մեկնոթյան կապակցությամբ (նաև Փարիզի ազգ. Մատե-  
         նադարանի՝ № 60 ձեռագիրը);  
 27. № 6380. *Sh' u* 3-րդ կետ (ձեռ. № 497);  
 28. № 7117. Աղվանից ալբուրենի կապակցությամբ:

### ՑԱՆԿ ՀԱՏՈՒԿ ԱՆՌԻՆՆԵՐԻ

- Արաւ կթղկ.—105—112, 231  
 Արաւ, Կարուց տեր—223  
 Արգար թաղ.—15, 227  
 Արել (ածշ) — 189, 195  
 Արելյան Մ.—36—37, 90, 129,  
     167, 169  
 Արիկաղ երեց — 131\*  
 Արլ-Արաւ — 128  
 Արուլած ի.—9  
 Արու-Նարաջ — 83:  
 Արրահամ (ածշ) — 209  
 Արրահամ կթղկ.— 135, 138—139  
 Արրահամ, Մամիկոնից եպ.—  
     119—124, 130, 245  
 Արրահամյան Ա. Գ.—8, 10—11,  
     15, 37, 139—141, 241  
 Ազաթանգեղոս — 39—40, 47, 63,  
     65—66, 98, 174, 218, 256  
 Աղամ (ածշ) — 127
- Աղոնց Ն.—40—41, 45, 61, 68—  
     69, 80, 190, 192, 196—197, 203  
 Աղբբեշան (աղբբեշանցի) — 10,  
     17, 167, 191  
 Աթախա — 212  
 Աթանա Աղեքսանդրացի — 179—  
     180  
 Ալազան — 49—50  
 Ալանաց (ալանական, ալաններ) —  
     65, 92  
 Ալաշկերտ — 251  
 Ալիշան Ղ.—61, 98—103, 169,  
     176  
 Ալ-Մակդիսի — 83  
 Ախալքալաք — 251  
 Ակիլիսենի (Եկեղիք) — 24  
 Ակինյան Ն.—9, 14, 17, 88—89,  
     110, 112, 114, 124, 150, 154  
 Ակներ — 193

1 «Հայաստան (Հայեր)», «Հայոց Արևելից կողմանք», «Աղվանք (աղ-  
 վաններ)», «Ասկացությունները չեն ընդգրկված սույն ցանկում, որովհետև  
 փաստորին երանց մասին է խոսվում Համարյա բոլոր չշերում: Ուսումնա-  
 սիրության մեջ անունները հանդիպում են հ' հին, և' նոր ուղղագրությամբ-  
 այսուղի, միօրինակության համար, նրանք արված են միայն նոր ուղղա-  
 գրությամբ:

- Ազավնու գետ — 128  
 Աղքսանդր Մակեղոնացի — 26,  
     151, 255—256  
 Աղուեն — 131  
 Անառան Հ. — 9, 11, 104—105,  
     184—186, 189, 259  
 Ամազոնուհիներ — 256  
 Ամարաս — 76, 100—101, 112,  
     136—137  
 Ամարդիներ — 29, 251  
 Ամբակոս ևպ. — 111  
 Այրարատ — 52, 218  
 Ալրիվանք — 236  
 Ալրմանուշանք — 46  
 Անահիտ (Անահիտյան, դից.) —  
     62—63, 242  
 Անահիա Մոկացի — 47, 204, 206,  
     211—213  
 Անանիա Շիրակացի — 126  
 Անանիա քորեպ. — 131  
 Անանուն պատմիլ (Արծունի) —  
     245  
 Անանուն պատմիլ (վրաց) — 52  
 Անապան Հ. — 8, 11, 218  
 Անաստաս վրդ. — 97—103, 107,  
     112, 243  
 Անարիակներ — 29, 251  
 Անդրե առաքյալ — 236  
 Անդրկովկաս — 27, 194  
 Անդրկովրյան Հայք — 48—50, 56,  
     58—60, 62—63, 67, 71, 75,  
     80, 86—87, 111, 213, 242  
 Անի — 224  
 Անափոր — 109, 179  
 Անտիտավոռու — 24  
 «Աշխարհատիկին» (Վաշագան Գ. Կինը) — 133  
 Աշոտ Ա. Բագրատունի — 185—187,  
     200  
 Աշոտ Գ. Բագրատունի — 222, 225  
 Աշոտիկ — 236
- Ապահունիք — 262  
 Ապրասմեն — 79  
 Ապուլի (Պոլի) — 81, 213—214  
 Ապուսեթ, որդի Աստրեներսէի — 81  
 Աշճա, պատվիրակ Պարսկաստա-  
     նից — 13  
 Առան — 44, 75, 152, 164—165,  
     229, 238  
 Առան Խախնի — 30, 42, 254  
 Առանշահիկ (Եռանշահիկ) տոհմ —  
     20, 72—84, 242  
 Առավելից վանք — 100  
 Առատան — 131  
 Ասիդ («Ասիթ», ածլ) — 128  
 Ասորիս 12—13  
 Ասորի (ասորական) — 13, 16, 24,  
     147—149, 209, 243  
 Ասպրակոս — 131  
 Աստղարլուր (Աստեղն բլուր) — 65  
 Աստղիկ (զից.) — 65, 242  
 Ավետարանոց գլուզ — 115  
 Ատատ Խորխոռունի — 59, 71  
 Ատ-Տարարի — 191  
 Ատրեներսէ, որդի Գրիգորի — 81  
 Ատրեներսէ, որդի Համամի — 58,  
     81, 83, 190—191, 202, 204—  
     211  
 Ատրեներսէ, որդի Սահմի — 79  
 Ատրպատական — 32, 69  
 Արարներ (արարական) — 11, 16,  
     20, 58, 76, 84, 98, 159—160,  
     164, 181, 187, 198, 202, 204,  
     237—238  
 Արագածոտն — 252  
 Արա Գեղեցիկ — 60—62, 242  
 Արածանի — 265  
 Արաքս — 27, 32, 254, 259—260  
 Արաքսենե — 253, 259—260  
 Արգիշտի — 253  
 Արևելից կողմանք (աշխարհ),
- յուր) — 5, 15, 39, 64, 71, 84—  
     86, 169, 170, 248  
 Արիան — 258  
 Արծունիք (Արծունիներ) — 218,  
     224, 245  
 Արժայել — 74  
 Արմեն — 46  
 Արշակ թագ. — 68  
 Արշակունիներ — 19—20, 40, 67—  
     70, 129, 134, 224  
 Արշեն — 131  
 Արսեն Սափարացի — 52  
 Արտվազեն (Եսպաղեն, Էպաղեն,  
     Վաղեն) — 89, 92—93, 97,  
     104—105, 130, 243  
 Արտաշատ — 62  
 Արտաշես Առաջին — 22—26, 31—  
     32, 35—39, 43, 48, 67, 254,  
     263  
 Արցախ — 17—45, 60—64, 67—  
     70, 75, 77, 80, 84, 86—88,  
     100—101, 111—112, 122, 131,  
     146—149, 171—173, 213, 226,  
     243, 261—262  
 Արտիեժյաց տոհմ — 143  
 Արքառներ — 9, 51  
 Արքունիք — 46  
 Ափշին — 187
- Բարամյան արքինպ. — 168  
 Բարգեն կթղկ. — 11—12, 241  
 Բարելոն — 210  
 Բարեկ (Բարան) — 76, 83—84  
 Բարիկ — 129—130  
 Բարգաստունիներ — 83, 224, 263  
 Բազկան — 44  
 Բազկերտ — 225  
 Բակիխանով Ա. — 252  
 Բակ իշխան — 42  
 Բակտրիա — 33  
 Բակուր — 131
- Բաղդադ — 76  
 Բաղդադի — 235  
 Բասորովելքա — 24, 262  
 Բաստամյանց Վ. — 226—227,  
     232—233  
 Բարգուղմենու առաքյալ — 223  
 Բարթիկյան Հ. — 161  
 Բարխուտարյան Մ. — 77, 205,  
     235—236, 243, 251—253  
 Բարխուտարյանց Մ. — 42, 118,  
     219, 236, 243  
 Բարկուշատ — 128  
 Բարսեղ կթղկ. — 222  
 Բարսեղ Կեսարացի — 179  
 Բարսու — 205  
 Բեղեցնեմ — 210  
 Բնիամին — 89, 92—93  
 Բնիկ Վանանդիցի — 239  
 Բերդակուր — 46  
 Բերգատեղի — 46  
 Բերդո վանք — 46  
 Բերձոր — 46  
 Բյուլանդիա (բյուլանդացիներ,  
     բյուլանդական) — 18, 69, 145,  
     162—163, 191  
 Բնոտ — 106  
 Բոթիբոթեր — 128  
 Բոտի Այրյաց անապատ — 171  
 Բուզա — 77—78, 86, 181—182,  
     246  
 Բունիաթյով Զ. — 17, 83, 163—165,  
     181—183, 191, 205, 226—227
- Գաղիկ — 46  
 Գագիկ կթղկ. — 212  
 Գագիկ, որդի Աշոտի — 223  
 Գագիկ, որդի Ներսէնի — 79  
 Գահնամակ — 39, 41  
 Գայանե — 122  
 Գալշապան — 46  
 Գանգրա — 228

Գան կ.—33  
 Գանձակ — 220, 229, 237, 239  
 Գանձասար — 212—213, 220, 229, 235, 239  
 Գարգարներ (գարգարացիներ, գարգարական) — 17, 23, 67, 92—94, 101, 107, 140, 150—151, 241, 255—257  
 Գարդման (Գարդմանաձոր) — 38, 40—42, 52, 72—75, 78, 80, 93, 111—112, 144, 157, 162, 213, 225  
 Գեշոն — 127  
 Գեղամա գավառ — 171  
 Գեղը (գեղեր) — 29, 76, 127, 132, 237—238, 254  
 Գեղոր Գանձեցի կթղկ.—186—187, 237—238  
 Գեղորգիս Խաչատրակ — 76  
 Գեղորգ, Ռատանի հալ.—177  
 Գեղորգ Թարունի — 194  
 Գերմանացի — 55  
 Գերմանոսան — 132  
 Գիս — 38, 75, 147—148  
 Գլխու վանք — 148  
 Գյուտական — 46, 122  
 Գյուտերբուզ կ.—68  
 Գյուտ կթղկ.—114—116, 244, 246—247  
 Գողարինե (Գողարք) — 24, 32, 39, 69, 88, 225, 256, 259—260  
 Գոթեր — 150  
 Գոշակտակ — 222  
 Գորդուելս — 144  
 Գորոզու — 212  
 Գրիգոր, Այրիվանքի առաջնորդ — 236  
 Գրիգոր եպ.—110  
 Գրիգոր թագ.—236  
 Գրիգորիկ — 46  
 Գրիգոր իշխան — 211—212

Գրիգոր իշխան, Հայք Ապուլիի — 213  
 Գրիգոր Լուսավորիչ — 40—41, 47, 63, 65—66, 93, 96, 98, 122, 136, 161, 222, 237, 246  
 Գրիգոր կթղկ.—112  
 Գրիգորի կթղկ.—122, 132, 136  
 Գրիգոր Համամ — 101, տե՛ս Խաւ Համամ Արևելցի  
 Գրիգոր Նարեկացի — 182, 193  
 Գրիգոր, որդի Աւրենիսինի — 81  
 Գրիգոր, որդի Սահակ Սևադայի — 81  
 Գրիգոր, որդի Սենեկերմի — 222  
 Գրիգոր Տղա — 175—176, 233—235, 245  
 Գրիգոր Տուաներդի — 233  
 Գուգարք — տե՛ս Գողարքնե  
 Գուրգին, Անձնացյաց տեր — 223  
 Գուրգին, իշխանաց-իշխան — 206  
 Գուրգին, որդի Աշոտ Գ-ի — 223, 225  
 Գունին Մարգարե — 179  
 Գասնո անապատ — 229  
 Գաստակերտ — 46  
 Գալթակ Քերթող — 46, 84, 165—171, 195, 246, 248  
 Գավիթ Ալավելառոդի — 220, 226—230, 245  
 Գավիթ (Անհա՞ղթ) — 126  
 Գավիթ Անհողին — 215, 221—222, 225  
 Գավիթ Գարեւելի — 51  
 Գավիթ Խոտակերցի — 211  
 Գավիթ կթղկ.—177—178  
 Գավիթ մարգարե — 179, 200  
 Գավիթ, որդի Սահակ Սևադայի — 81  
 Գավիթ, Փառիսոսի առաջնորդ — 212

Գարանեց (Գարանալու) — 122  
 Գարբանդ (Դերբենտ) — 60, 236  
 Գարբանդ (Կապանք) — տե՛ս Կապանք  
 Գիգափայտ — 218  
 Գինար — 52, 206—207  
 Գինինսիսո Արխապագացի — 193, 209  
 Գիսնիսիսո Թրակացի — 192, 248  
 Գիոն Կասիսո — 34, 58, 62  
 Գիուկորոս Սանահեցի — 126, 224  
 Գին — 177  
 Գրիգոր — 193  
 Եղեկին մարգարե — 179  
 Եղը (ածղ) — 178  
 Եկեղիք — տե՛ս Ակելիսինե  
 Եղիազար կթղկ.—155, 157, 248  
 Եղիա կթղկ.—106, 157—159, 161—164, 207, 244  
 Եղիշե — 115, 126, 153, 174, 209, 218  
 Եղիշե առաքյալ — 97, 117, 140  
 Եղրդուտ — 15  
 Եռանշահիկ — տե՛ս Առանշահիկ  
 Եսայի Արու Մուսե — 77, 83, 181—183, 246—247  
 Եսայի, Գողթան եպ.—177  
 Եսայի մարգարե — 103, 179  
 Եսայի մարգարե վանք — 103  
 Եսկազան — 103—104, 246 հմմ. Արսկազան (Եսկազան, էսկազան)  
 Եսկազան — տե՛ս Արտուրունի — 52  
 Եռողորոս Ոշտունի — 131  
 Եռմա Էրեց — 131  
 Եռմա Արծրունի — 78, 181—182, 218, 245  
 Եռմաս (Բումաս) վրդ.—106—112, 244  
 Եռոգու — 40  
 Եռորոս — 219

- Թահղթ — 52  
 Թրակիա — 71  
 Թուրքեր (*թուրքական*) — 16, 191  
 Ժամկույան Հ. — 37  
 Իրաս — 106  
 Իրերիա (*իրերներ*) — 24—25, 32—  
     34, 49—50, 54—55, 69. տհ'ս  
     Վիրը  
 Իլիոն (*Պիոն*) — 173  
 Իշխանիկ (*իշխանակ*) — 51—52,  
     78, 81, 204—207, 210—212  
 Իրուա — 50  
 Իսա Իրին Ստեփանոս — 191  
 Իսմայիլյան — 188, 195. տհ'ս նաև  
     աբրիեր  
 Իսրայել կրոնավոր — 146—157,  
     247  
 Իգանե ամիրապառալար — 226, 228  
 Էլալյան Ե. — 242  
 Էտահնական — 16  
 Էտիշիջ Վ. Վ. — 34  
 Էն — 77, 221  
 Էփոցյան Սո. — 242  
 Էռկուուլոս — 34  
 Էփինք (*լինաց*) — 39, 151, 161,  
     245, 256  
 Խալիբենք — 24  
 Խաղխաղ — 39  
 Խանդին — 212  
 Խալչին — 212, 226, 228—229,  
     233—234  
 Խաչենի բերդ — 46  
 Խալիկան Լ. — 225  
 Խաջիկ վրդ. Դադյան — 76, 169  
 Խոսկյան — 132  
 Խոսրովանուշ — 144  
 Խոսրով թագ. — 39, 68, 71  
 Խոսրովիկ — 126—127  
 Խորին աշխարհ Հայոց (*Խորին*  
     Հայոց) — 5, 221  
 Խորխոսունիք — 225  
 Խործին — 24, 49, 259—260  
 Խորն՝ (*«Խորնին» անապատ*) —  
     193  
 Խվարազմացիք — 52  
 Խութ — 45  
 Խուժաստան — 12—13  
 Խուժարեթ — 147  
 Խուրս — 132  
 Խավդիք — 40—41, 47  
 Խոփք — 224  
 Կախեթ — 225  
 Կակարաձե Մ. — 51  
 Կակուա — 251  
 Կազանկատուաց վանք — 100, 112  
 Կամբեճան (*Կամբյուսենի*) — 48—  
     56, 64, 211—212, 259—260  
 Կամինիկ Հեփթաղ — 151, 256  
 Կամսարական — 39  
 Կային (*ածղ*) — 127, 189, 195  
 Կային զավառ — 225  
 Կայծոն — 225  
 Կանա (*ածղ*) — 209  
 Կապաղովիքա — 32, 63  
 Կապաղակ (*Քաղաքակ*) — 56  
 Կապանք — 222—223  
 Կասպիանեն (*Կաղբը, Կասպ*) — 24,  
     39—40, 48, 65, 67, 151, 251,  
     257, 262  
 Կասպից ծով — 19, 27, 29, 32,  
     48, 57, 60, 63, 254, 259—260,  
     262  
 Կատառեներ — 24  
 Կատառ, քոյլը Շահանդուխորի —  
     236  
 Կատիներ — 29, 251, 255  
 Կարդոս — 151—152  
 Կարենիտիս — 24  
 Կարո — 252  
 Կեսարիա — 40—41  
 Կիլիկիա — 193, 228, 233  
 Կիրակոս Գանձակեցի — 96, 104—  
     105, 165, 173, 218, 220, 228,  
     233—234, 237, 246  
 Կլուրեղ Երևաղմացիք — 209  
 Կլուրեղիք — 222, 225  
 Կլուրիկյաններ — 221, 225  
 Կլուրիոն կթղի. — 138, 228  
 Կոլխիք — 55  
 Կոլխիզա — 32, 49  
 Կողթ — 38, 225  
 Կողքիս — 259—260  
 Կոմիսնեն — 49, 55, 258, 260—261  
 Կոմիտաս կթղի. — 136, 195  
 Կոստանդիանոս կայսր — 64, 85  
 Կոստանդին կթղի. — 219  
 Կոստանդինոպոլիս — 156  
 Կոստանդնեց Կ. — 183—190, 202  
 Կովկաս — 7, 10—11, 56, 75, 91,  
     132, 150, 159, 183, 239, 241,  
     251—252  
 Կովկասյան Ղեներ — 19, 33, 37,  
     49—50, 52, 56, 58, 63, 151,  
     255—256, 259—260  
 Կոտայք — 252  
 Կորուրը — 32  
 Կորճեթ — 45  
 Կորյուն — 7, 10, 89—92, 153  
 Կվաղրատ — 34  
 Կորիճ — 78  
 Կրիմսկի Ա. Ե. — 27—29  
 «Կուրք» զավառ — 112  
 Կուր — 19, 23—34, 37—38, 42,  
     44, 48—50, 52, 56, 59—60,  
     62—63, 71, 251—254, 256,  
     259—260  
 Հազկերտ Բ — 70  
 Հաթիքք (*Հայթիքք*) — 228—229,  
     233  
 Հալոյին (*Հալոցին*) — 14  
 Հակոբ երեց — 131  
 Հակոբիկինք — 127  
 Հակոբյան Վ. — 120, 180  
 Հաղըաս — 200, 222, 233  
 Համազասպ Կամսարական — 97,  
     99  
 Համամ Արևելյանից (*Բագրտունի*,  
     Համամ Հովհաննես) — 61, 80—  
     81, 83, 86, 181—210, 217, 221,  
     237, 243—244, 246, 248  
 Համբարյան Հ. — 256  
 Հայկ Խաչապիտ — 61  
 Հայոց ձոր (*Սամիսիթի ձոր, Փոքր*  
     ձոր) — 52—53  
 Հայր իշխան — 41  
 Հատակուն Պետրոսի (*Վահիք*) —  
     112  
 Հասան իշխան — 229  
 Հավախաղացի բերդ — 46  
 Հացումի Վ. — 199  
 Հեղուա հոսրով — 79, 144  
 Հեթում պատմիչ — 14  
 Հեսվանց վանք — 207  
 Հետու Նավլա (*ածղ*) — 178  
 Հերակլ — 140  
 Հերթ — 51—53, 206—207 210—  
     211, 221  
 Հերթ — 12  
 Հեփթաղ — տհ'ս Կամինիկ Հեփ-  
     թաղ  
 Հին եկեղեցի — 75  
 Հյուրշաման Հ. — 55, 252, 256—257,  
     262—263  
 Հոր (*ածղ*) — 179, 193, 201  
 Հոհանիկ Կող. — 46, 111  
 Հոնագոր — 129  
 Հոնաստան (*Հոներ*) — 20, 59, 67,  
     72, 147, 150—151, 155, 159,  
     204  
 Հոռոմաշին — 229

Հոռոմիկ — 46  
 Հոռոմիկը — 145, 149, 229, 232  
 Հովկել հպ.— 131  
 Հովհան — 236  
 Հովհան Մայրավանեցի — 52—53,  
     162  
 Հովհան Օձնեցի — 119—120, 130,  
     244  
 Հովհաննես Արքահղբաբ — 207  
 Հովհաննես Գառնեցի — 200  
 Հովհաննես Դրասիանակիրացի —  
     58, 77—78, 85—86, 158, 176,  
     186—187, 237  
 Հովհաննես եպ.— 157  
 Հովհաննես Երգեկացի — 192, 200  
 Հովհաննես իշխան — 77, 243  
 Հովհաննես կթղկ.— 110, 124, 223  
 Հովհաննես Մկրտիչ — 127, 209  
 Հովհաննես Ռոկերիան — 213  
 Հովհաննես պատրիարք — 106—  
     109  
 Հովհաննես Սարկավագ — 200,  
     220, 226, 229, 247  
 Հովհաննես Սենեկերիմ — 81  
 Հովհաննես Վանական — 123, 220,  
     226  
 Հովհաննիսյան Աշ.— 185, 200  
 Հովինան (ածշ) — 210  
 Հովինան կթղկ.— 237—238  
 Հովսեփ Արցախացի (Գեղամիկ-  
     ցի) — 171—172  
 Հովսեփ-Բեկ — 219  
 Հովսեփ Երեց — 131  
 Հովսեփ կթղկ.— 221, 224  
 Հովսեփ կրօնավոր — 229  
 Հովսեփյան Գ.— 186, 225  
 Հովիսիմի — 65, 122  
 Հոռմեական (Հոռմեացիներ) —  
     27—28, 30, 33—34, 50, 55,  
     57, 63, 67—69, 88, 173  
 Հոռմիկ հպ.— 111

Հոռմի (ածշ) — 178  
 Հրեական — 16  
 Հովհաննոս Աղիկառնացի — 109  
 Հովհաննու (Հովհական, Հովհարին) —  
     16, 27—28, 30, 33—34, 55,  
     98, 100, 108, 145, 149, 154—  
     159, 204, 227—228, 238, 243,  
     252, 262  
 Հովհան եպ.— 131  
 Հովստիանոս — 100  
  
 Զագիկ — 46  
 Զերգունի Դաշտ — 46  
 Զիթենյաց սար — 15, 102—103  
 Զորացիս — 214, 225  
 Զորափոր — 52, 112  
  
 Զազարյանց տոհմ — 219  
 Զազար Փարակեցի — 70—71, 174  
 Զարարադ — 82, 118, 212, 226,  
     238—239  
 Զափանցյան Գր.— 254, 263  
 Զևոնդ եպ.— 111  
 Զևոտական (ածշ) — 178  
 Զիոն — տե՛ս Իլիոն  
 Զլոնյան Ա.— 113, 178  
 Զուբա — 252  
 Զփազական — 16  
  
 Մաթիք, Գարանաձի Երեց — 131  
 Մաթիք, Պարտավի Երեց — 131  
 Մակար պատրիարք — 108, 151—  
     152  
 Մակեր Ֆ.— 193  
 Մաղաղեթա (ածշ, Ասդմոս ՄԲ/  
     ՄԳ) — 209  
 Մամիկոնյանք — 234  
 Մանանդյան Հ.— 36, 38, 57—58,  
     68—69  
 Մանասե եպ.— 131  
 Մանչար Գևորգը — 220

Մառ Ե.— 9, 51, 78, 206, 251—  
     252, 254  
 Մասուդի — 83, 205  
 Մասրիաց երկիր — 65  
 Մատթի Երեց — 119, 122—123  
 Մատթեոս Ռուհայեցի — 215,  
     221—223, 225  
 Մատիկյան Ա.— 61  
 Մարգարետական — 41  
 Մարեր — 48, 262  
 Մարիամ Շամբռուեցի — 101  
 Մարկար Հ.— 41, 262  
 Մարութ ազգական — 131  
 Մաքենացոց — 212  
 Մեգալոպոլիս — 63  
 Մելիք-Բախչյան Ա.— 37  
 Մելիքշահը կիլ Գ. Ա.— 53—54  
 Մելիքսիթ-Բեկ Լ.— 37, 52—55,  
     206, 251—252  
 Մելիք-Շանշանյան Կ.— 96, 168  
 Մեծարանց գանք — 77  
 Մեծ Իրանք պավան — 45  
 Մեծ Կողմանք — 45—46, 137, 147  
 Մեծ Հայք — 31, 33, 37, 41, 223  
 Մեշանինով Ի.— 251—252  
 Մեսիսիք — 54—55  
 Մեսրոպ Մագիստրոս — 193  
 Մեսրոպ Մաշտոց — 8, 9, 16, 20,  
     38—39, 75, 88—93, 97, 104,  
     113—114, 140, 146—152, 154,  
     160, 192—193, 196, 200, 219,  
     228, 241, 244, 256—257  
 Մերա — 13  
 Միջիա (մեղացիներ) — 24—25,  
     29, 32, 254—256  
 Միջրան (Միջրանյան տոհմ) —  
     20, 72—84, 132, 142, 155  
 Միջը եպ.— 162  
 Միկելանոր — 10, 101, 139, 241,  
     243

Մինորսկի Վ.— 205  
 Միքանըրիկ — 131—132  
 Միքայիլ կթղկ.— 161—163, 179,  
     245  
 Միքի Երեց — 131  
 Միհնի անհապատ — 193  
 Միսանց տոհմ — 46  
 Միսանք գավառ — 46  
 Միթթար Այրիվանեցի — 185,  
     199, 201, 208, 218  
 Միթթար Գոշ — 61, 165, 175—  
     176, 201, 220, 226—235, 245,  
     247  
 Միթթար եպ.— 135—136  
 Մժբին — 12  
 Մողալապոլիս — 173  
 Մոսկովյանիկիր — 24  
 Մոսկվա — 9  
 Մովսիս, առաջնորդ Ցուրտավի —  
     137—138  
 Մովսիս, Բախտատի եպ.— 110  
 Մովսիս Դասիուրանեցի — 78,  
     153, 174—175, 201, 207, 214—  
     215, 245  
 Մովսիս Խորենացի — 7, 10, 22—  
     23, 30—31, 35—37, 42—43,  
     56, 66, 85, 89, 92, 153, 174,  
     218, 245, 251, 254  
 Մովսիս Կաղանկատպացի — 20—  
     21, 28, 30, 38—39, 42, 45—  
     46, 51, 62, 64, 73—77, 79  
     81, 83—85, 97—122, 129—133,  
     141—175, 179—180, 187, 198,  
     214—215, 218—219, 232, 238,  
     243, 245, 247—248, 254, 256—  
     257  
 Մովսիս Ժարգարք — 15, 66, 178  
 Մովսիսյան Ղ.— 225  
 Մորիկ կայսր — 59, 71  
 Մոհրյան Մակեր — 168

- Մաերյանների գերդաստան — 9  
 Մաերյանց Զ. — 9  
 Մոռվու (Մոռվա՞) Վանք — 100,  
112  
 Մուծիկ — 46, 131—132  
 Մուղանի ղաշտ — 31, 57  
 Մուշեղ Բագրատունի — 182—183  
 Մուշեղ Մամիկոնյան — 37  
 Ցաղպիղներ — 191  
 Ցոշկով Ա. Վ. — 34—35  
 Նաբառողոնոսոր — 210  
 Նախճավան — 159  
 Նակորդան (Նակորդ) — 46, 128  
 Նեստոր — 123  
 Ներսէն — 140  
 Ներսէն Դժեղակ — 79  
 Ներսէն Բակուր — 156—159, 162,  
164, 244—245  
 Ներսէն Ծնորհալի — 26, 197,  
224—225  
 Նիկիա — 228  
 Նինդե — 12, 210  
 Նոյ ճգնավոր — 173  
 Նորայր — 46  
 Նորավանք — 103  
 Նոնաբարսաղի — 12  
 Նուիի — տե՛ս Եաքի  
 Եակաշնեն — 23—25, 32—33, 38,  
248, 255, 259—261, տե՛ս նաև  
սահկը  
 Եահակ. Կթղկ. — 40—41  
 Եահանդուխտ, քույր Կատայի —  
235—236  
 Եահամթունյանց Հ. — 40  
 Եամա — 131  
 Եամիքամ — 60—62, 245  
 Եամիքամաքերզ («քերդն Եամի-  
քամալ») — 61  
 Եամիքամաձոր — 61
- Եանիձե Ա. — 8—14, 16  
 Եապու՞ արքայից արքա — 46—47  
 Եաքի (Նուիի) — 58, 205, 252,  
256—257  
 Եիրո իշխան — 157—159, 162—  
163  
 Եիկաբար — 46, 212  
 «Եիշ լուղ» — 15  
 Եիրակ — 211, 222, 224  
 Եիրվան — 60, 252, 256—257  
 Եմավան, պատվիրակ Պարսկաս-  
տանից — 13  
 Եմավան քրիզ. — 131  
 Եոթ — 61  
 Եուշանիկ — 138  
 Եուշհաղիշա — 131  
 Բակլան Հ. — 176, 234  
 Որդինես — 232  
 Զամշան Մ. — 59—60, 201, 225  
 Զարաբերդ — 46  
 Զէշկիկ — 222  
 Զողա — 161, 245  
 Զորա գուռ — 151, 256  
 Զորորոդ Հայք — 45  
 Պալլիկյաններ — 162  
 Պանդա վանք (Երևանաղմի) —  
100—112, 243—244  
 Պանոս ճգնավոր — 102  
 Պարթև — 39  
 Պարիագրեսի լիոներ — 24  
 Պարակ երեց — 131  
 Պարսկահայք — 69  
 Պարսկաստան (պարսիկներ) —  
11—13, 16, 18, 20, 35, 42,  
67—73, 79, 104, 114, 134, 136,  
142, 144, 159, 204, 227, 238,  
241—242  
 Պարտավ — 101, 113, 169, 177—  
179, 222, 245
- Պարտավի վանք — 100—101, 112  
 Պետրոս, Գարզմանի առաջնորդ —  
212  
 Պետրոս Գետաղմբը — 126, 224  
 Պետրոս կթղկ. Աղվանից — 112  
 Պետրոս Սլունեցի (Քերթող) —  
125—129, 153  
 Պետրոս քահ. — 101—102  
 Պերպերյան Հ. — 193  
 Պիգուկեալյայ Ն. — 44, 151—152  
 Պլինիոս Ավագ — 33  
 Պլոտարքոս — 34, 57  
 Պոլի (Պոլի) — տե՛ս Ապուլի  
 Պոլիկրատիս — 26  
 Պողոս առաքյալ — 66, 128, 136  
 Պողոս երեց — 131  
 Պողոս կրոնակոր — 229—230  
 Պողոս-Պետրոսի եկեղ. — 252  
 Պոմպեոս — 34, 50, 57—58, 62—  
63  
 Պտղոմեոս — 33
- Զալալյան Ա. — 115, 236, 243  
 Զառուկյան Գ. — 199  
 Զիվանչիր իշխան — 64, 79, 84—  
85, 143—150, 154—157, 165—  
170, 243, 245—247  
 Զրաբերդ — 118  
 Զրգամիկ — 46  
 Զուանշիրիկ — 46  
 Բուօսական — 16, 103, 168  
 Սաղովկ, Սլունեց եպ. — 177  
 Սակեր (սականներ) — 23, 33,  
253, 255, տե՛ս նաև Եակաշնեն  
 Սահակ Ամառունի — 192  
 Սահակ Բագրատունի — 177  
 Սահակ եպ. — 157  
 Սահակ իշխան — 58  
 Սահակ կթղկ. — 47, 200  
 Սահակ Սևազա — 81, 213—214
- Սահակ քորեպ. — 131  
 Սահել Ամբայան — 76, 80, 83—  
84, 191  
 Սամվել Անեցի — 161  
 Սամվել, պատվիրակ Պարսկա-  
ստանից — 13  
 Սամվել Վահանոնի — 59, 71  
 Սանահինն — 233  
 Սանարներ (Հայկ, «Մանարք») —  
205  
 Սաշիկներ — 191  
 Սալդա բաղաբագուղ (Սոթք) —  
59  
 Սավիթրիս — 261—263  
 Սատուռնական տոն — 63  
 Սարգսյան Բ. — 98, 123, 125  
 Սարգիս Սևանեցի կթղկ. — 47  
 Սարդամիշշ — 252  
 Սարմատիա — 33  
 Սերասիա — 245  
 Սերեն — 59, 71  
 Սերոց — 56  
 Սերովմ — 112  
 Սելիկյաններ — 36  
 Սենեկարիմ, որդի Անապայի — 222  
 Սենեկերիմ, իշխանաց իշխան —  
211—212  
 Սենեկերիմ, Խաչենի իշխան — 212  
 Սենեկերիմ, Վասուրականի տիկ —  
223  
 Սիմեոն կթղկ. — 160, 164, 243,  
245  
 Սիմեոն, Հոշալա եպ. — 157  
 Սիմեոն, Մհեմ Կողմանց եպ. —  
135—136  
 Սիոն կթղկ. — 177—179, 245  
 Սիսական — 143  
 Սիսակ Սլունեցի — 30, 42  
 Սիրաք — 179  
 Սիրիա — 32  
 Սիլութական — 255

Սմբատ — 213—214  
 Սմբատ Ա. Բագրատունի — 187  
 Սմբատ Բագրատունի, դայակ Ար-  
 տաշեն Ա.-ի — 35  
 Սմբատ («Մնպատ»), եղբայր Հա-  
 մամի — 205  
 Սմբատ Մապրապետ — 183  
 Սմբատ, Վրկանա մարզպան — 29,  
     138  
 Սունձիք — 40—42, 44—45, 47,  
     88, 128—129, 143, 172—173,  
     211, 213, 218, 224, 228, 261—  
     263  
 Սնպատ — տե՛ս Սմբատ («Մըն-  
     պատ»)  
 Սոգդիկան — 152  
 Սողոմոն (ած2) — 179, 188—189,  
     192, 201  
 Սողոմոն հայ. — 77  
 Սոմիթթ — 52, 225  
 Սոմիթթի ձոր — տե՛ս Հայոց ձոր  
 Սպարամ — 156—160, 162  
 Սպեր — 45  
 Ստեփանոս, առաջնորդ ո. Բա-  
     գեսի աթոռի — 222  
 Ստեփանոս Ասողիկ — 77—78  
 Ստեփանոս Բյուզանդացի — 34,  
     252  
 Ստեփանոս, կթղկ. Աղվանից —  
     229—237, 243  
 Ստեփանոս, որդի Գագկի — 79  
 Ստեփանոս Սյունեցի — 45, 153,  
     172—173, 195, 218  
 Ստեփանոս Սյունեցի (5-րդ դար)  
     — 126  
 Ստեփանոս Քերական — 212  
 Ստեփանոս Օրբելյան — 42, 47,  
     125, 128—129, 186, 212—213,  
     224, 235, 245  
 Ստրարոն — 19, 22—36, 43, 48—  
     49, 53—55, 63, 68, 141, 250—

251, 253, 255—262  
 Ս. Աստվածածին — 236  
 Ս. Կարապիտ — 102  
 Ս. Հակոբ (Երուսաղեմի) — 108  
 Ս. Հակոբ (Մէծարանց) — 77  
 Ս. Հոգհաննես (Մուշ) — 15  
 Ս. Պիտրոս — 111—112  
 Սուբբլան Ա. — 56  
 Սևագա թագ. — 236  
 Սևադա իշխան, որդի Գրիգորի —  
     81  
 Սևադա, որդի Գրիգորի — 81  
 Սևադա, որդի Փիլիպիի — 222  
 Սևան — 251—252  
 Սևորդիք — 225  
 Սևուար — 128  
  
 Վախիթանկ — 233  
 Վահանավանիք — 235, 243  
 Վահան Մամիկոնյան — 97—98  
 Վահրամ, մհկնիչ — 193—194  
 Վաղոն (Վաղեն) — 104—105.  
     տե՛ս Արավաղեն  
 Վաղարշակ թագ. — 30, 43  
 Վաղարշապատ — 102, 147  
 Վալեկոնիք — 46  
 Վալու (Վայոց) ձոր — 46, 172—  
     173  
 Վան — 257  
 Վանա լիճ — 262  
 Վանանդ — 224  
 Վաշագան — 222  
 Վաշագան Առանշահիկ — 76  
 Վաշագան (Վալե) Բ — 28, 51, 62,  
     64, 97, 114—117, 130, 246  
 Վաշագան Գ — 80, 97, 118—134,  
     146, 160, 190, 198, 243—247  
 Վաշագան, Գորոզու իշխան — 212  
 Վասպուրական — 213, 218, 262  
 Վարագ Գրիգոր — 79, 144  
 Վարագման — 79

Վարագ Պերոժ, Առանշահիկ — 75  
 Վարագ Պերոժ, եղբայր Զիվանշի-  
     րի — 79, 144, 155  
 Վարագ Տրդատ — 39, 79, 150,  
     155—158, 162—163, 248  
 Վարագ Քուրդակ — 177—178  
 Վարդ — 74  
 Վարդանանիք — 41, 115—116  
 Վարդան Արևելցի — 61, 86, 219—  
     220  
 Վարդան Մամիկոնյան — 41—42,  
     59  
 Վարդան, Միրհրանյան տոհմից —  
     79  
 Վարդան Սատոյան — 177—178  
 Վարդան Քաջ, Միրհրանյան տոհ-  
     մից — 73, 132  
 Վարձիո խաչ — 219  
 Վեհնետիք — 98, 123, 193  
 Վիրո կթղկ. — 141, 161—162, 248  
 Վիրք (Վրաստան, վրացիներ,  
     վրացական) — 8, 11—14, 16,  
     19, 27, 44, 50—53, 71, 76—  
     77, 88, 90—91, 93, 135—139,  
     143, 179, 206, 210, 225, 227—  
     228, 232, 241—242, 259—260  
 Վրաստան — տե՛ս Վիրք  
 Վրինենս Թիրթող — 124, 135—  
     136  
 Վրկանա ծով — 34, 57, 251  
 Վրկանիս — 29  
  
 Տաճիկը — 101, 103  
 Տամարիտիս (Տմորիք) — 24  
 Տայք — 45  
 Տանձիք — 46  
 Տաշիրը — 112, 225  
 Տաշւան Հ. — 104  
 Տագուշ — 225  
 Տարոն — 124, 224

Տեր-Հովհաննեսովանց Ա. — 103—  
     104  
 Տեր-Միքելյան Ա. — 161  
 Տեր-Մկրտչյան Գ. — 208  
 Տիգրան Բ — 32, 36—37, 53—54  
 Տիմոթե հայ. — 111  
 Տիրազգ — 131—132  
 Տիրամայր — 236  
 Տիրան վրդ. — 204, 207—210, 244  
 Տիրանուն կթղկ. — 207—208. Հման  
     Տիրան վրդ.  
 Տիրիկ Քարոյան — 177—178  
 Տկապերս — 46  
 Տմորիք — տե՛ս Տամորիտիս  
 Տրդատ թագ. — 40, 66—67, 98  
 Տրտու (Թարթու) — 160, 247  
 Տրեհր Կ. Վ. — 11, 23, 25—27, 57,  
     59, 62, 82, 167  
 Տուրուրերան — 262  
 Տփղիս — 52  
  
 Ուխտանես հայ. — 41  
 Ուխտանես կթղկ. — 247  
 Ունեկան գյուղ — 46  
 Ունայր թագ. — 62, 117, 180  
 Ուտիք (ուտիներ, վիտիներ) — 10,  
     17—18, 22—47, 60—63, 65,  
     67—70, 75, 80, 84, 86—88,  
     93, 111, 131, 146—148, 151,  
     213, 220—221, 225—226, 243,  
     250—257, 261  
 Ուտո՞ բորեակ. — 131  
 Ուրարտացիներ — 255  
 Ուրբաթ, Այրմանուշաց երից —  
     131—132  
 Ուրտավ — 137, 138  
  
 Փայտակարան — 23, 25, 60, 65,  
     69, 88, 187, 222  
 Փափիսու (Փափիս) — 61, 213,  
     220, 225

- Փակենե (Փակնենե) — 49, 258—  
 261  
 Փակնիտիս — 24, 37—38, 40, 68,  
 261—263  
 Փակուոս Բուզանդ — 37—38, 40—  
 41, 68, 174  
 Փարիզ — 168, 193—194  
 Փիլիպի, որդի Գոշակուակի — 222  
 Փիլիպոս, որդի Գողազգակի — 223  
 Փիլիպպի թագ. — 223  
 Փիլիպպի, որդի Գրիգորի — 81  
 Փիլորսինսոն Նարովկա — 124  
 Փիպի (Փղիպի, Փիլիպպի), եղ-  
 բայր Համամի — 81, 190, 202,  
 204—207, 210, 244  
 Փիրոդ — 132  
 Փլունիկիս — 32  
 Փոքր Հայք — 24, 56—58  
 «Փոքր Հայք» — 56—58, 63  
 Փոքր Ճոր — տե՛ս Առմխիթի Ճոր  
 Քաղաքակ — տե՛ս Կապազակ
- Քւղկեղոն — 105, 107, 157—158,  
 211  
 Քակսա երկիր — 213  
 Քարթլի (Քարթլիներ) — 52, 54  
 Քթիչ — 181  
 Քսերքսինե (Խերշան) — 24  
 Քրիստոս — 15, 108, 127, 136,  
 149, 159, 177, 205, 215, 236
- Օգաց երկիր — 222  
 Օմար ամիր — 237  
 Օշական — 157  
 Օվարեններ (օվարացիք) — 34,  
 252  
 Օրբելի Հ. — 254  
 Օրիոն (Հայկ համաստեղություն) —  
 61  
 Օրիխստենե — 49, 258, 260—261  
 Օրմանյան Մ. — 164—165, 177  
 Յավենե — տե՛ս Փակենե  
 Յուանկաց — 193

## Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հեղինակի կողմից	5
Ներածուրյուն	7
Դպրույտն Հայոց Արևելյաց կողմանց («Ազգաւճից աշխարհի»)	5—13-րդ դր.
Դրվագ առաջին. երկու գիր, երկու զարություն	87
Դրվագ երկրորդ. 5—6-րդ դարեր	96
Դրվագ երրորդ. 7—8-րդ դարեր	135
Դրվագ շորրորդ. 9—10-րդ դարեր	181
Դրվագ Հինգերորդ. 11—13-րդ դարեր	217
Ամփոփում* և հղուակացություններ	240
Համելվածներ	
Ա. Ռոտիք և ուսիներ	250
Բ. Հայաստանի Հյուսիս-արեկելյան գավառների հիշատակումը Ստրա- րոնի մոտ	261
Յանկեր	
Յանկ օգտագործված ազբյուրների	264
Յանկ Հատուկ անոնների	271

ԱՍԱՏՈՒՐ ՇՄԱՎՈՆԻ ՄԵԱՑԱԿԱՆԱՆ  
ԱՅՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Մինիստրունիքի սովետին առքնքեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի «Մատենադարան»-ի գիտական խորհրդի ուղղմամբ

Հրատ. իմրագիր՝ Ս. Ա. Գևորգյան  
Նկարչական ձևավորումը՝ Յու. Հ. Առաքելյանի  
Տեխ. իմրագիր՝ Է. Ս. Ավետյան  
Սրբագրի՝ Ս. Կ. Զաքարյան

Վ. Ֆ. 04609, Հրատ. № 2637, պատվեր 22, տիրաժ 1000: Հանձնված է  
արտադրության 14/I 1966 թ., ստորագրված է տպագրության 12/V  
1966 թ., թուղթ № 2, 84×1081/32, տպագր. 17,87 մամուլ (պայմանական 14,65 մամուլ), Հրատ. 12,48 մամուլ, Գինը 95 կող.

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատանրակչության տպարան, Երևան,  
Բարեկամության 24